ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ• ՄԱՅԻՍ 2011

Լիահոնա



Գերագույն Համաժողովի Ելույթները

Եկեղեցու Բարօրության ծրագրի 75-ամյակը

Հայտարարվել են երեք նոր տաճարներ

ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Ինչ որ ունիմ, այն քեզ կտամ, Վոլթեր Ռեյն

«Եվ մի մարդ կար իր մոր որովայնիցը կաղ. . .ամեն օր տաճարի . . .դռան մոտ,. . .
Երբոր նա տեսավ Պետրոսին և Հովհաննեսին, որ գնում էին մտնելու տաճարը,
աղաչում էր, որ ողորմություն առնէ նորանցից։ . . .
Պետրոսն էլ ասեց. Արծաթ և ոսկի չունիմ. բայց ինչ որ ունիմ, այն քեզ կտամ.
Հիսուս Քրիստոսի Նազովրեցու անունովը վեր կաց և ման ելի։
Եվ աջ ձեռքիցը բռնեց՝ վերկացրեց նորան. և շուտով
հաստատվեցան նորա սրունքը և բարձքը» (Գործք Գ.2–3, 6–7)։

Բովանդակություն, մայիս 2011

Հատոր 12 • Համար 2

2 181-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

4 Կրկին համաժողով է
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

6 Հանգստության օրը և հաղորդությունը
Երեց Լ. Թոմ Փերի

10 Դառնալ փոքր երեխայի նման
Ջին Ա. Սթիվենս

13 Քրիստոսի հետևորդները
Երեց Վոլթեր Ֆ. Գոնզալես

15 Քավությունը ծածկում է բոլոր ցավերը
Երեց Քենթ Ֆ. Ռիչարդս

18 ՎՕՍ կանայք սքանչելի են
Երեց Քվենթին Լ. Քուք

22 Բարիք անելու հնարավորություններ
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

26 Եկեղեցու պաշտոնյաների հաստատում
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

28 Եկեղեցու աուդիտի բաժանմունքի 2010թ. հաշվետվություն
Ռոբերտ Վ. Քանթվել

29 Վիճակագրական հաշվետվություն, 2010թ.
Բրուք Պ. Հեյլս

30 Առաջնորդվելով Սուրբ Հոգով
Նախագահ Բոյդ Կ. Փաքեր

34 Հավատքով դեմ առ դեմ կանգնեք ապագային
Երեց Ռասսել Մ. Նելսոն

37 Հիմնել Քրիստոսակենտրոն տուն
Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզ

40 Վկայություն
Երեց Սեսիլ Օ. Սամուելսոն Կրտսեր.

42 Ցանկություն
Երեց Դալլին Հ. Օուքս

46 Գտնել ուրախություն սիրով ծառայելու միջոցով
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

49 Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալստին
Երեց Նիլ Լ. Անդերսեն

53 Հույս
Երեց Սթիվեն Ի. Մնոու

55 Ահարոնյան Քահանայության սրբազան բանալիները
Լարրի Մ. Գիբսոն

58 Ձեր ներուժը՝ ձեր արտոնությունը
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

62 Սովորել Քահանայությունում
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

66 Քահանայության զորություն
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

70 Սպասելով դեպի Դամասկոս տանող ճանապարհին
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

78 Առաւել եւս յաղթում ենք նորա միջոցովը՝ որ մեզ սիրեց
Երեց Փոլ Վ. Ջոնսոն

81 Բարօրության սրբագործող աշխատանքը
Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բըրթն

84 Աշակերտ լինելու էությունը
Միլվիա Հ. Այրեդ

87 Հայտնության Հոգին
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

90 Սուրբ Տաճար՝ փարոս աշխարհին
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

94 Ամուսնության հավերժական օրհնությունները
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

97 «Ես որոնց որ սիրում եմ հանդիմանում եմ և խրատում եմ»
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

101 Տիրոջ ամենաառատ օրհնությունները
Երեց Քարլ Բ. Փրաթ

103 Ինչպիսի՞ մարդ և կին եք դուք պարտավոր լինել
Երեց Լին Գ. Ռոբբինս

106 Կանչված լինելու Սրբեր
Երեց Բենջամին Դե Հոյոս

108 Քավության հրաշքը
Երեց Ս. Սքոթ Գրոու

111 Դրոշակ ազգերի համար
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

114 Բաժանվելով
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

115 Ես հավատում եմ ազնիվ և ճշմարիտ լինելուն
Էն Մ. Դիբ

118 «Հիշիր, բարությունը սկսում է քեզանից»
Մերի Ն. Քուք

121 Առաքինության պահապաններ
Էլեյն Ս. Դալտոն

125 Կենդանի վկայություն
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

72 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

129 Համաժողովի պատմությունների ցուցիչ

130 Նրանք խոսեցին մեզ հետ՝ դարձնել համաժողովը մեր կյանքը մասը

132 Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

132 Մեր ժամանակների ուսմունքները

133 Եկեղեցու նորությունները

181-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 2 ԱՊՐԻԼԻ, 2011Թ.
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացող աղոթք՝ Երեց Ալլան Ֆ. Փաքեր: Փակող աղոթք՝ Երեց Դեյլ Գ. Ռենլանդ: Երաժշտությունը մատուցեց Թաբերնաքլի Երգչախումբը, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահար՝ Քլեյ Քրիսչենսեն. "Rejoice, the Lord Is King!" *Hymns,* no. 66; "Glory to God on High," *Hymns,* no. 67; "We Listen to a Prophet's Voice," *Hymns,* no. 22, arr. Murphy, unpublished; "I Know That My Redeemer Lives," *Hymns,* no. 136; "I Know That My Savior Loves Me," Creamer/Bell, arr. Murphy, unpublished; "High on the Mountain Top," *Hymns,* no. 5, arr. Wilberg, unpublished:

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 2 ԱՊՐԻԼԻ, 2011Թ.
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացող աղոթք՝ Երեց Քեվին Վ. Փիրսոն: Փակող աղոթք՝ Երեց Մայքլ Տ. Ռինգվուդ: Երաժշտությունը մատուցեց միացյալ երգչախումբը Բրիգամ Յանգ Համալսարանից, Այդահո, խմբավարներ՝ Էդա Էշբի և Ռանդալ Քեմփթոն, երգեհոնահար՝ Բոննի Գուդլիֆ. "How Firm a Foundation," *Hymns,* no. 85, arr. Ashby, unpublished; "How Great the Wisdom and the Love," *Hymns,* no. 195; "Press Forward, Saints," *Hymns,* no. 81; "Let Zion in Her Beauty Rise," *Hymns,* no. 41, arr. Kempton, unpublished:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ, 2 ԱՊՐԻԼԻ, 2011Թ.
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք՝ Երեց Ռաֆաել Ե. Փինո: Փակող աղոթք՝ Երեց Ջոզեֆ Վ. Սիտատի: Երաժշտությունը քահանայության երգչախումբը Օգդեն Յուտա և Լոգան Յուտա ինստիտուտներից, խմբավարներ՝ Ջերալդ Ֆ. Սայմոն, Ջ. Նիլս Սալմոնդ և Ալան Տ. Սոնդերս, երգեհոնահար՝ Էնդրյու Անսվորթ. "See the Mighty Priesthood Gathered," *Hymns,* no. 325; "Guide Me to Thee," *Hymns,* no. 101, arr. Unsworth, unpublished; "Redeemer of Israel," *Hymns,* no. 6; "For the Strength of the Hills," *Hymns,* no. 35, arr. Durham, pub. Jackman:

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 3 ԱՊՐԻԼԻ, 2011Թ.
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք՝ Երեց Գարի Ե. Սթիվենսոն: Փակող աղոթք՝ Երեց Թեդ Ռ. Քալիսթեր: Երաժշտությունը մատուցեց Թաբերնաքլի Երգչախումբը, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվորթ. "O Thou Rock of Our Salvation," *Hymns,* no. 258; "Sabbath Day," *Hymns,* no. 148; "Hark, All Ye Nations!" *Hymns,* no. 264, arr. Wilberg, unpublished; "Let Us All Press On," *Hymns,* no. 243; "Have I Done Any Good?" *Hymns,* no. 223, arr. Zabriskie, pub. Plum; "The Spirit of God," *Hymns,* no. 2, arr. Wilberg, unpublished:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 3 ԱՊՐԻԼԻ, 2011Թ.
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք՝ Երեց Խոսե Ա. Թեքսեյրա: Փակող աղոթք՝ Երեց Քենթ Դ. Վատսոն: Երաժշտությունը մատուցեց Թաբերնաքլի Երգչախումբը, խմբավար՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահարներ՝ Լինդա Մարգեթս և Բոննի Գուդլիֆ. "I Saw a Mighty Angel Fly," *Hymns,* no. 15, arr. Wilberg, unpublished; "I'm Trying to Be like Jesus," *Children's Songbook*, 78–79, arr. Bradford, pub. Nature Sings; "Come, Ye Children of the Lord," *Hymns,* no. 58; "More Holiness Give Me," *Hymns,* no. 131, arr. Staheli, pub. Jackman:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ, 2 ԱՊՐԻԼԻ, 2011Թ., ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Էլեյն Ս. Դալտոն: Բացող աղոթք՝ Էմիլի Լյուիս: Փակող աղոթք՝ Բեթանի Ռայթ: Երաժշտությունը մատուցեց Երիտասարդ Կանանց երգչախումբը Սոլթ Լեյք Սիթի տարածքի ցցերից, խմբավար՝ Մերիլի Վեբ, երգեհոնահարներ՝ Լինդա Մարգեթս և Բոննի Գուդլիֆ. "High on the Mountain Top," *Hymns,* no. 5; "Guardians of Virtue," *Strength of Youth Media 2011: We Believe,* unpublished (cello: Jessica Hunt); "I Know That My Redeemer Lives," *Hymns,* no. 136, arr. Lyon, pub. Jackman (harp: Hannah Cope); "How Firm a Foundation," *Hymns,* no. 85, arr. Wilberg, unpublished:

ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Գերագույն համաժողովի ելույթները շատ լեզուներով մատչելի են conference.lds.org կայքում: Ընտրեք լեզուն: Սովորաբար համաժողովից հետո երկու ամսվա ընթացքում առդիոձայնագրությունները կարելի է ձեռք բերել բաշխման կենտրոններից:

ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐ
Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար ընտրեք այն ուղերձը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում ուսուցանում եք:

ՇԱՊԿԻ ՎՐԱ
Առջևում. Լուսանկար Վեսթոն Քոլթոնի կողմից: Ետևում. Լուսանկար Լես Նիլսոնի կողմից:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ
Գերագույն Համաժողովի տեսարանները լուսանկարել են Սոլթ Լեյք Սիթիում՝ Քրեյգ Դայմոնդը, Վելդեն Ս. Անդերսենը, Ջոն Լյուքը, Մեթյու Ռեյերը, Քրիստինա Սմիթը, Քոդի Բելը, Լես Նիլսոնը, Վեսթոն Քոլթոնը, Սառա Ջենսենը և Դերեկ Իսրաելսենը; Արգենտինայում՝ Մարսելինո Թոսենը; Բրազիլիայում՝ Լորենի Ադեմար Ֆոչետտոն, Անա Կլաուդիա Սուզա դե Օլիվեյրան և Վերուսկա Օլիվեյրան; Էկվադորում՝ Ալեքս Ռոմինի; Գերմանիայում՝ Միրկո Քյուբը; Յամայկայում՝ Ալեքսիա Փոմմելը; Մեքսիկայում՝ Էրիկա Գոնզալես Լարջը; Ֆիլիպիններում՝ Վիլմոր Լա Տորը; Պորտուգալիայում՝ Ջուլիանա Օլիվեյրան; Ռումինիայում՝ Մատեյ Ֆլորինը; Սլովենիայում՝ Իվան Մայքը; Հարավային Աֆրիկայում՝ Քեվին Քունին; Ուկրաինայում՝ Մարինա Լուկաչը; Մերիլենդում՝ ԱՄՆ՝ Սաշա Ռոզը; և Զամբիայում՝ Թավանդա Մառուզան:

ՄԱՅԻՍ 2011 ՀԱՏ. 12 Հ. 2
ԼԻԱՀՈՆԱ 09685 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Քֆ. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջոզեֆ Բ. Վիրթլին, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Փոլ Բ. Փիփեր

Խորհրդատուներ. Սթեվեն Գ. Էլիս, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Յոշիհիկո Կիկուչի

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխթ

Խմբագրական տնօրեն. Վինսենթ Ա. Վոն

Գրաֆիկայի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագրի օգնականներ. Ջենիֆեր Լ. Գրինվուդ, Ադամ Ս. Օլսոն

Խմբագրի տեղակալ. Ռայան Քար

Խմբագրի օգնական. Սյուզան Բարթեթ

Խմբագրական կազմ. Բրիթանի Բիթի, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լառեն Փորթեր Գանթ, Լարի Հիլեր, Քարի Քաստեն, Ջենիֆեր Մադի, Մելիսա Մերիլ, Մայքլ Ռ. Մորիս, Սալլի Յ. Օդեկիրք, Ջոշուա Ջ. Թերքի, Չեդ Ե. Փարես, Ջեն Փինբորո, Ջեսեթ Թոմաս, Փոլ Վանդեբերգ, Մելիսա Ջենտեսո

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի գծով տնօրեն. Սքոթ Վան Քեմփեն

Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս

Ավագ դիզայներներ. Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Ս. Չայլդ, Քոլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն, Սքոթ Մ. Մոյ

Արտադրություն. Քալի Ռ. Արոյո, Քոլեթ Նեբեքեր Սուն, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարդեթ, Ռեջինալդ Ջ. Քրիսչենսեն, Քիմ Ֆենցերմեյքեր, Քեթլին Հովարդ, Դենիզ Քըրբի, Ջինի Ջ. Նիլսոն

Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ

Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ծխի/ճյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերն ու հարցերն ուղարկեք հետևյալ հասցեով. *Liahona,* Room 2420, 50 East North Temple Street, Salt Lake City, UT 84150-0024, USA; կամ էլ-փոստով. liahona@ldschurch.org.

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: May 2011 Vol. 12 No. 2. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

ԽՈՍՆԱԿՆԵՐԻ ԱՅԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Ալրեդ, Սիլվիա, Հ., 84
Այրինգ, Հենրի Բ., 22, 62, 125
Անդերսեն, Նիլ, Լ., 49
Բալլարդ, Մ. Ռասսել, 46
Բեդնար, Դեյվիդ Ա., 87
Բըրթն, Հ. Դեյվիդ, 81
Գիբսոն, Լարրի Մ., 55
Գոնզալես, Վոլթեր Ֆ., 13
Գրոու, Ս. Սքոթ, 108
Դալտոն, Էլեյն Ս., 121
Դե Հոյոս, Բենջամին, 106
Դիբ, Էն Մ., 115
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 111
Մեյնզ, Ռիչարդ Ջ., 37
Մոնսոն, Թոմաս Ս., 4, 66, 90, 114
Նելսոն, Ռասսել Մ., 34
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 26, 58, 70
Ջոնսոն, Փոլ Վ., 78
Ռիչարդս, Քենթ Ֆ., 15
Ռոբբինս, Լին Գ., 103
Սամուելսոն, Սեսիլ Օ., Կրտսեր, 40
Սթիվենս, Ջին Ա., 10
Մնոու, Սթիվեն Ի., 53
Սքոթ, Ռիչարդ Գ., 94
Փաքեր, Բոյդ Կ., 30
Փերի, Լ. Թոմ, 6
Փրաթ, Քարլ Բ., 101
Քուք, Մերի Ն., 118
Քուք, Քվենթին Լ., 18
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 97
Օուքս, Դալլին Հ., 42

ԹԵՄԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ազնվություն, 121
Ահարոնյան Քահանայություն, 55
Աղոթք, 125
Ամուսնություն, 42, 66, 94
Աշակերտություն, 13, 84, 111
Աշխատանք, 84
Ապահարզան, 66
Ապաշխարություն, 40, 97, 108
Առաջնահերթություններ, 42
Առաքինություն, 115, 121
Բարյացակամություն, 118
Բարություն, 118
Բարօրության ծրագիր, 22, 81, 84
Գերագույն համաժողով, 111, 114
Գթություն, 46, 53, 81
Երեխաներ, 10, 37, 103
Երկրորդ Գալուստ, 49
Երկրպագություն, 6
Զատիկ, 114
Զոհաբերություն, 90
Ընտանիք, 10, 18, 37, 90, 94
Ընտրության ազատություն, 42
Ինքնապահովում, 22, 81, 84
Լույս, 87
Խորհուրդներ, 18
Ծառայություն, 22, 46, 55, 58, 70, 81, 84, 118
Ծնողներ, 37, 94, 103
Կանայք, 18
Հաղորդություն, 6
Համբերություն, 15, 78
Հայտնություն, 30, 87
Հանգստյան օր, 6
Հավատք, 18, 34, 42, 53, 70, 78, 87, 101, 106, 125
Հեզություն, 10, 15
Հիսուս Քրիստոս, 6, 13, 15, 30, 78, 103, 108, 114
Հնազանդություն, 10, 34, 40, 87, 97, 101, 103, 125
Հույս, 53
Զախորդություն, 15, 34, 78, 106
Ղեկավարում, 55, 62
Ճշմարտություն, 40, 121
Մայրություն, 18
Մարգարեներ, 111
Մարդասիրական օգնություն, 4
Միսիոներական աշխատանք, 4, 46, 49
Նախապատրաստություն, 49
Նոր Կտակարան, 6
Ուխտեր, 13, 90, 94, 115
Ուղղում, 97
Ուսուցում, 37
Չափանիշներ, 111
Պարտականություն, 55, 62
Պիոներներ, 53
Սեր, 13, 22, 46, 62, 84, 94
Սուրբ Հոգի, 30, 40, 58, 70, 87, 111
Սուրբ գրություններ, 30
Սրբեր, 106
Սփոփող Միություն, 84
Վկայություն, 40, 66, 125
Տաճարներ, 4, 90, 115
Տասանորդ, 10, 34, 101
Ցանկություններ, 42
Քահանայություն, 30, 49, 58, 62, 66
Քավություն, 15, 40, 53, 106, 108, 114
Օրինակ, 10, 121, 125
Օրհնություններ, 34, 78, 101

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Կրկին համաժողով է

Շնորհակալություն ձեր հավատքի և ավետարանին ձեր նվիրվածության համար, այն սիրո և հոգատարության համար, որ դուք ցուցաբերում եք մեկդ մյուսի նկատմամբ և այն ծառայության համար, որ դուք մատուցում եք:

Երբ այս շենքը պետք է կառուցվեր, մենք մտածում էինք, որ այն երբեք չի լցվի: Միայն նայեք դրան այժմ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, որքան լավ է կրկին միասին լինելը, մինչ մեկնարկում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 181-րդ ամենամյա գերագույն համաժողովը:

Վերջին վեց ամիսները, կարծես, սրընթաց անցան, մինչ ես զբաղված էի իմ պարտականություններով: Այդ ընթացքում մեծ օրհնություններից մեկը սքանչելի Լեյի Հավայան Տաճարի վերանվիրագործումը եղավ, որը մոտ երկու տարի մեծածավալ վերանորոգման մեջ էր գտնվում: Ինձ ուղեկցում էին Նախագահ և Քույր Հենրի Բ. Այրինգը, Երեց և Քույր Քվենթին Լ. Քուքը և Երեց և Քույր Վիլիամ Ռ. Վոքերը: Տաճարի

վերանվիրագործման նախօրեին, նոյեմբերյան մի երեկո, ԲՅՀ-Հավայի համալսարանի շուրջ 2000 երիտասարդներ լցրեցին Քենոն Միջոցառումների Կենտրոնը և ներկայացում մատուցեցին մեզ: «Հավաքման վայրը» վերնագրով նրանց ներկայացումը ստեղծագործ վարպետությամբ պատկերում էր տեղի Եկեղեցու և տաճարի պատմության նշանակալից իրադարձությունները: Ին՜չ սքանչելի երեկո էր դա:

Հաջորդ օրը հոգևոր խնջույք էր՝

տաճարը վերանվիրագործվեց երեք նիստերի ընթացքում: Տիրոջ Հոգին մեծ առատությամբ իջավ մեզ վրա:

Մենք շարունակում ենք տաճարներ կառուցել: Այս առավոտ ես պատիվ ունեմ հայտարարելու երեք լրացուցիչ տաճարների մասին, որոնց համար տարածքները ձեռք են բերվել և որոնք զալիք ամիսների և տարիների ընթացքում կկառուցվեն հետևյալ վայրերում. Ֆորտ Քոլլինս, Կոլորադո; Մերիդիան, Այդահո; և Վինիպեգ, Մանիտոբա, Կանադա: Դրանք անշուշտ օրհնություն կլինեն այդ տարածքներում մեր անդամների համար:

Ամեն տարի տաճարներում կատարվում են միլիոնավոր ծեսեր: Թող որ մենք շարունակենք հավատքով կատարել այդ ծեսերը, ոչ միայն մեր, այլ նաև մեր մահացած հարազատների համար, ովքեր չեն կարող դրանք անել իրենց համար:

Եկեղեցին շարունակում է մարդասիրական օգնություն տրամադրել աղետից տուժած վայրերին: Վերջերս, թե մեր սրտերը և թե՝մեր օգնությունն ուղղված էին դեպի Ճապոնիա՝ կործանարար երկրաշարժի, ցունամիի և դրանց հաջորդած ատոմային աղետի խնդիրներին: Մենք բաշխել ենք ավելի քան 70 տոննա ապրանք, ներառյալ՝ սնունդ, ջուր, ծածկոցներ, անկողին, հիգիենայի պարագաներ, հագուստ և վառելիք: Մեր երիտասարդ ամուրիները, կամավոր հսկայական աշխատանք են կատարել, նվիրաբերելով իրենց

ժամանակը, համացանցով, հասարակական լրատվամիջոցներով և ժամանակակից հաղորդակցման այլ եղանակներով փնտրելով կորած անդամներին: Անդամները սքութերների օգնությամբ, Եկեղեցու կողմից տրամադրած օգնությունը հասցրել են այն տարածքները, որտեղ մեքենայով անհնար էր հասնելը: Օգնության ծրագրերի շնորհիվ կազմակերպվել են հիգիենայի և մաքրության փաթեթների հավաքվում, որոնք ուղղարկվել են Տոկիոյում, Նագոյայում և Օսակայում բազմաթիվ ցցեր: Միչայժմ ծառայության ավելի քան 40000 ժամ է նվիրաբերվել ավելի քան 4000 կամավորների կողմից: Մեր օգնությունը կշարունակվի Ճապոնիայում և ցանկացած այլ տարածքում, որտեղ կլինի դրա կարիքը:

Իմ եղբայրներ և քույրեր, ես շնորհակալ եմ ձեր հավատքի և ավետարանին ձեր նվիրվածության համար, այն սիրո և հոգատարության համար, որ դուք ցուցաբերում եք մեկդ մյուսի նկատմամբ և այն ծառայության համար, որ դուք մատուցում եք ձեր ծխերում, ճյուղերում, ցցերում և շրջաններում: Շնորհակալ եմ նաև տասանորդը և նվիրատվությունները վճարելու ձեր հավատարմության և Եկեղեցու մյուս ֆոնդերին ներդրումային ձեր առատաձեռնության համար:

2010 թ. ավարտի դրությամբ ողջ աշխարհի 340 միսիաներում 52225 թվով միսիոներներ էին ծառայում: Միսիոներական աշխատանքը արքայության կենդանի արյունն է: Ուստի առաջարկում եմ, որ հնարավորության դեպքում դուք ձեր ներդրումը կատարեք Եկեղեցու Միսիոներական Ընդհանուր Ֆոնդին:

Այժմ, եղբայրներ և քույրեր, մենք անհամբերությամբ սպասում ենք լսելու այն ուղերձները, որոնք այսօր և վաղը կհնչեն մեզ համար: Նրանք, ովքեր մեզ կդիմեն իրենց խոսքով, իրենց ելույթները պատրաստելիս, անշուշտ հայցել են երկնային օգնություն և առաջնորդություն: Որ մենք լցվենք Տիրոջ Հոգով և բարձրացվենք և ոգեշնչվենք, լսելով և սովորելով, սա է իմ աղոթքը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց L. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հանգստության օրը և հաղորդությունը

Թող ձեր ընտանիքը լցվի սիրով, երբ դուք հարգում եք ողջ Հանգստության օրը և զգում դրա հոգևոր օրհնությունները շաբաթվա ընթացքում:

Ողջ աշխարհում իմ եղբայրներ և քույրեր այս առավոտ մենք եկել ենք լսելու մարգարեի ձայնը: Ես վկայում եմ, որ այն ձայնը, որը մենք նոր լսեցինք, այսօր երկրի վրա Աստծո կենդանի մարգարեի՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ձայնն է: Եվ թե որքան ենք մենք օրհնված նրա ուսուցանմամբ և օրինակով:

Այս տարի մենք բոլորս հնարավորություն ունենք ուսումնասիրելու Նոր Կտակարանի մարգարեների խոսքերը Կիրակնօրյա Դպրոցում: Հին Կտակարանը ուսուցանում է մարգարեների և մարդկանց մասին, մինչդեռ Նոր Կտակարանը կենտրոնացած է միայն մեկ Մարդու կյանքի և ազդեցության վրա, ով եկավ այս մահկանացու կյանք երկնքի և երկրի երկակի քաղաքացիություն ունենալով՝ մեր Փրկիչ և Քավիչ Հիսուս Քրիստոսի մասին:

Այսօր աշխարհն այնքան հագեցած է մարդկանց վարդապետություններով, որ հեշտ է մոռանալ և կորցնել հավատքը Փրկչի կյանքի և ծառայության այդ առավել կարևոր պատմության՝ Նոր Կտակարանի հանդեպ: Այս սուրբ հատորը սուրբ գրությունների պատմության առանցքն է, ինչպես որ Փրկիչը պետք է լինի մեր կյանքի առանցքը: Մենք պետք է պարտավորվենք ուսումնասիրել և փայփայել այն:

Իմաստության անգին մարգարիտներ կարելի է գտնել Նոր Կտակարանի ուսումնասիրության մեջ: Ես միշտ հաճույքով կարդում եմ Պողոսի մասին, երբ նա ճանապարհորդում և կազմակերպում էր Փրկչի Եկեղեցին, հատկապես նրա ուսմունքները Տիմոթեոսին: Տիմոթեոսին ուղղված Պողոսի գրությունների չորրորդ գլխում մենք կարդում ենք. «Այս բաները պատվիրիր և սովորեցրու: . . . Օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով»:[1] Չեմ կարծում, որ հավատացյալների համար օրինակ լինելու ավելի լավ ճանապարհ կա, քան Հանգստության օրը սուրբ պահելը սկսելը կամ շարունակելը:

Աշխարհի Արարումից սկսած մի օրն առանձնացվեց մյուս բոլոր օրերից: «Եվ Աստված օրհնեց յոթներորդ օրը, և սրբեց նորան»:[2] Անգամ Աստված հանգստացավ Իր աշխատանքից այդ օրը, և Նա ակնկալում է Իր զավակներից նույնը: Իսրայելի

զավակներին Նա տվել է այս պատվիրանը.

«Հիշիր հանգստության օրը նորան սուրբ պահելու համար։

Վեց օր աշխատիր և քո բոլոր գործն արա.

Բայց յոթներորդ օրը՝ քո Եհովա Աստծո հանգստության օր է։ . . .

. . .Նորա համար Եհովան օրհնեց հանգստության օրը և սրբեց նորան»։[3]

Հանգստության օրը պահելու սովորույթը պետք է միշտ երկրպագություն ներառի։ Երբ Ադամն ու Եվան մահկանացու կյանք մտան, նրանց պատվիրվեց, որ «երկրպագեն Տիրոջը՝ իրենց Աստծուն, և իրենց հոտերի առաջնեկներին պետք է ընծա մատուցեն Տիրոջը։ . . . Դա Հոր Միածնի զոհաբերության նմանությունն է»։[4] Կենդանիների զոհաբերությունը հիշեցնում էր Ադամի սերնդին, որ մի օր Աստծո Գառը՝ Հիսուս Քրիստոսը կզոհաբերի Իր սեփական կյանքը մեզ համար։

Իր կյանքի ընթացքում Փրկիչը խոսել է այս զոհաբերության մասին։[5] Խաչման նախօրեին Նրա խոսքերը սկսեցին իրականանալ։ Նա հավաքելով Իր աշակերտներին վերին սենյակում, աշխարհի ազդեցությունից հեռու։ Նա հիմնեց Տիրոջ Ընթրիքի հաղորդությունը։

«Եվ նորանք դեռ ուտում էին, Հիսուսն հացն առավ և օրհնելով կտրեց, և աշակերտներին տվավ և ասեց. Առեք, կերեք, այս է իմ մարմինը։

Եվ բաժակն առավ և ասեց. Խմեցեք դորանից ամենքդ։

Որովհետև այդ է իմ արյունը նոր ուխտի, որ թափվում է շատերի համար՝ ի թողություն մեղաց»։[6]

Այդ ժամանակից ի վեր Փրկչի Քավությունը դարձավ մեծագույն և վերջին զոհաբերությունը։ Երբ Իր Հարությունից հետո Նա հայտնվեց Ամերիկյան մայրցամաքում, նա շնորհեց Իր քահանայությունը Իր աշակերտներին և ներկայացրեց հաղորդությունը, ասելով.

«Եվ դուք միշտ պիտի հետևեք, որ անեք դա. . . ճիշտ ինչպես ես կտրեցի հացը և օրհնեցի այն, և տվեցի ձեզ։

. . .Եվ դա կլինի մի վկայություն Հորը, որ դուք միշտ հիշում եք ինձ։

Եվ եթե դուք միշտ հիշեք ինձ, դուք իմ Հոգին կունենաք ձեզ հետ»։[7]

Հատկանշական է, որ անգամ ուրացության խավար տարիներին Հանգստության օրվա երկրպագությունը և հաղորդությունը շարունակվում էին կիրառվել տարբեր ձևերով։

Երբ ավետարանը վերականգնվեց, երեք Առաքյալները՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, ովքեր առաջինը Փրկչից ստացան հաղորդությունը, հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին։ Նրանց ղեկավարության ներքո վերականգնվեց քահանայության իշխանությունը, որն անհրաժեշտ է հաղորդությունը Եկեղեցու անդամներին սպասավորելու համար։[8]

Փրկչի կողմից Իր մարգարեներին և առաքյալներին, իսկ նրանց կողմից՝ մեզ շնորհվելով, քահանայության այդ իշխանությունը շարունակում է այսօր գործել երկրի վրա։ Քահանայության երիտասարդ կրողները ողջ աշխարհում արժանանում են քահանայության զորությունը գործածելուն, ջանասիրաբար պահելով պատվիրանները և ապրելով ավետարանի չափանիշներով։ Երբ այս երիտասարդ տղամարդիկ

պահում են իրենց ձեռքերը և սրտերը հոգևոր մաքրության մեջ, նրանք պատրաստում, օրհնում և բաժանում են հաղորդությունը Փրկչի ձևով՝ այն ձևով, որը Նա հիմնել է 2000 տարի առաջ:

Հաղորդությունը ընդունելը Հանգստության օրը սուրբ պահելու հիմքն է: Վարդապետություն և Ուխտերում Տերը մեզ բոլորիս պատվիրում է.

«Եվ որ դու կարողանաս էլ ավելի անբիծ պահել քեզ աշխարհից, դու պետք է գնաս աղոթքի տուն և քո հաղորդությունները մատուցես իմ սուրբ օրը.

Քանզի, ճշմարիտ, դա է քեզ նշանակված օրը, որ քո աշխատանքներից հանգստանաս և քո տուրքը մատուցես Բարձրյալին . . .

Եվ այդ օրը դու ուրիշ բաներ չպիտի անես»:[9]

Խորհելով մեր կյանքում հաղորդության և Հանգստության օրվա կարևորության մասին, ի հայտ են գալիս երեք պահանջ, որոնք Տերն ունի մեր նկատմամբ: Առաջինը, պահել մեզ անբիծ աշխարհից: Երկրորդը, գնալ աղոթքի տուն և ընդունել մեր հաղորդությունը: Եվ երրորդ, հանգստանալ մեր գործերից:

Փառավոր բան է Քրիստոնյա լինելը և Քրիստոսի ճշմարիտ աշակերտի նման ապրելը: Մեր մասին Նա ասել է. «Այս աշխարհիցը չեն, ինչպես ես էլ այս աշխարհիցը չեմ»:[10] Որպեսզի մենք մեզ աշխարհից անբիծ պահենք, Նա ցանկանում է, որ մենք խուսափենք Հանգստության օրը աշխատանքի և զվարճանքի հետ կապված աշխարհիկ ազդեցություններից:

Ես համոզված եմ, որ Նա նաև ցանկանում է, որ մենք պատշաճ հագնվենք: Մեր երիտասարդները կարող են մտածել հին ասացվածքի մասին. «Հանգստության օրվա լավագույն հագուստը հնառճ է»: Մինչդեռ մենք գիտենք, որ երբ կիրակնօրյա հագուստը հնանում է, դառնալով ամենօրյա, փոխվում են նաև մոտեցումները և գործողությունները: Իհարկե, հնարավոր է մեր երեխաների համար կարիք չլինի կրելու կիրակնօրյա պաշտոնական հագուստ մինչև արևի մայր մտնելը: Ինչևէ, հագուստի միջոցով, որը մենք նրանց խրախուսում ենք կրել, և ծրագրած միջոցառումների միջոցով մենք օգնում ենք նրանց պատրաստվել հաղորդությանը և վայելել օրհնությունները ողջ օրվա ընթացքում:

Ի՞նչ է նշանակում մեր հաղորդությունը տալ Տիրոջը: Մենք ընդունում ենք, որ բոլորս սխալներ ենք կատարում: Յուրաքանչյուրս մեր մեղքերը և սխալները մեր Երկնային Հորը և նրանց, ում վիրավորել ենք, խոստովանելու և դրանցից ազատվելու կարիք ունենք: Հանգստության օրը արժեքավոր հնարավորություն է մեզ տալիս այդ ամենը՝ մեր հաղորդությունը, Տիրոջը տալու համար: Նա ասել է. «Բայց հիշիր, որ այս՝ Տիրոջ օրը, դու պետք է Բարձրյալին մատուցես քո պատարագներն ու քո հաղորդությունները՝ խոստովանելով մեղքերդ քո եղբայրների և Տիրոջ առաջ»:[11]

Երեց Մելվին Ջ. Բալլարդը առաջարկել է. «Մենք ուզում ենք, որ յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ ճաշակի հաղորդության սեղանից, որովհետև դա ինքնաքննության, ինքնաստուգարքի վայր է, որտեղ մենք կարող ենք սովորել շտկել մեր ուղին և ուղղել մեր անձնական կյանքը, ներդաշնակության մեջ դնելով մեզ Եկեղեցու ուսմունքների և մեր եղբայրների և քույրերի հետ»:[12]

Երբ մենք արժանիորեն ընդունում ենք հաղորդությունը, մենք վկայում ենք, որ պատրաստ ենք վերցնելու Փրկչի անունը մեզ վրա և պահելու Նրա պատվիրանները և միշտ *հիշելու* Նրան, որպեսզի Նրա Հոգին մեզ հետ լինի: Այդ ճանապարհով նորոգվում է մեր մկրտության ուխտը: Տերն Իր աշակերտներին հավաստիացրել է, որ եթե անեն դա, կհիշեն այն ժամը, երբ Նա իրենց հետ էր:[13]

Երբեմն մենք մտածում ենք, որ մեր գործերից հանգստանալը նշանակում է թողնել մեր գործերը և «Փակ է» ցուցանակ կախել աշխատանքի վայրի դռան վրա: Սակայն, այսօրվա աշխարհում, աշխատանքը պահանջում է մեր կյանքի բոլոր օրերը: Դա ենթադրում է աշխատանքային գործունեություն, որը մենք կարող ենք անել տնից, սպորտային մրցումները և այլ գործունեություն, որը կարող է մեզ զրկել Հանգստության օրվա երկրպագությունից և ուրիշներին ծառայելու հնարավորությունից:

«Մի կատակիր սրբազան բաների հետ»,[14] - հայտնել է Տերը Վերջին Օրերի Սրբերին, ինչպես նաև հիշեցնում է մեզ այն, ինչ Նա ասել է Իր աշակերտներին. «Շաբաթը մարդի համար եղավ, և ոչ թե մարդը շաբաթի համար»:[15]

Եղբայրներ և քույրեր, վերջին օրերին թշնամին հաջողության է հասնում, երբ մենք թուլացնում ենք Փրկչի հանդեպ մեր պարտավորվածությունը, անտեսում ենք Նոր Կտակարանի և մյուս սուրբ գրությունների Նրա ուսմունքները և դադարում ենք հետևել Նրան: Ծնողներ, այժմ է ժամանակը սովորեցնելու մեր երեխաներին լինել օրինակ հավատացյալներին, հաճախելով հաղորդության ժողովին: Երբ գալիս է կիրակի առավոտը, օգնեք նրանց լավ հանգստացած լինել, պատշաճ հագնված և հոգեպես պատրաստված ընդունելու հաղորդության խորհրդանշանները և ստանալու Սուրբ Հոգու լուսավորող, կրթող, ազնվացնող զորությունը: Թող ձեր ընտանիքը լցվի սիրով, երբ դուք հարգում եք ողջ Հանգստության օրը և զգում դրա հոգևոր օրհնությունները շաբաթվա ընթացքում: Հրավիրեք ձեր որդիներին և դուստրերին «Վեր կացեք և շողացեք», պահելով Հանգստության օրը սուրբ, որպեսզի «նրանց լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար»:[16]

Մինչ տարիներն անցնում են, ես շարունակում եմ հիշել իմ պատանեկության և երիտասարդության Հանգստության օրերը: Ես դեռ հիշում եմ առաջին օրը, երբ որպես սարկավագ սպասավորեցի հաղորդությունը, և ապակե փոքր բաժակները, որը փոխանցում էի մեր ծխի անդամներին: Մի քանի տարի առաջ իմ հարազատ քաղաքի Եկեղեցու շենքը վերանորոգվեց: Ամբիոնի մի հատված փակված էր: Երբ այն բացվեց, հայտնվեցին տարիների ընթացքում թաքնված այդ փոքրիկ ապակե բաժակները: Դրանցից մեկը տրվեց ինձ որպես հիշատակ:

Ես հիշում եմ նաև կանաչ արկղը, որը մեզ հետ էր Ծովային ուժերում: Արկղի ներսում կար փայտից մի սկուտեղ և հաղորդության բաժակների փաթեթ, որպեսզի մենք կարողանայինք օրհնվել Տիրոջ Ընթրիքի խաղաղությամբ և հույսով, անգամ հակասություններով և հուսահատությամբ լցված պատերազմի տարիներին:

Երբ մտածում եմ իմ երիտասարդության հաղորդության այդ բաժակների մասին, մեկը իմ պատանեկության հայրենի դաշտավայրում, մյուսը հազարավոր մղոններ հեռու՝ Խաղաղ օվկիանոսում, լցվում եմ երախտագիտությամբ նրա համար, որ Աշխարհի Փրկիչը ցանկացավ խմել ինձ համար այդ «դառը բաժակից»:[17] Եվ քանի որ Նա խմեց, ես, Սաղմոսողի նման, կարող եմ ասել, որ «իմ բաժակը խիստ լիքն է»[18] Նրա անսահման և հավերժական Քավության օրհնությամբ:

Այսօր, Հանգստության օրվա նախօրեին, երբ մենք սկսում ենք այս մեծ համաժողովը, եկեք հիշենք այն օրհնությունները և հնարավորությունները, որ մերն են, երբ ամեն շաբաթ հաճախում ենք հաղորդության ժողովին մեր ծխերում և ճյուղերում: Եկեք պատրաստվենք և Հանգստության օրը մեզ այնպես պահենք, որ վար բերենք մեզ և մեր ընտանիքներին խոստացված օրհնությունները: Ես բերում եմ իմ հատուկ վկայությունը, որ մեծագույն ուրախությունը, որը մենք ստանում ենք այս կյանքում, գալիս է Փրկչին հետևելու արդյունքում: Թող որ մենք պահենք Նրա պատվիրանները, սուրբ պահելով Նրա օրը, իմ աղոթքն է, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ա Տիմոթեոս Դ.11-12:
2. Ծննդոց 2.3:
3. Ելից 20.8-11:
4. Մովսես 5.5,7:
5. Տես օրինակ, ՄԱրկոս 10.32–34; Հովհաննես 2.19; 10.17; 12.32:
6. Մատթեոս 26.26–28:
7. 3 Նեփի 18.6–7:
8. Տես Joseph Smith—History 1.68–69, 72; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 27.12–13:
9. Վարդապետություն և Ուխտեր 59,9-10.13:
10. Հովհաննես 17.16:
11. Վարդապետություն և Ուխտեր 59.12:
12. In Bryant S. Hinckley, Sermons and Missionary Services of Melvin Joseph Ballard (1949), 150.
13. Joseph Smith Translation, Մարկոս 14.21, in Bible appendix.
14. Վարդապետություն և Ուխտեր 6.12:
15. Մարկոս 2.27:
16. Վարդապետություն և Ուխտեր 115.5:
17. 3 Նեփի 11.11:
18. Սաղմոս 23.5:

Կիև, Ուկրաինա



Ջին Ա. Սթիվենս
Երեխաների Գերագույն Նախագահության
Առաջին Խորհրդական

Դառնալ փոքր երեխայի նման

Եթե մենք ունենք սիրտ՝ սովորելու երեխաներից և ցանկություն՝ հետևելու նրանց օրինակին, ապա նրանց աստվածային հատկանիշները կարող են բանալի հանդիսանալ, որը կբացի մեր իսկ հոգևոր աճի դուռը:

Ս ներ Երկնային Հայրն, Իր մեծ իմաստությամբ և սիրով, ուղարկում է Իր հոգևոր որդիներին և դուստրերին այս երկիր՝ որպես երեխաներ: Նրանք գալիս են ընտանիքներ որպես թանկարժեք նվերներ՝ աստվածային էությամբ և ճակատագրով: Մեր Երկնային Հայրը գիտի, որ երեխաները օգնում են մեզ դառնալ Իր նման: Այնքան շատ բան մենք կարող ենք սովորել երեխաներից;

Այս կարևոր ճշմարտության մի վառ դրսևորում տեղի ունեցավ մի քանի տարի առաջ,երբ Յոթանասունի մի անդամ հանձնարարությամբ մեկնել էր Հոնգ Կոնգ: Այցելելով մի շատ համեստ ծուխ, որը տարիներ շարունակ պայքարում էր, փորձելով ապահովել իր կարիքները, ու երբ եպիսկոպոսը փորձում էր նկարագրել իրենց այդ անմխիթար իրավիճակը, բարձրագույն իշխանավորը հուշում ստացավ, որ պետք էր անդամներին սովորեցնել տասանորդ վճարել: Եպիսկոպոսը, քաջ գիտակցելով իրենց աղետալի իրավիճակը, էլ ավելի մտահոգվեց, թե ինչպես իրենք կկարողանան հետևել այդ խորհրդին: Նա մտածեց այդ մասին և որոշեց, որ կմոտենա իր ծխի ամենահավատարիմ անդամներին և կհորդորի նրանց վճարել իրենց տասանորդը: Հաջորդ կիրակի նա գնաց Երեխաների խումբ: Նա ուսուցանեց երեխաներին Տիրոջ տասանորդի օրենքը և հարցրեց, թե արդյոք նրանք պատրաստ էին վճարել տասանորդը իրենց վաստակած գումարից: Երեխաներն ասացին, որ կանեն: Եվ վճարեցին:

Հետագայում եպիսկոպոսը ծխի մեծահասակներին պատմեց, որ վեց ամիս նրանց երեխաները հավատարմորեն տասանորդ էին վճարել: Նա նրանց հարցրեց, թե արդյոք իրենք չէին ցանկանա հետևել իրենց երեխաների օրինակին և անել նույնը: Մարդիկ այնքան էին հուզված երեխաների զոհաբերությամբ, որ արեցին այն, ինչն անհրաժեշտ էր տասանորդը վճարելու համար: Եվ երկնքի պատուհանները բացվեցին: Այդ երեխաների հավատարմության օրինակով ծուխը աճեց հնազանդության և վկայության մեջ:

Հետագայում եպիսկոպոսը ծխի մեծահասակներին պատմեց, որ վեց ամիս նրանց երեխաները հավատարմորեն տասանորդ էին վճարել: Նա նրանց հարցրեց, թե արդյոք իրենք չէին ցանկանա հետևել իրենց երեխաների օրինակին և անել նույնը: Մարդիկ այնքան էին հուզված երեխաների զոհաբերությամբ, որ արեցին այն, ինչն անհրաժեշտ էր տասանորդը վճարելու համար: Եվ երկնքի պատուհանները բացվեցին: Այդ երեխաների հավատարմության օրինակով ծուխը աճեց հնազանդության և վկայության մեջ:

«Եթե դարձի չգաք և չլինիք երեխաների նման, չեք մտնիլ երկնքի արքայությունը:

Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնե, նա է մեծ երկնքի արքայության մեջ» (Մատթեոս 18.3–4):

Ի՞նչ մենք պետք է սովորենք երեխաներից: Ի՞նչ հատկանիշներ ունեն նրանք և ի՞նչ օրինակներ են նրանք ծառայում, որոնք օգնում են մեզ մեր հոգևոր զարգացման գործում:

Աստծո այս թանկարժեք ընծաները՝ երեխաները գալիս են մեզ մոտ հավատացող սրտերով: Նրանք լի են հավատքով և զգայուն Սուրբ Հոգու հանդեպ: Նրանք մարմնավորում են խոնարհություն, հնազանդություն և սեր: Հաճախ նրանք առաջինն են, որ սիրում են, և առաջինը, որ ներում են:

Թույլ տվեք կիսվել մի քանի փորձառություններով, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարող են երեխաներն օրինել մեր կյանքը Քրիստոսանման հատկանիշների իրենց անմեղ, բայց զորեղ օրինակներով:

Երկու տարեկան փոքրիկ մի տղա՝ Թոդը, վերջերս իր մայրիկի հետ գնացել էր արվեստի թանգարան, որտեղ Փրկչի նկարների հատուկ և շատ գեղեցիկ ցուցահանդես էր: Անցնելով այդ սուրբ պատկերների կողքով, մայրը լսեց, ինչպես փոքր տղան պատկառանքով արտասանեց «Հիսուս» անունը: Նա տեսավ, թե ինչպես էր տղան նկարները դիտելիս խաչել ձեռքերը և խոնարհել գլուխը: Կարո՞ղ ենք մենք արդյոք Թոդից սովորել Տիրոջ հանդեպ պատկառանքի, սիրո և խոնարհության մասին:

Անցած աշնանը ես հանդիպեցի 10 տարեկան մի տղայի

Հայաստանում: Սպասելով հաղորդության ժողովի սկսելուն, նա նկատեց ներս մտնող ճյուղի մի ծերունու: Նա արագ հայտնվեց նրա կողքին, որպես հենարան առաջարկելով իր ձեռքը: Նա ուղեկցեց նրան մինչև առաջին շարքը, որտեղ ծերունին կարող էր լսել: Կարո՞ղ է արդյոք բարության այս փոքր դրսևորումը սովորեցնել մեզ, որ Տիրոջ արքայությունում ամենամեծը նրանք են, ովքեր ուրիշներին ծառայելու հնարավորություններ են փնտրում:

Երեխաների խմբի մի աղջնակ, որի անունը Քեթի էր, մեզ սովորեցրեց ընտանիքում ունեցած իր շնորհի ազդեցության մասին: Նա հաճախում էր Երեխաների խումբ և սովորում ավետարանը: Աճող հավատքով և վկայությամբ, Քեթին ծնողների բարձին մի երկտող էր թողել, կիսվելով իր երազանքով, գրելով, որ ավետարանի ճշմարտությունները «բուն» էին դրել «իր սրտում» և որ նա կցանկանար մոտ լինել իր Երկնային Հորը, հնազանդ լինել Նրա պատվիրաններին և տեսնել իր ընտանիքի կնքումը տաճարում: Իրենց անուշիկ դստեր պարզ վկայությունը զորությամբ դիպչեց ծնողների սրտին: Քեթին և նրա ընտանիքը ստացան տաճարի սուրբ ծեսերը և որպես ընտանիք կապվեցին միասին և ընդմիշտ: Քեթիի հավատացող սիրտը և հավատքի օրինակը օգնեց հավերժական օրհնություններ բերել իր ընտանիքին: Կարո՞ղ են արդյոք նրա անկեղծ վկայությունը և Տիրոջ ծրագրին հետևելու ցանկությունը օգնել մեզ ավելի հստակ տեսնել այն, ինչն իրականում ամենամեծ նշանակությունն ունի մեզ համար:

Մեր ընտանիքը սովորում էր մեզ շատ մոտ բարեկամ՝ վեցամյա Լիամից: Անցյալ տարի նա պայքարում էր ուղեղի սաստիկ քաղցկեղի դեմ: Երկու բարդ վիրահատություններից հետո որոշվեց, որ կա ճառագայթման կարիք: Ճառագայթման այդ բուժումների ընթացքում պահանջվում էր, որ նա լիովին մենակ և բացարձակ անշարժ լիներ: Լիամը չէր ուզում հանգստացնող ընդուներ, նրան դուր չէր գալիս դեղերի այդ ազդեցությունը: Նա որոշեց, որ եթե խոսափողով լսեր հոր ձայնը, ապա անշարժ կպառկեր առանց հանգստացնող նյութերի:

Այդ անհանգիստ ու բարդ ժամանակաշրջանում, հայրը խոսում էր նրա հետ խրախուսանքի և սիրո խոսքերով. «Լիամ, թեև դու չես կարող տեսնել ինձ, ես այստեղ եմ: Ես գիտեմ, որ դու կարող ես դա անել: Ես սիրում եմ քեզ»: Լիամը հաջողությամբ ավարտեց ճառագայթման երեսուներեք պահանջվող բուժումները՝ լիովին անշարժ մնալով: Բժիշկները անհնարին էին դա համարում, որովհետև նա այնքան երիտասարդ էր: Ցավի և դժվարությունների ամիսների ընթացքում Լիամի վարակիչ լավատեսությունը դժվարությանը հույսով և անգամ երջանկությամբ դիմակայելու հզոր օրինակ հանդիսացավ: Նրա բժիշկները, բուժքույրերը և անթիվ այլ մարդիկ ոգեշնչված էին նրա քաջությամբ:

Մենք բոլորս կարևոր դասեր ենք սովորում Լիամից՝ դասեր հավատք ընտրելու և մեր Տիրոջը վստահելու մասին: Լիամի նման, մենք չենք կարող տեսնել մեր Երկնային Հորը, սակայն մենք կարող ենք լսել Նրա ձայնը, որը մեզ անհրաժեշտ ուժ է տալիս կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար:

Արդյո՞ք Լիամի օրինակը մեզ չի կարող օգնել ավելի լավ հասկանալ Բենյամին Թագավորի խոսքերը ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար և սիրով լի `երեխայի նման դառնալու մասին (տես Մոսիա 3.19):

Այս երեխաները օրինակ են ծառայում մանկական այն հատկանիշների, որոնք մենք պետք է զարգացնենք կամ բացահայտենք մեր մեջ, որպեսզի մտնենք երկնային արքայություն: Նրանք պայծառ հոգիներ են՝ հավատքով լի և դեռ

չաղտոտված աշխարհի կողմից: Զարմանալի չէ, որ Փրկիչը հատուկ սեր և գնահատանք էր տածում փոքր երեխաների հանդեպ:

Ամերիկաներ Փրկչի ոգեշնչող այցելության ժամանակ, հատկապես առանձնանում է երեխաներին մատուցած Նրա գողտրիկ ծառայությունը: Հուզիչ էր այն, ինչպես էր Նա վերաբերվում յուրաքանչյուր երեխայի.

«Եվ նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը:

Եվ երբ նա արեց այս, նա արտասվեց. . . .

Եվ նա խոսեց բազմության հետ, և ասաց նրանց. Նայեք ձեր փոքրիկներին» (3 Նեփի 17.21–23):

Երեց Մ. Ռասսել Բալլարդը մեզ սովորեցրել է «Նայեք ձեր փոքրիկներին» Փրկչի այս հորդորի կարևորությունը, ասելով. «Նկատեք, որ Նա չի ասում «հայացք գցեք նրանց վրա», կամ «սովորական ձևով հետևեք նրանց», կամ «երբեմն նայեք նրանց ուղղությամբ»: Նա ասում է *նայել* նրանց: Ինձ համար դա նշանակում է ըմբռնել նրանց մեր աչքերով և մեր սրտերով: Մենք պետք է տեսնենք և գնահատենք նրանց, հասկանալով, թե ովքեր են նրանք իրականում՝ աստվածային հատկանիշներով օժտված մեր Երկնային Հոր հոգևոր զավակները» (“Behold Your Little Ones,” *Tambuli,* Oct. 1994, 40; շեշտադրումն ավելացված է):

Չկա «մեր փոքրիկներին նայելու» ավելի կատարյալ վայր, քան մեր ընտանիքները: Տունն է այն տեղը, որտեղ մենք բոլորս կարող ենք միասին սովորել և աճել: Երեխաների խմբի սքանչելի երգերից մեկը մեզ սովորեցնում է այդ ճշմարտությունը.

Աստված մեզ ընտանիք տվեց,
Որ դառնանք այն, ինչ ուզում է Նա:
Այդպես Նա սեր ցույց տվեց,
Երբ ընտանիք մեզ տվեց:
(«Ընտանիքը Աստծուց է», *Լիահոնա,* հոկտ. 2008, Ը12–13.)

Այստեղ՝ մեր ընտանիքներում, սիրո մթնոլորտում ենք մենք ավելի անձնապես տեսնում և գնահատում Նրա հոգևոր զավակների աստվածային հատկանիշները: Այստեղ՝ մեր ընտանիքներում է, որ մեր սրտերը կարող են փափկել, և մենք հնազանդությամբ ցանկանում ենք փոխվել՝ ավելի նմանվելով երեխայի: Դա մի գործընթաց է, որով մենք դառնում ենք ավելի Քրիստոսանման:

Արդյո՞ք կյանքի որոշ փորձառություններ չեն զրկել ձեզ հավատացող սրտից և մանկական հավատքից, որը դուք ունեցել եք նախկինում: Նայեք ձեր շուրջը գտնվող երեխաներին: Ապա կրկին նայեք: Դա կարող է լինեն ձեր ընտանիքի, ձեր փողոցի կամ ձեր ծխի Երեխաների խմբի երեխաները: Եթե մենք ունենք սիրտ՝ սովորելու երեխաներից և ցանկություն՝ հետևելու նրանց օրինակին, ապա նրանց աստվածային հատկանիշները կարող են բանալի հանդիսանալ, որը կբացի մեր իսկ հոգևոր աճի դուռը:

Ես միշտ երախտապարտ կլինեմ իմ սեփական երեխաների օրինության համար: Յուրաքանչյուրի օրինակը ինձ անհրաժեշտ դաս է ուսուցանել: Նրանք օգնել են ինձ ավելի լավը դառնալ:

Ես բերում եմ իմ խոնարհ, սակայն վստահ վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է: Նա միակ կատարյալ Որդին է՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար և սիրով լի: Թող որ յուրաքանչյուրս ունենա սիրտ՝ հետևելու փոքր երեխայի նման դառնալու Նրա օրինակին, և այդպես վերադառնալու մեր երկնային տուն, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Վոլթեր Ֆ. Գոնզալես
Յոթանասունի Նախագահությունից

Քրիստոսի հետևորդները

Քրիստոսի հետևորդները իրենց կյանքը ապրում են Փրկչի օրինակով և քայլում են լույսի մեջ:

Անցյալ հոկտեմբերին ես և կինս ուղեկցում էինք Երեց և Քույր Անդերսեններին նոր տաճարի շինարարության սկիզբը նշանավորող արարողությանը մասնակցելու համար Կորդոբայում, Արգենտինա: Որպես կանոն արարողությանը հաջորդում է մամուլի ասուլիսը, որին մասնակցող մեր եկեղեցու ոչ անդամ մի լրագրող, նշել էր, որ նկատել էր, թե որքան լավ էին վերաբերում եկեղեցու տղամարդիկ իրենց կանանց: Ապա անսպասելիորեն հարցրեց, իրակա՞ն է դա, թե արհեստական»: Ես համոզված եմ, որ նա տեսել և զգացել էր ինչ-որ արտասովոր մի բան: Մի գուցե նա նկատել էր Քրիստոսին նմանվելու և հետևելու մեր անդամների ցանկությունը: Ողջ աշխարհում մեր եկեղեցու անդամները ունեն այդ ցանկությունը: Միևնույն ժամանակ, միլիոնավոր մարդիկ, ովքեր Եկեղեցու անդամ չեն, նույնպես ցանկություն ունեն հետևելու Նրան:

Վերջերս ես և կինս հատկապես տպավորվել էինք, տեսնելով Գանայի և Նիգերիայի մարդկանց: Նրանց մեծ մասը մեր եկեղեցու անդամ չէր: Մենք երջանիկ էինք տեսնելու Քրիստոսին հետևելու նրանց ցանկությունը, որն արտահայտվում էր նրանց զրույցներում, նրանց տներում, նրանց մեքենաներում, և անգամ նրանց պատերի պաստառներում: Մենք երբեք չէինք տեսել իրար մոտ գտնվող այդքան շատ քրիստոնեական եկեղեցիներ:

Որպես Վերջին Օրերի Սրբեր մենք պարտականություն ունենք հրավիրելու նրանց նման միլիոնավոր մարդկանց գալու և տեսնելու, թե ինչ կարող էր ավելացնել մեր եկեղեցին բոլոր այն լավ բաներին, որ իրենք արդեն ունեն: Ցանկացած անձ ցանկացած մայրցամաքից, կլիմայական գոտուց կամ մշակույթից կարող է իր համար իմանալ, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը տեսել է Հորը և Որդուն տեսիլքում: Նրանք կարող են իմանալ, որ երկնային սուրհանդակները վերականգնել են քահանայությունը և որ Մորմոնի Գիրքը, որը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Ենովքին ուղղված Տիրոջ խոսքերով, «արդարություն ցած» ուղարկվեց «երկնքից. և ճշմարտություն առաջ» ուղարկվեց «երկրից, որ վկայություն բերի» Հոր «Միածնի մասին»:[1]

Փրկիչը խոստացել է. «Ով որ իմ ետևից գա, նա խավարումը չի գնալ, այլ կեանքի լույսը կընդունի»:[2] Քրիստոսի հետևորդները իրենց կյանքը ապրում են Փրկչի օրինակով և քայլում են լույսի մեջ: Երկու հատկանիշ կարող են մեզ օգնել հասկանալ, թե ինչ չափով ենք մենք հետևում Նրան: Առաջինը, Քրիստոսի հետևորդները սիրում են մարդկանց: Երկրորդ, Քրիստոսի հետևորդները կապում և պահում են ուխտերը:

Մարդկանց սիրելու հատկանիշներից մեկը, հավանաբար, այն էր, ինչ լրագրողը նկատել էր մեր Եկեղեցու անդամների մեջ: Մենք հետևում ենք Քրիստոսին, որովհետև մենք սիրում ենք Նրան: Երբ մենք հետևում ենք Քավիչին սիրուց դրդված, մենք հետևում ենք Նրա օրինակին: Սիրո միջոցով էր Փրկիչը հնազանդվում Հոր կամքին ցանկացած իրավիճակում: Մեր Փրկիչը հնազանդ էր անգամ այն ժամանակ, երբ պահանջվում էր ֆիզիկական և էմոցիոնալ մեծագույն ցավ տանել, անգամ, երբ ծեծվում և ծաղրի էր ենթարկվում, անգամ երբ Նրա թշնամիները տանջում էին Իրեն, մինչ ընկերները թողել էին Իրեն: Փրկչի քավող զոհաբերությունը, Նրա առաքելության մեծագույն և յուրահատուկ դրսևորումն էր: «Մեր խաղաղության պատիժը նորա վրա եղավ, և նորա վերքերովը մենք բժշկուեցանք»:[3]

Ինչպես Քրիստոսը հետևում էր Հորը ցանկացած իրավիճակում, մենք պետք է հետևենք Նրա Որդուն: Եթե այդպես անենք , ապա կարևոր չի լինի այն հալածանքը, տառապանքը կամ վիշտը, որին մենք ենթարկվում ենք մարմնի մեջ:[4] Մենք միայնակ չենք: Քրիստոսը կօգնի մեզ: Նրա սերը, բարությունն ու ողորմությունը մեզ հզոր կդարձնեն բոլոր իրավիճակներում:[5]

Քրիստոսին հետևելը կարող է շատ թանկ բաներից հրաժարում պահանջել, ինչպես արեց Հռութը Մովաբից: Նորադարձ լինելով, Աստծո և Նոեմի հանդեպ սիրով դրդվելով, նա թողեց ամեն-ինչ՝ կրոնով ապրելու համար:[6]

Քրիստոսին հետևելը կարող է նաև դժվարությանը և զայթակղությանը դիմակայելու կամք պահանջել: Պատանի հասակում Հովսեփը գերության վաճառեցին: Նա զրկվեց ամենից, ինչ սիրում էր: Հետագայում նա անառակության զայթակղության

առաջ կանգնեց: Նա դիմակայեց, ասելով. «Ինչպե՞ս գործեմ այս մեծ չարությունը, և Աստծո դեմ մեղանչեմ»:[7] Աստծո հանդեպ նրա սերը ցանկացած դժվարությունից կամ հայթակղությունից հզոր էր:

Այսօր մենք ունենք ժամանակակից Հռութներ և Հովսեփներ ողջ աշխարհում: Երբ Եղբայր Ջիմի Օլվերսը Գայաքիլից, Էկվադոր, ստացավ միսիայի իր կանչը,նրա ընտանիքը դժվարությունների մեջ էր: Մեկնելու օրը նրան ասացին, որ եթե նա ոտքը դռնից դուրս դնի, ապա այլևս ընտանիք չի ունենա: Կոտրված սրտով նա տնից դուրս եկավ: Սակայն հետո մայրը նրան խնդրում էր երկարաձգել միսիայում ծառայելու իր ժամանակը, որովհետև նրանք բազում օրհնություններ էին ստանում: Այսօր Եղբայր Օլվերսը ցցի հայրապետ է ծառայում:

Իսկապես սիրող Քրիստոսը մեզ տալիս է անհրաժեշտ ուժը՝ Իրեն հետևելու համար: Տերն Ինքն է ցույց տվել դա, երբ Պետրոսին երեք անգամ բարձրաձայն հարցրեց. «Սիրո՞ւմ ես ինձ»: Երբ Պետրոսը բարձրաձայն վերահաստատեց, որ սիրում էր Տիրոջը, Տերն ասաց նրան գալիք դժվարությունների մասին: Ապա եկավ խրատը. «Իմ ետևիցը եկ»: Պետրոսին տված Փրկչի հարցը կարող է նաև տրվել մեզ. «Սիրո՞ւմ ես ինձ», որին կարող է հետևել գործելու կոչը. «Իմ ետևիցը եկ»:[8]

Սերը զորեղ ազդեցություն է գործում մեր սրտերում հնազանդ լինելու մեր ջանքերի վրա: Մեր Փրկչի հանդեպ մեր հավատքը ոգեշնչում է մեզ պահել Նրա պատվիրանները: Մոր, հոր, ամուսնու, կնոջ հանդեպ մեր սերը կարող է նաև ոգեշնչել մեզ հնազանդվել ավետարանի սկզբունքներին: Ուրիշների հանդեպ մեր սերը, միմյանց սիրելու մեր վերաբերմունքը ցույց է տալիս, թե որքանով ենք մենք հետևում մեր Փրկչին:[9] Մենք ցույց ենք տալիս մեր սերը Նրա հանդեպ, երբ կանգ ենք առնում մյուսներին օգնելու համար, երբ կատարելապես ազնիվ և շիտակ ենք ամեն ինչում, և երբ կապում և պահում ենք ուխտերը:[10]

Երկորդ բնորոշ հատկանիշը, որն ունեն Քրիստոսի հետևորդները, ուխտեր կապելն ու պահելն է, ինչպես Նա արեց: Մորոնին ասել է այդ մասին. «Քրիստոսի արյան հեղվելով, որը Հոր ուխտի մեջ է՝ մեղքերի թողության համար, այնպես որ դուք դառնում եք սուրբ՝ առանց բծի»:[11]

Մարգարե Ջոզեֆ Սմիթը ուսուցանել է, որ անգամ այս երկրի արարումից առաջ երկնքում ուխտեր էին կապվում:[12] Հնում ևս՝մարգարեները և հայրապետերը ուխտեր էին կապում:

Փրկիչն Ինքն է ցույց տվել օրինակը: Նա մկրտվեց իշխանություն ունեցողի կողմից, որպեսզի կատարվեր ողջ արդարությունը: Մկրտությամբ Փրկիչը վկայեց Հորը, որ հնազանդ կլինի Հոր բոլոր պատվիրանները պահելիս:[13] Ինչպես հին օրերում, մենք ուխտեր ենք կապում քահանայության ծեսերի միջոցով:

Ուխտերը կարող են լինել այն, ինչ միլիոնավոր մարդիկ, ովքեր մեր եկեղեցու անդամ չեն, միանալով մեզ կարող են ավելացնել այն բոլոր լավ բաներին, որ արդեն ունեն: Ուխտեր կապելու սիրո արտահայտում է: Դա Նրան «Այո, ես կհետևեմ Քեզ» ասելու եղանակ է:

Ուխտերը ներառում են օրհնություններ, ընդհուպ մինչև հավերժական կյանք:[14] Բոլոր բաները կաշխատեն մեր բարիքի համար, եթե մենք հիշենք մեր ուխտերը:[15] Դրանք պետք է կապել և պահել՝ դրանց օրհնությունները ստանալու համար: Փրկչի հանդեպ սերը և մեր ուխտերը հիշելը կօգնեն մեզ պահել դրանք: Հաղորդությունն ընդունելը դրանք հիշելու եղանակներից մեկն է:[16] Մեկ այլ եղանակ է հանդիսանում հաճախ տաճար այցելելը: Ես հիշում եմ մի երիտասարդ ամուսնացած զույգի Հարավային Ամերիկայում, որը ցանկանում էր բաժանվել, որովհետև միասին չէին կարողանում ապրել: Քահանայության ղեկավարը նրանց խորհուրդ տվեց այցելել տաճար և հատուկ ուշադրություն դարձնել այնտեղ կապվող ուխտերի բառերին և խոստումներին: Նրանք արեցին դա և նրանց ամուսնությունը փրկվեց: Մեր ուխտերի զորությունը մեծ է մեր բոլոր դժվարություններից:

Այն անդամներին, ովքեր ակտիվ չեն ավետարանում, խնդրում ենք հետ գալ: Զգացեք ուխտերը հիշելու և նորոգելու օրհնությունը հաղորդության և տաճար հաճախելու միջոցով:

Այդպիսի սիրո արտահայտումը ցուցադրում է Քրիստոսի ճշմարիտ հետևորդը լինելու պատրաստակամությունը: Դա կօգնի ձեզ արժանի լինել ստանալու բոլոր խոստացված օրհնությունները:

Նրանց, ովքեր մեր եկեղեցու անդամ չեն, ես հրավիրում եմ գործադրել հավատք, ապաշխարություն և արժանանալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մկրտության ուխտը ստանալուն: Այդպես դուք կդրսևորեք ձեր սերը մեր Երկնային Հոր հանդեպ և Քրիստոսին հետևելու ձեր պատրաստակամությունը:

Ես վկայում եմ, որ մենք ավելի երջանիկ ենք, երբ հետևում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանին: Երբ մենք աշխատում ենք հետևել Նրան, երկնքի օրհնությունները տրվում են մեզ: Ես գիտեմ, որ Նրա խոստումները կիրականանան, եթե մենք կապենք և պահենք ուխտերը և դառնանք Քրիստոսի ճշմարիտ հետևորդները: Ես վկայում եմ յուրաքանչյուրիս հանդեպ Նրա մեծ սիրո մասին, և անում եմ դա Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 7.62:
2. Հովհաննես 8.12:
3. Եսայիա 53.5:
4. Բ Կորնթացիս 12.7:
5. Տես 2 Նեփի 1.20:
6. Տես Հռութ 1.16:
7. Տես Ծննդոց 39.7–9:
8. Տես Հովհաննես 21.15–19:
9. Տես Հովհաննես 13.35:
10. Ալմա 27.27:
11. Մորոնի 10.33:
12. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 42; տես նաև Spencer W. Kimball, "Be Ye Therefore Perfect" (devotional address, Salt Lake Institute of Religion, Jan. 10, 1975). «Այս մահկանացու կյանք գալուց առաջ՝ երկնքում մենք երդումներ ենք տվել, լուրջ երդումներ: . . . Մենք ուխտեր ենք կապել: Մենք կապել ենք դրանք այստեղ՝ երկրի վրա մեր դիրքն ընդունելուց առաջ»:
13. Տես 2 Նեփի 31.5–7:
14. Աբրահամ 2.11: Տես նաև John A. Widtsoe, "Temple Worship" (lecture, Assembly Hall, Salt Lake City, Oct. 12, 1920), 10. «Ուխտը ճշմարտությանը կյանք է տալիս և հնարավոր դարձնում, որ օրհնությունները վարձատրեն բոլոր նրանց, ովքեր ճիշտ են օգտագործում գիտելիքը»:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 90.24:
16. Տես, օրինակ, 3 Նեփի 18.7–11:

Երեց Քենթ Ֆ. Ռիչարդս
Յոթանասունից

Քավությունը ծածկում է բոլոր ցավերը

Մեր անձնական մեծ մարտահրավերն է մահկանացու կյանքում դառնալ «սուրբ՝ Քրիստոսի Քավության միջոցով»:

Որպես վիրաբույժ իմ մասնագիտական ժամանակի մեծ մասը նվիրված է եղել ցավին: Որպես կանոն, ես վիրահատությամբ ցավ եմ պատճառում գրեթե ամեն օր, և այդ ժամանակ իմ ջանքերի մեծ մասը անհրաժեշտաբար ուղղված է լինում ցավը վերահսկելուն և մեղմացնելուն:

Ես խորհել եմ ցավի խնդրի մասին: Մեզանից ոչ ոք դիմադրողականություն չունի ցավի զգացողության դեմ: Ես տեսել եմ շատ մարդկանց, ովքեր տարբեր ձևով են հաղթահարել այն: Ոմանք բարկությամբ հեռացել են Աստծուց, մինչդեռ մյուսները թույլ են տվել, որ իրենց տառապանքը իրենց ավելի մոտեցնի Աստծուն:

Ձեզ նման ես ինքս էլ ցավ եմ տարել: Ցավը ապաքինման գործընթացի չափանիշ է: Այն հաճախ մեզ սովորեցնում է համբերել: Գուցե այդ պատճառով է, որ մենք հիվանդի համար օգտագործում ենք *patient* բառը, որը նշանակում է «համբերատար»:

Երեց Օրսոն Ֆ. Ուիթնին գրել է. «Ոչ մի ցավ, որը մենք տանում ենք, ոչ մի փորձություն, որին մենք դիմանում ենք, իզուր չի անցնում: Այն ծառայում է մեր կրթությանը, այնպիսի հատկանիշների զարգացմանը, ինչպիսիք են՝ համբերությունը, հավատքը, տոկունությունը և համեստությունը . . . Դա վշտի և տառապանքի, չարչարանքի և դժբախտության միջոցով գիտելիք ձեռք բերելու համար է, որ մենք գալիս ենք այստեղ»:[1]

Նմանապես Երեց Ռոբերթ Դ. Հեյլսն է ասել.

«Ցավը բերում է ձեզ խոհեմության, որը թույլ է տալիս ձեզ խորհրդածել: Դա մի փորձառություն է, և ես երախտապարտ եմ, որ տոկացել եմ . . .

Ես հասկացա, որ ֆիզիկական ցավը և մարմնի ապաքինումը մեծ վիրահատությունից հետո, մեծապես նման է հոգևոր ցավին և հոգու ապաքինմանը՝ ապաշխարության գործընթացի ժամանակ»:[2]

Մեր տառապանքների մեծ մասը անպայմանորեն մեր մեղքով չէ: Անսպասելի իրադարձությունները, հակադրական կամ հուսահատեցնող

հանգամանքները, խանգարող հիվանդությունը և նույնիսկ մահը շրջապատում են մեզ և ներթափանցում մեր մահկանացու փորձառության մեջ: Բացի այդ, հաճախ մենք տառապում ենք վշտից՝ ուրիշների արարքների պատճառով:[3] Լեքին նշեց, որ Հակոբը «տարել [է] . . . շատ վիշտ [իր] եղբայրների կոպտության պատճառով»:[4] Հակադրությունը Երկնային Հոր երջանկության ծրագրի մասն է կազմում: Մենք բոլորս բավականաչափ հակադրության ենք հանդիպում, որը բերում է մեզ լավատեղյակություն մեր Հոր սիրո և Փրկչի օգնության անհրաժեշտության վերաբերյալ:

Փրկիչը լուռ դիտորդ չէ: Նա Անձնապես գիտի, թե ինչ է անսահման ցավը, որը մենք տանում ենք:

«Նա տանում է բոլոր մարդկանց ցավերը, այո, ամեն մի ապրող արարածի ցավերը՝ և տղամարդկանց, և կանանց, և երեխաների»:[5]

«Ուրեմն համարձակութիւնով մօտենանք շնորհքի աթոռին, որ ողորմութիւն ընդունենք եւ շնորհք գտնենք պատշաճ ժամանակին օգնելու»:[6]

Երբեմն խորը ցավի մեջ մենք գայթակղվում ենք, հարցնելով. «Բալասան չկա՞յ Գաղաադում, կամ բժիշկ չկա՞յ այնտեղ»:[7] Ես վկայում եմ, որ այո, կա Բժիշկ: Հիսուս Քրիստոսի Քավությունը ծածկում է մահկանացու կյանքի բոլոր այս պայմաններն ու խնդիրները:

Կա մեկ այլ տեսակի ցավ, որի համար մենք պատասխանատու *ենք*: Հոգևոր ցավը խորը նստած է մեր հոգիներում և կարող է թվալ անշեջ, նույնիսկ, կարծես, «պրկել» *«անանկարագրելի սոսկումով»*, ինչպես Ալման է նկարագրել:[8] Այն գալիս է մեղսավոր արարքներից և ապաշխարության բացակայությունից: Այս ցավի համար ևս կա դարման, որը համապարփակ է և բացարձակ: Այն տված է Հորից՝ Որդու միջոցով, և մեզանից յուրաքանչյուրի համար է, ովքեր հոժար են անել այն ամենը, ինչն անհրաժեշտ է ապաշխարելու համար: Քրիստոսն ասաց. «Այժմ չե՞ք վերադառնա ինձ մոտ և ապաշխարեք ձեր մեղքերից, . . . և դարձի չե՞ք գա, որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ»:[9]

Քրիստոսն Ինքն ուսուցանեց.

«Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ. իսկ *հետո* երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ: . . .

Հետևաբար, համաձայն Հոր *զորության*, ես բոլոր մարդկանց կձգեմ դեպի ինձ»:[10]

Հավանաբար Նրա ամենակարևոր աշխատանքը շարունակական գործն է՝ մեզանից յուրաքանչյուրին անձնապես բարձրացնելու, օրհնելու, զորացնելու, հաստատելու, առաջնորդելու և ներելու ուղղությամբ:

Ինչպես Նեփին տեսավ տեսիլքում, Քրիստոսի մահկանացու ծառայության մեծ մասը նվիրված էր ամեն տեսակի՝ ֆիզիկական, զգացմունքային և հոգևոր տկարություններով հիվանդներին օրհնելուն և բժշկելուն: «Եվ ես տեսա մարդկանց բազմություններ, որոնք հիվանդ էին և որոնք չարչարված էին ամեն ձևի հիվանդություններով: . . . Եվ նրանք բուժվեցին՝ Աստծո Գառի զորությամբ»:[11]

Ալման ևս մարգարեացավ, որ «նա պիտի գնա առաջ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի, և . . . նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները, . . .

Որպեսզի *նրա* սիրտը լցվի ողորմությամբ, . . . որպեսզի *նա* կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների»:[12]

Մի ուշ գիշեր՝ հիվանդանոցի մահճակալին պառկած, այս անգամ որպես հիվանդ և ոչ թե բժիշկ, ես կարդացի այդ հատվածները կրկին և կրկին: Ես խորհում էի. «Ինչպե՞ս է դա արվում: Ո՞ւմ համար: Ի՞նչ է պահանջվում արժանի դառնալու համար: Արդյո՞ք դա նման է մեղքերի ներմանը: Արդյո՞ք մենք պետք է վաստակենք Նրա սերն ու օգնությունը»: Երբ խորհում էի այս մասին, սկսեցի հասկանալ, որ Իր մահկանացու կյանքում Քրիստոսն *ընտրեց* ցավեր և չարչարանքներ տանելը, որպեսզի հասկանար մեզ: Հավանաբար մենք ևս պետք է զգանք մահկանացու կյանքի բարդությունները, որպեսզի հասկանանք Նրան և մեր հավերժական նպատակները:[13]

Նախագահ Հենրի Բ. Այրինգն ուսուցանել է. «Երբեմն մենք կսփոփվենք վշտի մեջ, երբ պետք է սպասենք Փրկչի խոստացած սփոփանքին, քանզի Նա գիտի փորձառությամբ, թե ինչպես բժշկել և օգնել մեզ: . . . Եվ հավատքն այդ զորության հանդեպ կտա մեզ համբերություն, երբ մենք աղոթենք և աշխատենք ու սպասենք օգնության: Նա, անշուշտ, հայտնության միջոցով գիտեր, թե ինչպես մեզ սատարեր, պարզապես Նա *ընտրեց Իր իսկ անձնական փորձառությամբ սովորեցնել*»:[14]

Այդ գիշեր ես զգացի «Նրա սիրո օղակող բազուկները»:[15] Երախտագիտության արցունքները թաց դարձրինացրեցին բարձս: Հետագայում, երբ ես կարդում էի Մատթեոսում Քրիստոսի մահկանացու ծառայության մասին, ես կատարեցի մեկ այլ հայտնագործություն ևս. «Եվ երբ նա եկավ

Գայաքիլ, Էկվադոր

շատերին բերին նորա մոտ, եւ նա . . . *ամեն* հիվանդներին բժշկեց»:[16] Նա բժշկեց *ամենին*, ովքեր եկան Նրա մոտ: Ոչ մեկը չմերժվեց:

Ինչպես Երեց Դալլին Հ. Օուքսն է ուսուցանել. «Բժշկող օրհնությունները գալիս են շատ ուղիներով, յուրաքանչյուրը համապատասխան մեր անձնական կարիքների, ըստ Նրա իմացության, ով մեզ ամենաշատն է սիրում: Երբեմն «բժշկումը» ապաքինում է մեր հիվանդությունը կամ թեթևացնում մեր բեռը: Բայց երբեմն մենք բժշկվում ենք մեզ վրա դրված բեռները կրելու համար ուժ, հասկացողություն կամ համբերություն ստանալով»:[17] Բոլորը, ովքեր կգան, կարող են «գրկվել Հիսուսի բազուկներում»:[18] Բոլոր հոգիները կարող են բժշկվել Նրա զորությամբ: Ամեն ցավ կարող է հանգստանալ: Նրանում մենք կարող ենք «հանգիստ գտնել [մեր] հոգիներին»:[19] Մեր մահկանացու հանգամանքները, հնարավոր է, անմիջապես չփոխվեն, բայց մեր ցավը, անհանգստությունը, տառապանքը և վախը կարող են անհետանալ Նրա խաղաղության և բժշկող բալասանի մեջ:

Ես նկատել եմ, որ երեխաները հաճախ ավելի բնականորեն են ընդունում ցավն ու տառապանքը: Նրանք համեստությամբ և հեզությամբ հանգիստ դիմանում են: Ես զգացել եմ գեղեցիկ, քաղցր մի հոգի, որը շրջապատում է այս փոքրիկներին:

Տասներեք տարեկան Շերին ենթարկվեց ողնուղեղի ուռուցքի 14-ժամյա վիրահատության: Երբ վերակենդանացման բաժնում նրա գիտակցությունը վերականգնվեց, նա ասաց. «Հայրիկ, հորաքույր Շերիլն է այստեղ, և . . . Նորման պապիկն . . . ու Բրաուն տատիկը: Իսկ հայրիկ, այդ ո՞վ է քո կողքին կանգնած: . . . Նա քո նման է, միայն ավելի բարձրահասակ է: . . . Նա ասում է, որ քո եղբայր Ջիմմին է»: Նրա հորեղբայր Ջիմմին մահացել էր 13 տարեկան հասակում ֆիբրոզից:

Մոտավորապես մեկ ժամ Շերրին . . . նկարագրում էր իր այցելուներին՝ ընտանիքի բոլորը մահացած անդամներին: Այնուհետև, հոգնելով նա քնեց:

Հետագայում նա ասաց իր հայրիկին. «Հայրիկ, վերակենդանացման բաժնի բոլոր երեխաներն այստեղ իրենց օգնող հրեշտակներ ունեն»:[20]

Մեզ բոլորիս Փրկիչն ասել է.

«Ահա, դուք փոքր երեխաներ եք և չեք կարող տանել բոլոր բաներն այժմ. Դուք պետք է աճեք շնորհի մեջ և ճշմարտության գիտության մեջ:

Մի վախեցեք, փոքր երեխաներ, քանզի դուք իմն եք . . .

Ուստի, ես ձեր մեջ եմ, և ես եմ բարի հովիվը»:[21]

Մեր անձնական մեծ մարտահրավերն է մահկանացու կյանքում դառնալ «սուրբ՝ Քրիստոսի Քավության միջոցով»:[22] Այն ցավը, որ դուք և ես զգում ենք, գուցե այստեղ՝ այս շրջանում է ամենաշատը, որպես չափորոշիչ: Ծայրահեղ իրավիճակում անգամ մենք կարող ենք դառնալ ինչպես երեխաներ մեր սրտերում, խոնարհեցնել մեզ և համբերատարությամբ «աղոթել և աշխատել ու սպասել»[23] մեր մարմինների և հոգիների ապաքինմանը: Ինչպես Հոբը, մեր փորձությունների միջոցով անցնելուց հետո, մենք պիտի «ոսկիի նման դուրս գանք»:[24]

Ես բերում եմ վկայություն, որ Նա մեր Քավիչն է, մեր Ընկերը, մեր Բարեխոսը, Մեծ Բժիշկը, Մեծ Ապաքինողը: Նրանում մենք կարող ենք գտնել խաղաղություն և մխիթարություն՝ ինչպես մեր ցավերում և մեր մեղքերում, այնպես էլ մեր ցավերից և մեղքերից: Եթե միայն մենք գանք դեպի Նա խոնարհ սրտերով: Նրա «շնորհքը բավական է»:[25] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Orson F. Whitney, in Spencer W. Kimball, *Faith Precedes the Miracle* (1972), 98.
2. Robert D. Hales, “Healing Soul and Body,” *Ensign,* Nov. 1998, 14.
3. Տես Ալմա 31.31, 33:
4. 2 Նեփի 2.1:
5. 2 Նեփի 9.11:
6. Եբրայեցիս 4.15: Պողոսն ուսուցանում է մեզ նայել դեպի Փրկիչը որպես օրինակ, երբ գործ ենք ունենում «հակառակություն քաշում մեղավորներիցը [մեր] դեմ, որ [մենք] անձերովը չյոգնինք թուլացած [մեր] մտքերում» (Եբրայեցիս ԺԲ.3):
7. Յերեմիա 8.22:
8. Ալմա 36,14:
9. 3 Նեփի 9.13:
10. 3 Նեփի 27.14; շեշտադրումն ավելացված է:
11. 1 Նեփի 11.31:
12. Ալմա 7.11; շեշտադրումն ավելացված է:
13. Տես John Taylor, *The Mediation and Atonement* (1882), 97: Նախագահ Թեյլորը գրում է Հոր և Որդու միջև «ուխտի» մասին, որը նրանք կապել են նախաերկրային խորհուրդների ժամանակ՝ մարդկության քավող փրկագնումն իրականացնելու համար: Կյանքի ընթացքում Քրիստոսի կամավոր տառապանքները լրացնում են Նրա տառապանքները այգում և խաչի վրա (տես Մոսիա 3.5–8):
14. Henry B. Eyring, “Adversity,” *Liahona*, May 2009, 24; շեշտադրումն ավելացված է:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 6.20:
16. Մատթեոս 8.16; շեշտադրումներ ավելացված է:
17. Dallin H. Oaks, “He Heals the Heavy Laden,” *Liahona*, Nov. 2006, 7–8.
18. Մորմոն 5.11:
19. Մատթեոս 11.29:
20. Տես Michael R. Morris, “Sherrie’s Shield of Faith,” *Ensign*, June 1995, 46:
21. Վարդապետություն և Ուխտեր 50.40–41, 44:
22. Մոսիա 3.19:
23. Henry B. Eyring, *Liahona*, May 2009, 24.
24. Հոբ 23.10:
25. Բ Կորնթացիս 12.9; տես նաև Եթեր 12.26–27; Վարդապետություն և Ուխտեր 18.31:

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

ՎՕՍ կանայք սքանչելի են

Եկեղեցում իրականացվող գործերի մեծ մասը կանանց անձնազոհ ծառայության շնորհիվ է կատարվում:

Հեղինակ և պատմաբան Ուոլլես Սթեգները գրել է մորմոնների գաղթի և Սոլթ Լեյքի հովտում հավաքման մասին: Նա չի ընդունել մեր հավատքը և շատ կողմերից քննադատել է այն, այնուամենայնիվ նա մեծ տպավորություն է ստացել Եկեղեցու վաղեմի անդամների՝- հատկապես կանանց նվիրվածությունից և հերոսությունից: Նա նշել է. «Նրանց կանայք սքանչելի էին»:[1] Ես արձագանքում եմ այդ խոսքերով այսօր: Մեր Վերջին Օրերի Եկեղեցու կանայք սքանչելի են:

Աստված կանանց օժտել է ուժի, առաքինության, սիրո և զոհաբերելու հոժարակամության աստվածային հատկանիշներով՝ Իր հոգևոր զավակների ապագա սերունդները աճեցնելու համար:

Միացյալ Նահանգների մի վերջին ուսումնասիրություն պնդում է, որ բոլոր հավատքների կանայք «ավելի ջերմեռանդորեն են հավատում Աստծուն» և ավելի շատ են հաճախում կրոնական ծառայությունների, քան տղամարդիկ: «Բոլոր տեսանկյուններից նրանք ավելի կրոնասեր են»:[2]

Ես զարմացած չէի այս արդյունքից, երբ խորհրդածում էի հատկապես մեր հավատքի ընտանիքների և կանանց դերի մասին: Մեր վարդապետությունը հստակ է: Կանայք մեր Երկնային Հոր դուստրերն են, ովքեր սիրում են Նրան: Կանայք հավասար են իրենց ամուսիններին: Ամուսնությունը պահանջում է լիակատար ընկերակցություն, որտեղ կանայք և ամուսնիններն աշխատում են կողք կողքի ընտանիքի կարիքները հոգալու համար:[3]

Մենք գիտենք, որ կանանց համար շատ մարտահրավերներ կան, ներառյալ նրանց համար, ովքեր ձգտում են ապրել ավետարանով:

Պիոներ քույրերի ժառանգությունը

Մեր ռահվիրա նախնիների կյանքում գերիշխող հատկանիշ էր քույրերի հավատքը: Աստվածային էությամբ կանայք ավելի մեծ պարգև և պատասխանատվություն ունեն երեխաներին տանը և այլ վայրերում դաստիարակելու համար: Այս տեսանկյունից ոգեշնչող էր քույրերի հավատքը, ովքեր հոժարակամ թողնում էին իրենց տները և անցնում տափաստաններով՝ ուղևորվելով դեպի անհայտություն: Եթե ինչ որ մեկը նրանց ամենակարևոր հատկանիշը բնորոշելու լիներ, ապա դա կլիներ Տեր Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի հանդեպ նրանց անսասան հավատքը:

Հերոսական պատմություններն այն մասին, թե այդ ռահվիրա կանայք ինչ զոհաբերեցին և կատարեցին, երբ անցնում էին տափաստանները, անգին ժառանգություն է Եկեղեցու համար: Ինձ հուզեց Էլիզաբեթ Ջեքսոնի պատմությունը, որի ամուսինը՝ Սիարոնը մահացավ Մարտինի ձեռնասայլերի ընկերության հետ Փլաթ գետի վերջին անցումից հետո: Նա գրել է.

«Ես չեմ փորձի նկարագրել իմ ապրումները, երբ ինձ զգում էի լքված այրի՝ երեք երեխաների հետ այդպիսի ծայրահեղ հանգամանքներում: . . . Ես հավատում եմ, . . . որ հանուն Ավետարանի իմ տառապանքները կսրբագործեն ինձ ի բարին: . . .

Ես [աղաչեցի] Տիրոջը . . . Նրան, ով խոստացել էր ամուսին լինել որբևայրիներին և հայր՝ հայրազուրկներին: Ես աղաչեցի Նրան և Նա եկավ ինձ օգնության»:[4]

Էլիզաբեթը նշում է, որ գրել է պատմությունը բոլոր նրանց անունից, ովքեր անցան այդ տեսարանների միջով այն հույսով, որ հետնորդները հոժար կամքով կտոկան և կզոհաբերեն բոլոր բաները հանուն Աստծո թագավորության:[5]

Եկեղեցու կանայք այսօր ամուր և քաջարի են

Հավատում եմ, որ Եկեղեցու կանայք այսօր մարտահրավերն ընդունում են և ամեն ինչով նույնքան ուժեղ են և հավատարիմ: Այս Եկեղեցու բոլոր մակարդակներում քահանայության ղեկավարությունը երախտապարտորեն գնահատում է քույրերի ծառայությունը, զոհաբերությունը, պարտավորությունը և ներդրումը:

Եկեղեցում իրականացվող գործերի մեծ մասը կանանց անձնազոհ ծառայության շնորհիվ է կատարվում: Եկեղեցում, թե տանը, հրաշալի է տեսնել քահանայությանը և Սփոփող Միությանը կատարյալ ներդաշնակությամբ աշխատելիս: Այդպիսի փոխհարաբերությունը նման է նվագախմբի լավ լարված գործիքների, որի կատարմամբ սիմֆոնիան

ոգեշնչում է մեզ բոլորիս:

Երբ ինձ վերջերս հանձնարարվել էր մասնակցել Վիեջո, Կալիֆոռնիա 8ցի համաժողովին, ես հուզվեցի իրենց չորս ցցերի Նոր Տարվա նախօրյակի երիտասարդական պարահանդեսին կատարված մի պատմությամբ: Պարերից հետո մի դրամապանակ գտնվեց, որը դրսից ոչ մի տարբերանշան չուներ: Ես կիսվում եմ ձեզ հետ մասնակիորեն Քույր Մոնիկա Մեջուիքի՝ Լագունա Նիգուել ցցի Երիտասարդ կանանց Նախագահի պատմությամբ. «Մենք չէինք ուզում քչփորել, դա ինչ որ մեկի անձնական իրերն էին: Այսպիսով մենք զգուշորեն բացեցինք այն, հանեցինք առաջին բանը, որ դրված էր վերևում, հուսալով, որ այն կօգներ ճանաչել տիրոջը: Այն տարբերակեց, բայց այլ կերպ, դա *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկն էր: Օ՜հ, դա ինչ որ բան էր ասում նրա մասին: Ապա մենք հանեցինք հաջորդ իրը՝ մի փոքրիկ հուշատետր. . . Սա, անկասկած, պետք է որ մեզ պատասխաններ տար, բայց ոչ այնպիսին, ինչպիսին մենք էինք սպասում: Առաջին էջը սիրված սուրբ գրությունների ցուցակն էր: Կային ևս հինգ էջեր, որոնք խնամքով գրված սուրբ գրություններից հատվածներ էին և անձնական գրառումներ»:

Քույրերն անհապաղ ցանկացան հանդիպել այս հավատարիմ երիտասարդ կնոջը: Նրանք վերադարձան այդ դրամապանակին՝ տիրոջը գտնելու համար: Նրանք հանեցին մի քանի անանուխի համով կոնֆետներ, օճառ, լոյսոն և խոզանակ: Ես հավանեցի նրանց դիտողությունները. «Օ, հաճելի բաներ են դուրս գալիս նրա բերանից, նա ունի մաքուր և փափուկ ձեռքեր և նա հոգ է տանում իր մասին»:

Նրանք հետաքրքրված սպասում էին հաջորդ գանձին: Դուրս եկավ տանը մետաղադրամի համար տանը պատրաստված ստվարաթղթից մի փոքրիկ քսակ, որի մեջ կայծակաճարմանդով փակված գրպանիկում կար մի քիչ փող: Նրանք բացականչեցին. «Օ, նա ստեղծագործական է և նախապատրաստված»: Նրանք զգում էին իրենց, կարծես Սուրբ Ծննդյան տոնի առավոտյան

փոքրիկ երեխաներ լինեին: Այն, հանեցին հաջորդը, ավելի շատ զարմացրեց նրանց՝ սև շոկոլադով Անտառային տորթի բաղադրատոմս և մի գրություն՝ պատրաստելու այն ընկերուհու ծննդյան օրվա առթիվ: Նրանք գրեթե ճչացին. «Նա ՏՆԱՐԱՐ է: Ուշադիր և ծառայություն կատարելու մտածելակերպով»: Ապա, այո, ի վերջո, ինքնությունը հաստատող ինչ որ փաստաթուղթ: Երիտասարդության առաջնորդներն ասացին, որ իրենք մեծապես օրհնված զգացին, «հետևելով երիտասարդ օրիորդի լուռ օրինակին, որն ապրում է ավետարանով»:[6]

Այս պատմությունը ցույց է տալիս մեր երիտասարդ կանանց պարտավորվածությունը Եկեղեցու չափանիշներին:[7] Այն նաև երիտասարդ կանանց հոգատար, հետաքրքրվող, նվիրված ղեկավարների օրինակ է ողջ աշխարհում: Նրանք սքանչելի են:

Քույրերը վճռորոշ դեր ունեն Եկեղեցում և ընտանեկան կյանքում, ինչպես նաև որպես անհատներ, ինչը կարևոր է Երկնային Հոր ծրագրում: Այս պարտականություններից շատերը չեն ապահովում նյութական վարձատրություն, բայց իսկապես ապահովում են բավարարվածություն և նշանակալի են հավերժության համար: Վերջերս լրագրի խմբագրական խորհրդից մի հրաշալի և շատ ընդունակ կին խնդրեց մի նկարագրություն Եկեղեցում կանանց դերի վերաբերյալ: Նրան բացատրվեց, որ բոլոր համայնքների ղեկավարները *անվճար*. են ծառայում: Նա ընդհատեց ասելով, որ նրա հետաքրքրությունը նշանակալիորեն նվազեց, ապա՝ավելացրեց. «Չեմ հավատում, որ այսօր կանայք կարիք ունենան *անվճար* աշխատանքի»:

Մենք մատնանշեցինք, որ ամենակարևոր կազմակերպությունը երկրի վրա ընտանիքն է, որտեղ «հայրերն ու մայրերը . . . հավասար գործընկերներ են»:[8] Ոչ ոք ֆինանսապես չի փոխհատուցվում, բայց օրհնություններն աննկարագրելի են: Մենք իհարկե պատմեցինք նրան Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց և Երեխաների Միության կազմակերպությունների մասին, որոնք առաջնորդվում են կին նախագահների կողմից: Մենք նշեցինք, որ մեր պատմության ամենավաղ տարիներից ի վեր թե տղամարդիկ և թե կանայք աղոթում են, քարոզում են, նվազակցում են երաժշտական գործիքներով , և երգում են երգչախմբերում, նույնիսկ հաղորդության ժողովին՝ մեր ամենասրբազան ժողովին:

Վերջին մեծ պահանջարկ ունեցող *American Grace* գիրքը տեղեկություններ է հաղորդում տարբեր հավատքների պատկանող կանանց մասին: Նշվում է, որ Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կանայք եզակի են, լինելով լիովին բավարարված Եկեղեցու ղեկավարության կազմում իրենց դերակատարությամբ:[9] Բացի այդ Վերջին Օրերի Սրբերի տղամարդիկ և կանայք, որպես մի ամբողջություն, ունեն ամենամեծ նվիրվածությունը իրենց հավատքին, քան ուսումնասիրված կրոններից որևէ մեկը:[10]

Ոչ թե մեր կանայք սքանչելի են այն պատճառով, որ հաղթահարում են խուսափել կյանքի դժվարություններից, այլ ճիշտ հակառակը: Նրանք սքանչելի են այն պատճառով, որ դիմակայում են կյանքի փորձություններին: Չնայած կյանքի առաջադրած մարտահրավերներին և ստուգարքներին՝ սկսած ամուսնությունից կամ

ամուսնության բացակայությունից, երեխաների ընտրություններից, վատ առողջական վիճակից, հնարավորությունների բացակայությունից և ուրիշ շատ խնդիրներից, նրանք մնում են ակնհայտորեն ուժեղ, անսասան ու հավատարիմ հավատքին: Մեր քույրերը ողջ Եկեղեցում հետևողականորեն «սատարում են թույլերին, բարձրացնում կախ ընկած ձեռքերը և զորացնում թուլացած ծնկները»:[11]

Սփոփող Միության Նախագահներից մեկը, որը երախտագիտություն հայտնեց այս արտասովոր ծառայության համար, ասաց. «Նույնիսկարդեն ծառայող քույրերը մտածում են այն մասին, թե ինչպես կարող են ավելին անել»: Թեև նրանք կատարյալ չեն և բոլորը դիմակայում են, անձնական ճիգեր թափելով, նրանց հավատքը սիրառատ Երկնային Հոր հանդեպ և հավաստիացումը Փրկչի քավող զոհաբերության մեջ, լցնում է նրանց կյանքը:

Քույրերի դերը Եկեղեցում

Վերջին երեք տարիների ընթացքում Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը որոնել են առաջնորդություն, ոգեշնչում և հայտնություն, խորհրդակցելով քահանայության և օժանդակ կազմակերպությունների նախագահների հետ և աշխատելով Եկեղեցու նոր ձեռնարկների վրա: Այս ընթացքում ես ունեցել եմ անսահման երախտագիտության զգացում այն նշանակալի դերի համար, որ քույրերը, ինչպես ամուսնացած, այնպես էլ չամուսնացած, պատմականորեն ունեցել են և այժմ էլ ունեն թե ընտանիքում, թե Եկեղեցում:

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու բոլոր անդամները պետք է «աշխատեն նրա այգում մարդկանց հոգիների փրկության համար»:[12] Փրկության աշխատանքը ներառում է անդամների միսիոներական աշխատանքը, . . . ավետարանի ուսուցանումը»[13] և աղքատների ու կարիքավորների համար հոգ տանելը:[14] Սա սպասավորվում է հիմնականում ծխի խորհրդի միջոցով:[15]

Նոր ձեռնարկներում հատկապես նախատեսված է, որ եպիսկոպոսները, առկա պահանջների հանդեպ զգայուն լինելով, լիազորեն ավելի շատ պարտականություններ: Անդամները պետք է ընդունեն, որ եպիսկոպոսը հրահանգված է լիազորել: Անդամները պետք է հաստատեն և աջակցեն նրան, երբ նա հետևում է այս խորհրդին: Դա թույլ կտա եպիսկոպոսին ավելի շատ ժամանակ անցկացնել երիտասարդների, չափահաս ամուրիների և իր իսկ ընտանիքի հետ: Նա կլիազորի մյուս կարևոր պարտականությունները քահանայության ղեկավարներին, օժանդակների նախագահներին և անհատական տղամարդկանց և կանանց: Տանը կնոջ ունեցած դերը մեծապես հարգվում է Եկեղեցում:[16] Երբ մայրը Եկեղեցում կոչում է ստանում, այն նշանակալի ժամանակ է պահանջում, այդ ժամանակ հորը հաճախ տրվում է ավելի քիչ պատասխանատու կոչում, որպեսզի ընտանիքի կյանքում պահպանվի հավասարակշռությունը:

Մի քանի տարի առաջ ես հաճախեցի մի ցցի համաժողով Տոնգայում: Կիրակի առավոտյան աղոթատան առաջին երեք շարքերը զբաղեցված էին 26-35 տարեկան տղամարդկանցով: Ես ենթադրեցի, թե դա տղամարդկանց երգչախումբն էր: Բայց երբ համաժողովի գործերն էին վարում, այդ տղամարդկանցից յուրաքանչյուրը, ընդհանուր թվով՝ 63 հոգի, ոտքի կանգնեց: Նրանց անունները կարդացին և հաստատվեցին՝ Մելքիսեդեկյան Քահանայության կարգման համար: Ես և գոհ էի, և ապշած:

Նիստից հետո ես հարցրեցի Նախագահ Մատեակիին՝ ցցի

նախագահին, ինչպես էր այդ հրաշքը տեղի ունեցել: Նա ասաց, որ ցցի մի խորհրդի ժամանակ քննարկվում էր վերաակտիվացման հարցը: Նրա ցցի Սփոփող Միության Նախագահը՝ Քույր Լեինաթա Վաէնուկուն հարցրել էր, թե արդյոք պատշաճ կլինե՞ր, եթե նա մի բան ասեր: Նրա խոսալու ժամանակ Հոգին հաստատեց ցցի նախագահին, որ այն, ինչ նա առաջարկում էր, ճիշտ էր: Նա բացատրեց, որ իրենց ցցում 26-ից 35-ն անց տարեկան մեծ թվով հիանալի երիտասարդ տղամարդիկ կան, ովքեր չեն ծառայել միսիայում: Նա ասաց, որ նրանցից շատերը գիտեին, որ հիասթափեցրել էին եպիսկոպոսներին և քահանայության ղեկավարներին, ովքեր ջանք չէին խնայել խրախուսելու նրանց ծառայել միսիայում, և այժմ իրենց զգում էին որպես Եկեղեցու երկրորդ կարգի անդամներ: Նա նշեց, որ այս երիտասարդ տղամարդիկ անցել էին միսիոներական տարիքից, բայց նա արտահայտեց իր սերն ու մտահոգությունը նրանց հանդեպ: Նա բացատրեց, որ բոլոր փրկարար արարողությունները դեռ նրանց հասանելի էին և նպատակակետը պիտի լինի քահանայության կարգումներն ու տաճարային արարողությունները: Նա նշեց, որ չնայած այս երիտասարդ տղամարդկանցից մի քանիսը դեռ ամուսնացած չէին, նրանց մեծամասնությունը ամուսնացել էին հիանալի կանանց հետ՝ ոմանք ակտիվ, ոմանք ոչ ակտիվ, իսկ ոմանք էլ՝ ոչ անդամների հետ:

Ցցի խորհրդում հանգամանալից քննարկումից հետո, որոշվեց, որ քահանայության տղամարդիկ և Սփոփող Միության կանայք օգնության կհասնեն՝ փրկելու այս տղամարդկանց և նրանց կանանց, մինչ եպիսկոպոսները իրենց ժամանակի մեծ մասը կտրամադրեն ծխերում երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց: Փրկության այս գործում ներգրավվածները պիտի կենտրոնացնեին իրենց ջանքերը քահանայության, հավերժական ամուսնությանը և տաճարի փրկարար արարողություններին նրանց նախապատրաստելու վրա: Հաջորդ երկու տարիների ընթացքում 63

տղամարդկանցից գրեթե բոլորը, ովքեր իմ մասնակցած համաժողովին հաստատվեցին Մելքիսեդեկյան Քահանայության համար, օժտում ստացան տաճարում և իրենց կողակիցների հետ կնքվեցին: Այս պատմությունը ընդամենը մեկ օրինակ է այն մասին, թե որքան կարևոր են մեր քույրերը փրկության գործում մեր ծխերում և ցցերում, և թե ինչպես են նրանք նպաստում հայտնությանը, հատկապես ընտանիքում և Եկեղեցու խորհուրդներում:[17]

Կիև, Ուկրաինա

Քույրերի դերը ընտանիքում

Մենք ընդունում ենք, որ գոյություն ունեն հսկայական ուժեր, որոնք ուղղված են կանանց և ընտանիքների դեմ: Վերջին ուսումնասիրությունները գտել են, որ առկա է ամուսնական նվիրվածության վատթարացում՝ ամուսնացող չափահասների թվի նվազեցմամբ:[18] Ոմանց համար ամուսնությունը և ընտանիքը դառնում են «ավելի շուտ տարբերակային ընտրություն, քան մեր հասարակության կազմակերպման կենտրոնական սկզբունք»:[19] Կանայք հանդիպում են բազմաթիվ տարբերակների և պետք է աղոթքով մտածեն, ինչ ընտրություններ կատարեն և ինչպես այդ ընտրությունները կարող են ազդել ընտանիքի վրա:

Երբ ես անցյալ տարի Նոր Զելանդիայում էի, Օքլենդի օրաթերթում կարդացի կանանց մասին, որոնք մեր հավատքից չէին և որոնք պայքարում էին այդ նույն խնդիրների դեմ: Մայրերից մեկն ասում էր, որ իր դեպքում, աշխատելու, թե տանը մնալու իր ընտրությունը կապված էր նոր գորգի և երկրորդ ավտոմեքենայի գնման հետ, որի կարիքը նա իրականում չուներ: Մեկ այլ կին, այնուամենայնիվ, զգում էր, որ «ընտանեկան երջանիկ կյանքի մեծագույն թշնամին ոչ թե վճարովի աշխատանքն էր, այլ հեռուստատեսությունը»: Նա ասաց, որ ընտանիքները հեռուստաժամանակով հարուստ են, իսկ ընտանեկան ժամանակով աղքատ:[20]

Սրանք շատ զգացմունքային և անձնական որոշումներ են, բայց կա երկու սկզբունք, որ մենք պետք է միշտ պահենք մեր մտքում: Առաջինը, կինը չպետք է ներողություն խնդրի կամ զգա, որ իր ներդրումը ավելի քիչ կարևոր է, որովհետև նա նվիրում է իր հիմնական ջանքերը երեխաներ մեծացնելուն և դաստիարակելուն: Ոչ մի բան չի կարող ավելի կարևոր լինել մեր Երկնային Հոր ծրագրում: Երկրորդը, մենք բոլորս պետք է ուշադիր լինենք, որպեսզի չդատապարտենք կամ ենթադրենք, որ քույրերը քաջարի չեն, եթե որոշում են ընդունել աշխատանք տնից դուրս: Մենք հազվադեպ ենք հասկանում կամ լիովին գնահատում մարդկանց հանգամանքները: Ամուսիններն ու կանայք պետք է աղոթքով խորհրդակցեն միմյանց հետ՝ հասկանալով, որ իրենք պատասխանատու են Աստծուն իրենց որոշումների համար:

Դուք, նվիրված քույրեր, ովքեր միայնակ ծնողներ եք, ինչ պատճառով էլ որ դա լինի, երախտագիտությամբ լցված մեր սրտերը ձեզ հետ են: Մարգարեները հստակ են այն հարցում, «որ շատ ձեռքեր պատրաստ կանգնած են օգնելու ձեզ: Տերը չի մոռացել ձեզ: Ոչ էլ Նրա Եկեղեցին»:[21] Ես կկամենայի հուսալ, որ Վերջին Օրերի Սրբերը կլինեն առաջինը, ովքեր աշխատավայրում կստեղծեն մի միջավայր, որն ավելի ընդունելի և հարմարավետ կլինի ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար, որպես ծնողներ իրենց պարտականություններում:

Դուք, քաջարի և հավատարիմ միայնակ քույրեր, խնդրում եմ իմացեք, որ մենք սիրում և գնահատում ենք ձեզ, և հավաստիացնում ենք, որ ոչ մի հավերժական օրհնություն ետ չի պահվի ձեզանից:

Նշանավոր կին ռահվիրա՝ Էմիլի Հ. Վուդմանսին, որը գրել է «Սիոնի քույրեր» օրհներգի խոսքերը ճշտմարտացիորեն պնդում էր, որ «հրեշտակների գործը կանանց է տրված»:[22] Սա նկարագրվել է որպես մեր Երկնային Հոր հրաման՝ «ոչ պակաս քան ուղղակի և անհապաղ կատարելը» և «սա մի պարգև է, որ. . .քույրերն են. . . հայցում»:[23]

Սիրելի քույրեր, մենք սիրում ձեզ և հիանում ենք ձեզանով: Մենք գնահատում ենք Տիրոջ թագավորությունում ձեր ծառայությունը: Դուք սքանչելի եք: Ես արտահայտում եմ իմ հատուկ շնորհակալությունը իմ կյանքի կանանց: Ես վկայում եմ Քավության իրականության մասին, Փրկչի աստվածայնության մասին և Նրա Եկեղեցու Վերականգնման մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Wallace Stegner, *The Gathering of Zion: The Story of the Mormon Trail* (1971), 13.
2. Robert D. Putnam and David E. Campbell, *American Grace: How Religion Divides and Unites Us* (2010), 233.
3. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 1.3.1; տես նաև Մովսես 5.1, 4, 12, 27:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Բարիք անելու հնարավորություններ

Նյութական կարիքներ ունեցողներին օգնելու Տիրոջ ուղին միշտ պահանջում է մարդիկ, ովքեր սիրուց դրդված նվիրաբերում են իրենց և իրենց ունեցածը Աստծուն և նրա աշխատանքին:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, իմ ուղերձի նպատակն է պատվել և փառաբանել այն, ինչ Տերն արել է և շարունակում է անել՝ ծառայելու աղքատներին և կարիքավորներին երկրագնդի վրա Իր զավակների մեջ: Նա սիրում է Իր զավակներին, ովքեր կարիքի մեջ են և նաև նրանց, ովքեր կամենում են օգնել: Եվ Նա ստեղծել է ուղիներ օրհնելու ինչպես նրանց, ովքեր կարիք ունեն օգնության, այնպես էլ նրանց, ովքեր կամենում են օգնություն տրամադրել:

Մեր Երկնային Հայրը լսում է Իր զավակների աղոթքները ողջ աշխարհում, ովքեր աղերսում են, որ ունենան ուտելիք՝ սնվելու համար, հագուստ՝ իրենց մարմինները ծածկելու համար, և այն արժանապատվությունը, որը գալիս է իրենց ինքնուրույն ապահովելու ունակությունից: Այդ աղերսանքները հասել են Նրան այն ժամանակից ի վեր, երբ Նա տղամարդկանց և կանանց ստեղծեց երկրի վրա:

Դուք գիտեք այդ կարիքների մասին այնտեղ, որտեղ ապրում եք, և ողջ աշխարհում: Ձեր սրտերը հաճախ խռովվում են խղճահարության զգացումից: Երբ դուք հանդիպում եք ինչ որ մեկին, որը մաքառում է աշխատանք գտնելու համար, դուք նրան օգնելու ցանկություն եք զգում: Դուք զգում եք դա, երբ գնում եք որևէ այրու տուն և տեսնում, որ նա ուտելիք չունի: Դուք զգում եք դա, երբ տեսնում եք երկրաշարժից կամ հրդեհից ավերված իրենց տան փլատակների վրա նստած լացող երեխաների լուսանկարները:

Տերը լսում է նրանց աղաղակները և զգում ձեր խորը կարեկցանքը նրանց հանդեպ, Նա ժամանակների սկզբից ի վեր Իր աշակերտների համար ապահովել է ուղիներ նրանց օգնելու համար: Նա հրավիրել է Իր զավակներին նվիրաբերել իրենց ժամանակը, իրենց միջոցները և իրենց անձերը, միանալով Իրեն ուրիշներին ծառայելիս:

Օգնելու Նրա ուղին երբեմն անվանել են «Ապրել նվիրաբերման օրենքով»: Մեկ այլ ժամանակ այն կոչվել է «Միացյալ միաբանություն»: Մեր ժամանակ այն կոչվում է «Եկեղեցու բարօրության ծրագիր»:

4. In Andrew D. Olsen, *The Price We Paid: The Extraordinary Story of the Willie and Martin Handcart Pioneers* (2006), 445.
5. Տես "Leaves from the Life of Elizabeth Horrocks Jackson Kingsford," Utah State Historical Society, Manuscript A 719; in "Remembering the Rescue," *Ensign,* Aug. 1997, 47:
6. Միացված և կրճատված է է-փոստից, գրված Մոնիկա Սեղգվիկի կողմից, ցցի Երիտասարդ Կանանց նախագահ Լագունա Նիգուել Կալիֆոռնիա Ցցում, և Լեսլի Մորտենսենի ելույթից, ցցի Երիտասարդ Կանանց նախագահ Վիեջո Կալիֆոռնիա Միսիայում:
7. Մի հոդվածում, որը վերնագրված է «Ինչո՞ւ ենք թույլ տալիս որ նրանք այդպես հագնվեն» (*Wall Street Journal,* Mar. 19–20, 2011, C3), մի հոգատար Հրեա մայր պաշտպանում է Մորմոն կանանց հագուստի չափանիշները և բարոյականությունը և ընդունում նրանց օրինակը:
8. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
9. Տես Putnam and Campbell, *American Grace,* 244–45:
10. Տես Putnam and Campbell, *American Grace,* 504:
11. Վարդապետություն և Ուխտեր 81.5; տես նաև Մոսիա 4.26:
12. Վարդապետություն և Ուխտեր 138.56:
13. *Handbook 2: Administering the Church* (2010), page 22.
14. Տես *Handbook 2,* 6.1:
15. Տես *Handbook 2,* 4.5:
16. Տես Emily Matchar, "Why I Can't Stop Reading Mormon Housewife Blogs," salon.com/life/feature/2011/01/15/feminist_obsessed_with_mormon_blogs. This self-described feminist and atheist acknowledges this respect and says she is addicted to reading Mormon housewife blogs.
17. From conversations with Nuku'alofa Tonga Ha'akame Stake president Lehonitai Mateaki (who subsequently served as president of the Papua New Guinea Port Moresby Mission) and stake Relief Society president Leinata Va'enuku.
18. Տես D'Vera Cohn and Richard Fry, "Women, Men, and the New Economics of Marriage," Pew Research Center, Social and Demographic Trends, pewsocialtrends.org. Ծնվող երեխաների թիվը մեծապես աճել է շատ երկրներում: Սա կոչվել է դեմոգրաֆիկ ձմեռ: The number of children being born has also decreased significantly in many countries. This has been called the demographic winter.
19. "A Troubling Marriage Trend," *Deseret News,* Nov. 22, 2010, A14, quoting a report on msnbc.com.
20. Տես Simon Collins, "Put Family before Moneymaking Is Message from Festival," *New Zealand Herald,* Feb. 1, 2010, A2:
21. Gordon B. Hinckley, "Women of the Church," *Ensign,* Nov. 1996, 69; see also Spencer W. Kimball, "Our Sisters in the Church," *Ensign,* Nov. 1979, 48–49.
22. "As Sisters in Zion," *Hymns,* no. 309.
23. Karen Lynn Davidson, *Our Latter-Day Hymns: The Stories and the Messages,* rev. ed. (2009), 338–39.

Գործունեության անուններն ու մանրամասները փոխվել են համապատասխանեցնելու մարդկանց կարիքներին և վիճակներին: Բայց նյութական կարիքներ ունեցողներին օգնելու Տիրոջ ուղին միշտ պահանջում է մարդիկ, ովքեր սիրուց դրդված նվիրաբերում են իրենց և իրենց ունեցածը Աստծուն և նրա աշխատանքին:

Նա հրավիրել է և պատվիրել մեզ մասնակցել Իր գործին՝ բարձրացնելու նրանց, ովքեր կարիքի մեջ են: Մենք այդ ուխտը կապում ենք մկրտության ջրերում և Աստծո սուրբ տաճարներում: Մենք վերանորոգում ենք ուխտը կիրակի օրը, երբ ճաշակում ենք հաղորդությունը:

Իմ նպատակն է այսօր նկարագրել այն հնարավորություններից մի քանիսը, որ Նա տվել է մեզ՝ կարիքի մեջ գտնվող ուրիշ մարդկանց օգնելու համար: Ես չեմ կարող խոսել դրանց բոլորի մասին մեր համատեղ կարճ ժամանակի ընթացքում: Իմ հույսն է նորոգել և ամրացնել գործելու ձեր պարտավորությունը:

Տիրոջ հրավերի մասին մի օրհներգ կա, որը ես երգել եմ փոքրիկ տղա ժամանակից ի վեր: Մանկության ժամանակ ես ավելի շատ ուշադրություն էի դարձնում ուրախ մեղեդուն, ոչ թե խոսքերի զորությանը: Ես աղոթում եմ, որ դուք այսօր զգաք խոսքերը ձեր սրտերում: Եկեք կրկին լսենք.

Արդյոք աշխարհում արե՞լ եմ այսօր
ես բարիք,
Արդյոք օգնե՞լ եմ կարիքի մեջ
ընկածին,
Արդյոք սիրուի՞ե՞լ եմ նեղյալին,
ուրախացրել ինչ որ մեկին,
Եթե ոչ, ձախողվել եմ իսկապես:
Արդյոք թեթևացրե՞լ եմ որևէ մեկի
բեռն այսօր,
Քանի որ հոժարակամ էի տալու,
Արդյոք օգնե՞լ եմ հիվանդին ու
հոգնածին,
Երբ իմ կարիքն ունեին, արդյոք
այնտե՞ղ էի ես:
Ապա արթնացիր, արա էլ ավելին,
Քան երազելը ապարանքներին
վերում:
Բարիք անելը հաճույք է,
ուրախություն անսահման

Պարտականության և սիրո
օրհնություն:[1]

Տերը պարբերաբար մեզ բոլորիս արթնանալու կոչ է ուղարկում: Երբեմն այն կարող է լինել խղճահարության հանկարծակի զգացում ինչ որ մեկի հանդեպ, ով կարիքի մեջ է: Հայրը կարող է դա զգացած լինել, երբ տեսել է, թե ինչպես է երեխան ընկել ու քերծել ծունկը: Մայրը կարող է դա զգացած լինել, երբ նա լսել է երեխայի վախեցած ճիչը գիշերը: Որդին կամ դուստրը կարող է զգացած լինեն խղճահարություն մեկի հանդեպ, ով տխուր կամ վախեցած է թվացել դպրոցում:

Մենք բոլորս ունեցել ենք խղճահարության զգացումներ ուրիշների հանդեպ, ում մենք նույնիսկ չենք ճանաչում: Օրինակ՝ երբ դուք լսեցիք հաղորդագրություններ Ճապոնիայում Խաղաղ օվկիանոսի երկրաշարժից գրոհող ալիքների մասին, դուք զգացիք մտահոգություն նրանց համար, ովքեր կարող էին վնասվել:

Խղճահարության զգացումներ ունեցան ձեզանից հազարավորներ, ովքեր իմացան Քուինսլենդում, Ավստրալիա, պատահած ջրհեղեղի մասին: Լրատվական հաղորդագրությունները հիմնականում տուժածների թվերի մասին էին: Բայց ձեզանից շատերը զգացին մարդկանց ցավը: Զարթնեցնող կոչը պատասխանվեց 1500 կամ ավելի Եկեղեցու անդամների կողմից Ավստրալիայում, ովքեր կամավոր եկան օգնելու և սփոփելու:

Նրանք իրենց խղճահարության զգացումները դարձրեցին իրենց ուխտերի հիման վրա գործելու որոշում: Ես տեսել եմ օրհնությունները, որոնք գալիս են կարիքի մեջ գտնվող մարդուն, որը ստանում է օգնություն, և այն մարդուն, որն առիթն օգտագործում է նվիրաբերելու համար:

Իմաստուն ծնողները կարիքի մեջ գտնվողին օգնելու մեջ տեսնում են իրենց որդիների և դուստրերի կյանք օրհնություններ բերելու ուղի: Երեք երեխա վերջերս ամաններով համեղ ճաշ բերեցին մեր մուտքի դռան մոտ: Նրանց ծնողները գիտեին, որ մենք օգնության կարիք ունեինք և իրենց երեխաներին ներգրավեցին մեզ ծառայելու հնարավորության մեջ:

Ծնողներն օրհնեցին մեր ընտանիքին իրենց առատաձեռն ծառայությամբ: Որոշելով իրենց երեխաներին մասնակից դարձնել նվիրաբերման ծառայությանը, նրանք տարածեցին օրհնությունները իրենց ապագա թոռների վրա: Երեխաների ժպիտները, երբ նրանք հեռանում էին մեր տնից, ինձ վստահեցրեցին, որ դա այդպես էլ կլինի: Նրանք կպատմեն իրենց երեխաներին այն ուրախության մասին, որ զգացին Տիրոջ համար բարությամբ ծառայություն մատուցելիս: Հիշում եմ լուռ բավարարվածության զգացումը մանկության ժամանակ, երբ ես մոլախոտեր էի հանում մեր հարևանի համար հայրիկիս խնդրանքով: Երբ էլ որ հրավիրվում եմ լինել նվիրաբերող, ես հիշում եմ և հավատում օրհներգին.«Քաղցր է գործդ Աստված, իմ Տեր»:[2]

Ես գիտեմ, որ այդ բանաստեղծությունը գրված է նկարագրելու համար այն ուրախությունը, որը գալիս է հանգստության օրը Տիրոջը երկրպագելուց: Բայց այն երեխաները՝ ուտելիքով մեր տան դռան առջև զգում էին ուրախություն շաբաթվա օրերից

մեկի ժամանակ Տիրոջ աշխատանքը կատարելիս: Եվ նրանց ծնողները տեսան հնարավորություն՝ բարիք անելու և տարածելու ուրախությունը սերունդների վրա:

Տիրոջ ուղով կարիքավորների համար հոգալը տալիս է ծնողներին իրենց երեխաներին օրհնելու ևս մեկ հնարավորություն: Ես տեսա դա ժողովատանը մի կիրակի օր: Փոքրիկ մի տղա եպիսկոպոսին հանձնեց իր ընտանիքի նվիրատվության ծրարը հաղորդության ժողովից:

Ես ճանաչում էի և ընտանիքին, և տղային: Ընտանիքը հենց նոր էր իմացել ճյուղում ինչ-որ մեկի կարիքի մեջ լինելու մասին: Տղայի հայրն այսպես էր ասել երեխային, երբ սովորականից ավելի առատ ծոմի զոհաբերություն էր դրել ծրարում.

Այդ կիրակի սով զգալու փոխարեն, տղան կիիշի այդ ջերմ զգացումը: Ես կարող եմ ասել նրա ժպիտից և ծրարն այդպես ամուր բռնելու ձևից, որ նա զգում էր իր հայրիկի մեծ վստահությունը, որ իրեն էր տվել տանելու ընտանիքի նվիրատվությունն աղքատներին: Նա կիիշի այդ օրը, երբ սարկավագ դառնա, և զուցե հավերժ կիիշի:

Ես տեսա նույն երջանկությունը այն մարդկանց դեմքերին Այդահոյում տարիներ առաջ, ովքեր օգնում էին մարդկանց Տիրոջ կողմից: Տետոմ ջրամբարը պայթեց շաբաթ օրը 1976 թվականի հունիսի 5-ին: Զոհվեցին 11 հոգի: Հազարավոր մարդիկ ստիպված էին թողնել իրենց տները մի քանի ժամերի ընթացքում: Որոշ տներ ջուրը քշեց-տարավ: Եվ հարյուրավոր բնակարաններ բնակելի դարձան միայն ի շնորհիվ ջանքերի և միջոցների, որոնք վեր էին նրանց տերերի ունեցածից:

Նրանք, ովքեր լսեցին այդ ողբերգության մասին, խղճահարություն զգացին և զգացին բարիք անելու կարիք: Հարևաններ, եպիսկոպոսներ, Սփոփող Միության նախագահներ, քվորումի ղեկավարներ, տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ թողեցին իրենց տներն ու աշխատատեղերը՝ ուրիշների հեղեղված տները մաքրելու համար:

Մի զույգ արձակուրդից Ռեքսբուրգ վերադարձավ հեղեղումից

անմիջապես հետո: Նրանք չգնացին տեսնելու իրենց սեփական տունը: Փոխարենը նրանք գտան իրենց եպիսկոպոսին՝ հարցնելու, թե ուր գնային օգնելու: Նա ուղարկեց նրանց մի ընտանիք, որն օգնության կարիք ուներ:

Մի քանի օր անց նրանք գնացին ստուգելու իրենց տունը: Այն չկար, հեղեղը քշել-տարել էր այն: Նրանք վերադարձան եպիսկոպոսի մոտ և հարցրեցին. «Այժմ ի՞նչ կուզեիք, որ մենք անենք»:

Դուք նույնպես տեսել եք, թե խղճահարության այդ հրաշքն ինչպես է դարձել անձնվեր գործ այնտեղ, որտեղ դուք եք ապրում: Այն հավանաբար բնական մեծ աղետի հետևանքով չի եղել: Ես տեսել եմ դա քահանայության քվորումում, որտեղ մի եղբայր վեր կացավ նկարագրելու մի տղամարդու կամ կնոջ կարիքները, որը հնարավորություն էր փնտրում աշխատելու իրեն կամ ընտանիքին պահելու համար: Ես խղճահարություն էի զգում այդ սենյակում, բայց ոմանք առաջարկեցին մարդկանց անուններ, ովքեր կարող էին աշխատանք տալ այդ մարդուն:

Այն, ինչ պատահեց այդ քահանայության քվորումում, և այն, ինչ պատահեց Այդահոյի այդ հեղեղված տներում, Տիրոջ ուղու դրսևորումն էր՝ օգնելու նրանց ովքեր մեծ կարիքի մեջ էին կրկին ինքնապահովող դառնալու համար: Մենք զգում ենք խղճահարություն և մենք գիտենք, թե ինչպես գործենք Տիրոջ ուղով օգնելու համար:

Մենք տոնում ենք Եկեղեցու բարօրության ծրագրի 75-րդ տարեդարձը: Այն սկսվեց նրանց կարիքները բավարարելու համար, ովքեր կորցրել էին աշխատանքը, ագարակները և նույնիսկ տները, այն բանի հետևանքով, որը հայտնի դարձավ որպես «մեծ անկման» ժամանակաշրջան:

Երկնային Հոր զավակների անցողիկ մեծ կարիքները նորից ի հայտ են եկել մեր ժամանակներում, ճիշտ ինչպես անցյալում, և ինչպես որ կգան ապագա բոլոր ժամանակներում: Եկեղեցու բարօրության ծրագրի սկզբունքները միայն մեկ ժամանակի կամ մեկ վայրի համար չեն: Դրանք բոլոր ժամանակների և բոլոր տեղերի համար են:

Այդ սկզբունքները հոգևոր են և հավերժական: Այդ պատճառով, հասկանալով դրանք և խորը տեղավորելով դրանք մեր սրտերում, մենք կկարողանանք տեսնել և օգտագործել օգնելու հնարավորությունները, երբ էլ և որտեղ էլ որ Տերը մեզ կանչի:

Ահա մի քանի սկզբունքներ, որոնք առաջնորդել են ինձ, երբ ես կամեցել եմ օգնել Տիրոջ ուղով և երբ ես օգնություն եմ ստացել ուրիշներից:

Առաջինը, բոլոր մարդիկ ավելի երջանիկ են և զգում են ավելի մեծ ինքնահարգանք, երբ կարողանում են ապահովել իրենց և իրենց ընտանիքներին, իսկ հետո հասնել օգնության ուրիշներին: Ես երախտապարտ եմ նրանց համար, ովքեր օգնել են ինձ հոգալ իմ կարիքները: Եվ ես ավելի երախտապարտ եմ նրանց, ովքեր օգնեցին ինձ ինքնապահովող դառնալ: Ապա նրանց եմ ամենից շատ երախտապարտ, ովքեր ցույց տվեցին ինձ, թե ինչպես օգտագործել իմ մի փոքր ավելցուկը՝ ուրիշներին օգնելու համար:

Ես սովորեցի, որ ավելցուկ ունենալու ուղին վաստակելուց ավելի քիչ ծախսելն է: Այդ ավելցուկով ես կարողացա սովորել, որ ավելի լավ է տալը, քան ստանալը: Դա մասնավորապես այն պատճառով է, որ երբ մենք օգնություն ենք տալիս Տիրոջ

ուղով, Նա օրհնում է մեզ:

Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին ասել է բարօրության աշխատանքի մասին. «Դուք չեք կարող այս աշխատանքում այնքան շատ տալ, որ հետո ինքներդ էլ աղքատ դառնաք»: Իսկ հետո նա մեջբերեց իր միսիայից Նախագահ Մելվին Ջ. Բալլարդին. «Մարդ չի կարող տալ մի կտոր չորուկ Տիրոջը՝ առանց ստանալու մի բոքոն ի հատուցում»:[3]

Ես գտել եմ, որ դա ճիշտ է իմ կյանքում: Երբ ես առատաձեռն եմ Երկնային Հոր կարիքավոր զավակների հանդեպ, Նա առատաձեռն է իմ հանդեպ:

Ավետարանի երկրորդ սկզբունքը, որն ինձ համար ուղեցույց է եղել բարօրության աշխատանքում, միասնականության զորությունն ու օրհնությունն է: Երբ մենք միացնում ենք մեր ձեռքերը՝ ծառայելու համար կարիքավորներին, Տերը միացնում է մեր սրտերը: Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտ. ասել է այդ մասին. «Այդ նվիրաբերումը . . . տվել է եղբայրության . . . ընդհանուր զգացում, երբ տարբեր կրթության և զբաղմունքի մարդիկ աշխատել են կողք կողքի բարօրության ոլորտում կամ որև է այլ ծրագրի վրա»:[4]

Այն, որ դա մեծացնում է եղբայրության զգացումը ինչպես ստացողի, այնպես էլ տվողի համար, զուտ ճշմարտություն է: Մինչև այսօր այն մարդը, ում հետ ես կողք կողքի թիակով ցեխ էի մաքրում Ռեքսբուրգի իր հեղեղված տանը, ինձ հետ կապված է զգում: Եվ նա ավելի մեծ անձնական արժանապատվություն է զգում, որ արեց այն ամենը, ինչ կարող էր իր և իր ընտանիքի համար: Եթե մենք աշխատեինք մենակ, մենք երկուսս էլ կկորցնեինք հոգևոր մի օրհնություն:

Սա ինձ բերում է բարօրության աշխատանքում գործունեության երրորդ սկզբունքին. Ներքաշեք ձեր ընտանիքին աշխատանքի մեջ ձեզ հետ, որպեսզի նրանք կարողանան սովորել միմյանց համար հոգ տանել, ինչպես նրանք հոգ են տանում ուրիշների համար: Ձեր որդիներն ու դուստրերը, ովքեր աշխատում են ձեզ հետ՝ ծառայելով կարիքի մեջ գտնվող ուրիշներին, ավելի



հավանական է, որ օգնեն միմյանց, երբ իրենք կարիքի մեջ լինեն:

Եկեղեցու բարօրության չորրորդ արժեքավոր սկզբունքը, որ ես սովորեցի, այն ժամանակ էր, երբ ես եպիսկոպոս էի: Այն եկավ սուրբ գրության «գտեք աղքատներին» պատգամին հետևելու արդյունքում: Եպիսկոպոսի պարտականությունն է գտնել և օգնություն ապահովել նրանց, ովքեր դեռ աջակցության կարիք ունեն, այն բոլորից հետո, ինչ կարող են անել իրենք և իրենց ընտանիքները: Ես հասկացա, որ Տերն ուղարկում է Սուրբ Հոգին՝ հնարավոր դարձնելու «որոնեք և կգտնեք» կոչը[5] աղքատին հոգ տանելու համար, ինչպես այն գործում է ճշմարտությունը գտնելիս: Բայց ես նաև սովորեցի ներգրավել այդ հարցում Սփոփող Միության նախագահին: Նա կարող է ձեզանից առաջ ստանալ հայտնությունը:

Ձեզանից ոմանք այդ ոգեշնչման կարիքը կունենան ամիսներ հետո: Եկեղեցու բարօրության ծրագրի 75-ամյակը տոնելու համար անդամները ողջ աշխարհում կհրավիրվեն մասնակցելու «ծառայության օրվան»: Ղեկավարներն ու անդամները կձգտեն հայտնություն ստանալ, երբ նախագծեն ծրագրերը:

Ես երեք առաջարկներ կանեմ՝ օգնելու ձեզ ծրագրել ձեր ծառայողական ծրագիրը:

Առաջինը հոգեպես նախապատրաստվեք և նախապատրաստեք նրանց, ում ղեկավարում եք: Միայն երբ սրտերը փափկում են Փրկչի Քավությամբ, կարող եք հստակորեն տեսնել ծրագրի նպատակը որպես Երկնային Հոր զավակների կյանքի օրհնություն՝ ինչպես հոգևոր, այնպես էլ ֆիզիկական:

Իմ երկրորդ առաջարկն է՝ ընտրել որպես ծառայություն ստացողներ արքայության կամ համայնքի այն մարդկանց, ում կարիքները կհուզեն նրանց սրտերը, ովքեր կմատուցեն ծառայություն: Մարդիկ, ում դուք ծառայում եք, կզգան նրանց սերը: Դա նրանց ավելին մեծ ուրախություն կպարգևի, ինչպես երգն է խոստանում, քան միայն նրանց աշխարհիկ կարիքները հոգալը:

Իմ վերջին առաջարկությունն է ծրագրել՝ օգտագործելով ընտանիքների, քվորումների, օժանդակ կազմակերպությունների և մարդկանց կապերը ձեր համայնքներում: Միասնության զգացումը կբազմապատկի ձեր մատուցած ծառայության բարի ազդեցությունները: Եվ միասնության այդ զգացումները ընտանիքներում, Եկեղեցում և համայնքներում կաճեն և կդառնան հարատև ժառանգություն:

Սա իմ հնարավորությունն է ասելու ձեզ, թե որքան շատ եմ գնահատում ձեզ: Տիրոջ համար մատուցած ձեր սիրո ծառայության համար ես նրանց հանդիպելիս շնորհակալություն եմ ստացել:

Դուք գտել եք ուղի՝ բարձրացնելու նրանց ավելի վեր, երբ օգնել եք նրանց Տիրոջ ձևով: Դուք և ձեր պես Փրկչի խոնարհ աշակերտները ջուրը զցեցիք ձեր հացը հանուն

ծառայության և այն մարդկանց, ում դուք օգնել եք, փորձեցին ինձ տալ ի հատուցում մեծ երախտագիտություն:

Ես ստանում եմ մարդկանցից, որոնք աշխատել են ձեզ հետ, շնորհակալության նույն արտահայտությունը: Ես հիշում եմ, ինչպես մի անգամ կանգնած էի Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնի կողքին: Մենք խոսում էինք Տիրոջ Եկեղեցու ծառայության մասին: Ես զարմացա նրա երիտասարդական ավյունով, երբ նա ասաց, հուզված շարժելով ձեռքը. «Ես սիրում եմ այս աշխատանքը, աշխատանքը հենց սա է»:

Վարդապետի կողմից ես շնորհակալություն եմ հայտնում Երկնային Հոր զավակներին՝ ծառայելու համար: Նա գիտի ձեզ և Նա տեսնում է ձեր ջանքերը, ջանասիրությունը և զոհաբերությունը: Ես աղոթում եմ, որ Նա շնորհի ձեզ ձեր աշխատանքների պտուղը՝ տեսնել նրանց երջանկությունը, ում դուք օգնել եք և ում կողմից օգնություն եք ստացել Տիրոջ անունից:

Ես գիտեմ, որ Հայր Աստվածն ապրում է և լսում մեր աղոթքները: Ես գիտեմ, որ Հիսուսը Քրիստոսն է: Դուք և նրանք, ում դուք ծառայում եք, կարող են մաքրվել և զորացվել, ծառայելով Նրան և պահելով Նրա պատվիրանները: Դուք կարող եք իմանալ, ինչպես ես գիտեմ Սուրբ Հոգու զորությամբ, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր ճշմարիտ և կենդանի Եկեղեցին վերականգնելու համար, որն այս է: Ես վկայում եմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Աստծո կենդանի մարգարեն է: Նա մեծ օրինակ է նրա, թե ինչպես էր գործում Տերը. նա քայլում է բարիք անելով: Իմ աղոթքն է, որ մենք օգտագործենք մեր հնարավորությունը՝ բարձրացնելու ընկած ձեռքերը և ամրացնելու տկար ծնկները:[6] Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "Have I Done Any Good?" *Hymns,* no. 223.
2. "Sweet Is the Work," *Hymns,* no. 147.
3. Marion G. Romney, "Welfare Services: The Savior's Program," *Ensign,* Nov. 1980, 93.
4. J. Reuben Clark Jr., in Conference Report, Oct. 1943, 13.
5. Տես Մատթեոս 7.7–8; Ղուկաս 11.9–10; 3 Նեփի 14.7–8:
6. Վարդապետություն և Ուխտեր 81.5:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող, և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ; Հենրի Բեննիոն Այրինգը՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Բոյդ Քենեթ Փաքերը որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, և հետևյալ անձինք որպես այդ քվորումի անդամներ. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության խորհրդականները և Տասներկու Առաքյալները որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, արտահայտեք նույն կերպ:

2011թ. Մայիսի 1-դրությամբ, առաջարկվում են ազատման Տարածքային հետևյալ Յոթանասունականները. Խոսե Լ. Ալոնսո, Նելսոն Լ. Ալտամիրանոը, Ջոն Ս. Անդերսոն, Յան Ս. Արդերն, Սերժիո Ե. Ավիլա, Դեյվիդ Ռ. Բրաուն, Դ. Ֆրեյզեր Բալոք, Դոնալդ Ջ. Բաթլեր, Վլադիմիրո Ջ. Կամպերո, Դենիել Մ. Կանոլես, Քարլ Բ. Քուք, Ի. Պոլոսկի Գորդոն, Ջ. Դեվն Քորնիշ, Ֆրեդերիկո Ֆ. Կոստալես, Լեզոան Ռ. Կուրտիս Կրտսեր, Հեբեր Օ. Դայազ, Էնդրյու Մ. Ֆորդ, Ջուլիո Գ. Գավիոլա, Մանուել Գոնզալես, Դենիել Մ. Ջոնս, Դոնալդ Ջ. Քեյես, Դոմինգոս Ս. Լինհարես, Բ. Ռենատո Մալդոնադո, Ռայմանդո Մոռալես, Ջ. Միշել Պայա, Սթեֆեն Դ. Փոզի, Խուան Մ. Ռոդրիգես, Ժերարդո Լ. Ռուբիո, Ջեյ Լ. Սիթերաղ, Դրրք Սմիբերթ, Եյվինդ Սթերի, Իսրաել Ա. Տոլենտինո, Վ.

Քրիստոֆեր Վոդել և Գրեյ Վ. Վոքեր։

Ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը նրանց հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել։

Առաջարկվում են հաստատման որպես Յոթանասունի Առաջին Քվորումի նոր անդամներ՝ Դոն Քլարկը, Խոսե Լ. Ալոնսոն, Յան Ս. Արդեմը, Քարլ Բ. Քուքը, Լեզրան Ռ. Կուրտիսը, Վ. Քրիսթոֆեր Վադելը և Կազուհիկո Յամաշիտան; և որպես Յոթանասունի Երկրորդ Քվորումի նոր անդամներ՝Ռանդալ Կ. Բենեթը, Ջ. Դեվն Քորնիշը, Օ. Վինսենթ Հալեքը և Լարի Յ. Վիլսոնը։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, նույն ձևով։

Առաջարկվում են հաստատման հետևեյալ Տարածքային Յոթանասունականները. Քենթ Յ. Ալլեն, Սթեֆեն Բ. Ալլեն, Վինսոր Բալդերամա, Ռ. Ռանդալ Բլութ, Հանս Տ. Բում, Պատրիկ Մ. Բութուալ, Մարսելո Ֆ. Չափ, Իլիզեր Ս. Կոլլադո, Ջեֆրի Դ. Քամինգս, Նիկոլաս Լ. Դի Ջիովաննի, Ջորջ Ս. Դոմինգեզ, Գարի Բ. Դոքսի, Դեյվիդ Գ. Ֆերնդանդես, Հեռնան Դ. Ֆեռեյռա, Ռիկարդո Պ. Գիմենեզ, Ալլեն Դ. Հեյնի, Դուգլաս Ֆ. Հայգրմ, Ռոբերտ Վ. Հայմաս, Լեսթեր Ֆ. Ջոնսոն, Մաթի Տ. Ջութենուս, Չանգ Հո Քիմ, Ալֆրեդ Քունգու, Ռեմեջիո Ե. Մեյմ Կրտսեր, Իսմայել Մենդոզա, Սեզար Ա. Մոռալես, Ռոլոն Դ. Մանս, Ռեյմոն Ս. Նոբլեզա, Աբենիր Վ. Պաջարո, Գարի Բ. Փորթեր, Հոսե Լ. Ռեյնա, Էստեբան Գ. Ռեսեկ, Ջորջ Ֆ. Ռոդս Կրտսեր, Լին Լ. Սամերհեյս, Քրեյգ Բ. Թերի, Դեյվիդ Ջ. Թոմսոն, Էռնեստո Ռ. Տորիս, Առնուլֆո Վալենզուելա, Ռիկարդո Վալադարես, Ֆաբիան Ի. Վալեջո, Էմեր Վիլաբորոլս և Թերի Լ. Վեյդ։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Դե՞մ։

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանությունները, Տարածքային Յոթանասունականները, և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել։

Նախագահ Մոնսոն, մինչ այժմ իմ դիտարկումներով, քվեարկությունը Համաժողովների Կենտրոնում անցավ միաձայն։

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող ձայնի, ձեր հաստատուն հավատքի, նվիրվածության և աղոթքների համար։ ■

Եկեղեցու աուդիտի բաժանմունքի 2010թ. հաշվետվություն

Ներկայացված է Ռոբերտ Վ Քանթվելի կողմից
Եկեղեցու աուդիտի բաժանմունքի գլխավոր տնօրեն

Ուղղված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությանը

Հարգելի Եղբայրներ, ինչպես ասվում է Վարդապետություն և Ուխտերի 120-րդ բաժնում տրված հայտնության մեջ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը թույլատրում է Տասանորդների Տնօրինման Խորհուրդը: Այդ խորհուրդը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից: Այս խորհուրդն է հաստատում Եկեղեցու բաժանմունքների և գործունեության բյուջեները: Եկեղեցու բաժանմունքները ծախսում են ֆոնդերը ըստ հաստատված բյուջեների և համաձայն Եկեղեցու քաղաքականությանը ու ընթացակարգերի:

Եկեղեցու աուդիտի բաժանմունքին թույլատրված է օգտագործել այն բոլոր տվյալներն ու համակարգերը, որոնք անհրաժեշտ են ֆոնդերի անդորագրերի, ծախսերի, ինչպես նաև Եկեղեցու ունեցվածքի պահպանման ուղղությամբ՝ համապատասխան վերահսկողությունը գնահատելու համար: Եկեղեցու աուդիտի բաժանմունքը գործում է Եկեղեցու մյուս բաժանմունքներից և գործունեությունից անկախ, աշխատակազմը բաղկացած է հավաստագրյալ հանրային հաշվապահներից, ներքին հավաստագրյալ հաշվեստուգիչներից, հավաստագրյալ տեղեկատու համակարգերի հաշվեստուգիչներից և որակավորում ունեցող ու փորձառու այլ մասնագետներից:

Հիմնվելով կատարված հաշվեստուգումների վրա, Եկեղեցու աուդիտի բաժանմունքն այն կարծիքին է, որ բոլոր նյութական հարցերին առնչվող 2010թ. ստացված նվիրատվությունները, կատարված ծախսերը և Եկեղեցու նյութական ունեցվածքը գրանցվել և տնօրինվել են համապատասխան հաշվապահական գործառնությունների, հաստատված բյուջեի և Եկեղեցու քաղաքականության և ընթացակարգերի համաձայն:

Հարգանքով ներկայացրեց,
Եկեղեցու աուդիտի բաժանմունք
Ռոբերտ Վ. Քանթվել
Գլխավոր տնօրեն ■

Վիճակագրական հաշվետվություն, 2010թ.

Ներկայացրեց Բրուք Պ. Հեյլը
Առաջին Նախագահության Քարտուղար

Առաջին Նախագահությունը հրապարակել է Եկեղեցու 2010թ. հետևյալ վիճակագրական հաշվետվությունը: 2010 թվի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա էին 2,896 ցից, 340 միսիա, 614 շրջան, 28,660 ծուխ և ճյուղ:

Եկեղեցու անդամների ընդհանուր թիվը 2010թ. վերջում 14,131,467 էր:

2010 թվին Եկեղեցում գրանցվել են 120,528 նոր երեխա և մկրտվել 272,814 նորադարձ:

Լիաժամկետ միսիոներների թիվը տարեվերջին 52,225 էր:

Եկեղեցու ծառայության մեջ գտնվող միսիոներների թիվը 20813 էր, որոնցից շատերը ապրում են տանը և կանչվել են աջակցելու Եկեղեցու տաբեր գործերին:

Տարվա ընթացքում նվիրագործվել է չորս տաճար. Վանկուվեր Բրիտանական Կոլումբիա Տաճարը Կանադայում, Գիլա Վելի Արիզոնա Տաճարը Միացյալ Նահանգներում, Մեբու Ցիթի Ֆիլիպիններ Տաճարը և Կիև Ուկրաինա Տաճարը:

2010թվին վերանվիրագործվել է Լեյի Հավայի Տաճարը Միացյալ Նահանգներում:

Աշխարհում գործող տաճարների ընդհանուր թիվը 134 էր:

Եկեղեցու նախկին Բարձրագույն Իշխանություններ և այլոք, ովքեր մահացել են անցյալ տարվա ապրիլի գերագույն համաժողովից հետո

Երեցներ Վ. Գրանտ Բանգերտեր, Էդնի Յ. Կոմացու, Հանս Բ. Ռինգեր, Լեգրան Ռ. Կուրտիս, Ռիչարդ Պ. Լինսի, Դոնալդ Լ. Ստահելի և Ռիչարդ Բ. Վիրթլին՝ Յոթանասունի Քվորումների նախկին անդամներ; Բարբարա Բ. Սմիթ՝ Սփոփող Միության նախկին Գերագույն Նախագահ; Ռութ Հ. Ֆանկ՝ Երիտասարդ Կանանց նախկին Գերագույն Նախագահ; Նորմա Ջեյն Բ. Սմիթ՝ Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության նախկին խորհրդական, Հելեն Ֆայանս՝ պատվավոր Բարձրագույն Իշխանավոր՝ Երեց Ջ. Թոմաս Էվանսի այրի; Առնոլդ Դ. Ֆրայբերգ՝ նկարիչ; և Ջ. Էլիոթ Քեմերոն՝ Եկեղեցու Կրթության նախկին կառավարիչ: ■

Նախագահ Բոյդ Կ. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Առաջնորդվելով Սուրբ Հոգով

Մեզանից յուրաքանչյուրը կարող է առաջնորդվել հայտնության ոգով և Սուրբ Հոգու պարգևով:

Արդեն 400 տարի է, ինչ հրատարակվել է Թագավոր Հակոբոսի Աստվածաշնչի անգլերեն տարբերակը, ինձ համար մի մեծ հերոսի՝Ուիլյամ Թինդլի մեծ օժանդակությամբ:

Հոգևորականությունը չէր ցանկանում, որ Աստվածաշունչը հրատարակվեր սովորական անգլերենով: Նրանք Թինդլին տեղից տեղ էին արտաքսում: Նա ասաց նրանց. «Եթե Աստված խնայի իմ կյանքը, շատ տարիներ չանցած ես այնպես կանեմ, որ գութանով վար անող տղան ավելի շատ բան իմանա սուրբ գրությունների մասին, քան դուք»:[1]

Թինդլը մատնվեց և մոտ մեկ տարի փակվեց Բրյուսելի մութ, սառը բանտում: Նրա հագուստը քրքրված էր: Նա խնդրում էր իրեն գերի վերցնողներից վերարկու, գլխարկ ու մոմ, ասելով. «Մթության մեջ միայնակ նստելը շատ հոգնեցուցիչ է»:[2] Այդ ամենում նրան մերժեցին նրան: Ի վերջո, նա դուրս բերվեց բանտից և մեծ բազմության առաջ խեղդամահ արվեց և ցցից կապված այրվեց: Սակայն Ուիլյամ Թինդլի գործն ու նահատակությունը զուր չէին:

Քանի որ Վերջին Օրերի Սրբերի երեխաները մանկությունից ուսուցանվում են սուրբ գրությունները, նրանք որոշ չափով իրականացնում են չորս դար առաջ Ուիլյամ Թինդլի կողմից արված մարգարեությունը:

Մեր սուրբ գրություններն այսօր բաղկացած են Աստվածաշնչից, Մորմոնի Գրքից՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին, Թանկագին Մարգարիտից ու Վարդապետություն և Ուխտերից:

Մորմոնի Գրքի պատճառով մեզ հաճախ անվանում են Մորմոնական Եկեղեցի, անուն, որը մեզ չի զայրացնում, բայց որն իրականում ճիշտ չէ:

Մորմոնի Գրքում Տերը կրկին անգամ այցելեց Նեփիացիներին, քանի որ նրանք աղոթեցին Հորը Նրա անունով: Եվ Տերն ասաց.

«Ի՞նչ եք կամենում,որ ձեզ տամ:

Եվ նրանք ասեցին նրան. «Տեր, մենք կամենում ենք, որ դու ասես մեզ այն անունը, որով մենք պիտի կոչենք այս եկեղեցին. քանի որ ժողովրդի մեջ վիճաբանություններ կան այս հարցի առնչությամբ»:

Եվ Տերն ասաց. «Ինչո՞ւ պիտի ժողովուրդը տրտնջա և վիճի այս բանի պատճառով:

Մի՞թե դուք չեք կարդացել սուրբ գրքերը, որոնք ասում են՝ դուք պետք է վերցնեք ձեզ վրա Քրիստոսի անունը: . . . Քանզի այս անունով պիտի դուք կոչվեք վերջին օրը: . . .

Հետևաբար, ինչ որ դուք անեք, դուք դա պիտի անեք իմ անունով. հետևաբար, դուք պիտի կոչեք եկեղեցին իմ անունով. և դուք պիտի կանչեք առ Հայրն իմ անունով, որպեսզի նա օրհնի եկեղեցին՝ հանուն ինձ:

Եվ ի՞նչպես կլինի այն իմ եկեղեցին, եթե այն կոչված չլինի իմ անունով: Քանզի, եթե մի եկեղեցի կոչվի Մովսեսի անունով, ուրեմն դա կլինի Մովսեսի եկեղեցին. կամ եթե այն կոչված լինի մարդու անունով, ուրեմն դա կլինի մարդու եկեղեցի. բայց եթե այն կոչված լինի իմ անունով, ուրեմն դա իմ եկեղեցին է, եթե այնպես լինի, որ նրանք կառուցված լինեն իմ ավետարանի վրա»:[3]

Հնազանդվելով հայտնությանը՝ մենք կոչում ենք մեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի, այլ ոչ թե մորմոնական Եկեղեցի: Մի բան է, երբ ուրիշներն են դիմում եկեղեցուն որպես մորմոնական Եկեղեցի կամ մեզ որպես Մորմոններ, և լիովին այլ բան է, երբ մենք ենք դա անում:

Առաջին Նախագահությունը նշել է.

«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի հայտնված անվան օգտագործումը (ՎևՈ 115.4) մեծապես կարևոր է ամբողջ աշխարհում Փրկչի անունը քարոզելու մեր պարտականությունը կատարելիս: Համաձայն սրա, մենք խնդրում ենք, որ երբ մենք խոսում ենք Եկեղեցու մասին, հնարավորության դեպքում, օգտագործենք ամբողջ անվանումը: . . .

Երբ խոսում ենք Եկեղեցու անդամների մասին, մենք խորհուրդ ենք տալիս ասել «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ»: Որպես կրճատ նախընտրելի է «Վերջին Օրերի Սրբեր» ձևը»:[4]

«[Վերջին Օրերի Սրբերը] խոսում են Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, և մենք

գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:[5]

Աշխարհը մեզ կդիմի, ինչպես որ կդիմի, բայց մեր խոսակցականում միշտ հիշեք, որ մենք պատկանում ենք *Հիսուս Քրիստոսի* Եկեղեցուն:

Որոշ մարդիկ պնդում են, որ մենք քրիստոնյա չենք: Նրանք կամ մեզ ընդհանրապես չեն ճանաչում, կամ սխալ են հասկանում:

Եկեղեցում յուրաքանչյուր արարողություն կատարվում է Հիսուս Քրիստոսի իշխանությամբ և անունով:[6] Մենք ունենք նույն կազմակերպությունը, որը ուներ սկզբնական Եկեղեցին՝ առաքյալներով և մարգարեներով:[7]

Հնում Տերը կանչեց և կարգեց Տասներկու Առաքյալների: Նա մատնվեց և խաչվեց: Իր Հարությունից հետո Փրկիչը 40 օր սովորեցրեց իր աշակերտներին և հետո համբարձվեց երկինք:[8]

Բայց ինչ-որ բան պակասում էր: Մի քանի օր անց Տասներկուսը հավաքվել էին մի տան մեջ և «յանկարծակի երկնքիցը մի հնչիւն եղաւ՝ սաստիկ փչող քամու պէս, եւ լցրեց բոլոր տունը: . . . Բաժանուած լեզուներ . . . կրակից . . . նստեց նորանց ամեն մէկի վերայ: Եւ ամենքը Սուրբ Հոգով լցվեցան»:[9] Նրա Առաքյալներն այժմ զորություն ունեին: Նրանք հասկացան, որ Փրկչի կողմից տրված իշխանությունը և Սուրբ Հոգու պարգևը շատ կարևոր էին Եկեղեցին հիմնելու համար: Նրանց պատվիրվեց մկրտել և շնորհել Սուրբ Հոգու պարգևը:[10]

Ժամանակի ընթացքում Առաքյալներն ու նրանց քահանայությունը վերցվեց: Կառավարելու իշխանությունն ու զորությունը պետք է վերականգնվեր: Դարեր շարունակ մարդիկ սպասել են իշխանության վերադարձին և Տիրոջ Եկեղեցու հաստատմանը:

1829թ. քահանայությունը վերականգնվեց, տրվելով জոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին՝ Հովհաննես Մկրտչի և Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալների կողմից: Այժմ Եկեղեցու արժանի տղամարդիկ քահանայության են կարգվում: Այս իշխանությունը և դրա հետ կապված Սուրբ Հոգու պարգևը, որը տրվում է Եկեղեցու բոլոր անդամներին մկրտվելուց հետո, մեզ առանձնացնում են ուրիշ եկեղեցիներից:

Վաղ շրջանի հայտնությունը նշում է, «որ ամեն մարդ կկարողանա խոսել Տեր Աստծո, այսինքն՝ աշխարհի Փրկչի անունով»:[11] Աշխատանքը Եկեղեցում այսօր կատարվում է սովորական տղամարդկանց և կանանց կողմից, ովքեր կանչված և հաստատված են նախագահելու, ուսուցանելու և ծառայելու համար: Հայտնության ուժի և Սուրբ Հոգու պարգևի շնորհիվ է, որ այդ կանչվածները առաջնորդվում են իմանալու Տիրոջ կամքը: Ուրիշները կարող է նման բաները չընդունեն որպես մարգարեություն, հայտնություն և Սուրբ Հոգու պարգև, բայց եթե նրանք ուզում են գոնե փոքր-ինչ մեզ հասկանալ, նրանք պետք է հասկանան, որ մենք ընդունում ենք այդ բաները:

Տերը জոզեֆ Սմիթին հայտնեց առողջության օրենքը՝ Իմաստության Խոսքը, վտանգների վերաբերյալ աշխարհի իմանալուց շատ առաջ: Բոլորին սովորեցվել է հրաժարվել թեյից, սուրճից, ոգելից խմիչքից, ծխախոտից և, իհարկե, զանազան թմրանյութերից և կախվածություն առաջացնող այլ նյութերից, որոնք մշտապես մեր երիտասարդների առաջ են: Նրանք, ովքեր հնազանդվում են այս հայտնությանը խոստում ունեն, որ նրանք «կունենան առողջություն իրենց պորտում և ծուծ՝ իրենց ոսկորներում.

«Եվ կգտնեն իմաստություն և

գիտության մեծ գանձեր, նույնիսկ թաքնված գանձեր:

«Եվ կվազեն ու չեն հոգնի, և կքայլեն ու չեն նվաղի»:[12]

Մեկ այլ հայտնության մեջ Տիրոջ բարոյականության սկզբունքը պատվիրում է, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է պահպանվի և օգտագործվի միայն ամուսնու և կնոջ միջև:[13] Այս զորության սխալ օգտագործման լրջությանը գերազանցում են միայն անմեղ արյուն թափելը և Սուրբ Հոգին ուրանալը: Եթե մեկը խախտում է օրենքը, ապաշխարության վարդապետությունը սովորեցնում է, թե ինչպես մաքրել այս հանցանքի ազդեցությունը:[14]

Յուրաքանչյուրն էլ փորձվում է: Մեկը կարող է մտածի, որ արդարացի չէ, որ իրենք միայնակ կանգնեն որոշակի փորձության առաջ, սակայն մահկանացու կյանքի նպատակը հետևյալն է՝ փորձվել: Եվ պատասխանը բոլորի համար նույնն է՝ մենք պետք է և մենք կարող ենք դիմակայել ցանկացած տեսակի փորձությունների:

«Երջանկության մեծ ծրագիրը»[15] կենտրոնանում է ընտանեկան կյանքի վրա: Ամուսինը տան գլուխն է և կինը՝ տան սիրտը: Նրանք ամուսնության մեջ հավասար գործընկերներ են: Վերջին Օրերի Սուրբ տղամարդը ընտանիքի համար պատասխանատվություն կրողն է՝ ավետարանին հավատարիմ մնալով: Նա հոգատար, նվիրված ամուսին ու հայր է: Նա մեծարում է կնոջը: Կինը աջակցում է իր ամուսնուն: Երկու ծնողներն էլ հոգ են տանում իրենց երեխաների հոգևոր աճի համար:

Վերջին Օրերի սրբերը սովորում են, որ պետք է սիրեն իրար և հեշտությամբ ներեն իրար սխալները:

Իմ կյանքը փոխեց մի արդարակյաց հայրապետ: Նա ամուսնացել էր իր սիրելիի հետ: Նրանք շատ սիրահարված էին և շուտով նա սպասում էր իրենց առաջին երեխային:

Այն գիշեր, երբ ծնվեց երեխան, բարդություններ առաջ եկան: Միակ բժիշկը քաղաքից դուրս ինչ-որ տեղ հիվանդի էր այցելել: Մի քանի ժամ երկունքի ցավերից մոր վիճակն անհուսալի էր դարձել: Վերջապես բժշկին գտել էին: Շտապ օգնության անհրաժեշտության պայմաններում նա արագ գործի էր անցել և շուտով երեխան ծնվել էր, իսկ ճգնաժամը, թվում էր, թե անցել էր: Սակայն որոշ ժամանակ անց երիտասարդ մայրը մահացավ հենց այն հիվանդությունից, որը բժիշկն այդ գիշեր բուժում էր մեկ այլ տանը:

Երիտասարդ տղան ընկճված էր: Մինչ շաբաթներն անցնում էին, նրա վիշտը խորանում էր: Նա մի փոքր էլ մտածեց և իր ցասման մեջ վտանգավոր դարձավ: Այսօր, առանց կասկածի, նա դատական գործ կհարուցեր բժշկի դեմ մասնագիտական սխալ գործելու համար, չնայած փողը ոչ մի հարց չէր լուծի:

Մի գիշեր նրա դուռը թակեցին: Մի փոքրիկ աղջիկ պարզապես ասաց. «Հայրիկը ուզում է, որ դուք գաք մեր տուն: Նա ուզում է խոսել ձեզ հետ»:

«Հայրիկը» ցցի նախագահն էր: Այդ իմաստուն ղեկավարի խորհուրդը պարզապես հետևյալն էր. «Ջոն, մի մտահոգվիր դրա համար: Ոչ մի բան չես կարող անել նրան ետ բերելու համար: Ցանկացած բան, որ դու անես, ավելի կվատացնի իրավիճակը: Ջոն, մի մտահոգվիր դրա համար»:

Սա իմ ընկերոջ փորձությունն է եղել: Ինչպե՞ս նա կարող էր չմտահոգվել դրա համար: Ահավոր սխալ էր տեղի ունեցել: Նա պայքարում էր, որ կարողանար ինքն իրեն տիրապետել և, ի վերջո, որոշեց, որ պետք է հնազանդ լինի և հետևի այդ իմաստուն ցցի նախագահի խորհրդին: Նա որոշեց այլևս չմտահոգվել այդ մասին:

Նա ասաց. «Ես արդեն ծեր էի, մինչև որ հասկացա և վերջապես կարողացա տեսնել խեղճ գյուղական բժշկին՝ զերծանրաբեռնված, ցածր վարձատրվող, զերհոգնած, վազելով մի հիվանդից մյուսի մոտ, սակավ դեղորայքով, առանց հիվանդանոցի, մի քանի գործիքներով, ջանալով փրկել կյանքեր և մեծամասամբ հաջողության հասնելով: Նա եկել էր ճգնաժամի պահին, երբ երկու կյանքեր մազից էին կախված և գործել էր առանց հապաղելու: Ես վերջապես հասկա»: Նա ասաց. «Ես կխորտակեի իմ կյանքն ու ուրիշների կյանքերը»:

Շատ անգամներ նա, ծնկի իջնելով, շնորհակալություն էր հայտնում Տիրոջը քահանայության իմաստուն ղեկավարի համար, ով պարզապես խորհուրդ էր տվել. «Ջոն, մի մտահոգվիր դրա համար»:

Մեր շուրջը մենք տեսնում ենք Եկեղեցու անդամներ, ովքեր վիրավորված են: Ոմանք վիրավորվում են միջադեպերից, որոնք կապված են Եկեղեցու պատմության կամ դրա ղեկավարների հետ և տառապում

Սան Լուիս, Բրազիլիա

են իրենց ողջ կյանքի ընթացքում, չկարողանալով տեսնել ուրիշների սխալներից այն կողմ: Նրանք չեն կարողանում չմտահոգվել դրա մասին: Նրանք դառնում են ոչ ակտիվ:

Այդ մոտեցումը նման է նրան, երբ մարդը, որին հարվածում են մահակով, վիրավորված լինելով վերցնում է մահակը և սկսում է դրանով հարվածել ինքն իր գլխին կյանքի ողջ ընթացքում: Ինչպիսի հիմարություն: Ինչ ցավալի բան: Այդ տեսակի վրեժխնդրությունը ցավ է պատճառում միայն տվյալ անձնավորությանը: Եթե դուք վիրավորվել եք, ներեք, մոռացեք և մի մտահոգվեք այդ մասին:

Մորմոնի Գիրքը պարունակում է այս զգուշացումը. «Եվ արդ, եթե կան թերություններ, դրանք մարդկանց սխալներն են. ուստի, մի դատապարտեք Աստծո բաները, որպեսզի դուք կարողանաք անբիծ համարվել Քրիստոսի ատյանի առաջ»:[16]

Վերջին Օրերի Սուրբը պարզապես հասարակ անձնավորություն է: Մենք այժմ ամենուր ենք աշխարհում՝ 14 միլիոն անդամներ: Դա ընդամենը սկիզբն է: Մեզ սովորեցրել են լինել աշխարհում, բայց ոչ աշխարհից:[17] Ուստի, մենք ապրում ենք սովորական կյանքով, սովորական ընտանիքներում՝մնացած մարդկանց կողքին:

Մեզ սովորեցրել են սուտ չխոսել, չգողանալ, չդավաճանել:[18] Մենք չենք օգտագործում գռեհիկ լեզու: Մենք լավատես ենք և ուրախ և չենք վախենում կյանքից:

Մենք «հոժար ենք սգալու նրանց հետ, ովքեր սգում են . . . և մխիթարել նրանց, ովքեր մխիթարության կարիք ունեն, և կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»:[19]

Եթե մեկը փնտրում է եկեղեցի, որը շատ քիչ բան է պահանջում, սա նրանց փնտրածը չէ: Հեշտ չէ լինել Վերջին Օրերի Սուրբ, բայց վերջ ի վերջո սա միակ ճշմարիտ ուղին է:

Անկախ հակառակությունների կամ «պատերազմների, պատերազմների համբավների և զանազան տեղերում երկրաշարժերի»,[20] ոչ մի զորություն կամ ազդեցություն չի

կարող կանգնեցնել այս աշխատանքը: Մեզանից յուրաքանչյուրը կարող է առաջնորդվել հայտնության ոգով և Սուրբ Հոգու պարգևով: «Ինչպես մարդը չի կարող պարզել իր չնչին ձեռքը և կանգնեցնել Միսուրի գետի կայուն ընթացքը կամ շրջել այն դեպի վեր, այնպես էլ հնարավոր չէ խանգարել Ամենազորին՝ երկնքից Վերջին Օրերի Սրբերի գլխին գիտելիք թափել»:[21]

Եթե դուք որևէ բեռ եք կրում, մոռացեք այն, թողեք այն: Շատ ներեք, քիչ ապաշխարեք, և ձեզ կայցելի Սուրբ Հոգին և վկայությամբ կհաստատի այն, ինչի մասին դուք անգամ չգիտեիք: Ձեզ համար հոգ կտանեն և ձեզ կօրհնեն՝ ձեզ և ձեր մտերիմներին: Սա Նրա մոտ գալու հրավեր է: Այս եկեղեցին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է՝ միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին ողջ երկրագնդի վրա,[22] որում մենք, Նրա իսկ հայտարարությամբ, գտնում ենք «երջանկության մեծ ծրագիրը»:[23] Այս մասին ես վկայություն եմ բերում Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. In David Daniell, introduction to *Tyndale's New Testament* (1989), viii.
2. In Daniell, introduction to *Tyndale's New Testament,* ix.
3. 3 Նեփի 27.2–5, 7–8:
4. Առաջին Նախագահության նամակ, փետ. 23, 2001:
5. 2 Նեփի 25.26:
6. Տես Մովսես 5.8; մկրտություն. տես 2 Նեփի 31.12; 3 Նեփի 11.27; 18.16; օրհնություն հիվանդներին. տես Վարդապետություն և Ուխտեր 42.44; Սուրբ Հոգու շնորհում. տես Մորոնի 2.2; քահանայություն կամ կարգում. տես Մորոնի 3.1–3; հաղորդություն. տես Մորոնի 4.1–3; հրաշքներ. տես Վարդապետություն և Ուխտեր 84.66–69:
7. Տես Հավատո հանգանակներ 1.6:
8. Տես Գործք 1.3-11:
9. Գործք 2.2–4:
10. Տես Գործք 2.38:
11. Վարդապետություն և Ուխտեր 1.20:
12. Վարդապետություն և Ուխտեր 89.18–20:
13. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* Նոյ. 2010, 129:
14. Տես Ալմա 39.4–6:
15. Ալմա 42.8:
16. Մորոմոնի Գրքի տիտղոսաթերթ:
17. Տես Հովհաննես 17.4:
18. Տես Ելից 20.15–16:
19. Մոսիա 18.9:
20. Մորմոն 8:30:
21. Վարդապետություն և Ուխտեր 121.33:
22. Վարդապետություն և Ուխտեր 1.30:
23. Ալմա 42.8:



Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հավատքով դեմ առ դեմ կանգնեք ապագային

Նրա ճշմարտությունը, ուխտերը և արարողությունները հնարավորություն են տալիս մեզ հաղթահարել վախը և հավատքով դեմ առ դեմ կանգնել ապագային:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող ազդեցության համար, ոչ միայն ձեր բարձրացրած ձեռքի, այլ նաև ձեր սատարող ծառայության համար տանը, Եկեղեցում և ձեր համայնքներում: Մենք սիրում ենք ձեզ հետ լինել և տեսնել ձեզ ձեր ընտանիքների և ընկերների հետ: Որտեղ էլ որ դուք ապրեք, մենք հետևում ենք այս աշխարհը ավելի լավ վայր դարձնելու ձեր ջանքերին: Մենք հաստատում ենք ձեզ: Մենք սիրում ենք ձեզ: Ինչպես դուք եք մեզ համար աղոթում, այնպես էլ մենք ենք աղոթում ձեզ համար:

Մենք պատկերացնում ենք, ինչպես են ձեր ընտանիքները հավաքված հեռուստացույցի շուրջ կամ առցանց դիտում գերագույն համաժողովը իրենց տներում: Մի ուշադիր մայր և հայր ինձ են ուղարկել նկարի մի օրինակ, որը նրանք նկարել են համաժողովի ժամանակ: Նրանք 18 ամսեկան որդին ճանաչել էր խոսողին՝ դեմքով և և ձայնից և սկսել էր համբույրներ ուղարկել դեպի հեռուստացույցը: Նա ուզում էր ավելի մոտենալ: Այդ ժամանակ նրա հոգատար մեծ քույրը արագ դրեց իր փոքրիկ եղբորն իր ուսերին և նրան մոտ բերեց: Ահա այդ լուսանկարը:

Այո, հեռուստաէկրանի վրա իմ պատկերն է, իսկ այդ երեխաները մեր թոռնիկներն են: Մի քանի տարի անց այս տղան կդառնա երեց, կօժտվի տաճարում և պատրաստ կլինի իր միսիային: Հետագայում նա կկնքվի իր ընտրած հավերժական զուգընկերոջ հետ: Կարողանո՞ւմ եք տեսնել նրան մի օր որպես ամուսին և հայր, իր սեփական երեխաների հետ: Եվ մի օր նա մնաս բարով կասի իր պապիկին ու տատիկին, անկասկած գիտելիքով, որ մահը կյանքի մի մասն է:

Այո, մենք ապրում ենք մահանալու համար և մենք մահանում ենք նորից ապրելու համար: Հավերժական տեսանկյունից միակ մահը, որն իսկապես վաղաժամ է, այն մարդու մահն է, ով պատրաստված չէ հանդիպելու Աստծուն:

Որպես առաքյալներ և մարգարեներ մենք մտահոգված ենք ոչ միայն մեր երեխաների և թոռնիկների համար, այլ նաև ձեզ համար և Աստծո յուրաքանչյուր զավակի համար: Այն ամենը, ինչ ապագան է պահում Աստծո յուրաքանչյուր սրբազան զավակի համար, կձևավորվի իր ծնողների, ընտանիքի, ընկերների և ուսուցիչների կողմից: Այսպիսով, մեր հավատքն *այժմ* դառնում է *հետագայում* մեր սերնդի հավատքի մի մասը:

Յուրաքանչյուր անձ՝ տղա, թե աղջիկ, կբացի իր ուղին անընդհատ փոփոխվող աշխարհում՝ մրցակցող գաղափարախոսությունների աշխարհում: Չարի ուժերը միշտ կհակադրվեն բարու ուժերին: Սատանան անընդհատ ձգտում է ազդել մեզ վրա այնպես, որպեսզի մենք հետևենք իր ուղիներին և դառնանք թշվառ, ինչպես ինքը:[1] Եվ կյանքի սովորական վտանգները՝ հիվանդությունները, վնասվածքները և վթարները, միշտ էլ առկա են լինելու:

Մենք ապրում ենք խառնաշփոթ ժամանակներում: Երկրաշարժերն ու ցունամիները ավերածություններ են առաջացնում, կառավարությունները տապալվում են, տնտեսական լարվածությունները սրվում են, ընտանիքը գրոհման է ենթարկվում, իսկ ամուսնալուծությունների ցուցանիշները բարձրանում են: Մենք մեծ պատճառ ունենք մտահոգվելու: Բայց մենք չպետք է թույլ տանք, որ մեր երկյուղը տատանի մեր հավատքը: Մենք կարող ենք մարտնչել այդ երկյուղների դեմ՝ զորացնելով մեր հավատքը:

Սկսեք ձեր երեխաներից: Ծնողներ, նրանց հավատքը զորացնելու հիմնական պատասխանատվությունը դուք եք կրում: Թույլ տվեք, որ նրանք զգան ձեր հավատքը, նույնիսկ երբ ցավագին փորձություններ են ընկնում ձեզ վրա: Թող ձեր հավատքը կենտրոնացած լինի ձեր սիրառատ Երկնային Հոր և և Նրա Սիրելի Որդի՝ Տեր Հիսուս Քրիստոսի շուրջ: Ուսուցանեք այդ հավատքը խորը համոզմունքով: Ուսուցանեք յուրաքանչյուր թանկագին տղայի կամ աղջկա, որ նա Աստծո զավակն

է՝ ստեղծված Նրա պատկերով, սրբազան նպատակով և ներուժով: Յուրաքանչյուրը ծնվել է մարտահրավերներով, որոնք պիտի հաղթահարվեն, և հավատքով, որը պետք է զարգացվի:[2]

Ուսուցանեք Աստծո փրկության ծրագրի հանդեպ հավատք: Ուսուցանեք, որ մեր ճանապարհորդությունը մահկանացու կյանքում փորձնական ժամանակահատված է՝ փորձվելու և ստուգվելու ժամանակ, տեսնելու, թե արդյո՞ք մենք կանենք այն, ինչ Տերը կպատվիրի մեզ անել:[3]

Ուսուցանեք հավատք՝ պահելու Աստծո *բոլոր* պատվիրանները, իմանալով որ դրանք տրված են Նրա զավակներին օրհնելու և նրանց ուրախություն բերելու համար:[4] Զգուշացրեք, որ նրանք կհանդիպեն մարդկանց, որոնք ընտրում են, թե ինչ պատվիրան պահեն, որն անտեսեն, որը խախտեն: Ես կոչում եմ դա ճաշարանային մոտեցում հնազանդությանը: Զանազանելու և ընտրելու այս սովորույթը չի գործի: Այն կտանի դեպի թշվառություն: Աստծուն հանդիպելուն պատրաստվելու համար մարդ պահում է *բոլոր* Նրա պատվիրանները: Դրանց հնազանդվելու համար հավատք է պահանջվում, իսկ Նրա պատվիրանները պահելը կուժեղացնի այդ հավատքը:

Հնազանդությունը թույլ է տալիս, որ Աստծո օրհնությունները հոսեն անսահմանափակ: Նա կօրհնի Իր հնազանդ զավակներին և կազատի նրանց գերությունից և թշվառությունից: Եվ Նա կօրհնի նրանց ավելի շատ լույսով: Օրինակ, մարդ պահում է Իմաստության Խոսքն իմանալով, որ հնազանդությունը ոչ միայն ազատություն կբերի հակվածությունից, այլ նաև իմաստության և գիտելիքի գանձերի օրհնություններ կավելացնի:[5]

Ուսուցանեք հավատք, որպեսզի նրանք իմանան, որ հնազանդությունն Աստծո պատվիրաններին կապահովի ֆիզիկական և հոգևոր պաշտպանություն: Եվ հիշեք. Աստծո սուրբ հրեշտակները միշտ կանչի են սպասում մեզ օգնելու համար: Տերն այսպես է հայտարարել. «Ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին

կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[6] Ինչպիսի խոստում: Եթե մենք հավատարիմ լինենք, Նա և Նրա հրեշտակները կօգնեն մեզ:

Աննկուն հավատքը ամրացվում է աղոթքի միջոցով: Ձեր սրտառուչ աղերսանքները կարևոր են Նրա համար: Մտածեք Լիբերթի բանտում անցկացրած սոսկալի օրերին Մարգարե Ջոզեֆ Սմիթի եռանդուն և կրակոտ աղոթքների մասին: Տիրոջ պատասխանը փոխեց Մարգարեի հեռանկարը: Նա ասաց. «Իմացիր որդիս, որ այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար»:[7]

Մենք աղոթում ենք, ունենալով հավերժական հեռանկար, և մենք չպետք է զարմանանք, եթե մեր ամենասարցունքոտ և ամենասրտառուչ աղերսանքները լսվեն: Տիրոջ կողմից այս խոստումը արձանագրված է Վարդապետություն և Ուխտերի բաժին 98-ում.

«Ձեր աղոթքները հասել են Տիրոջ ականջին . . . և գրված են այս կնիքով ու վկայությամբ, - Տերը երդվել և հրամանագրել է, որ դրանք կպարգևատրվեն:

Հետևաբար, նա այս խոստումն է տալիս ձեզ, անխախտ ուխտով, որ դրանք կկատարվեն. և բոլոր բաները, ինչով դուք չարչարվել եք, միաժամանակ կգործեն ձեր բարիքի համար և իմ անվան փառքի համար, ասում է Տերը»:[8]

Տերն ընտրեց Իր ամենաուժեղ խոսքերը մեզ հավաստիացնելու համար՝ *կնիք, վկայություն, երդվել, հրամանագրել, անխախտ ուխտ:* Եղբայրներ և քույրեր, հավատացեք Նրան: Աստված ուշադրություն կդարձնի ձեր անկեղծ և սրտառուչ աղոթքներին և ձեր հավատքը կզորացվի:

Տոկուն հավատք զարգացնելու համար կարևոր է լրիվ տասանորդ վճարողի տոկուն պարտավորությունը: Սկզբում հավատք է պահանջվում տասանորդ տալու համար: Ապա տասանորդ վճարողը զարգացնում է ավելի շատ հավատք մինչև այն կետը, որ տասանորդը դառնում է թանկագին արտոնություն: Տասանորդը հնադարյան օրենք է Աստծո կողմից:[9] Նա

խոստում է տվել Իր զավակներին, որ կբացի «երկնքի պատուհանները եւ օրհնություն կթափի . . . մինչև որ նորա համար տեղ չլինի»:[10] Բացի այդ, տասանորդը կպահի ձեր անունը Աստծո ժողովրդի ցուցակի մեջ և կպաշտպանի ձեզ «վրեժխնդրության և այրման օրը»:[11]

Ինչո՞ւ է մեզ հարկավոր այդպիսի անխախտ հավատք: Որովհետև ապագայում սպասվում են դժվարին ժամանակներ: Ապագայում հեշտ չի լինի Վերջին Օրերի Սուրբ լինել, ոչ էլ նրանք ընդունված կլինեն: Մեզանից յուրաքանչյուրը կստուգվի: Պողոս Առաքյալը նախազգուշացրել է, որ վերջին օրերին նրանք, ովքեր ջանասիրաբար կհետևեն Տիրոջը, «հալածանք պիտի կրեն»:[12] Հենց այդ հալածանքը կարող է կամ ջախջախել ձեզ՝ հասցնելով լուռ թուլության կամ դրդելով ձեզ դեպի ավելի լավ օրինակը և դարձնելով խիզախ ամենօրյա կյանքում:

Այն, թե *ինչպես* եք վարվում կյանքի փորձությունների հետ, ձեր հավատքի զարգացման մասն է կազմում: Ուժը գալիս է, երբ դուք հիշում եք, որ աստվածային էություն և անսահման արժեքավոր ժառանգություն ունեք: Տերը հիշեցրել է ձեզ, ձեր երեխաներին և ձեր թոռներին, որ դուք օրինական ժառանգներ եք, որ դուք պահվել եք երկնքում, որ ծնվեք առանձնահատուկ մի ժամանակ և առանձնահատուկ վայրում, մեծանալով և դառնալով Նրա դրոշակակիրները և ուխտի ժողովուրդը: Երբ դուք քայլում եք Տիրոջ արդարության արահետով, դուք օրհնվում եք, մնալով Նրա բարության մեջ, լինում եք լույս և փրկիչներ Նրա ժողովրդի համար:[13]

Եղբայրներ և քույրեր, ձեզանից յուրաքանչյուրին հասանելի են սուրբ Մելքիսեդեկյան Քահանայության միջոցով ձեռք բերվող օրհնությունները: Այս օրհնությունները կարող են փոխել ձեր կյանքի հանգամանքները այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ առողջությունը, Սուրբ Հոգու ընկերակցությունը, անձնական հարաբերությունները և ապագայի հնարավորությունները: Այս քահանայության զորությունն ու իշխանությունը կրում են Եկեղեցու բոլոր հոգևոր օրհնությունների

բանալիները:[14] Եվ ամենանշանակալին այն է, որ Տերը հայտարարել է, որ Նա կհաստատի այդ օրհնությունները համաձայն Իր կամքի:[15]

Քահանայության բոլոր օրհնություններից մեծագույնը շնորհվում է Տիրոջ սուրբ տաճարներում: Այնտեղ կապված ուխտերին ձեր հավատարմությունը ձեզ և ձեր ընտանիքին արժանի կդարձնի հավերժական կյանքի օրհնություններին:[16]

Ձեր պարգևները չեն տրվում միայն այս կյանքից հետո: Շատ օրհնություններ կլինեն ձերը այս կյանքում՝ ձեր երեխաների և թոռների կյանքում: Դուք՝ հավատարիմ Սրբեր, ստիպված չեք լինի միայնակ մարտնչել կյանքի ճակատամարտերում: Մտածեք այդ մասին: Տերը հայտարարել է. «Քեզ հետ վիճողների հետ էլ ես պիտի վիճեմ, և քո որդկանցը ես պիտի ազատեմ»:[17] Հետագայում Իր հավատարիմ ժողովրդին տրվեց այս խոստումը. «Ես՝ Տերս, կկռվեի նրանց պատերազմներում, և նրանց երեխաների պատերազմներում, և նրանց երեխաների երեխաների . . . մինչև երրորդ և չորրորդ սերունդը»:[18]

Մեր սիրելի Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը տվել է մեզ իր մարգարեական վկայությունը: Նա ասել է. «Ես վկայում եմ ձեզ, որ մեզ խոստացված օրհնությունները չափից դուրս են: Չնայած փոթորկոտ ամպեր կարող են հավաքվել, չնայած անձրևներ կարող են տեղալ մեզ վրա, ավետարանի մեր գիտելիքը և մեր Երկնային Հոր և մեր Փրկչի հանդեպ սերը կհանգստացնեն և կհաստատեն մեզ և ուրախություն կբերեն մեր սրտերին, եթե մենք քայլենք ուղիղ և պահենք պատվիրանները»:

Նախագահ Մոնսոնը շարունակել է. «Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մի վախեցեք: Հանգիստ եղեք: Ապագան այնպես պայծառ է, ինչպես ձեր հավատքը»:[19]

Նախագահ Մոնսոնի հզոր հայտարարությանը ես ավելացնում եմ իմ սեփականը: Ես վկայում եմ, որ Աստված մեր Հայրն է: Հիսուսը Քրիստոսն է: Նրա Եկեղեցին վերականգնվել է երկրի վրա: Նրա ճշմարտությունը, ուխտերը և արարողությունները հնարավորություն են տալիս մեզ հաղթահարել վախը և հավատքով դեմ առ դեմ կանգնել ապագային: Այսպես եմ ես վկայում Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 2 Նեփի 2.27:
2. Պետրոսը սովորեցրեց այդ տեսակետը, երբ նա հույս արտահայտեց, որ «հաղորդակից լինիք աստուածային բնութեանը աշխարհքի մէջ ցանկութիւնից եղած ապականութիւնից հեռու փախչելով» (Բ Պետրոս 1.4):
3. Տես Աբրահամ 3.25:
4. Տես 2 Նեփի 2.25:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 89.19; տես նաև Եսայիա 45.3:
6. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
7. Վարդապետություն և Ուխտեր 122.7: Հեռանկարի փոփոխության ևս մեկ օրինակ արձանագրված է սաղմոսներում. «Պահիր իմ անձը . . . քո ծառային, որ քեզ է հուսացած: Ողորմիր ինձ, Տեր, որ դեպի քեզ եմ կանչում ամեն օր . . . Կգոհանամ քեզանից, Տեր՝ իմ Աստուած, բոլոր սրտով. եւ յավիտեան կփառաւորեմ քո անունը» (Սաղմոս 86.2–3, 12):
8. Վարդապետություն և Ուխտեր 98.2-3:
9. Տասանորդի մասին նշվում է Հին Կտակարանի ութ գրքերում՝ Ծննդոց, Ղևտացոց, Թվոց, Երկրորդ Օրինաց, Բ Մնացորդաց, Նեեմեայի, Ամոսի և Մաղաքիայի գրքերում:
10. Մաղաքիա 3.10:
11. Վարդապետություն և Ուխտեր 85.3:
12. Բ Տիմոթեոս 3.12:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.8–11:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.18:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 132.47, 59:
16. Տես Աբրահամ 2.11:
17. Եսայիա 49.25; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 105.14:
18. Վարդապետություն և Ուխտեր 98–37:
19. Thomas S. Monson, “Be of Good Cheer,” *Liahona,* May 2009, 92.

Երեց Ռիչարդ Ջ.Մեյնզ
Յոթանասունից

Հիմնել Քրիստոսակենտրոն տուն

Մենք հասկանում և հավատում ենք ընտանիքի հավերժական բնույթին: Այս հասկացողությունն ու հավատքը մեզ պետք է ոգեշնչի անել ամեն ինչ ուժերի սահմաններում՝ հիմնելու համար Քրիստոսակենտրոն տուն:

Որպես երիտասարդ միսիոներ Ուրուգվայում և Պարագվայում իմ ծառայության վաղ օրերին ես հասկացա, որ նրանք ովքեր ձգտում էին իմանալ ավելին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին, առավել շատ հետաքրքրված էինընտանիքի մասին մեր վարդապետությամբ: Փաստորեն Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումից սկսած ճշմարտություն որոնողներին գրավել էր այն վարդապետությունը, որ ընտանիքները կարող են հավերժ միասին լինել:

Իր զավակների համար հավերժական ընտանիքների սկզբունքը՝ Երկնային Հոր մեծ ծրագրի հիմնական տարրն է: Այդ ծրագրի համար վճռորոշ է այն հասկացողությունը, որ մենք ունենք և *երկնային*, և *երկրային* ընտանիք: Պողոս Առաքյալն ուսուցանում է մեզ, որ Երկնային Հայրը մեր հոգիների հայրն է.

«Որ լինի թե խարխափեն [Տիրոջը] եւ գտնեն . . .

Որովհետեւ մենք նորանով ենք ապրում եւ շարժվում եւ կանք . . . Նորա ազգիցն էլ ենք»:[1]

Սիրառատ Երկնային Հոր ժառանգ լինելը այնպիսի հիմնական սկզբունք է Հիսուս Քրիստոսի ավետարանում, որ նույնիսկ մեր երեխաներն են հայտարարում այդ ճշմարտության մասին, երբ Երեխաների Միությունում երգում են «Աստծո զավակն եմ» երգը: Հիշո՞ւմ եք խոսքերը.

Զավակն եմ ես Աստծո,
Նա է ինձ կյանք տվել,
Տվել է ինձ տուն երկրային
Եվ ծնողներ բարի:

Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
Որ ուղին գտնեմ:
Սովորեցրու ինչ անել,
Որ մի օր Քեզ հասնեմ:[2]

Գիտակցումը, որ մենք ունենք *երկնային* ն ընտանիք, օգնում է մեզ հասկանալ *երկրային* ընտանիքների հավերժական բնույթը: Վարդապետություն և Ուխտերն ուսուցանում են մեզ, որ ընտանիքը էական է երկնքի կարգի համար. «Եվ միևնույն հարաբերությունները, որոնք այստեղ գոյություն ունեն մեր մեջ, այնտեղ ևս գոյություն կունենան մեր մեջ, միայն թե դրանք կզուգակցվեն հավերժական փառքով»:[3]

Ընտանիքի հավերժական բնույթը հասկանալը վճռական տարր է Իր զավակների համար Երկնային Հոր

ծրագիրն ըմբռնելու համար: Մյուս կողմից հակառակորդը փորձում է անել ամեն ինչ, որն իր զորության սահմաններում է, որպեսզի կործանի Երկնային Հոր ծրագիրը: Փորձելով խափանել Աստծո ծրագիրը, նա աննախադեպ հարձակում է գործում ընտանիքի հաստատության վրա: Նա իր հարձակման մեջ օգտագործում է ամենահզոր զենքերից մի քանիսը, ինչպես օրինակ՝ եսասիրությունը, ագահությունը և տռփագրությունը:

Մեր հավերժական երջանկությունը սատանայի նպատակակետերից *չէ*: Նա գիտի, որ տղամարդկանց և կանանց իր նման թշվառ դարձնելու հիմնական բանալին նրանց ընտանեկան հարաբերություններից զրկելն է, որն ունի *հավերժական նեյրոն*: Հասկանալով, որ այս կյանքում և հավերժություններում ճշմարիտ երջանկությունը գտնվում է ընտանիքի մեջ, նա անում է ամեն ինչ այն կործանելու համար:

Հնադարյան մարգարե Ալման իր զավակների համար Աստծո ծրագիրն անվանում է «երջանկության մեծ ծրագիր»:[4] Առաջին Նախագահությունը և Տասնեկու Առաքյալների Քվորումը, որոնց մենք հաստատում ենք որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, առաջարկել են մեզ երջանկության և ընտանեկան կյանքի հետ կապված այս ոգեշնչված խորհուրդը. «Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից: Տղամարդու և կնոջ ամուսնությունը հիմնական մասն է Նրա հավիտենական ծրագրի: Երեխաները պետք է ծնվեն ամուսնացած ծնողներից և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր ընդունում են ամուսնության խոստումը և հնազանդվում դրան ողջ հավատարմությամբ: Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա»:[5]

Այս երջանկությունը, որի մասին խոսվել է Ալմայի, իսկ ավելի վերջերս Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից, անկասկած տանը և ընտանիքի հետ գտնվելն է: Այն առատությամբ

մերը կլինի, եթե մենք անենք մեր ուժերի սահմաններում հանարավոր ամեն բան՝ Քրիստոսակենտրոն տուն հիմնելու համար:

Քույր Մեյնզը և ես սովորեցինք որոշ կարևոր սկզբունքներ, երբ մեր ամուսնության սկզբում սկսեցինք Քրիստոսակենտրոն տուն հիմնելու գործընթացը: Մենք սկսեցինք՝ հետևելով մեր Եկեղեցու ղեկավարների խորհրդին: Մենք հավաքեցինք մեր երեխաներին միասին և անցկացրեցինք շաբաթական ընտանեկան երեկոներ, ինչպես նաև ամենօրյա աղոթքներ և սուրբ գրությունների ուսումնասիրություն: Դա ոչ միշտ էր հեշտ, հարմար կամ հաջողված, բայց ժամանակի ընթացքում այս հասարակ հավաքները դարձան թանկարժեք ընտանեկան սովորույթներ:

Մենք իմացանք, որ շաբաթվա վերջում մեր երեխաները գուցե չհիշեին ամեն ինչ ընտանեկան երեկոյի դասի մասին, բայց նրանք հիշում էին, որ *մենք անցկացրել էինք այն:* Մենք իմացանք, որ դպրոցում օրվա վերջում նրանք երևի չէին հիշում սուրբ գրությունների ճշգրիտ խոսքերը կամ աղոթքները, բայց նրանք հիշում էին, որ մենք իսկապես *կարդացել* էինք և որ մենք իսկապես *աղոթել* էինք: Եղբայրներ և քույրեր, մեզ և մեր երիտասարդների համար մենք մեծ ուժ և պաշտպանություն ունենք՝ տանը սելեստիալ սովորույթներ հիմնադրելիս:

Սովորելով, ուսուցանելով և կիրառելով Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները մեր տներում, մենք կկարողանանք հաղթահարել աշխարհի կեղծ սովորույթները և կսովորենք առաջին տեղում դնել ուրիշների կարիքներն ու մտահոգությունները:

Քրիստոսակենտրոն տուն հիմնելու պատասխանատվությունը դրված է ինչպես ծնողների, այնպես էլ երեխաների վրա: Ծնողները պարտական են ուսուցանել իրենց երեխաներին սիրով և արդարությամբ: Նրանք հաշվետու կլինեն Տիրոջ առաջ նրա համար, թե ինչպես են կատարել իրենց սրբազան պարտականությունները: Ծնողներն ուսուցանում են իրենց երեխաներին *խոսքով*

և *օրինակով:* Ս.Ս. Միլլերի կողմից գրված այս բանաստեղծությունը, որը կոչվում է Արձագանք, ցույց է տալիս ծնողների ունեցած կարևոր ազդեցությունը, երբ նրանք ներգործում են իրենց երեխաների վրա:

Դա ոչխար էր ոչ թե գառ,
Որ մոլորվեց Հիսուսի առակում,
Չափահաս ոչխար, որ մոլորվեց
Հոտի իննսուն և իննի միջից:
Իսկ ինչո՞ւ պետք է ոչխարին
փնտրենք,
Եվ անկեղծորեն հուսանք ու
աղոթենք,
Քանզի փոանգավոր է, երբ ոչխարն
է սխալ գործում,
Նրանք ճամփից շեղում են
գառներին:
Գիտե՞ք, որ գառները կիետևեն
ոչխարներին,
Որտեղ էլ որ ոչխարները մոլորվեն:
Երբ ոչխարներն են սխալ գործում
Երկար չի տևում, երբ գառներն էլ են
շեղվում:
Եվ այսպես ոչխարների համար ենք
ջերմ աղոթում,
Հանուն այսօրվա գառների,
Քանզի, երբ ոչխարներն են կորչում
Ինչ սոսկալի գին.
Գառներն են ստիպված վճարում:[6]

Հետևանքները, որ կրում են ծնողները, որոնք իրենց երեխաներին շեղում են ճանապարհից, տրվում են Տիրոջ կողմից Վարդապետություն և Ուխտերում. «Եվ բացի այդ, որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում . . . որոնց *չեն* ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին»:[7]

Դժվար է չափազանցնել խոսքի և օրինակի միջոցով իրենց երեխաներին սելեստիալ սովորույթներ ուսուցանելու հարցում ծնողների կարևորությունը: Երեխաները նույնպես կարևոր դեր են կատարում Քրիստոսակենտրոն տուն հիմնելու գործում: Թույլ տվեք կիսվել ձեզ հետ մի կարճ խոսակցությամբ, որը վերջերս ունեցա իմ ութ տարեկան թոռնիկ Վիլլի հետ, որը ցուցադրում է այդ սկզբունքը:

«Ես սիրում եմ ձիավարել և հայրիկիս հետ գնում եմ պարանով ձիեր բռնելու: Պարանը տարբեր թելերի փնջեր ունի միմյանց հետ հյուսված՝ այն ուժեղ դարձնելու համար: Եթե պարանն ունենար միայն մեկ թելերի փունջ, այն չէր կարողանա գործը գլուխ բերել: Բայց քանի որ կան ավելի շատ թելերի փնջեր, որոնք միմյանց հետ աշխատում են, մենք կարող ենք օգտագործել այն, շատ բազմազան ուղիներով և այն ամուր կլինի:

«Ընտանիքները կարող են լինել պարանների նման: Երբ միայն մեկ անձնավորություն է ջանասիրաբար աշխատում և անում այն, ինչը ճիշտ է, ընտանիքն այնքան էլ ուժեղ չի լինում, որքան, երբ բոլորն են միմյանց օգնելու ջանքեր գործադրում:

Ես գիտեմ, որ երբ ես անում եմ այն, ինչը ճիշտ է, ես օգնում եմ իմ ընտանիքին: Երբ ես իմ քույր Իզաբելին լավ եմ վերաբերվում, մենք երկուսս էլ ուրախանում ենք և դա մայրիկիս և հայրիկս երջանիկ է դարձնում: Եթե մայրս ինչ որ բան անելու կարիք ունի, ես կարող եմ օգնել նրան, խաղալով իմ փոքրիկ եղբոր՝ Ջոյի հետ: Ես իմ ընտանիքին կարող եմ օգնել նաև սենյակս մաքուր պահելով և բարյացակամությամբ նրանց նեղ դրությունից հանելով, երբ դրա կարիքը լինի: Քանի որ ես իմ ընտանիքի ավագ երեխան եմ, ես գիտեմ, որ լավ օրինակ լինելը կարևոր է: Ես կարող եմ լավագույնս աշխատել ընտրել ճիշտը և հետևել պատվիրաններին:

Գիտեմ, որ երեխաները կարող են օգնել իրենց ընտանիքներին ուժեղ լինել ամուր պարանի պես: Երբ ամեն մեկն անում է իր լավագույնը և աշխատում միասին, ընտանիքները կարող են երջանիկ և ուժեղ լինել»:

Երբ ծնողները նախագահում են ընտանիքում սիրով և արդարությամբ և ուսուցանում իրենց երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանը *խոսքով* և *օրինակով*, և երբ երեխաները սիրում և աջակցում են իրենց ծնողներին՝ սովորելով և կիրառելով սկզբունքները, որոնք իրենց ծնողներն են ուսուցանում, արդյունքը լինում է Քրիստոսակենտրոն տան հիմնումը:

Եղբայրներ և քույրեր, որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ մենք հասկանում և հավատում ենք ընտանիքի հավերժական բնույթին: Այս հասկացողությունն ու հավատքը մեզ պետք է ոգեշնչի անել ամեն ինչ ուժերի սահմաններում՝ հիմնելու համար Քրիստոսակենտրոն տուն: Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ երբ մենք ձգտում ենք անել այս ամենը, մենք ավելի լիարժեք ենք գործի դնում սերն ու ծառայությունը, որի օրինակը տրվել է մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի կյանքի և Քավության միջոցով, և արդյունքում մեր տները կարող են իսկապես նման լինել մի կտոր երկնքի երկրի վրա: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Դորտմունդ, Գերմանիա

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Գործք 17.27–28:
2. «Աստծո զավակն եմ», *Hymns,* no. 301.
3. Վարդապետություն և Ուխտեր 130.2; տես նաև Robert D. Hales, “The Eternal Family,” *Ensign,* Nov. 1996, 64:
4. Ալմա 42.8:
5. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
6. C. C. Miller, “The Echo,” in *Best-Loved Poems of the LDS People,* ed. Jack M. Lyon and others (1996), 312–13.
7. Վարդապետություն և Ուխտեր 68.25; շեշտադրումն ավելացված է:

Երեց Սեսիլ Օ. Սամուելսոն Կրտսեր
Յոթանասունից

Վկայություն

Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին վկայություն ձեռք բերելու ու դա պահպանելու հիմունքները պարզ ու հստակ են և ամեն մարդու համար հասանելի:

Երկար տարիներ իմ կյանքի մեծագույն օրհնություններից մեկը եղել է Եկեղեցու երիտասարդներով շրջապատված լինելը և նրանց հետ աշխատելը: Ես այս գործընկերությունն ու ընկերությունը համարում եմ ամենահաճելի և ամենաարժեքավոր բանը իմ կյանքում: Նրանք Եկեղեցու ապագայի, հասարակության և աշխարհի հանդեպ իմ լավատեսության հիմքն են:

Այդ շփումների ժամանակ ես նաև արտոնություն եմ ունեցել զրուցել մի քանիսի հետ, ովքեր տարբեր կասկածներ կամ խնդիրներ ունեին իրենց վկայությունների հետ կապված: Չնայած դրանք բոլորն էլ տարբեր էին և երբեմն էլ յուրահատուկ, հարցերից և պատճառներից շատերը միանման էին: Ինչպես նաև այդ խնդիրներն ու մտահոգությունները չեն սահմանափակվում ժողովրդագրական և տարիքային խմբերով: Դրանք կարող են մտահոգել նրանց, ովքեր բազմասերունդ Եկեղեցու անդամներ են, համեմատաբար նոր անդամներ և նաև Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցով հետաքրքրվողներ: Նրանց հարցերը սովորաբար սրտաբաց հարցադրումների և հետաքրքրվածության արդյունք են: Քանի որ մեզանից յուրաքանչյուրի համար արդյունքները կարևոր և լուրջ են, կարծես թե տեղին է մեր վկայությունների հարցի շուրջ քննարկում ծավալելը: Մեր Վերջին Օրերի Սրբերի համատեքստում մենք վկայությունները դիտարկում ենք որպես Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտացիության մասին հաստատուն համոզվածություն, որը ձեռք է բերվում Սուրբ Հոգու կողմից հայտնությամբ:

Չնայած վկայության այս սահմանումը պարզ և հստակ է, կան մի քանի հնարավոր հարցադրումներ, օրինակ՝ ո՞վ վկայություն ունենալու իրավունք ունի, ինչպե՞ս է մարդն իր համար անհրաժեշտ հայտնություն ստանում, որո՞նք են վկայություն ստանալու քայլերը: Վկայություն ստանալը առանձի՞ն դեպք է, թե շարունակական գործընթաց: Այս և այլ հարցադրումներից յուրաքանչյուրն ունի իր ենթահարցերը, սակայն Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին վկայություն ձեռք բերելու ու դա պահպանելու հիմունքները պարզ ու հստակ են և ամեն մարդու համար հասանելի:

Թույլ տվեք հակիրճ պատասխանել այդ հնարավոր անորոշություններին և այնուհետև անդրադառնալ որոշ ընկալումների, որոնցով վերջերս ինձ հետ կիսվել են վստահելի երիտասարդ չափահաս ընկերներ, ովքեր իրենց վկայությունները ստանալու անձնական փորձ ունեն: Նրանք նաև հնարավորություններ են ունեցել ծառայել մյուսներին, ովքեր դժվարություններ և մարտահրավերներ են ունեցել իրենց հավատքի և համոզմունքների հետ կապված:

Նախ, ո՞վ վկայություն ունենալու իրավունք ունի: Վկայություն կարող է ունենալ ամեն ոք, ով ցանկանում է վճարել գինը, այսինքն՝ պահել պատվիրանները: «Ուստի Տիրոջ ձայնը գնում է աշխարհի ծայրերը, որպեսզի բոլորը, ովքեր կամենում են լսել, կարողանան լսել» (ՎևՈ 1.11): Ավետարանի Վերականգնման հիմնական պատճառն այն է, որ «ամեն մարդ կարողանա խոսել Տեր Աստծո, այսինքն՝ աշխարհի Փրկչի անունով. Որ նաև հավատքն ավելանա երկրի վրա» (ՎևՈ 1.20–21):

Երկրորդ, ինչպե՞ս է մարդը ձեռք բերում իր համար անհրաժեշտ հայտնությունը և որո՞նք են դրան հասնելու հիմնական քայլերը: Այդ օրինակը պարզ և հաստատուն է եղել դարերի ընթացքում: Խոստումը, որ տրվել է Մորմոնի Գրքի մասին վկայություն ստանալու համար, նույնպես ընդհանուր կիրառություն ունի:

«Եվ երբ դուք ստանաք այս բաները [այսինքն դուք լսել եք, կարդացել եք, ուսումնասիրել և խորհել եք տվյալ հարցի շուրջ], ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չե՞ն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ:

Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.4–5):

Երրորդ, արդյոք վկայություն ստանալը առանձին դեպք, թե՞ շարունակական գործընթաց է: Վկայությունը նման է կենդանի օրգանիզմի, որն աճում և զարգանում է, երբ դրա մասին ինչպես հարկն է հոգ է տարվում: Այն մշտական սնուցման,

խնամքի և պաշտպանության կարիք ունի, որպեսզի փարթամանա և աճի: Նմանապես, եթե անտեսում ենք վկայությունը կամ չենք կատարում այն պահելու անհրաժեշտ քայլերը, մեր վկայությունը կթուլանա և կանհետանա: Սուրբ գրությունները զգուշացնում են, որ զանցանք գործելը կամ Աստծո պատվիրանները չպահելը կարող է հանգեցնել Հոգու կորստի և անգամ երբեմնի ունեցած վկայությունից հրաժարվելուն (տես ՎԿՈՒ 42.23):

Թույլ տվեք կիսվել իմ թանկագին և հավատարիմ երիտասարդ ընկերների տաս դիտարկումներով և առաջարկություններով: Նրանց մտածելակերպի և փորձառության մեջ կա ընդհանրություն, ուստի մեզանից ոչ մեկին դրանք չեն զարմացնի: Ցավոք սրտի, և հատկապես, մեր անձնական մաքառումների և վշտի պահերին մենք ժամանակավորապես մոռանում կամ թերագնահատում ենք դրանց կիրառելիությունը մեր անձնական դեպքում:

Առաջին, ամեն ոք արժեք ունի, որովհետև մենք բոլորս Աստծո զավակներն ենք: Նա ճանաչում է մեզ, սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք հաջողություն ունենանք և վերադառնանք Նրա մոտ: Մենք պետք է սովորենք ավելի շատ վստահել Նրա սիրուն և Նրա ժամանակին, քան մեր երբեմն անհամբեր և թերի ցանկություններին:

Երկրորդ, լիովին հավատալով սուրբ գրություններում նկարագրված «սրտի հզոր փոփոխությանը» (տես Մոսիա 5.2; Ալմա 5.12–14, 26), մենք պետք է հասկանանք, որ հաճախ այն գալիս է ոչ թե անմիջապես կամ ընդհանուր ձևով, այլ աստիճանաբար, ի պատասխան որոշակի հարցերի, փորձառությունների և մտահոգությունների, ինչպես նաև ուսումնասիրելու և աղոթելու միջոցով:

Երրորդ, մենք պետք է հիշենք, որ կյանքի հիմնական նպատակը՝ փորձվելն ու լարվելն է, և ուրեմն մենք պետք է սովորենք աճել մեր դժվարությունների միջից և երախտապարտ լինել մեզ սովորած դասերի համար, որոնք մենք չենք կարող ձեռք բերել ավելի հեշտ ձևով:

Քայելիտշա, Հարավային Աֆրիկա

Չորրորդ, մենք պետք է սովորենք վստահել այն ամենին, ինչին հավատում ենք կամ գիտենք, որ մեզ նեցուկ են լինում անորոշ պահերին կամ այն խնդիրների հետ կապված, որոնց դեմ մենք պայքար ենք մղում:

Հինգերորդ, ինչպես Ալման է ուսուցանել (Ալմա 32), վկայություն ձեռք բերելը սովորաբար նշանակում է առաջ շարժվել՝ մշտապես հույս տածելով, հավատալով և, ի վերջո, տվյալ սկզբունքի, վարդապետության կամ հենց ավետարանի մասին ճշմարտացիությունը իմանալով (տես Ալմա 32):

Վեցերորդ, մեր իմացածը մեկ ուրիշին ուսուցանելը ամրապնդում է մեր անձնական վկայությունը, երբ մենք հիմք են դնում մեկ ուրիշի վկայության համար: Երբ դուք մեկ ուրիշին փող կամ ուտելիք եք տալիս, դուք ավելի քիչ կունենաք: Սակայն, երբ դուք կիսվում եք ձեր վկայությամբ, այն ամրապնդում և բարձրացնում է և կրողին, և լսողին:

Յոթերորդ, ամեն օր կանոնավորապես մենք պետք է քիչ, սակայն կարևոր բաներ անենք: Աղոթքները, սուրբ գրությունների և ավետարանի ուսումնասիրությունը, Եկեղեցու հավաքներին հաճախելը, տաճարային երկրպագությունը, այցելությամբ ուսուցումը և այլ հանձնարարությունները, բոլորն էլ ամրապնդում են մեր հավատքը և մեր կյանք հրավիրում Հոգին: Անտեսելով այդ արտոնությունները, մենք վտանգում ենք մեր վկայությունները:

Ութերորդ, մենք չպետք է ուրիշներից ակնկալենք ավելի բարձր չափանիշներ, քան մենք ինքներս ունենք: Շատ հաճախ մենք թույլ ենք տալիս մյուսների, հատկապես Եկեղեցու ղեկավարների կամ անդամների սխալները կամ ձախողումները ազդեն մեր կամ մեր վկայության վրա: Մյուսների դժվարությունները մեր թերացումների համար արդարացում չեն:

Իններորդ, պետք է հիշել, որ սխալ գործելիս ինքներս մեր հանդեպ շատ խիստ վերաբերմունքը կարող է այնքան բացասական լինել, որքան սովորական վերաբերմունքը, երբ իրոք ապաշխարություն է անհրաժեշտ:

Եվ տասերորդ, մենք պետք է հստակ իմանանք, որ Քրիստոսի Քավությունը լիովին և մշտապես գործում է մեզանից յուրաքանչյուրի համար, երբ մենք թույլ ենք տալիս դա: Այնուհետև, ամեն բան իր տեղն է ընկնում, անգամ երբ մենք շարունակում ենք պայքարել որոշ մանրուքների, սովորությունների կամ մեր հավատքի խճանկարում կարծես թե բացակայող մասերի դեմ:

Ես երախտապարտ եմ իմ բազմաթիվ օրինակելի երիտասարդ

ընկերների և գործընկերների հասկացողության, ուժի և վկայությունների համար: Երբ նրանց հետ եմ, ես ամրապնդվում եմ, իսկ երբ ես գիտեմ, որ նրանք ուրիշների հետ են, ես քաջալերվում եմ, իմանալով, որ նրանք բարի գործեր են կատարում և ծառայություն են մատուցում Վարդապետի անունից, որին երկրպագում են և ձգտում են հնազանդվել:

Մարդիկ բարի և կարևոր գործեր են կատարում, որովհետև վկայություններ ունեն: Չնայած սա ճիշտ է, մենք նաև վկայություններ ենք ձեռք բերում մեր գործերի շնորհիվ: Հիսուսն ասել է.

«Իմ վարդապետությունն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է:

Եթե մեկը կամենում է նրա կամքն անել, նա կիմանա այս վարդապետության համար, թե արդեոք Աստվածանի՞ց է, կամ եթե ես իմ անձիցն եմ խոսում» (Հովհաննես 7.16–17):

Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանքները պահեցեք» (Հովհաննես 14.15):

Հնում Նեփիի և Մորմոնի նման «ես չգիտեմ բոլոր բաների իմաստը» (1 Նեփի 11.17; տես նաև Մորմոնի խոսքերը 1.7), սակայն թույլ տվեք ասել, ինչ ես իրոք գիտեմ:

Ես գիտեմ, որ մեր Երկնային Հայրն ապրում է և սիրում է մեզ: Ես գիտեմ, որ Նրա առանձնահատուկ Որդին՝ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչը, Քավիչը և Եկեղեցու գլուխն է, որը կրում է Նրա անունը: Ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթի հետ տեղի է ունեցել այն ամենը, ինչ նա պատմել և ուսուցանել է մեր օրերում ավետարանի Վերականգնման վերաբերյալ: Ես գիտեմ, որ այսօր մենք առաջնորդվում ենք առաքյալների և մարգարեների կողմից, և Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կրում է քահանայության բոլոր բանալիները, որոնք անհրաժեշտ են մեր կյանքը օրհնելու և Տիրոջ աշխատանքը առաջ տանելու համար: Ես գիտեմ, որ մենք բոլորս իրավունք ունենք այս գիտելիքը ստանալու, և եթե դուք մաքառում եք, կարող եք ապավինել վկայությունների ճշմարտացիությանը, որ հնչում են այս համաժողովի ամբիոնից: Այս ամենը ես գիտեմ, և դրանց մասին վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ցանկություն

Մեր հավերժական ճակատագրին հասնելու նպատակով մենք կցանկանանք և կաշխատենք այն հատկանիշների վրա, որոնք պահանջվում են հավերժական էակ դառնալու համար:

Ես որոշել եմ խոսել *ցանկության* կարևորության մասին: Հուսով եմ, որ մեզանից յուրաքանչյուրը կքննի իր սիրտը՝ որոշելու համար, թե մենք իսկապես ինչ ենք ցանկանում և թե ինչպես ենք աստիճանակարգում մեր ամենակարևոր ցանկությունները:

Ցանկությունները թելադրում են մեր առաջնահերթությունները, առաջնահերթությունները ձևավորում են մեր ընտրությունները, իսկ ընտրությունները որոշում են մեր գործողությունները: Ցանկությունները, որոնց վրա մենք հիմնվում ենք, որոշում են, թե ինչպես ենք մենք փոխվում, ինչ ենք ձեռք բերում և ինչ ենք դառնում:

Առաջինը ես խոսում եմ որոշ սովորական ցանկությունների մասին: Որպես մահկանացու էակներ մենք ունենք որոշ հիմնական ֆիզիկական պահանջներ: Այդ պահանջները բավարարելու ցանկությունները հարկադրում են մեր ընտրությունները և դրդում որոշակի գործողությունների: Երեք օրինակներ ցույց կտան, թե ինչպես ենք մենք որոշ դեպքերում անտեսում այս ցանկությունները այլ ցանկությունների պատճառով, որոնք մենք ավելի կարևոր ենք համարում:

Առաջինը սնունդն է: Մենք ուտելիքի հիմնական պահանջ ունենք, բայց որոշ ժամանակով այդ ցանկությունը կարող է անտեսվել ծոմ պահելու ավելի ուժեղ ցանկությամբ:

Երկրորդը ապաստարանն է: Երբ 12 տարեկան պատանի էի, ես դիմադրեցի ապաստարանի հանդեպ իմ ցանկությանը իմ ավելի մեծ ցանկության շնորհիվ, որն էր մի գիշեր անտառում անցկացնելու Պատանի Սքաութի համար անհրաժեշտ պայմանը: Ես մի քանի պատանիներից մեկն էի, ովքեր թողեցին հարմարավետ վրանները և գտան բնական նյութերից ծածկ և պարզ մահիճ պատրաստելու միջոց:

Երրորդը քունն է: Նույնիսկ այս բնական ցանկությունը կարող է ժամանակավորապես անտեսվել ավելի կարևոր ցանկության պատճառով: Երբ երիտասարդ զինվոր էի Յուտայի ազգային գորագնդում, ես դրա օրինակ տեսա մի սպայի պահվածքում, որը փորձառու հրամանատար էր ունեցել:

Կորեական պատերազմի առաջին ամիսներին Ռիչֆիլդի Յուտայի ազգային գորագնդի դաշտային հրետանու մարտկոցը կանչվեց ակտիվ ծառայության: Այդ մարտկոցը ղեկավարվում էր հրամանատար

ՌեյՔոքսի կողմից և բաղկացած էր մոտ 40 մորմոն տղամարդկանցից: Լրացուցիչ զինվարժություններից և այլ վայրերից պահեստայիններով համալրվելուց հետո, նրանք ուղարկվեցին Կորեա, որտեղ այդ պատերազմի ամենակատաղի մարտերի մասնակիցը դարձան: Մի ճակատամարտում նրանք ստիպված էին ետ մղել թշնամու հարյուրավոր հետևակայինների շեշտակի գրոհը, որը հարձակման մի ձև է, որը ջախջախում և կործանում է դաշտային հրետանու մյուս մարտկոցները:

Սա ի՞նչ կապ ունի քնելու ցանկությունը հաղթահարելու հետ: Մի վճռորոշ գիշերվա ընթացքում , երբ թշնամու հետևակայինները լցվել էին ճակատային գծերը և ծայրամասերի տարածքները, որտեղ հրետանին էր տեղակայված, հրամանատարը դաշտային հեռախոսագծերը բերել տվեց իր վրանը և հրամայեց իր բազմաթիվ սահմանապահներին իրեն անձնապես ողջ գիշերվա ընթացքում ժամը մեկ զանգահարել: Պահապանները պետք է արթուն մնային, ինչպես նաև հրամանատար Քոքսի քունը շատ անգամ պետք է ընդհատվեր: «Ինչպե՞ս կարողացաք դա անել», - հարցրեցի նրան: Նրա պատասխանը ցույց տվեց, ինչպես կարելի է հաղթահարել այդ ցանկությունը:

«Ես գիտեի, որ եթե երբևէ տուն վերադառնայի, ես մեր փոքր քաղաքի փողոցներում հանդիպելու էի այդ տղաների ծնողներին, իսկ ես չէի ուզում հանդիպել նրանցից որևէ մեկին, իմանալով, որ նրանց տղան իմ՝ իր հրամանատարի սխալի պատճառով տուն չէր վերադարձել»:[1]

Առաջնահերթությունների ու գործողությունների միջոցով ցանկությունը հաղթահարելու ուժի ինչպիսի օրինակ է սա: Ինչպիսի հզոր օրինակ է բոլորիս համար, ովքեր պատասխանատու են մյուսների՝ ծնողների, Եկեղեցու առաջնորդների և ուսուցիչների բարօրության համար:

Որպես այդ օրինակի եզրակացություն, իր գրեթե անքուն գիշերվա հաջորդ վաղ առավոտյան հրամանատար Քոքսը իր մարդկանց առաջնորդեց հակահարձակման թշնամու



հետևակայինների վրա: Նրանք վերցրեցին 800 գերի և ընդամենը երկու վիրավոր ունեցան: Քոքսը պարգևատրվեց քաջության համար, իսկ նրա մարտկոցը ստացավ Նախագահական միավորի կոչում արտասովոր հերոսության համար: Եվ Հելամանի պատանի ռազմիկների նման (տես Ալմա 57.25–26), նրանք բոլորը տուն վերադարձան:[2]

Մորմոնի Գիրքը պարունակում է շատ ուսմունքներ ցանկության կարևորության մասին:

Տիրոջը շատ ժամեր աղերսելուց հետո, Ենովսին ասվեց, որ նրա մեղքերը ներված էին: Ապա նա «սկսեց ցանկություն զգալ» իր եղբայրների բարօրության համար (Ենովս 1.9): Նա գրել է. «Եվ . . . երբ ես աղոթեցի և տքնեցի ողջ ջանասիրությամբ, Տերն ասաց ինձ.Ես կտամ քեզ, քո ցանկությունների համաձայն, քո հավատքի շնորհիվ» (հատված 12): Ուշադրություն դարձրեք երեք հիմնական կարևոր բաների վրա, որոնք նախորդեցին խոստացված օրհնությանը՝ ցանկություն, աշխատանք և հավատք:

Հավատքի վերաբերյալ իր քարոզում Ալման ուսուցանում է, որ հավատքը կարող է սկսել արթանալ, «եթե նույնիսկ դուք չեք կարող ավելին, քան ցանկանալ հավատալ», եթե կամենաք «թույլ տալ, որ այդ ցանկությունը գործի [մեր] մեջ» (Ալմա 32.27):

Մեկ այլ մեծ ուսմունք ցանկության վերաբերյալ, հատկապես նրա, թե ինչը պետք է լինի մեր մեծագույն ցանկությունը, տրվում է Լամանացի թագավորի փորձառության ժամանակ, երբ նա ուսուցանվում էր միսիոներ Ահարոնի կողմից: Երբ Ահարոնի ուսուցումը նրա հետաքրքրությունը շարժեց, թագավորը հարցրեց. «Ի՞նչ պիտի ես անեմ, որ կարողանամ ծնվել Աստծուց» և «ունենամ այդ հավերժական կյանքը» (Ալմա 22.15): Ահարոնը պատասխանեց. «Եթե դու ցանկանաս այս բանը, . . . եթե դու ապաշխարես քո բոլոր մեղքերից և խոնարհվես Աստծո առաջ, և հավատքով կանչես առ նրա անունը, հավատալով, որ դու պիտի ստանաս, այդ դեպքում դու կստանաս հույսը, որ դու ցանկանում ես» (հատված 16):

Թագավորն այդպես էլ արեց և զորավոր աղոթքով հայտարարեց. «Ես կհրաժարվեմ իմ բոլոր մեղքերից՝ քեզ գիտենալու համար, . . . և փրկվելու վերջին օրը» (հատված 18): Այդ պարտավորությամբ և իր մեծագույն ցանկության այդ հաստատմամբ, նրա աղոթքը հրաշքով պատասխանվեց:

Ալմա մարգարեն մեծ ցանկություն ուներ ապաշխարություն աղաղակելու ողջ ժողովրդին, բայց նա եկավ այն հասկացողության, որ չպետք է ցանկանար այդ պարտադրող ուժը, հասկանալով, որ «արդար Աստված. . .մարդկանց շնորհում է ըստ իրենց ցանկության, լինի դա ի մահ, թե ի կյանք» (Ալմա 29.4): Նմանապես, ժամանակակից հայտնության մեջ Տերը հայտարարում է, որ Նա «կդատի բոլոր մարդկանց՝ համաձայն իրենց գործերի, համաձան նրանց սրտերի ցանկությունների» (ՎևՈ 137.9):

Արդյո՞ք մենք իսկապես պատրաստ ենք նրան, որ մեր Երկնային Դատավորը վիթխարի կարևորություն տա այն բաներին, ինչ մենք իսկապես ցանկանում ենք:

Շատ սուրբ գրություններ խոսում են այն մասին, ինչ մենք ցանկանում ենք, անվանելով դրանք այն, ինչ մենք փնտրում ենք: «Նա, ով կանուխ փնտրում է ինձ, կգտնի ինձ, և Տերը չի թողնի նրան» (ՎևՈ 88.83): «Հետամուտ եղեք լավագույն պարգևներին» (ՎևՈ 46.8): «Նա, ով ջանասիրաբար

փնտրում է, կգտնի» (1 Նեփի 10.19)։ «Մոտեցեք ինձ, և ես կմոտենամ ձեզ. փնտրեք ինձ ջանասիրաբար, և կգտնեք ինձ. Խնդրեք, և կստանաք, թակեք, և ձեզ կբացվի» (ՎևՈւ 88.63)։

Մեր ցանկությունների վերահարմարեցնելը՝ բարձրագույն առաջնահերթություն տալով հավերժության բաներին, հեշտ չէ։ Մենք բոլորս գայթակղվում ենք, ցանկանալով հարստության, հանրաճանաչության, հպարտության և իշխանության այդ աշխարհիկ քառյակը։ Մենք գուցեև ցանկանանք սրանք, բաց մենք չպետք է կենտրոնանանք դրանց վրա որպես մեր բարձրագույն առաջնահերթություններ։

Նրանք, ում բարձրագույն ցանկությունը ունեցվածքներ ձեռք բերելն է, ընկնում են նյութապաշտության թակարդը։ Նրանց չի հաջողվում ականջ դնել նախազգուշացմանը. «Մի փնտրիր հարստություններ, ոչ էլ աշխարհի ունայն բաները» (Ալմա 39.14; տես նաև Հակոբ 2.18)։

Նրանք, ովքեր ցանկանում են հանրաճանաչություն կամ իշխանություն, պետք է հետևեն քաջարի Մորոնի զորապետի օրինակին, որի ծառայությունը «իշխանության» կամ «աշխարհի հարգանքի» համար չէր (Ալմա 60.36)։

Ինչպե՞ս ենք մենք զարգացնում ցանկություններ։ Քչերը կարող են ունենալ այնպիսի ճգնաժամ, ինչպիսին ունեցավ Ահարոն Ռալսթոնը,[3] որը դրդապատճառ հանդիսացավ նրա համար, բայց նրա փորձառությունը արժեքավոր դաս է տալիս ցանկություններ զարգացնելու մասին։ Երբ Ռալսթոնը շրջում էր հարավային Յուտայի հեռավոր մի կիրճում, մի 360 կգ քաշով ժայռի բեկոր հանկարծ պոկվեց և ծուղակի մեջ առավ նրա աջ թևը։ Հինգ օր նա միայնակ մաքառեց իրեն ազատելու համար։ Երբ նա մոտ էր անձնատուր լինելուն և մահն ընդունելուն, նա տեսիլք տեսավ, որ երեք տարեկան մի տղա իր ձախ ձեռքը բարձրացրած վազում էր դեպի իրեն։ Հասկանալով այս որպես իր ապագա որդու մասին տեսիլք և հավաստիացում, որ դեռ կարող էր ապրել, Ռալսթոնը հավաքեց իր ողջ խիզախությունը և կտրուկ միջոց ձեռնարկեց՝ իր կյանքը փրկելու համար, նախքան ուժը կհատներ։ Նա կոտրեց իր թակարդված աջ թևի երկու ոսկորները, իսկ հետո օգտագործեց իր դանակը ձեռքով կտրելով իր այդ բազուկը։ Ապա ուժ հավաքեց՝ քայլելով 8 կիլոմետր օգնություն գտնելու համար։[4] Ցանկությունը հաղթահարելու ուժի ինչպիսի՜ օրինակ։

Երբ մենք ունենք նրա հեռանկարը, թե ինչ մենք կարող ենք դառնալ, մեր ցանկությունն ու գործելու ուժը հսկայական չափով մեծանում է։

Մեզանից շատերը երբեք չեն հանդիպի այսպիսի ծայրահեղ ճգնաժամի, բայց մենք բոլորս հանդիպում ենք հնարավոր թակարդների, որոնք կխոչնդոտեն դեպի մեր հավերժական ճակատագիրը առաջընթացին։ Եթե մեր արդար ցանկությունները բավականաչափ ուժեղ են, դրանք կդրդեն մեզ կտրել և քանդակել մեզ՝ ազատ մնալով հակումներից և այլ մեղսավոր ճնշումներից և առաջնահերթություններից, որոնք խանգարում են մեր հավերժական առաջընթացին։

Մենք պետք է հիշենք որ արդար ցանկությունները չեն կարող մակերեսային կամ հանկարծական մղումների արդյունք լինել, ոչ էլ կարող են ժամանակավոր բնույթ կրել։ Դրանք պետք է լինեն սրտառուչ, անսասան և մշտատև։ Այդպիսի հիմնավոր ցանկություններ ունենալով, մենք կձգտենք այն վիճակին, որը նկարագրված է Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից, երբ մենք «հաղթահարում ենք [մեր կյանքի] չարիքները» և կորցնում ամեն ցանկություն հանդեպ մեղքը։[5] Դա շատ անձնական որոշում է։ Ինչպես Նիլ Ա. Մաքսվելն է ասել.

«Երբ մարդիկ բնորոշվում են որպես «մեղքի հանդեպ իրենց ցանկությունը կորցրած» անձինք, այդ նրանք են և միմիայն նրանք, ովքեր միտումնավոր որոշում են կայացրել՝ հրաժարվելու այդ սխալ ցանկություններից՝ լինելով հոժար «վերջ տալ բոլոր [իրենց] մեղքերին որպեսզի ճանաչեն Աստծուն . . .

«Ուստի, այն ինչ մենք համառորեն ցանկանում ենք, մենք այդ ենք ի վերջո դառնում ժամանակի ընթացքում և ստանում դա հավերժության մեջ»։[6]

Որքան էլ կարևոր է կորցնել ամեն ցանկություն մեղքի հանդեպ, հավերժական կյանքը պահանջում է ավելին։ Մեր հավերժական ճակատագրին հասնելու նպատակով կցանկանանք և կաշխատենք այն հատկանիշների վրա, որոնք պահանջվում են հավերժական էակ դառնալու համար։ Օրինակ, հավերժական էակները ներում են բոլոր նրանց, ովքեր անիրավություն են արել իրենց։ Նրանք դնում են ուրիշների բարօրությունը իրենցից վեր։ Եվ նրանք սիրում են Աստծո բոլոր զավակներին։ Եթե սա խիստ դժվար է թվում և անկասկած դա հեշտ չէ մեզանից որևէ մեկի համար, ապա մենք պետք է սկսենք այդպիսի հատկանիշների հանդեպ ցանկությամբ և կանչենք առ մեր Երկնային Հայրը, որ նա օգնի մեր զգացմունքների հարցում։ Մորմոնի Գիրքը սովորեցնում է, որ մենք պետք է «աղոթենք Հորը, սրտի ողջ կորովով, որ կարողանանք

լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են» (Մորոնի 7.48):

Ես կավարտեմ ցանկության մասին վերջին մի օրինակով կիսվելով, որը պետք է կարևորագույնը լինի բոլոր տղամարդկանց և կանանց համար, ովքեր ներկայումս ամուսնացած են կամ ամուսնացած չեն: Բոլորը պետք է ցանկանան և լրջորեն աշխատեն ամուսնության հավերժությունը ապահովելու ուղղությամբ: Նրանք, ովքեր ունեն տաճարային ամուսնություն, պետք է անեն ամեն ինչ այն պահպանելու համար: Նրանք, ովքեր միայնակ են, պետք է դիմակայեն քաղաքականապես ճիշտ, բայց հավերժության տեսակետից կեղծ տեսակետին, որը վարկաբեկում է ամուսնանալու և երեխաներ ունենալու կարևորությունը:[7]

Ամուրի տղամարդիկ, խնդրում եմ մտածեք այն մարտահրավերի մասին, որը նկարագրված է մի չամուսնացած քրոջ կողմից գրված այս նամակում: Նա աղերսում էր «Աստծո արդար դուստրերի համար, որոնք անկեղծորեն որոնում են արժանի ընկերակից, սակայն տղամարդիկ, թվում է, կուրացել են և շփոթվել, մտածելով, թե արդյոք նրանց պատասխանատվությունն է փնտրել մեր Երկնային Հոր այդ սքանչելի ընտիր դուստրերին և սիրատածել նրանց և հոժար լինել կապել և պահել սրբազան ուխտեր Տիրոջ տանը»: Նա եզրակացնում է. «Այստեղ շատ ամուրի ՎՕՍ տղամարդիկ կան, ովքեր հաճույքով դուրս են գալիս և զվարճանում, ժամադրվում, դրսում թափառում, սակայն բացարձակապես ցանկություն չեն ունենում երբևէ որևէ ձևի պարտավորություն վերցնել կնոջ հանդեպ»:[8]

Համոզված եմ, որ բուռն ցանկությամբ փնտրող որոշ երիտասարդ տղամարդիկ ուզում են, որ ես ավելացնեմ, որ կան որոշ երիտասարդ կանայք, որոնք արժանավոր ամուսնություն և երեխաներ ունենալու իրենց ցանկությունները իրենց կարիերայի կամ այլ մահկանացու արժանիքներից խիստ ցածր են դասում: Ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, կարիք ունեն արդար ցանկությունների, որոնք կառաջնորդեն նրանց դեպի հավերժական կյանք:

Եկեք հիշենք, որ ցանկությունները թելադրում են մեր առաջնահերթությունները, առաջնահերթությունները ձևավորում են մեր ընտրությունները, իսկ ընտրությունները որոշում են մեր գործողությունները: Բացի այդ մեր գործողություններն ու մեր ցանկություններն են, որոնք ստիպում են մեզ դառնալ ճշմարիտ ընկեր, տաղանդավոր ուսուցիչ կամ պարզապես մի մարդ, որն արժանի է հավերժական կյանքի:

Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի մասին, ում սերը, ում ուսմունքները և ում Քավությունը դարձնում են այս բոլորը հնարավոր: Ես աղոթում եմ, որ բոլոր այլ բաներից վեր մենք ցանկանանք դառնալ Նրա նման, որպեսզի մի օր կարողանանք վերադառնալ Նրա ներկայությունը և ստանալ Նրա ուրախության լիությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ray Cox, interview by author, Aug. 1, 1985, Mount Pleasant, Utah, confirming what he told me in Provo, Utah, circa 1953.
2. Տես Richard C. Roberts, *Legacy: The History of the Utah National Guard* (2003), 307–14; “Self-Propelled Task Force,” *National Guardsman,* May 1971, back cover; *Miracle at Kapyong: The Story of the 213th* (film produced by Southern Utah University, 2002):
3. Տես Aron Ralston, *Between a Rock and a Hard Place* (2004):
4. Ralston, *Between a Rock and a Hard Place,* 248.
5. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 211:
6. Neal A. Maxwell, “According to the Desire of [Our] Hearts,” *Ensign,* Nov. 1996, 22, 21.
7. Տես Julie B. Beck, “Teaching the Doctrine of the Family,” *Liahona,* Mar. 2011, 32–37:
8. Նամակ, սեպտ. 14, 2006:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Գտնել ուրախություն սիրով ծառայելու միջոցով

Թող մենք ցուցաբերենք մեր սերն ու երախտագիտությունը Փրկչի քավող զոհաբերության համար՝ ծառայելով մեր հասարակ, կարեկցող արարքներով:

Եղբայրներ և քույրեր, ես հույսով եմ, որ ձեզանից նրանք, ովքեր այցելել են Սոլթ Լեյք, կօգտվեն Տաճարային Հրապարակը զարդարող գեղեցիկ զարնանային ծաղիկների գույներն ու բուրմունքը վայելելու հնարավորությունից:

Գարունը բերում է լույսի ու կյանքի վերականգնում՝ եղանակների շրջափուլի միջոցով մեզ հիշեցնելով մեր Տեր և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի կյանքի, զոհաբերության և Հարության մասին. քանզի «բոլոր բաները վկայում են [Նրա] մասին» (Մովսես 6.63):

Գարնան այս գեղեցիկ տեսարանին և դրա հույսի խորհրդանիշին հակադրվում է անորոշության, խճճվածության և շփոթության աշխարհը: Ամենօրյա կյանքի պահանջները՝ կրթությունը, աշխատանքը, երեխաներին մեծացնելը, Եկեղեցու ծառայություններն ու կոչումները, աշխարհիկ միջոցառումները և նույնիսկ անսպասելի հիվանդության ու դժբախտ պատահարի ցավն ու վիշտը, կարող են մեզ հոգնեցնել: Ինչպե՞ս կարող ենք մենք ազատել մեզ դժվարությունների և անորոշությունների այս խճճված ցանցից, որպեսզի գտնենք մտքի խաղաղություն և երջանկություն:

Հաճախ մենք նմանվում ենք այն երիտասարդ առևտրականին Բոստոնից, ով 1849թ., ինչպես ասվում է այդ պատմությունում, խանդավառությամբ էր լցվել, լսելով Կալիֆոռնիայի ոսկու տենդի մասին: Նա ծախեց իր ողջ ունեցվածքը՝ իր բախտը Կալիֆոռնիայի գետերում որոնելու համար, քանզի իրեն ասել էին, որ դրանք լի էին ոսկու այնպիսի մեծ բնակտորներով, որ մի հոգին դժվար թե կարողանար այն տանել:

Մինչ անվերջանալի թվացող օրերը հաջորդում էին իրար, երիտասարդ տղան իր ամանը ընկղմում էր գետի մեջ և առանց սպասվող նյութի դուրս հանում: Նրա միակ վարձատրությունը քարերի մեծաղոց կույտն էր: Հուսալքված ու կոտրված, նա պատրաստ էր կանգ առնել, մինչ այն օրը, երբ մի ծեր, փորձառու հետազոտող նրան ասաց. «Դու բավականին մեծ քարակույտ ունես այդտեղ, իմ տղա»:

Երիտասարդ տղան պատասխանեց. «Այստեղ ոսկի չկա: Ես տուն եմ վերադառնում»:

Քարերի կույտի մոտով քայլելով ծերունին ասաց. «Օ՜, այստեղ բավականին ոսկի կա: Դու միայն պետք է իմանաս, թե որտեղ կարող ես այն գտնել»: Նա վերցրեց երկու քար և դրանք իրար խփեց: Քարերից մեկը կիսվեց և բացված տեղից երևացին ոսկու մի քանի մասնիկներ՝ շողալով արևի տակ:

Նկատելով հետազոտողի գոտկատեղից ամրացված ուռուցիկ կաշվե քսակը, երիտասարդ տղան ասաց. «Ես փնտրում եմ ոսկու այնպիսի բնակտորներ, ինչպիսին քո քսակում են, ոչ թե փոքրիկ մասնիկներ»:

Ծերունին մեկնեց իր քսակը դեպի երիտասարդ տղան, ով նայեց դրա մեջ, մտածելով, որ կտեսնի մի քանի մեծ ոսկու բնակտորներ: Նա ապշեց, երբ տեսավ, որ քսակը լի էր ոսկու հազարավոր մանր մասնիկներով:

Ծերունին ասաց. «Տղա, ինձ թվում է, որ դու այնքան զբաղված ես մեծ բնակտորներ որոնելով, որ կորցնում ես քո քսակը ոսկու այս թանկարժեք մասնիկներով լցնելու հնարավորությունը: Այս փոքր մասնիկները համբերությամբ հավաքելը ինձ մեծ հարստություն է բերել»:

Այս պատմությունը լուսաբանում է այն հոգևոր ճշմարտությունը, որ Ալման սովորեցրեց իր որդի Հելամանին. . . .

«Փոքր և հասարակ բաներով են իրականացվում մեծ օրհնությունները . . .

Եվ խիստ փոքր միջոցներով Տերը . . . իրականացնում է բազում հոգիների փրկությունը» (Ալմա 37.6–7):

Եղբայրներ և քույրեր, Հիսուս Քրիստոսի ավետարանը պարզ է, անկախ նրանից, թե մենք որքան ենք փորձում այն բարդացնել: Մենք պետք է ջանանք մեր կյանքը նմանապես պարզ պահել՝ ազատ ավելորդ ազդեցություններից, կենտրոնացած այն բաների վրա, որոնք մեծ նշանակություն ունեն:

Որո՞նք են ավետարանի թանկարժեք, պարզ բաները, որ բերում են մեր կյանք պարզություն և նպատակ: Որո՞նք են ավետարանի մասնիկները, որոնց համբերատար կուտակումը մեր ողջ կյանքի ընթացքում կպարգևի մեզ կատարյալ գանձ՝ հավերժական կյանքի թանկարժեք պարգևը:

Ես կարծում եմ, որ կա մի պարզ, բայց շատ մեծ, նույնիսկ գերագույն սկզբունք, որ ընդգրկում է Հիսուս Քրիստոսի ողջ ավետարանը: Եթե մենք ամբողջ սրտով ընդունենք և դարձնենք այս սկզբունքը մեր կյանքի կիզակետը, այն կմաքրի և կսրբագործի մեզ այնպես, որ մենք կարողանանք ևս մեկ անգամ ապրել մեր Աստծո ներկայության մեջ:

Փրկիչը խոսեց այս սկզբունքի մասին, երբ պատասխանեց փարիսեցու հարցին. «Վարդապետ, ո՞ր պատուիրանքն է մեծ օրէնքումը»:

Յիսուսն էլ ասեց նորան. Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը:

Սա է առաջին եւ մեծ պատուիրանքը:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս» (Մատթեոս 22.36–40):

Միայն այն ժամանակ, երբ մենք սիրում ենք Աստծուն մեր ողջ սրտով, անձով և մտքով, մենք կարողանում ենք կիսել այս սերը մեր ընկերոջ հետ բարի գործերի և ծառայության միջոցով՝ այն ձևով, ինչպես Փրկիչը կսիրեր և կծառայեր մեզ բոլորիս, եթե Նա լիներ մեր մեջ այսօր:

Երբ Քրիստոսի այս մաքուր սերը կամ գթությունը պարուրում է մեզ, մենք մտածում, զգում և գործում ենք ավելի շատ այնպես, ինչպես կմտածեին, կզգային և կգործեին Երկնային Հայրն ու Հիսուսը: Մեր մղումը և անկեղծ ցանկությունը նմանվում են Փրկչի այդ հատկանիշներին: Նա կիսեց այս ցանկությունը Իր Առաքյալների հետ Իր Խաչելությանը նախորդող երեկոյան:

Նա ասաց. «Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք: . . .

Սորանով կգիտենան ամենքը թէ իմ աշակերտներն էք, եթէ իրար վերայ սէր ունենաք» (Հովհաննես 13.34–35):

Տիրոջ նկարագրած սերը ակտիվ սեր է: Այն չի դրսևորվում մեծ ու հերոսական արարքներով, այլ դրանց փոխարեն բարության ու ծառայության պարզ գործերով:

Կան բազմատեսակ ճանապարհներ և պայմաններ, որոնցով մենք կարող ենք ծառայել և սիրել ուրիշներին: Թույլ տվեք առաջարկել միայն մի քանիսը:

Առաջինը, գթությունը սկսվում է տանը: Միակ ամենակարևոր սկզբունքը, որ պիտի կառավարի յուրաքանչյուր տուն, Ոսկե Օրենքի՝ Տիրոջ խրատի կիրառումն է. «Ամեն ինչ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մարդիկ, այնպէս էլ դուք արէք նորանց» (Մատթեոս 7.12): Մի պահ պատկերացրեք, թե ինչպես ձեզ կզգայիք, եթե լինեիք չմտածված խոսքերի կամ վերաբերմունքի արժանացած մարդ: Մեր օրինակով եկեք մեր ընտանիքի անդամներին սովորեցնենք միմյանց հանդեպ սեր դրսևորել:

Մեկ այլ վայր, որտեղ մենք ունենք ծառայելու միանգամայն բավարար հնարավորություն, դա Եկեղեցին է: Մեր ծխերն ու ճյուղերը պետք է լինեն մի վայր, որտեղ Ոսկի Օրենքը առաջնորդում է մեր խոսքերն ու արարքները իրար հանդեպ: Իրար հետ բարությամբ վերաբերվելով, աջակցության և քաջալերման խոսքեր ասելով և իրար կարիքների հանդեպ զգայուն լինելով, մենք կարող ենք ծխի անդամների մեջ ստեղծել նվիրված միություն: Այնտեղ, որտեղ կա գթություն, բամբասանքն ու անբարյացակամ խոսքերը տեղ չունեն:

Ծխի անդամները, թե չափահասները և թե պատանիները, կարող են միանալ ուրիշների կյանքն օրհնելու բովանդակալից ծառայության մեջ: Ընդամենը երկու շաբաթ առաջ Հարավային Ամերիկայի Հյուսիս-Արևմտյան Տարածաշրջանի Նախագահը՝ Յոթանասունից Երեց Մարկուս Բ. Նաշը զեկուցեց, որ կցելով «հոգով

ուժեղներին նրանց, ովքեր թույլ են», նրանք փրկում են հարյուրավոր քիչ ակտիվ չափահասների և երիտասարդների: Սիրո և ծառայության միջոցով նրանք «մեկ առ մեկ» վերադառնում են: Այս բարի գործերը ստեղծում են ամուր և տևական կապ այդ գործում ներգրավված բոլոր անդամների միջև՝ և օգնողների, և օգնություն ստացողների: Այնքան շատ հիշողություններ են կապված նման ծառայության հետ:

Երբ ես մտածում եմ Եկեղեցու իմ ծառայության բազմաթիվ տարիների մասին, իմ ամենավառ հիշողությունները կապված են այն ժամանակների հետ, երբ ես միացել եմ ծխի անդամներին՝ օգնելով կարիքի մեջ գտնվողին:

Օրինակ, ես հիշում եմ, թե ինչպես էի որպես եպիսկոպոս աշխատում իմ ծխի մի քանի ակտիվ անդամների հետ, ցցի բարօրության ագարակում մաքրելով անասնակերով լցված հորը: Սա հաճելի հանձնարարություն չէր: Ոչ-ակտիվ մի եղբայր, ով Եկեղեցում չէր եղել երկար տարիներ, մեզ միանալու հրավեր էր ստացել: Այն սիրո և ընկերական մթնոլորտի արդյունքում, որը նա զգացել էր, երբ մենք աշխատում և խոսում էինք այդ անասնակերով լցված գարշահոտ հորի մոտ, նա վերադարձավ Եկեղեցի և հետագայում կնքվեց տաճարում իր կնոջ ու երեխաների հետ: Մեր ընկերությունը ծառայության միջոցով օրհնեց նրա երեխաներին, թոռներին և այժմ ծոռներին: Նրանցից շատերը ծառայել են միսիայում, ամուսնացել են տաճարում և հոգ են տանում հավերժական ընտանիքների համար: Հրաշալի աշխատանք կատարվեց պարզ մի արարքի շնորհիվ՝ ահա ոսկու մի փոքր մասնիկ:

Օրինակ, ես հիշում եմ, թե ինչպես էի որպես եպիսկոպոս աշխատում իմ ծխի մի քանի ակտիվ անդամների հետ, ցցի բարօրության ագարակում մաքրելով անասնակերով լցված հորը: Սա հաճելի հանձնարարություն չէր: Ոչ-ակտիվ մի եղբայր, ով Եկեղեցում չէր եղել երկար տարիներ, մեզ միանալու հրավեր էր ստացել: Այն սիրո և ընկերական մթնոլորտի արդյունքում, որը նա

զգացել էր, երբ մենք աշխատում և խոսում էինք այդ անասնակերով լցված գարշահոտ հորի մոտ, նա վերադարձավ Եկեղեցի և հետագայում կնքվեց տաճարում իր կնոջ ու երեխաների հետ: Մեր ընկերությունը ծառայության միջոցով օրհնեց նրա երեխաներին, թոռներին և այժմ ծոռներին: Նրանցից շատերը ծառայել են միսիայում, ամուսնացել են տաճարում և հոգ են տանում հավերժական ընտանիքների համար: Հրաշալի աշխատանք կատարվեց պարզ մի արարքի շնորհիվ՝ ահա ոսկու մի փոքր մասնիկ:

Մեր անկեղծ սիրալիրության և ծառայության միջոցով մենք կարող ենք ընկերանալ նրանց հետ, ում մենք ծառայում ենք: Այս ընկերություններից գալիս է ավետարանին նվիրված լինելու ավելի լավ ըմբռնումը և մեր մասին ավելին իմանալու ցանկությունը:

Իմ լավ ընկեր՝ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը ասել է այս սկզբունքի զորության մասին. «Բարությունը մեծության էությունն է: . . . [Այն] անցագիր է, որ բացում է դռներ և ստեղծում է ընկերներ: Այն փափկացնում է սրտերը և միաձուլում է հարաբերություններ, որոնք կարող են տևել ողջ կյանքի ընթացքում» (“The Virtue of Kindness,” *Liahona*, May 2005, 26):

Մեկ այլ ճանապարհ, որի միջոցով մենք կարող ենք ծառայել Երկնային Հոր զավակներին, միսիոներական ծառայությունն է՝ ոչ միայն որպես լիաժամկետ միսիոներ, այլ նաև որպես ընկերներ և հարևաններ: Եկեղեցու ապագա աճը չի իրականանա միայն օտար դռներ թակելով: Դա տեղի կունենա, երբ անդամները մեր միսիոներների հետ միասին, լցված լինելով Աստծո և Քրիստոսի սիրով, կնկատեն կարիքներն ու կպատասխանեն այդ կարիքներին գթառատ ծառայության ոգով:

Երբ մենք անենք սա, եղբայրներ և քույրեր, սրտով ազնիվները կզգան մեր անկեղծությունն ու սերը: Շատերը կցանկանան ավելին իմանալ մեր մասին: Այդ ժամանակ և միայն այդ ժամանակ Եկեղեցին կտարածվի և կլցնի ողջ երկիրը: Սա չի կարող իրագործվել միայն միսիոներների միջոցով, այլ պահանջում է յուրաքանչյուր անդամի հետաքրքրությունն ու ծառայությունը:

Մեր բոլոր ծառայություններում մենք պետք է զգայուն լինենք Սուրբ Հոգու հուշումների հանդեպ: Մեղմ, հանդարտ ձայնը մեզ կհայտնի, թե ովքեր ունեն մեր օգնության կարիքը և ինչ կարող ենք մենք անել նրանց օգնելու համար:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Կարևորագույնն այն է, որ մենք ծառայենք իրար թագավորությունում: . . . Շատ հաճախ մեր ծառայությունը բաղկացած է լինում հասարակ խրախուսանքից կամ . . . հասարակ բաներում օգնություն ցույց տալուց, բայց ինչ փառահեղ հետևանքներ կարող են հորդել . . . աննշան, բայց կշռադատված արարքներից» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 82):

Իսկ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խորհուրդ է տվել.

Կարիքավորներն ամենուր են, և մեզանից յուրաքանչյուրը կարող է ինչ-որ բան անել ինչ-որ մեկին օգնելու համար:

. . . Եթե մենք մեզ չկորցնենք մյուսներին ծառայելու մեջ, մեր կյանքում քիչ նպատակ կլինի» (“What Have I Done for Someone Today?” *Liahona*, Nov. 2009, 85):

Եղբայրներ և քույրեր, թույլ տվեք ևս մեկ անգամ ընդգծել, որ Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու ամենակարևոր հատկանիշը, որը մենք պետք է ցանկանանք և ձգտենք ունենալ մեր կյանքում, գթության պարգևն է՝ «Քրիստոսի մաքուր սերը» (Մորոնի 7.47): Այս պարգևից է առաջ գալիս ուրիշներին սիրելու և ծառայելու ունակությունը, ինչպես Փրկիչն է արել:

Մորմոն մարգարեն սովորեցրել է մեզ այս պարգևի մեծագույն կարևորության մասին և ասել, թե ինչպես կարող ենք այն ստանալ. «Ուստի, իմ սիրելի եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են. որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները. որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման. քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է. որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը. որ մենք կարողանանք մաքրվել, ճիշտ ինչպես նա է մաքուր» (Մորոնի 7.48):

Մեծ բաներ են առաջ եկել հասարակ և փոքր բաներից: Ինչպես ոսկու փոքրիկ մասնիկները կուտակվում և ժամանակի ընթացքում դառնում են մեծ գանձեր, երբ ամեն անգամ մենք իրար օգնության հասնենք, բարության և ծառայության մեր փոքր ու հասարակ արարքները կկուտակվեն ու կդառնան Երկնային Հոր հանդեպ սիրով լցված, Տեր Հիսուս Քրիստոսի գործին նվիրված և խաղաղության ու ուրախության զգացումով լի կյանք:

Մինչ մենք մոտենում ենք Զատկի ժամանակաշրջանին, թող մենք ցուցաբերենք մեր սերն ու երախտագիտությունը Փրկչի քավող զոհաբերության հանդեպ՝ տանը, Եկեղեցում և մեր համայնքներում, մեր եղբայրներին և քույրերին ծառայելով մեր հասարակ, կարեկցող արարքներով: Այս ամենի համար ես խոնարհաբար աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալստին

Ձեր միսիան սուրբ հնարավորություն կլինի՝ ուրիշներին դեպի Քրիստոս բերելու և օգնելու համար նրանց նախապատրաստվել Փրկչի Երկրորդ Գալստին:

Այս երեկո ես իմ խոսքը հատկապես ուղղում եմ 12-ից 25 տարեկաններին, ովքեր կրում են Աստծո քահանայությունը: Մենք ձեր մասին շատ ենք մտածում և մենք աղոթում ենք ձեզ համար: Մի անգամ ես պատմել եմ մեր չորս տարեկան թոռնիկի պատմությունը, ով շատ ուժեղ հրել էր իր փոքր եղբորը: Լացող երեխային սփոփելուց հետո կինս՝ Քեթին, շրջվեց դեպի չորս տարեկանն ու մտախոհ հարցրեց. «Ինչու՞ հրեցիր քո փոքր եղբորը»: Նա նայեց իր տատիկին և պատասխանեց. «Միմի, կներես: Ես կորցրել եմ իմ ԸՃ մատանին, և ես չեմ կարողանում ընտրել ճիշտը»: Մենք գիտենք, որ դուք միշտ ճիշտն ընտրելու ջանք չեք խնայում: Մենք ձեզ շատ ենք սիրում:

Արդյոք երբևէ մտածե՞լ եք, թե ինչու եք աշխարհ ուղարկվել հենց այս որոշակի ժամանակաշրջանում, այլ չեք ծնվել Ադամի և Եվայի ժամանակներում, կամ երբ փարավոններն էին կառավարում Եգիպտոսում, կամ էլ Մինգ դինաստիայի ժամանակներում: Դուք աշխարհ եք եկել հենց այս ժամանակ՝ Քրիստոսի առաջին գալստից 20 դար անց: Աստծո քահանայությունը վերականգնվել է երկրի վրա, և Տերը առաջ է մեկնել Իր ձեռքը՝ նախապատրաստելու աշխարհը Իր փառահեղ վերադարձին: Սրանք մեծ հնարավորության և կարևոր պարտականությունների օրեր են: Սրանք ձեր օրերն են:

Ձեր մկրտությամբ դուք հաստատել եք ձեր հավատքն առ Հիսուս Քրիստոս: Քահանա ձեռնադրվելով՝ ձեր տաղանդներն ու հոգևոր կարողությունները ավելացել են: Ձեր կարևոր պարտավորություններից մեկն է՝ օգնել նախապատրաստել աշխարհը Փրկչի Երկրորդ Գալուստը:

Տերը նշանակել է իր մարգարեին՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին կազմակերպել Իր քահանայության աշխատանքը: Ձեզ Նախագահ Մոնսոնն ասել է. «Տիրոջը միսիոներներ

են հարկավոր»:[1] «Յուրաքանչյուր արժանի, ունակ երիտասարդ տղամարդ պետք է պատրաստվի միսիայում ծառայելուն: Միսիոներական ծառայությունը քահանայության պարտականություն է՝պարտավորություն, որ Տերն ակնկալում է [ձեզանից], ում այսքան շատ է տրված»:[2]

Միսիոներական ծառայությունը զոհաբերություն է պահանջում: Միշտ որևէ բան կգտնվի, ինչը դուք հետևում կթողնեք, երբ պատասխանեք ծառայելու մարգարեի կանչին:

Նրանք, ովքեր հետևում են ռեգբիի խաղերին, գիտեն, որ Նոր Զելանդիայի Ամբողջովին սևեր՝ անունը, որը տրվել է նրանց իրենց համազգեստի գույնի պատճառով, ռեգբիի երբևէ եղած ամենանշանավոր թիմն է:[3] Նոր Զելանդիայի «Ամբողջովին սևերում» ընտրվելը կարող է համեմատվել ամերիկյան ֆուտբոլի Սուպերբոուլ թիմում կամ Աշխարհի Գավաթի ֆուտբոլային թիմում ընդգրկվելու հետ:

1961թ.-ին, Միդնի Գոինգ անունով Ահարոնյան Քահանայության մի կրող 18 տարեկանում արդեն աստղ էր Նոր Զելանդիայի ռեգբիի բնագավառում: Նրա աչքի զարնող բացառիկ ունակությունների շնորհիվ շատերը համոզված էին, որ նա հաջորդ տարի կընդգրկվեր «Ամբողջովին սևեր» ազգային թիմում:

19 տարեկանում, ռեգբիի կարիերայի վերելքի խիստ կարևոր պահին, Միդը հայտարարեց, որ կթողնի ռեգբին՝ միսիայում կծառայելու համար: Որոշ մարդիկ նրան խենթ, ուրիշները՝ հիմար անվանեցին:[4] Նրանք հավատացնում էին, որ նրա հաջողությունները ռեգբիում կարող էին երբեք նորից չկրկնվել:

Միդի համար դա այն չէր, ինչը նա թողնում էր հետևում, դա գալիք հնարավորություն և պարտավորություն էր: Նա քահանայության պարտականություն ուներ՝ տալու իր կյանքի երկու տարիները Տեր Հիսուս Քրիստոսի վերականգնված ճշմարիտ ավետարանը քարոզելու աշխատանքին: Ոչինչ, նույնիսկ ազգային թիմում խաղալու ողջ համբավը և դրանից բխող հնարավորությունը, նրան չէին կանգնեցնի, հետ չէին պահի այդ պարտականությունը կատարելուց:[5]

Աստծո մարգարեի կողմից նա կանչվեց արևմտյան Կանադա՝ միսիայում ծառայելու: Քառասունութ տարի առաջ այս ամսին 19-ամյա Երեց Միդնի Գոինգը թողեց Նոր Զելանդիան, որպեսզի որպես միսիոներ ծառայեր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:

Միդը ինձ պատմել է մի փորձառություն մասին, որն ունեցել էր իր միսիայի ընթացքում: Մի երեկո, երբ նա ու իր զուգընկերն արդեն պետք է վերադառնային իրենց բնակարան, նրանք որոշեցին այցելել ևս մեկ ընտանիքի: Ընտանիքի հայրը թույլ տվեց նրանց ներս մտնել: Երեց Գոինգը և նրա զուգընկերը վկայեցին Փրկչի մասին: Ընտանիքը ընդունեց Մորմոնի Գիրքը: Հայրը կարդաց այն ամբողջ գիշեր: Հաջորդ մեկ ու կես շաբաթվա ընթացքում նա կարդաց ամբողջ Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերն ու Թանկագին Մարգարիտը: Մի քանի շաբաթ անց ընտանիքը մկրտվեց:[6]

Նոր Զելանդիայի «Ամբողջովին սևերի թիմում» ընդգրկվելու փոխարեն՝ մի՞սիա: Միդը պատասխանել էր. «Ուրիշներին դեպի ավետարան բերելու օրհնությունը շատ ավելի կարևոր է, քան որևէ բան, որ [դուք] երբևէ կզոհաբերեք»:[7]

Դուք հավանաբար կուզենաք իմանալ, թե ինչ պատահեց Միդ Գոինգի հետ իր միսիայից հետո: Ամենակարևորը. հավերժական ամուսնություն իր սիրելի Քոլլինի հետ, հինգ ազնվագույն երեխաներ և թոռների հրաշալի սերունդ: Նա ապրեցվ իր կյանքը, վստահելով իր Երկնային Հորը, պահելով պատվիրանները և ծառայելով ուրիշներին:

Իսկ ռեգբի՞ն: Իր միսիայից հետո Միդ Գոինգը դարձավ «Ամբողջովին սևերի» պատմության մեջ ամենալավ խաղացողը, խաղալով 11 խաղաշրջաններում և երկար տարիներ ծառայելով որպես թիմի ավագ:[8]

Իսկ որքանո՞վ էր Միդ Գոինգը լավ խաղացող: Նա այնքան լավն էր, որ մարզումների և խաղերի ժամանակացույցերը փոխվեցին, քանի որ նա չէր խաղում կիրակի օրը:[9] Նա այնքան լավն էր, որ Անգլիայի թագուհին հաստատեց նրա ավանդը

ռեգբիում:[10] Նա այնքան լավն էր, որ նրա մասին գրվեց *Սուպեր Սիդ* վերնագրով գիրքը:

Ի՞նչ կլիներ, եթե իր միսիայից հետո Սիդը չհասներ այդ փառքին: Այս Եկեղեցու միսիոներական ծառայության մեծագույն հրաշքներից մեկն այն է, որ Սիդ Գոինգը և նրա նման հազարավորները չեն հարցրել՝ «Ինձ ի՞նչ կտա իմ միսիան», այլ դրա փոխարեն ասել են՝ «Ի՞նչ կարող եմ ես տալ»:

Ձեր միսիան սուրբ հնարավորություն կլինի՝ ուրիշներին դեպի Քրիստոս բերելու և օգնելու համար նրանց նախապատրաստվել Փրկչի Երկրորդ Գալստին:

Տերը երկար ժամանակ խոսել է Իր Երկրորդ Գալստին նախապատրաստվելու անհրաժեշտության մասին: Ենովքին Նա հայտարարել է. «Ես արդարություն ցած կուղարկեմ երկնքից. և ճշմարտություն առաջ կուղարկեմ երկրից . . . և արդարությունով ու ճշմարտությունով ես կսրբեմ երկիրը, ասես ջրհեղեղով, որպեսզի հավաքեմ իմ ընտրյալներին աշխարհի չորս կողմերից»:[11] Դանիել մարգարեն մարգարեացել է, որ վերջին օրերում ավետարանն առաջ կգլորվի մինչև աշխարհի ծայրերը, ինչպես «սարիցը մի քար կտրուեցաւ առանց ձեռքի»:[12] Նեփիին խոսեց վերջին օրերի եկեղեցու մասին, որ այն թվով փոքր էր, բայց տարածվում էր ողջ երկրի երեսի վրա:[13] Տերը հայտարարել է այս տնտեսությունում. «Դուք կանչված եք՝ իրագործելու իմ ընտրյալների հավաքումը»:[14] Իմ երիտասարդ եղբայրներ, ձեր միսիան մեծ հնարավորություն և պարտավորություն է, այն կարևոր է այս խոստացված հավաքման համար և կապված է ձեր հավերժական ճակատագրի հետ:

Վերականգնման վաղ շրջանից սկսած Եղբայրները շատ լուրջ են վերաբերվել ավետարանի մասին հայտարարելու իրենց պարտականությանը: 1837թ. Եկեղեցու կազմավորումից ընդամենը յոթ տարի անց, ավետարանն ուսուցանելու համար միսիոներներ ուղարկվեցին Անգլիա: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում միսիոներները քարոզում էին զանազան երկրներում՝

Ավստրալիայում, Ֆրանսիական Պոլինեզիայում, Հնդկաստանում, Յամայկայում, Չիլիում և Չինաստանում:[15]

Տերն օրհնել է այս աշխատանքը և եկեղեցիներ է հիմնել աշխարհով մեկ: Այս ժողովը թարգմանվում է 93 լեզուներով: Մենք շնորհակալ ենք 52225 լիաժամկետ միսիոներներին, որոնք ծառայում են 150-ից ավելի երկրներում:[16] Արևը երբեք մայր չի մտնում արդարակյաց միսիոներների համար, ովքեր վկայում են Փրկչի մասին: Մտածեք 52000 միսիոներների հոգևոր ուժի մասին, ովքեր օժտված են Տիրոջ Հոգով և համարձակորեն հայտարարում են, որ «տրված չի լինի ոչ ուրիշ անուն, ոչ ուրիշ ճանապարհ, ոչ էլ միջոց, որի շնորհիվ կարող է փրկություն գալ մարդկանց զավակներին . . . միայն Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ անունով և միջոցով»:[17] Մենք մեր երախտագիտություն ենք հայտնում տասնյակ հազարավոր վերադարձած միսիոներներին, ովքեր տվել և շարունակում են տալ իրենց լավագույնը: Աշխարհը նախապատրաստվում է Փրկչի Երկրորդ Գալստին բացառապես Տիրոջ աշխատանքի շնորհիվ՝ Նրա միսիոներների միջոցով:

Միսիոներական ծառայությունը հոգևոր աշխատանք է: Արժանիությունն ու նախապատրաստությունը խիստ կարևոր են: Նախագահ Մոնսոնն ասել է. «Երիտասարդ տղաներ, ես խրախուսում եմ ձեզ նախապատրաստվել որպես միսիոներ ծառայելուն: Որպեսզի ներկայացնեք Տիրոջը՝ ձեր անձը մաքուր, անարատ ու արժանի պահեք»:[18] Ձեր միսիային նախորդող տարիներին, խնդրում եմ, հիշեք, որ ձեր առաջ սրբազան հանձնարարություն ունեք: Միսիայից առաջ ձեր արած գործերը մեծապես կազդեն ձեզ հետ միսիա բերած քահանայության զորության վրա: Լավ նախապատրաստեք ձեր անձերը:

Նախագահ Մոնսոնը խոսել է այն մասին, որ «յուրաքանչյուր արժանի, ունակ երիտասարդ [պատրաստվի] միսիայում ծառայելուն»:[19] Երբեմն առողջական կամ որևէ այլ պատճառով, ինչ որ մեկը ի վիճակի չի լինի ծառայել: Դուք կիմանաք ձեր ծառայելու կարողության մասին, երբ խոսեք ձեր ծնողների և ձեր եպիսկոպոսի հետ: Եթե ձեր իրադրությունը այդպիսին լինի, խնդրում եմ, պակաս կարևոր չհամարեք ձեր առջև դրված կարևոր լիազորությունը: Տերը շատ առատաձեռն է նրանց հանդեպ, ովքեր սիրում են Իրեն, և Նա այլ դռներ կբացի ձեզ համար:

Ոմանք կարող է մտածեն, որ, միգուցե, իրենք շատ մեծ են ծառայելու համար: Իմ ընկերներից մեկը, ով Չինաստանից էր, գտել էր Եկեղեցին Կամբոջիայում, երբ մոտավորապես 25 տարեկան էր: Նա խորհում էր, թե արդյոք կկարողանար ծառայել միսիայում: Աղոթելուց և իր եպիսկոպոսի հետ խոսելուց հետո, նա կանչվեց և ազնվորեն ծառայեց Նյու

Յորք Սիթիում: Եթե դուք մտահոգություններ ունեք՝ կապված ձեր տարիքի հետ, աղոթեք և խոսեք ձեր եպիսկոպոսի հետ: Նա կառաջնորդի ձեզ:

Միսիոներների հիսուն տոկոսը ծառայում է իր սեփական հայրենիքում: Թերևս դա է ճիշտը: Տերը խոստացել է, որ «ամեն մարդ կլսի ավետարանի լրիվությունն իր լեզվով՝ իր մայրենի լեզվով»:[20] Դուք կկանչվեք մարգարեությամբ և կծառայեք այնտեղ, որտեղ ձեր կարիքը ամենամեծն է:

Ես սիրում եմ հանդիպել միսիոներներին աշխարհի տարբեր մասերում: Վերջերս, Ավստրալիա Սիդնի Միսիա այցի ժամանակ գիտե՞ք, թե ես ում գտա. Երեց Սիդնի Գոինգին՝ Նոր Զելանդիայի ռեգբիի լեգենդին: Այժմ, 67 տարեկան հասակում, նա մեկ անգամ ևս միսիոներ է, բայց այս անգամ իր ընտրած զուգընկերոջ՝ քույր Քոլլին Գոինգի հետ: Նա պատմեց ինձ մի ընտանիքի մասին, որին կարողացել էին ուսուցանել: Ծնողները Եկեղեցու անդամներ էին, սակայն տարիների ընթացքում դարձել էին քիչ ակտիվ: Երեց և Քույր Գոինգները օգնեցին բորբոքել ընտանիքի հավատքը: Երեց Գոինգն ինձ պատմեց իր զգացած զորության մասին, մինչ կանգնած էր ընտանիքի հոր կողքին մկրտության ավազանի մոտ, երբ ավագ որդին, որն այժմ քահանայություն էր կրում, մկրտեց իր կրտսեր եղբորը և քրոջը: Մեծ էր նրանց ուրախությունը, երբ տեսնում էին միասնական ընտանիք, ովքեր միասին ակնկալում էին հավերժական կյանք:[21]

Խոսքն ուղղելով ձեզ՝ Առաջին Նախագահությունն ասել է.

«[Դու] ընտրյալ [հոգի] [ես], որ ծնվել [ես] այս ժամանակաշրջանում, երբ ինչպես պատասխանատվություններն ու հնարավորությունները, այնպես էլ գայթակղություններն ամենամեծն են: . . .

Մենք աղոթում ենք ձեզանից յուրաքանչյուրի համար . . . որ դուք կարողանաք կատարել ձեր առջև դրված մեծ աշխատանքը . . . որ դուք արժանի լինեք [և ցանկանաք] շարունակելու Աստծո արքայությունը կառուցելու և աշխարհը Փրկչի

Երկրորդ Գալուստին նախապատրաստելու պարտավորությանը»:[22]

Ես սիրում եմ Փրկչի Երկրորդ Գալուստը պատկերող Հարրի Անդերսոնի նկարը: Այն ինձ հիշեցնում է, որ Նա կգա վեհությամբ ու իշխանությամբ: Զարմանալիքներ տեղի կունենան երկրում և երկնքներում:[23]

Նրանք, ովքեր սպասում են Տիրոջ գալստին, «կփնտրեն [Նրան]»: Եվ Նա խոստացել է՝ «Ես կգամ»: Արդարները կտեսնեն Նրան «երկնքի ամպերի մեջ,[բոլոր սուրբ հրեշտակների հետ], զորություն ու մեծ փառք հագած»:[24] «Հրեշտակը պիտի հնչեցնի իր փողը . . . և սրբերը [աշխարհի չորս կողմերից][25] . . . կհավաքվեն վեր, որ դիմավորեն նրան»:[26] Նրանք, «որ ննջել են», նկատի ունենալով այն արժանի սրբերին, ովքեր մահացել են, «[նույնպես] առաջ պիտի գան [Նրան] դիմավորելու»:[27]

Սուրբ գրություններում կարդում ենք. «Տերն իր ոտքը կդնի սարի վրա»[28] և «[Նա] պիտի արձակի իր ձայնը, և աշխարհի բոլոր ծայրերը պիտի լսեն այն»:[29]

Քահանայություն կրող իմ երիտասարդ եղբայրներ, ես վկայում եմ այս փառահեղ իրադարձության վեհության, և, առավել ևս, հավաստիության մասին: Փրկիչն ապրում է: Նա կվերադառնա աշխարհ: Եվ լինի դա վարագույրի այս, թե այն կողմում, դուք և ես կհրճվենք Նրա Գալստով և շնորհակալություն կհայտնենք Տիրոջը, որ Նա մեզ աշխարհ ուղարկեց՝ կատարելու մեր սուրբ պարտականությունը այս ժամանակաշրջանում, օգնելու նախապատրաստել աշխարհը Նրա Վերադարձին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Տիրոջը միսիոներներն են հարկավոր», *Լիահոնա* Հունվ. 2011, 4:
2. Թոմաս Ս. Մոնսոն, «Միասին կրկին հանդիպելով», *Լիահոնա*,Նոյ. 2010, 5–6:
3. Տես stats.allblacks.com:
4. Տես Bob Howitt, *Super Sid: The Story of a Great All Black* (1978), 27:
5. Հեռախոսային զրույց Նախագահ Մաքսվել Հոսֆորդի հետ, Կաիկո Նոր Զելանդիա Ցից, Մարտ 2011:
6. Հեռախոսային զրույց Երեց Սիդնի Գոինգի հետ, Մարտ 2011:
7. Էլեկտրոնային փոստով ուղարկված հաղորդագրություն Սիդնի Գոինգի կողմից, Մարտ 2011:
8. Տես stats.allblacks.com/asp/profile.asp?ABID=324:
9. Հեռախոսային զրույց Նախագահ Մաքսվել Հոսֆորդի հետ, Կաիքոհի Նոր Զելանդիա Ցից, Մարտ 2011:
10. Սիդ Գոինգը պարգևատրվել էր ԲԿՄ (Բրիտանական Կայսրության Միաբանության Անդամ) 1978թ. ռեգբի սպորտաձևում իր ունեցած ավանդի համար (տես Howitt, *Super Sid,* 265):
11. Մովսես 7.62:
12. Դանիել 2.45:
13. Տես 1 Նեփի 14.12–14:
14. Վարդապետություն և Ուխտեր 29.7:
15. Տես *Deseret News 2011 Church Almanac* (2011), 430, 458, 463, 487, 505, 512:
16. 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:
17. Մոսիա 3.17:
18. Թոմաս Ս. Մոնսոն, *Լիահոնա*, Հուն. 2011, 4:
19. Թոմաս Ս. Մոնսոն, *Լիահոնա*,Նոյ. 2010, 5–6:
20. Վարդապետություն և Ուխտեր 90.11:
21. Հեռախոսային զրույց Երեց Սիդնի Գոինգի հետ, Մարտ 2011:
22. «Ուղերձ Առաջին Նախագահության կողմից», *Երիտասարդներին զորացնելու հաւատք. կատարել Աստծո հանդեպ մեր պարտականությունը* (գրքույկ, 2001), 2–3:
23. Տես Վարդապետություն և Ուխտեր 43.18; 45.40:
24. Վարդապետություն և Ուխտեր 45.44:
25. Վարդապետություն և Ուխտեր 45.45,46:
26. Վարդապետություն և Ուխտեր 88.96:
27. Վարդապետություն և Ուխտեր 45.45; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 29.13–88.96–97:
28. Վարդապետություն և Ուխտեր 45.48:
29. Վարդապետություն և Ուխտեր 45.49:

Երեց Սթիվեն Ի. Մնոու
Յոթանասունի Նախագահությունից

Հույս

Քավության հանդեպ մեր հույսը արտոնում է մեզ հավերժական հեռանկարով:

Ս եր ընտանիքը ապրել է Հարավային Յուտայի բարձրադիր հարթավայրում: Անձրևները հազվադեպ էին և հույս չկար, որ բավականաչափ խոնավություն կլիներ ամառվա տոթին: Այն ժամանակ, ինչպես այժմ, մենք անձրևի հույս էինք տածում, իսկ երաշտին ծոմ էինք պահում անձրևի համար:

Մի պատմության մեջ պապիկը իր հինգ տարեկան թոռնիկի հետ գնում է քաղաք շրջելու: Վերջապես, նրանք հասնում են գլխավոր փողոցի վրա գտնվող մի մթերային խանութի և կանգ են առնում զովացուցիչ ըմպելիք գնելու: Մեկ այլ նահանգի մի մեքենա է կանգնում և վարորդը մոտենում է պապիկին: Մատով ցույց տալով երկնքում հայտնված փոքր ամպին՝ նա հարցնում է. «Ի՞նչ եք կարծում, անձրև կգա»:

«Հույսով եմ, կգա: - պատասխանում է տարեց մարդը,- Եթե ոչ իմ, ապա գոնե այս տղայի համար: Ես անձրև տեսել եմ»:

Հույսը զգացում է, որ մեր ամենօրյա կյանքը դեպի լավն է փոխում: Այն բնորոշվում է որպես «զգացողություն, որ . . . դեպքերը լավագույն ընթացք կունենան»: Երբ մենք հույս ենք տածում, «սպասում ենք բաղձանքով և ողջամիտ վստահությամբ» (dictionary.reference.com/browse/hope): Այսպիսով, հույսը մեր կյանք է բերում ինչ-որ տեղ հանգստացնող ազդեցություն, երբ մենք վստահ սպասում ենք ապագա իրադարձություններին:

Երբեմն մենք հույս ենք տածում այնպիսի բաների համար, որոնք մեր վերահսկողությունից դուրս են: Մենք հույս ենք տածում լավ եղանակի համար: Մենք հույս ենք տածում, որ շուտ գարուն կգա, որ մեր սիրելի թիմը կնվաճի աշխարհի գավաթը կամ կհաղթի աշխարհի առաջնությանը:

Այդ հույսերը մեր կյանքը դարձնում են հետաքրքիր և կարող են հաճախ հանգեցնել անսովոր, անգամ սնոտիապաշտ վարքագծի: Օրինակ, իմ աները սպորտի մեծ սիրահար է, բայց նա համոզված է, որ եթե հեռուստացույցով *չի* դիտում իր սիրելի բասկետբոլի թիմի խաղը, ավելի մեծ է հավանականությունը, որ նրանք կհաղթեն: Երբ ես 12 տարեկան էի, բասկետբոլի Պատանեկան Լիգայի ամեն խաղին հաղթանակի հույս ունենալով՝ համառորեն ուզում էի հագնել նույն անլվա գուլպաները: Մայրս համոզել էր, որ դրանք պահեմ ետնամուտքում:

Որոշ դեպքերում էլ մեր հույսերից ծնվում են երազանքներ, որոնք ոգեշնչում են մեզ և գործողության ուղղորդում: Եթե մենք դպրոցում ավելի լավ սովորելու հույս ենք տածում, այդ հույսը իրականանում է նվիրված ուսումնառությամբ և զոհաբերությամբ: Եթե մենք հույս ունենք հաղթող թիմում խաղալու, այդ հույսը կդրդի հետևողական պարապմունքների, նվիրվածության ու թիմային աշխատանքի և, ի վերջո, կհանգեցնի հաջողության:

Ռոջեր Բանիստերը Անգլիայում բժշկական քոլեջի ուսանող էր, որը հավակնոտ հույսեր ուներ: Նա ցանկանում էր լինել առաջին մարդը, որը 1.6 կմ կվազեր չորս րոպեից կարճ ժամանակահատվածում: 20-րդ դարի առաջին կեսին բացօդյա սպորտի սիրահարներն անհամբեր սպասում էին այն օրվան, երբ չորս րոպեանոց ժամանակահատվածը հաղթահարվի: Տարիներ շարունակ շատ հայտնի վազորդներ մոտեցել էին այդ սահմանագծին, սակայն այդ սահմանը դեռևս մնում էր: Բանիստերը սկսեց պարապել բարձր մարզական պատրաստվածություն ձեռք բերելու ժամանակացույցով, հույս տածելով, որ կիրականանա նոր աշխարհի ռեկորդ սահմանելու իր նպատակը: Սպորտային կազմակերպություններից շատերը կասկածներ էին հայտնում, որ երբևէ չորս րոպեանոց ժամանակը կհաղթահարվի: Փորձագետներն անգամ վարկածներ էին առաջ քաշում, որ մարդկային մարմինը ֆիզիոլոգիապես չի կարող այդ հեռավորությունն այդքան արագ վազել: Մի ամպամած օր՝ 1954թ. մայիսի 6-ին Ռոջեր Բանիստերի մեծ հույսն իրականացավ: Նա հատեց վերջնագիծը 3:59.4 րոպեում՝ սահմանելով աշխարհի նոր ռեկորդ: Մեկ մղոնը չորս րոպեից պակաս ժամանակում հատելու նրա հույսը դարձավ երազանք, որը իրականացավ պարապմունքների, տքնաջան աշխատանքի և նվիրվածության շնորհիվ:

Հույսը ոգեշնչում է երազանքներ և խթանում, որ մենք իրականացնենք այդ երազանքները: Ինչևէ, ինքնին հույսը մեզ հաջողության չի տանում: Շատ ազնիվ հույսեր չեն իրականացել և խորտակվել են բարի մտադրությունների և ալարկոտության ստորջրյա խութերի վրա:

Որպես ծնողներ, մենք տեսնում ենք, որ փայփայված հույսերը

կենտրոնանում են մեր երեխաների վրա: Մենք հույս ենք տածում, որ նրանք կմեծանան և կվարեն պատասխանատու և արդար կյանք: Նման հույսերը կարող են անհետանալ, եթե մենք լավ օրինակ չծառայենք: Հույսն ինքնին չի նշանակում, որ մեր երեխաները կմեծանան արդարակեցության մեջ: Մենք պետք է նրանց հետ ժամանակ անցկացնենք ընտանեկան երեկոյի և կարևոր ընտանեկան միջոցառումների ժամանակ: Մենք պետք է նրանց սովորեցնենք աղոթել: Մենք պետք է նրանց հետ կարդանք սուրբ գրությունները և նրանց ուսուցանենք ավետարանի կարևոր սկզբունքները: Միայն այդ ժամանակ է հնարավոր, որ մեր փայփայած հույսերը իրականանան:

Մենք երբեք չպետք է թույլ տանք, որ հույսին փոխարինի հուսահատությունը: Պողոս Առաքյալը գրել է, որ մենք «պետք է հույսով հերկենք» (Ա Կորնթացիս 9.10): Հույսը հարստացնում է մեր կյանքը և օգնում է մեզ սպասել ապագային: Դաշտ ենք հերկում, թե հերկում ենք կյանքում, անհրաժեշտ է, որ մենք՝ որպես Վերջին Օրերի Սրբեր հույս ունենանք:

Հիսուս Քրիստոսի ավետարանում հույսը Նրա հետևորդների ցանկությունն է՝ Փրկչի Քավության միջոցով հավերժական փրկություն ձեռք բերելու համար:

Սա է իրոք այն հույսը, որ մենք բոլորս պետք է ունենանք: Դա է մեզ առանձնացնում մնացած աշխարհից: Պետրոսը զգուշացրել է Քրիստոսի վաղ հետևորդներին. «Միշտ պատրաստ եղեք հեզությամբ և երկյուղածությամբ պատասխան տալու ամենին, որ ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե» (Ա Պետրոս 3.15):

Քավության հանդեպ մեր հույսը արտոնում է մեզ հավերժական հեռանկարով: Նման հեռանկարը թույլ է տալիս մեզ նայել այստեղից այն կողմ և այսուհետ՝ դեպի հավերժությունների խոստում: Մենք չպետք է թակարդվենք հասարակության անկայուն ակնկալիքների նեղ սահմանազծում: Մենք ազատ ենք սպասելու սելեստիալ փառքին՝ կնքված մեր ընտանիքի և սիրելիների հետ:

Ավետարանում հույսը գրեթե միշտ կապվում է հավատքի և գթասրտության հետ: Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը ուսուցանել է. «Հույսը եռոտանի աթոռի մեկ ոտքն է՝ հավատի և գթասրտության հետ միասին: Այդ երեքը կանոնավորում են մեր կյանքը՝ անկախ երբեմն մեզ հանդիպող կոշտ կամ անհարթ մակերևույթներից» («Հույսի անսահման զորությունը», *Լիահոնա,* նոյ. 2008, 21):

Մորմոնի Գրքի վերջին գլխում Մորոնին գրեց.

«Ուստի, պետք է լինի հավատք. և եթե պիտի լինի հավատք, պիտի լինի նաև հույս. և եթե պիտի լինի հույս, պիտի լինի նաև գթություն:

Եվ եթե դուք չունենաք գթություն, դուք ոչ մի կերպ չեք կարող փրկվել Աստծո արքայությունում. ոչ էլ կարող եք դուք փրկվել Աստծո արքայությունում, եթե դուք չունենաք հավատք. ոչ էլ կարող եք, եթե չունենաք հույս» (Մորոնի 10.20–21):

Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «*Հավատքն* արմատացած է Հիսուս Քրիստոսում: *Հույսը* կենտրոնանում է Քավության մեջ: *Գթությունը* դրսևորվում է «Քրիստոսի մաքուր սիրո» մեջ: Այս երեք հատկանիշները մալուխի լարերի պես միահյուսված են, և միշտ չէ, որ հնարավոր է դրանք ճշգրտորեն տարբերակել: Միասին դրանք դառնում են դեպի սելեստիալ արքայություն տանող մեր պարանը» (“A More Excellent Hope,” *Ensign,* Feb. 1997, 61):

Երբ Նեփին մարգարեացավ Հիսուս Քրիստոսի մասին իր հիշատակարանի վերջում, նա գրեց. «Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ՝ ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ» (2 Նեփի 31.20):

Այս «հույսի կատարյալ պայծառությունը», որի մասին Նեփին խոսում է, հույսն է Քավության հանդեպ՝ հավերժական փրկության, որը հնարավոր դարձավ մեր Փրկչի զոհաբերությամբ: Դարեր շարունակ այս հույսը առաջնորդել է տղամարդկանց և կանանց՝ կատարելու հրաշալի գործեր: Հնում Առաքյալները շրջում էին երկրով և վկայում Նրա մասին և, ի վերջո, իրենց կյանքը զոհեցին Նրա ծառայությունը կատարելիս:

Այս տնտեսության մեջ, Եկեղեցու բազմաթիվ վաղ անդամներ թողեցին իրենց տները, նրանք հույսով ու հավատով լի սրտով ճանապարհ ընկան դեպի արևմուտք՝ դեպի Սոլթ Լեյքի Հովիտ, հատելով Մեծ տափաստանները:

1851թ. Մերի Մյուրեյ Մուրդոքը միացավ Եկեղեցուն Շոտլանդիայում. նա այդ ժամանակ 67 տարեկան այրի էր: 1.2 մետր հասակով և մոտ 40 կիլոգրամ քաշով՝ այդ փոքրամարմին կինը ունեցել էր ութ զավակ, որոնցից վեցը ապրել էին մինչև հասուն տարիք: Նրա չափերի պատճառով երեխաներն ու թոռները նրան փաղաքշանքով ասում էին «Փոքր տատիկ»:

Նրա որդին՝ Ջոն Մուրդոքը, և նրա կինը միացել էին Եկեղեցուն և 1852թ. իրենց երկու փոքր երեխաների հետ մեկնել էին Յուտա: Չնայած իր ընտանիքի դժվարություններին, չորս տարի անց Ջոնը անհրաժեշտ գումար ուղարկեց մորը, որպեսզի նա կարողանար միանալ իր ընտանիքին՝ Սոլթ Լեյք Սիթիում: Իր չափերից շատ ավելի մեծ հույսով լցված, Մերին 73 տարեկան հասակում սկսեց դժվար ճամփորդությունը դեպի Յուտա:

Ատլանտյան օվկիանոսը բարեհաջող անցնելուց հետո, նա

միացավ տարաբախտ Մարտին ձեռնասայլակների ընկերությանը: Հուլիսի 28-ին այդ ձեռնասայլակների պիոներները սկսեցին դեպի արևմուտք ճամփորդությունը: Դուք քաջածանոթ եք նրանց կրած չարչարանքներին: Այդ ընկերության 576 անդամներից գրեթե մեկ քառորդը մահացավ Յուտա չհասած: Ավելի շատերը կմահանային, եթե Բրիգամ Յանգի կողմից փրկարարներ չուղարկվեին կառքերով և անհրաժեշտ պարագաներով, գտնելու հյուծված, ցրտահարված Սրբերին:

Մերի Մուրդոքը մահացավ 1856թ. հոկտեմբերի 2-ին Չիմնի Ռոքի մոտ, Նեբրասկա: Այստեղ նա չդիմացավ հյուծվածությանը, ցրտին և ճանապարհի դժվարություններին: Նրա հյուծված մարմինը տեղի տվեց ֆիզիկական դժվարություններին, որոնց դեմ պայքարում էին Սրբերը: Երբ նա պառկած էր կյանքից կառչելով, նրա մտքերը իր ընտանիքի հետ էին Յուտայում: Այդ հավատարիմ պիոներ կնոջ վերջին խոսքերն էին. «Ասեք Ջոնին, որ ես մահացա հայացքս հառած դեպի Սիոն» (տես Kenneth W. Merrell, *Scottish Shepherd: The Life and Times of John Murray Murdoch, Utah Pioneer* [2006], 34, 39, 54, 77, 94–97, 103, 112–13, 115.):

Մերի Մյուրեյ Մուրդոքը մարմնավորեց հույսը և հավատքը բազմաթիվ վաղ պիոներների, ովքեր անվեր ճամփորդություն կատարեցին դեպի արևմուտք: Այսօրվա հոգևոր ճամփորդությունները պահանջում են ոչ պակաս հույս կամ հավատք, քան վաղ պիոներների համար էր անհրաժեշտ: Մեր դժվարությունները միգուցե այլ են, սակայն մաքառումները նույնքան մեծ են:

Իմ աղոթքն է, որ մեր հույսը մեզ առաջնորդի դեպի մեր արդար երազանքների իրականացումը: Ես հատկապես աղոթում եմ, որ Քավության հանդեպ մեր հույսը զորացնի մեր հավատքն ու գթասրտությունը, և ապագայի հավերժական հեռանկար մեզ պարգևի: Թող որ մենք բոլորս ունենանք հույսի այս կատարյալ պայծառությունը, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Լարրի Մ. Գիբսոն
Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահության առաջին խորհրդական

Ահարոնյան Քահանայության սրբազան բանալիները

Տերը ցանկանում է, որ Ահարոնյան Քահանայության յուրաքանչյուր կրող բոլորին հրավիրի գալ Քրիստոսի մոտ՝ սկսելով իր ընտանիքից:

Իմ տղաներից մեկը, երբ 12 տարեկան էր, որոշեց ճազարներ պահել: Նա վանդակներ պատրաստեց և հարևանից գնեց մի արու և երկու էգ ճազար: Ես պատկերացում չունեի, թե ինչ է մեզ սպասվում: Կարճ ժամանակ անց մեր մառանը լցված էր ճազարների ձագերով: Այժմ, երբ տղաս մեծացել է, ես պետք է խոստովանեմ, որ զարմացած էի, թե ինչպես էին դրանք կառավարվում՝ միայն հարևանի շունն էր մեկ-մեկ մտնում մառան և քչացնում նրանց թիվը:

Բայց սիրտս հուզվում էր, երբ տեսնում էի որդուս իր եղբայրների հետ այդ փոքրիկներին հսկելիս և պաշտպանելիս: Իսկ հիմա, որպես ամուսիններ և հայրեր, նրանք արժանավոր քահանայություն կրողներ են, որոնք սիրում, ամրապնդում, հոգում և պաշտպանում են իրենց իսկ ընտանիքները:

Այժմ իմ սիրտը լցվում է, երբ ես տեսնում եմ ձեզ Ահարոնյան Քահանայության երիտասարդներ, որ հսկում, աջակցում և ամրապնդում եք ձեր շրջապատի մարդկանց, այդ թվում նաև ձեր ընտանիքի, ձեր քվորումի անդամներին և շատ ուրիշներին: Ես շա՜տ եմ սիրում ձեզ:

Վերջերս ես տեսա, թե ինչպես 13 տարեկան մի պատանի ի սպաս դրվեց որպես սարկավագների քվորումի նախագահ: Ձեռնադրելուց հետո եպիսկոպոսը սեղմեց նրա ձեռքը և նրան կոչեց «նախագահ», բացատրելով քվորումի անդամներին, որ նա նրան նախագահ անվանեց, որպեսզի շեշտի նրա կոչման սրբազան լինելը: «Սարկավագների քվորումի նախագահը ծխի միակ չորս մարդկանցից մեկն է, որոնք կրում են նախագահելու բանալիները: Այդ բանալիներով նա՝ իր խորհրդականների հետ, Տիրոջ ոգեշնչմամբ կառաջնորդի

քվորումը»: Եպիսկոպոսը հասկանում էր սրբազան բանալիններ կրող և գործադրող նախագահի կողմից ղեկավարվող նախագահությունների զորությունը (տես ՎևՈւ 124.142–43):

Ավելի ուշ ես հարցրեցի այդ երիտասարդին, թե արդյոք նա պատրաստ էր նախագահելու այդ մեծ քվորումի վրա: Նա պատասխանեց. «Ես մի փոքր լարված եմ: Ես չգիտեմ, թե սարկավագների նախագահն ինչ է անում: Կարո՞ղ եք ինձ հուշել»:

Ես ասացի, որ նա ունի հրաշալի եպիսկոպոսություն և խորհրդատուներ, որոնք կօգնեն, որ տղան քահանայության հաջողակ և զորավոր ղեկավար դառնա: Ես գիտեի, որ նրանք կհարգեն նախագահելու քահանայության սրբազան բանալիները, որ նա կրում էր:

Ապա ես նրան հարցրեցի. «Կարծում ես Տերը կանչել է քեզ այս կարևոր ծառայության և ուղղություն չի՞ տա»:

Նա մտածեց, ապա հարցրեց. «Որտե՞ղ կարող եմ ուղղություն ստանալ»:

Մի փոքր քննարկումից հետո նա հասկացավ, որ կարող է ուղղություն գտնել սուրբ գրությունների, մարգարեների խոսքերի և աղոթքի պատասխանների միջոցով: Մենք որոշեցինք մի սուրբ գրություն գտնել, որը կարող է սկիզբ լինել նրա նոր կոչման պատասխանատվությունները գտնելու համար:

Մենք բացեցինք Վարդապետություններ և Ուխտերի 107-րդ բաժինը, հատված 85: Այնտեղ նշվում էր, որ սարկավագների քվորումի նախագահը պետք է խորհրդի նստի իր քվորումի անդամների հետ և նրանց ուսուցանի իրենց պարտականությունները: Մենք նշեցինք, որ այս քվորումը ոչ միայն դասարան է, այլ նաև երիտասարդ տղաների խորհուրդ, և նրանք՝ նախագահի ղեկավարության ներքո պետք է ամրապնդեն և շենացնեն մեկմեկու: Ես վստահություն հայտնեցի, որ նա երևելի նախագահ կլինի, որը կապավինի Տիրոջ ոգեշնչմանը և կմեծացնի իր սրբազան կոչումը, մինչ նա կձգտի ուսուցանել իր ընկերակից սարկավագներին իրենց պարտականությունները:

Ապա ես հարցրեցի. «Հիմա, երբ

գիտես, որ պետք է սարկավագներին ուսուցանես իրենց պարտականությունները, ինքդ գիտե՞ս, թե որոնք են այդ պարտականությունները»:

Կրկին մենք բացեցինք սուրբ գրությունները և կարդացինք.

1. Սարկավագը նշանակված է հսկելու և տեղի սպասավոր լինելու Եկեղեցում (տես ՎևՈւ 84.111):

   Քանի որ ընտանիքը Եկեղեցու հիմնական միավորն է, ամենակարևոր միջավայրը, որտեղ Ահարոնյան Քահանայություն կրողը կարող է իրականացնել իր պարտականությունը, իր սեփական տունն է: Մինչ հայրը և մայրը ղեկավարում են ընտանիքը, նա կարող է քահանայության ծառայություն մատուցել նրանց: Նա հսկում է նաև իր եղբայրներին ու քույրերին, իր քվորումի երիտասարդներին և ծխի մյուս անդամներին:
2. Անհրաժեշտության դեպքում սարկավագն օգնում է ուսուցչին եկեղեցական նրա բոլոր պարտականություններում (տես ՎևՈւ 20.57):

   Մենք վճռեցինք, որ եթե սարկավագը պետք է օգնի ուսուցչին իր պարտականություններում, ուրեմն պետք է իմանա ուսուցչի պարտականությունները: Մենք նայեցինք և սուրբ գրություններում մենք արագ հայտնաբերեցինք ուսուցչի պաշտոնի տասնյակից ավելի պարտականություններ (Տես ՎևՈւ 20.53–59; 84.111): Ինչպիսի՜ զորավոր փորձառություն կլինի երիտասարդ տղայի համար՝ և նրանց հայրերի, խորհրդատուների և մեր բոլորի համար, անել ճիշտ այն, ինչ արեց այս երիտասարդը՝ բացել սուրբ գրությունները և մեզ համար հայտնաբերել, թե որոնք են մեր պարտականությունները: Ես ենթադրում եմ, շատերս կզարմանանք, և կոգեշնչվենք, մեր գտածով: «Պարտականություն Աստծո հանդեպ» գրքույկն Ահարոնյան Քահանայության պարտականությունների օգտակար ամփոփում է և հոգևոր զարգացման լավ աղբյուր է: Ես ձեզ հորդորում եմ հետևողականորեն օգտագործել այն:
3. Սարկավագներն ու ուսուցիչները պետք է նաև «զգուշացնեն, մեկնաբանեն, հորդորեն և ուսուցանեն և բոլորին հրավիրեն՝ գալ Քրիստոսի մոտ» (ՎևՈՒ 20.59; տես 20.42, 46, 68 հատվածները քահանայի համար):

   Շատ երիտասարդներ մտածում են, որ իրենց միսիայի նախապատրաստությունը սկսում է, երբ նրանք դառնում են 19 տարեկան և մտնում են Միսիոներների Պատրաստման Կենտրոն: Սուրբ գրություններից մենք սովորում ենք, որ այն սկսում է շատ ավելի վաղ հասակից: Տերը ցանկանում է, որ Ահարոնյան Քահանայության յուրաքանչյուր կրող բոլորին հրավիրի գալ Քրիստոսի մոտ՝ սկսելով իր ընտանիքից:

Հաջորդը, որպեսզի օգնեմ այս երիտասարդ նախագահին, որ հասկանա, որ նա և միմիայն նա է քվորումի նախագահող պաշտոնյան, ես առաջարկեցի, որ նա երեք անգամ կարդա առաջին պարտականությունը, որ նշված է Վարդապետություն և Ուխտերի 107.85 հատվածում: Նա կարդաց. «Նախագահել տասներկու սարկավագների վրա»: Ես հարցրեցի. «Ի՞նչ է Տերը քեզ ասում անձնապես որպես նախագահ քո պարտականության մասին»:

«Դե,– ասաց նա,– մինչ մենք խոսում էինք, մի քանի բան եկան միտքս: Կարծում եմ Երկնային Հայրը ցանկանում է, որ ես նախագահ լինեմ տասներկու սարկավագների վրա: Մենք այցելողներս հինգ հոգի ենք, որից մեկը միայն ժամանակ առ ժամանակ է այցելում: Ուրեմն, ինչպե՞ս դառնանք տասներկու հոգի:

Դե, ես այս սուրբ գրությունը նրա

նման երբեք չէի մեկնաբանել, սակայն նա ուներ բանալիներ, որոնք ես չունեի: 13-ամյա սարկավագն ինձ ուսուցանում էր այն հայտնության զորության մասին, որը գալիս է նախագահության սրբազան բանալիներ կրողին, անկախ նրանց բանականությանը, հասակին կամ տարիքին:

Ես պատասխանեցի. «Ես չգիտեմ: Դու ի՞նչ ես կարծում»:

Եվ նա ասաց. «Մենք պետք է մտածենք, թե ինչպես կարող ենք օգնել, որ նա միշտ այցելի: Ես գիտեմ ևս երկու հոգու, որոնք պետք է լինեն մեր քվորումում, սակայն նրանք չեն գալիս, և ես չեմ ճանաչում նրանց: Միգուցե ես կարող եմ ընկերանալ մեկի հետ և խնդրեմ իմ խորհրդականներին ընկերանալ մյուսի հետ: Եթե նրանք երկուսն էլ գան, մենք կդառնանք յոթը, բայց որտեղի՞ց գտնենք ևս հինգ հոգու»:

«Ես չգիտեմ,– պատասխանեցի ես,– սակայն եթե Երկնային Հայրը ցանկանում է, որ նրանք լինեն, ուրեմն Նա կիմանա, թե որտեղից գտնել նրանց»:

«Ուրեմն, մենք պետք է աղոթենք նախագահությունով և քվորումով, որպեսզի իմանանք, թե ինչ կարող ենք անել»: Ապա նա հարցրեց. «Արդյոք ես պատասխանատո՞ւ եմ մեր ծխի սարկավագի տարիքի բոլոր երիտասարդների համար, նույնիսկ եթե նրանք անդամ չեն»:

Հմայված, ես ասացի. «Տիրոջ աչքերում, արդյոք ձեր եպիսկոպոսը պատասխանատու է միայն ծխի անդամների՞ համար, թե ծխի սահմաններում բնակվող բոլոր մարդկանց համար»:

Այս երիտասարդ «տեղի սպասավորը» գլխի ընկավ: Նա հասկացավ յուրաքանչյուր սարկավագի, ուսուցչի և քահանայի դերը Եկեղեցին հսկելու և բոլորին հրավիրելու, որ գան Քրիստոսի մոտ:

Մտածելով Եկեղեցու մեր հրաշալի պատանիների ու աղջիկների մասին, մտքերս գնում են դեպի սուրբ գրությունները՝ այն, որը Մորոնին վկայակոչեց Ջոզեֆ Սմիթին, ասելով, որ այն դեռևս չի կատարվել, սակայն շուտով պիտի կատարվի» (Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.41) – «Եվ պիտի լինի, սրանից հետո, որ իմ հոգին պիտի թափեմ ամեն մարմնի վրա, և պիտի մարգարեանան ձեր տղերքն ու ձեր աղջկերքը . . . ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն» (Հովել 2.28):

Այն, ինչ ծագեց այս երիտասարդ նախագահի մտքում, մի տեսիլք էր, թե ինչպիսին է Երկնային Հայրը ցանկանում, որ նրա քվորումը լինի: Դա հայտնություն էր, որը նրան հարկավոր էր՝ իր քվորումի ակտիվ անդամներին ամրապնդելու, դժվարություններ ունեցողներին փրկելու և բոլորին հրավիրելու՝ Քրիստոսի մոտ գալու: Այդպես ոգեշնչվելով, նա ծրագրեր նախատեսեց՝ Տիրոջ կամքը կատարելու:

Տերն ուսուցանեց այս երիտասարդ նախագահին, որ *քահանայություն* նշանակում է ծառայության ձեռք մեկնել մարդկանց: Ինչպես մեր սիրելի մարգարեն՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն է բացատրել. «Քահանայությունը իրականում այնքան պարզն չէ, որքան ծառայելու պարտավորվածություն, արտոնություն՝ բարձրացնելու, և հնարավորություն՝ օրհնելու ուրիշների կյանքը» (“Our Sacred Priesthood Trust,” *Liahona* May 2006, 57):

Ծառայությունը քահանայության հենց հիմքն է՝ ուրիշներին ծառայելու Փրկչի ցույց տված օրինակի համաձայն: Ես վկայում եմ, որ մենք կրում ենք Նրա քահանայությունը, մենք Նրա հանձնարարության տակ ենք, և բոլոր քահանայություն կրողներին Նա ցույց է տվել քահանայության հավատարիմ ծառայության ուղին:

Ես հրավիրում եմ սարկավագների, ուսուցիչների և քահանաների յուրաքանչյուր քվորումի նախագահության հաճախակի խորհրդակցել, ուսումնասիրել և աղոթել իր քվորումի վերաբերյալ Տիրոջ կամքն իմանալու համար և ապա գնալ և գործ անել: Օգտագործեք «Պարտականություն Աստծո հանդեպ» գրքույկը, որը ձեզ կօգնի քվորումի ձեր անդամներին իրենց պարտականություններն ուսուցանելիս: Քվորումի բոլոր անդամներին ես հրավիրում եմ աջակցել իրենց քվորումների նախագահներին և ականջ դնել նրա խորհուրդներին, մինչ դուք սովորում և արդարությամբ կատարում եք քահանայության ձեր բոլոր պարտականությունները: Եվ ես հրավիրում եմ յուրաքանչյուրիս դիտել այս նշանակալի երիտասարդներին այնպես, ինչպես Տերն է նրանց դիտում՝ որպես Իր արքայությունն այժմ և հիմա կառուցելու և ամրապնդելու զորավոր գործիք:

Դո՛ւք, հրաշալի երիտասարդներ, կրում եք Ահարոնյան Քահանայությունը, որը վերականգնվել է Հովհաննես Մկրտչի կողմից Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Հարմոնիի մոտ՝ Պենսիլվանիայում: Ձեր քահանայությունը կրում է սրբազան բանալիները, որոնք դուռ են բացում Երկնային Հոր բոլոր զավակների համար, որպեսզի նրանք գան Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի մոտ, և հետևեն Նրան: Դա հնարավոր է դառնում «ապաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության», հաղորդության շաբաթական արարողության. և «հրեշտակների սպասավորության» շնորհիվ (ՎևՈւ 13.1; Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.69): Դուք իրապես «սպասավորներ» եք, որոնք պետք է քահանայության հավատարիմ, մաքուր և արժանավոր տղամարդիկ լինեն բոլոր ժամանակներում և բոլոր տեղերում:

Ինչո՞ւ: Լսեք յուրաքանչյուրիդ ուղղված մեր սիրելի Առաջին Նախագահության խոսքերը.

«Դուք Ահարոնյան Քահանայության ծեսերը կատարելու իշխանությունն ունեք: . . . Դուք մեծապես կօրհնեք ձեր շուրջը գտնվողների կյանքը: . . .

Երկնային Հայրը մեծապես վստահում և հավատում է ձեզ և կարևոր առաքելություն ունի ձեզ համար (*Կատարել իմ պարտականությունը Աստծո հանդեպ՝ Ահարոնյան Քահանայություն կրողների համար* [2010], 5):

Ես գիտեմ, որ այս խոսքերը ճշմարիտ են և աղոթում եմ, որ յուրաքանչյուրս ունենանք այդ նույն վկայությունը: Եվ ես ասում եմ այս բաները Նրա սուրբ անունով, ում քահանայության կրողներն ենք մենք, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ձեր ներուժը՝ ձեր արտոնությունը

Երբ կարդաք սուրբ գրությունները և լսեք մարգարեների խոսքերը ձեր ողջ սրտով և մտքով, Տերը ձեզ կհուշի ինչպես ապրել քահանայության ձեր արտոնություններին համաձայն:

Ժամանակին մի մարդ էր ապրում, որի կյանքի երազանքն էր շոգենավ նստել և ճամփորդել Միջերկրական ծովով: Նա երազում էր քայլել Հռոմի, Աթենքի և Կոնստանդնապոլիսի փողոցներով: Նա խնայում էր յուրաքանչյուր լումա, մինչև որ բավականաչափ գումար հավաքեց, իր ճամփորդության համար: Քանի որ գումարը սահմանափակ էր, նա լրացուցիչ մի ճամպրուկ վերցրեց, որը լցված էր լոբու պահածոներով, չոր թխվածքաբլիթների տուփերով և փոշի լիմոնադների տոպրակներով, և ողջ ճանապարհին նա դրանցով էր սնվում:

Նա հաճույքով կմասնակցեր նավի վրա առաջարկվող միջոցառումներին՝ կօգտվեր մարզասրահից, փոքր գոլֆի խաղից և լողավազանում լողալուց: Նա նախանձով էր նայում նրանց, ովքեր այցելում էին կինոֆիլմեր, զվարճալի ծրագրեր և մշակութային ներկայացումներ դիտելու: Եվ, օ՜, որքան կցանկանար նա օգտվել նավում մատուցվող հրաշալի ուտելիքից. յուրաքանչյուր ճաշ խնջույքի նման ճոխ էր: Սակայն այդ մարդն այնքան քիչ գումար էր ուզում ծախսել, որ չէր մասնակցում դրանցից ոչ մեկին: Նա կարողացավ տեսնել իր բաղձանքի քաղաքները, սակայն ճամփորդության մեծ մասն անցկացրեց իր նավախցիկում և սնվեց իր համեստ սննդով:

Նավարկության վերջին օրը նավակազմի անդամներից մեկը նրան հարցրեց, թե հրաժեշտի որ երեկոյին նա կցանկանար մասնակցել: Հենց այդ ժամանակ էր, որ այդ մարդը հասկացավ, որ ոչ միայն հրաժեշտի երեկոյին մասնակցելն էր անվճար եղել, այլ նավի վրա գրեթե ամեն բան՝ ուտելիքը, զվարճալիքները, բոլոր միջոցառումները,– բոլորն ընդգրկված են եղել տոմսի արժեքի մեջ: Շատ ուշ, բայց մարդը հասկացավ, որ նա ապրել էր իր արտոնություններից շատ ցածր մակարդակով:

Առակս ինչ է ուսուցանում. Արդյոք մենք, որպես քահանայության կրողներ, նո՞ւյնպես չենք ապրում այն սրբազան զորության, պարգևի և օրհնությունների մեր արտոնություններից ցածր, որոնց հնարավորություններն ու իրավունքները մենք ունենք՝ որպես Աստծո քահանայություն կրողներ:

Քահանայության փառքն ու վեհությունը

Բոլորս գիտենք, որ քահանայությունը ոչ թե անուն է կամ կոչում, այլ շատ ավելին է: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Քահանայությունը հավիտենական սկզբունք է և գոյատևել է Աստծո հետ հավերժությունից . . . հավերժություն, առանց օրերի սկզբի կամ տարիների վերջի»:[1] Այն կրում է նույնիսկ «Աստծո գիտության բանալիները»:[2] Փաստորեն, քահանայության միջոցով է «աստվածայնության զորությունը բացահայտվում»:[3]

Քահանայության օրհնություններն անցնում են մեր հասկացողության սահմաններից: Հավատարիմ Մելքիսեդեկյան քահանայություն կրողները կարող են «դառնալ . . . ընտրյալներն Աստծո»:[4] Նրանք «Հոգով սրբագործվում են՝ ի նորացումն իրենց մարմինների»[5], և վերջիվերջո, կարող են ստանալ «այն ամենն, ինչ Հայրը ունի»:[6] Դա կարող է դժվար լինի ըմբռնել, սակայն գեղեցիկ է, և ես վկայում եմ, որ այն ճշմարիտ է:

Այն փաստը, որ Երկնային Հայրն այս զորությունն ու պատասխանատվությունը վստահել է մարդուն, մեր հանդեպ Նրա մեծ սիրո վկայությունն է և որպես Աստծո որդիներ, ապագայի մեր ունեցած ներուժի նախանշանն է:

Այդուհանդերձ, շատ հաճախ, մեր գործերը ցույց են տալիս, որ մենք ապրում ենք մեր ներուժից ցածր: Երբ հարց տրվի քահանայության մասին, մեզանից շատերը կարող են արտասանել ճիշտ սահմանումը, սակայն մեր ամենօրյա կյանքում կարող է քիչ վկայություն լինել, որ մեր հասկացողությունն անցնում է սովորած տեքստի մակարդակից:

Եղբարներ, մենք կանգնած ենք ընտրության առաջ: Մենք կարող ենք կա՛մ բավարարվել նվազեցված փորձառությամբ՝ որպես քահանայություն կրողներ, և ապրել մեր արտոնություններից ցածր փորձառություններով, կա՛մ կարող ենք

առատորեն ճաշակել քահանայության համընդհանուր օրհնությունների հոգևոր փորձառությունից:

Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ապրենք մեր ներուժի համեմատ

Սուրբ գրություններում գրված և գերագույն համաժողովներին հնչող «նմանեցնենք մեզ»[7] արտահայտությունները ոչ միայն կարդալու կամ լսելու համար են:[8] Շատ հաճախ մենք գալիս ենք ժողովների և գլխով համաձայնություն ենք տալիս. մենք կարող ենք անգամ գիտակից ժպտալ և համաձայնվել: Մենք գրի ենք առնում որոշ կետեր և կարող է ասենք ինքներս մեզ. «Սա մի բան է, որ ես կանեմ»: Բայց լսելու, մեր հեռախոսում հուշում գրելու և իրական գործողության միջև ինչ-որ մի տեղ մեր «գործելու» անջատիչի սլաքը փոխվում է «ապագա» դիրքի վրա: Եղբայրնե՛ր, եկեք համոզվենք, որ «գործելու» մեր անջատիչը «ներկա» դիրքի վրա է:

Երբ կարդաք սուրբ գրությունները և լսեք մարգարեների խոսքերը ձեր ողջ սրտով և մտքով, Տերը ձեզ կհուշի ինչպես ապրել քահանայության ձեր արտոնություններին համաձայն: Թույլ մի տվեք, որ մի օր անցնի և դուք չանեք այն, ինչ հուշում է Հոգին:

Առաջինը՝ կարդացեք օգտագործողի ուղեցույցը

Եթե դուք ունենայիք աշխարհի ամենազարգացած և թանկ համակարգիչը, արդյոք դուք կօգտագործեի՞ք այն միայն որպես գրասեղանի զարդարանք: Համակարգիչը կարող է տպավորիչ տեսք ունենալ: Այն կարող է տարբեր տեսակի ներուժ ունենալ: Սակայն դուք կարող եք օգտագործել նրա ողջ ներուժը միայն այն դեպքում, երբ ուսումնասիրեք օգտագործողի ուղեցույցը, սովորեք ծրագրերի ղեկավարումը և միացնեք էներգիան:

Աստծո սուրբ քահանայությունը նույնպես ունի օգտագործողի ուղեցույց: Եկեք պարտավորություն վերցնենք ավելի շատ նպատակաուղղված և ավելի կենտրոնացած կարդալու սուրբ գրությունները և ձեռնարկները: Եկեք սկսենք կրկին անգամ կարդալով

Վարդապետություն և Ուխտեր 20, 84, 107 և 121 բաժինները: Որքան ավելի շատ ուսումնասիրենք քահանայության նպատակի, ներուժի և գործնական օգտագործման մասին, այնքան մենք ավելի շատ կզարմանանք դրա զորությամբ և Հոգին մեզ կուսուցանի ինչպես հասանելի դարձնել և օգտագործել այդ ուժը, որպեսզի օրհնենք մեր ընտանիքները, մեր համայնքները և Եկեղեցին:

Որպես մարդիկ՝ մենք իրավացիորեն մեծ առաջնահերթություն ենք տալիս աշխարհիկ ուսուցմանը և մասնագիտական զարգացմանը: Մենք ցանկանում ենք և մենք պետք է բարձրացնենք մեր գիտական աստիճանը և մասնագիտական վարպետությունը: Ես ձեզ գովաբանում եմ ջանասիրաբար կրթության ձգտելու և ձեր բնագավառում մասնագետներ դառնալու համար: Եվ հրավիրում եմ ձեզ նաև մասնագետներ դառնալ ավետարանի վարդապետությունների մեջ, հատկապես, քահանայության վարդապետության մեջ:

Մենք ապրում ենք մի ժամանակ, երբ սուրբ գրությունները և ժամանակակից մարգարեների խոսքերն ավելի հասանելի են, քան աշխարհի պատմության որևէ ժամանակաշրջանում: Ինչևէ, և դա մեր արտոնությունն է, պարտականությունը և պատասխանատվությունը՝ հասու լինել և կառչած մնալ նրանց ուսմունքներից: Քահանայության վարդապետության սկզբունքներն ու վարդապետությունները վեհ են և երկնային: Որքան ավելի շատ ուսումնասիրենք վարդապետությունն ու ներուժը և կիրառենք քահանայության գործնական նպատակը, այնքան մեր հոգին ավելի շատ կընդարձակվի, մեր հասկացողությունը կմեծանա և մենք կտեսնենք, թե Տերն ինչ ունի մեզ համար պահված:

Երկրորդը՝ փնտրեք Հոգու հայտնությունները

Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի մասին հաստատուն վկայությունը ավելին է պահանջում, քան գիտելիքը՝ այն պահանջում է անձնական հայտնություն, որը հաստատվում է ավետարանի սկզբունքների ազնիվ և նվիրված

Բուխարեստ, Ռումինիա

կիրառումով: Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է, որ քահանայությունը «անցուղի է, որի միջոցով Ամենազորը սկսեց հայտնել Իր փառքն այս երկրի ստեղծման սկզբին, և որի միջոցով նա շարունակում է իրեն հայտնի դարձնել մարդկանց զավակներին, մինչև ներկա ժամանակը»:[9]

Եթե մենք չենք փորձում օգտագործել հայտնության այս անցուղին, մենք ապրում ենք քահանայության մեր արտոնությունից ցածր: Օրինակ՝ ոմանք հավատում են, բայց չգիտեն, որ հավատում են: Նրանք երկար ժամանակ զանազան պատասխաններ են ստանում մեղմ, բարակ ձայնի միջոցով, սակայն քանի որ այդ ոգեշնչումը շատ չնչին և աննշան է թվում, նրանք դա չեն ընդունում այնպիսին, ինչպիսին իրականում կա: Արդյունքում, նրանք թույլ են տալիս, որ կասկածը նրանց չթողնի գործադրել իրենց ներուժը որպես քահանայություն կրողներ:

Հայտնությունն ու վկայությունը միշտ չեն գալիս ճնշող ուժով: Շատերի համար վկայությունը գալիս է դանդաղ՝ փոքր բաժիններով: Երբեմն այն գալիս է աստիճանաբար, այնքան որ դժվար է հիշել այն ճշգրիտ պահը, թե երբ ենք իմացել, թե ավետարանը ճշմարիտ է: Տերը մեզ տալիս է «տող առ տող, ցուցում առ ցուցում՝ մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ»:[10]

մեծանում է: Մենք սկսում ենք լույսի փոքր չափով, անգամ եթե դա հավատալու մի փոքր ցանկությունն է: Աստիճանաբար, «լույսը հարում է լույսին»[11] և «նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում»[12], երբ «ժամանակին մենք ստանում ենք նրա լիությունից»:[13]

Մտածե՛ք, թե ինչ փառահեղ բան է, երբ մեր հասկացողության աչքերը բացվում են, և անցնելով մեր երկրային սահմանափակումներից, մենք լույս ու գիտելիք ենք ստանում երկնային աղբյուրներից: Որպես քահանայություն կրողներ՝ մեր արտոնությունն ու հնարավորությունն է՝ անձնական հայտնություն փնտրել և սովորել՝ ինչպես կարող ենք Սուրբ Հոգու հաստատուն վկայության միջոցով, պարզել ճշմարտությունը մեզ համար:

Եկեք ջանասիրաբար փնտրենք անձնական ոգեշնչման լույսը: Եկեք աղաչենք, որ Տերն օժտի մեր միտքն ու հոգին հավատքի կայծով, որը մեզ հնարավորություն կտա ստանալ և ճանաչել Սուրբ Հոգու աստվածային սպասավորությունը մեր առանձնահատուկ կյանքի իրավիճակների և մեր փորձությունների և քահանայության պարտականությունների համար:

Երրորդը՝ ուրախություն գտեք քահանայության ծառայության մեջ

Որպես ավիառուղիների օդաչու, իմ կարիերայի ժամանակ,ես հնարավորություն եմ ունեցել լինելու ստուգումների և հրահանգումների ղեկավար: Այդ աշխատանքի մի մասը փորձառու օդաչուներին ստուգելն էր, հավաստիանալու համար, որ նրանք ունեին անհրաժեշտ գիտելիք ու հմտություն՝ անվտանգ և ունակ ձևով ղեկավարելու վեհաշուք մեծ օդանավերը:

Ես հայտնաբերում էի, որ կային օդաչուներ, որոնք շատ տարիներ արհեստավարժ թռչելուց հետո անգամ, չէին կորցրել մթնոլորտը բարձրանալու հուզմունքը, «կտրվելով երկրակեղևի կապերից, խնդաբեր արծաթապատ թևերով ճախրելով երկնքում»:[14] Նրանք սիրում էին վազող օդի հնչյունը, հզոր շարժիչների մռնչյունը, զգացումը, որ «մենակ են քամու առաջ և մութ երկնքի և աստղերի առաջ»:[15] Նրանց խանդավառությունը վարակիչ էր:

Կային նաև ոմանք, ովքեր կարծես պարզապես գնում էին ընթացքի հետ: Նրանք սովորել էին օդանավերի համակարգերը և կառավարումը, սակայն ինչ-որ մի տեղ՝ ճանապարհին, նրանք կորցրել էին ուրախությունը թռչելու «այնտեղ, ուր արտույտը կամ անգամ արծիվը չի թռչել»:[16] Օվկիանոսներ ու մայրցամաքներ անցնելիս նրանք կորցրել էին վառ արևածագով և Աստծո ստեղծագործություններով զմայլվելու իրենց զգացումը: Եթե նրանք համապատասխանում էին պաշտոնական պահանջներին, ես նրանց երաշխավորում էի, սակայն միևնույն ժամանակ ցավում էի նրանց համար:

Դուք կարող եք ձեզ հարցնել, թե արդյոք դուք էլ եք պարզապես գնում ընթացքի հետ՝ որպես քահանայություն կրողներ, անելով ինչ պահանջվում է, բայց չվայելելով այն ուրախությունը, որը պիտի լիներ ձերը: Քահանայություն ունենալը մեզ առատ հնարավորություններ է տալիս զգալու այն ուրախությունը, որով կիսվում էր Ամմոնը. «Մի՞թե մենք մեծ պատճառ չունենք ցնծալու . . . մենք եղել ենք գործիքներ նրա

ձեռքում՝ այս մեծ ու զարմանալի գործն անելիս։

Հետևաբար, եկեք հրճվենք . . . այո, մենք կհրճվենք Տիրոջով»։[17]

Եղբայրներ, մեր կրոնը ուրախությա՞ն կրոն է։ Մենք լավագույնս օրհնված ենք՝ կրելու Աստծո քահանայությունը։ Սաղմոսների գրքում կարդում ենք. «Երանի այն ժողովրդին, որ գիտե փողերի ձայնը. ո՜վ Տեր, նրանք քո երեսի լույսով կգնան»։[18] Մենք կարող ենք վայելել այդ մեծ ցնծությունը, եթե միայն ձգտենք դրան։

Շատ հաճախ մենք մոռանում ենք վայելել երանությունը, որ գալիս է քահանայության ամենօրյա գործնական ծառայությունից։ Ժամանակ առ ժամանակ, հանձնարարությունները կարող են բեռ թվալ։ Եղբայրնե՛ր, եկեք չանցնենք կյանքի միջով հոգնած, մտահոգ և գանգատվելով։ Մենք ապրում ենք մեր արտոնություններից ցածր, երբ թույլ ենք տալիս, որ աշխարհի խարիսխները մեզ հեռու պահեն այն լիարժեք ուրախությունից, որ գալիս է քահանայության հավատարիմ և նվիրված, հատկապես, մեր տան պատերի ներսում կատարվող ծառայությունից։ Մենք ապրում ենք մեր արտոնություններից ցածր, երբ մոռանում ենք ճաշակել երջանկության, խաղաղության և ուրախության վայելքից, որ Աստված այդքան առատորեն տալիս է մեզ՝ քահանայության հավատարիմ ծառաներիս։

Եթե պատանին, որը կանուխ գալիս է եկեղեցի, որպեսզի օգնի պատրաստելու հաղորդությունը, կարծես ավելի շուտ նեղություն է զգում, քան օրհնություն, ապա ես հրավիրում եմ նրան մտածել, թե ինչ նշանակություն կարող է ունենալ այս արարողությունը ծխի մի անդամի համար, որը դժվար շաբաթ է ունեցել։ Եղբայրներ, եթե ձեր տնային ուսուցումը արդյունավետ չի թվում ձեզ, ես ձեզ հրավիրում եմ հավատքի աչքով տեսնել, թե ինչ կարևորություն ունի Տիրոջ ծառայի այցելությունը մի ընտանիք, որը բազմաթիվ աննկատելի խնդիրներ ունի։ Երբ դուք ըմբռնեք ձեր քահանայության ծառայության աստվածային ներուժը, Աստծո Հոգին կլցնի ձեր սիրտը և ձեր միտքը.

նրա լույսը կշողա ձեր աչքերում և ձեր դեմքի վրա։

Որպես քահանայություն կրողներ՝ եկեք երբեք չկարծրանանք, որպեսզի կարողանանք հիանալ և զմայլվել նրանով, ինչ Տերը վստահել է մեզ։

Ամփոփում

Իմ թանկագին եղբայրներ, թող որ մենք ջանասիրաբար փնտրենք սովորել սուրբ քահանայության վարդապետությունը. թող որ մենք ամրապնդենք մեր վկայությունները՝ տող առ տող, ստանալով Հոգու հայտնությունները, և թող մենք իրական ուրախություն գտնենք քահանայության մեր ամենօրյա ծառայության մեջ։ Անելով այս բաները՝ որպես քահանայություն կրողներ, մենք կապրենք մեր ներուժի և արտոնությունների համեմատ և կկարողանանք ասել՝ «ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»։[19] Այս մասին ես վկայում եմ՝ որպես Տիրոջ առաքյալ, և թողնում եմ ձեզ իմ օրհնությունները Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 104։
2. Վարդապետություն և Ուխտեր 84.19։
3. Վարդապետություն և Ուխտեր 84.20։
4. Վարդապետություն և Ուխտեր 84.34։
5. Վարդապետություն և Ուխտեր 84.33։
6. Վարդապետություն և Ուխտեր 84.38։
7. 1 Նեփի 19.24։
8. Տես Հակոբոս 1.22։
9. *Teachings: Joseph Smith,* 108–9.
10. 2 Նեփի 28.30։
11. Վարդապետություն և Ուխտեր 88.40։
12. Վարդապետություն և Ուխտեր 50.24։
13. Վարդապետություն և Ուխտեր 93.19։
14. John Gillespie Magee Jr., “High Flight,” in Diane Ravitch, ed., *The American Reader: Words That Moved a Nation* (1990), 486.
15. Richard Bach, *Stranger to the Ground* (1963), 9.
16. Magee, “High Flight,” 486.
17. Ալմա 26.13, 15–16։
18. Սաղմոս 89.15։
19. Փիլիպեցիս 4.13։

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Սովորել Քահանայությունում

Եթե դուք ջանասեր լինեք և հնազանդ քահանայությունում, հոգևոր գիտելիքի գանձեր կթափվեն ձեզ վրա:

Ես երախտապարտ եմ, որ ձեզ հետ եմ Աստծո քահանայության այս ժողովին: Մենք այս երեկո քահանայության ծառայության տարբեր վայրերում և աստիճաններում ենք: Այնուամենայնիվ, մեր հանգամանքների ողջ բազմազանությամբ հանդերձ, մենք ունենք մի ընդհանուր կարիք: Դա քահանայության մեր պարտականությունները սովորելն է և դրանք կատարելու համար մեր զորությունը մեծացնելը:

Որպես սարկավագ՝ ես զգում էի դրա սուր կարիքը: Ես ապրում էի Միացյալ Նահանգների արևելյան ափին Նյու Ջերսիի Եկեղեցու մի փոքրիկ ճյուղում: Ես միակ սարկավագն էի ճյուղում, ոչ միայն միակը, որ հաճախում էր, այլ նաև միակը, որ գրանցված էր: Իմ ավագ եղբայրը միակ ուսուցիչն էր:

Երբ ես դեռ սարկավագ էի, իմ ընտանիքը տեղափոխվեց Յուտա: Այնտեղ ես գտա երեք հրաշալի բան, որոնք կային քահանայությունում՝ իմ աճն արագացնելու համար: Առաջինը՝ կար նախագահ, ով գիտեր, թե ինչպես խորհրդակցեր իր քվորումի անդամների հետ: Երկրորդը՝ մեծ հավատք կար Հիսուս Քրիստոսի հանդեպ, որը տանում էր դեպի մեծ սեր միմյանց հանդեպ: Եվ երրորդը՝ կար ընդունված համոզմունք, որ մեր համապարփակ քահանայության նպատակն էր՝ աշխատել մարդկանց փրկության համար:

Լավ հիմնադրված ծուխը չէր, որ տարբերություն առաջացրեց: Ինչ կար այդ ծխում, կարող էր լինել ամենուր՝ Եկեղեցու ցանկացած միավորում:

Այս երեք բաները կարող է այնպես դառնալ ձեր փորձառության մի մասը քահանայությունում, որ գուցե հազիվ նկատվեր: Ուրիշների համար դուք գուցեև չզգաք աճի անհրաժեշտություն, այսպիսով, այս օժանդակ միջոցները գուցե ձեզ ոչ անհրաժեշտ թվան: Ամեն դեպքում, ես աղոթում եմ, որ Հոգին օգնի ինձ դրանք հստակ և գրավիչ դարձնել ձեզ համար:

Քահանայությունում աճելու այդ երեք օժանդակ միջոցների մասին իմ խոսելու նպատակն է՝ խրախուսել ձեզ գնահատել և օգտագործել դրանք: Եթե դա անեք, ձեր ծառայությունը կփոխվի դեպի լավը: Եվ եթե այն մեծարվի, ձեր քահանայության ծառայությունն կօրհնի Երկնային Հոր զավակներին այնպես, որ դուք այժմ չեք կարող անգամ պատկերացնել, որ հնարավոր է:

Ես գտա դրանցից առաջինը, երբ ինձ ողջունեցին քահանաների քվորումում, որտեղ մեր նախագահը եպիսկոպոսն էր: Դա կարող է ձեզ թվալ փոքր, աննշան մի բան, բայց դա ինձ տվեց քահանայությունում ուժի զգացում, ինչն իմ ծառայությունը փոխեց մեկընդմիշտ: Դա սկսվեց այն ձևից, որով նա մեզ առաջնորդում էր:

Ինձ թվում էր, նա վերաբերվում էր երիտասարդ քահանաների կարծիքներին, կարծես թե, մենք աշխարհի ամենաիմաստուն մարդիկ էինք: Նա սպասում էր մինչև բոլորը, ովքեր կամենում էին խոսել, արտահայտվեին: Նա լսում էր: Եվ երբ նա որոշում էր, թե ինչ պետք է արվեր, ինձ թվում էր, Հոգին հաստատում էր որոշումները մեզ համար և նրա համար:

Այժմ ես հասկանում եմ, թե ինչ ի նկատի ունեն սուրբ գրությունները, երբ ասում են, որ նախագահը պետք է խորհրդի նստի իր քվորումի անդամների հետ:[1] Եվ տարիներ հետո, երբ ես եպիսկոպոս էի, իմ քահանաների քվորումի հետ, ինչպես նրանք, այնպես էլ ես, ուսուցանվեցինք նրանով, ինչ ես սովորել էի որպես երիտասարդ քահանա:

Քսան տարի հետո, որպես եպիսկոպոս՝ ես հնարավորություն ունեցա տեսնել խորհրդի արդյունավետությունը՝ ոչ թե միայն ժողովատանը, այլ նաև՝ լեռներում: Շաբաթ օրվա միջոցառման ժամանակ, մեր քվորումի անդամներից մեկը գիշերը կորել էր անտառում: Որքանով որ մենք գիտեինք, նա մենակ էր և առանց տաք հագուստների, ուտելիքի և ծածկի: Մենք նրան ապարդյուն որոնեցինք:

Հիշում եմ, որ մենք աղոթեցինք միասին՝ քահանաների քվորումը և ես, իսկ հետո խնդրեցինք իրար, որ յուրաքանչյուրս խոսեր: Ես ուշադիր լսում էի, և ինձ թվում էր, որ նրանք էլ էին լսում միմյանց: Մի փոքր անց, խաղաղության մի զգացում իջավ մեզ վրա: Ես զգացի, որ մեր քվորումի կորած անդամն ինչ որ տեղում էր՝ ապահով և չոր:

Ինձ համար պարզ դարձավ, թե

ինչ պետք է աներ քվորումը, և ինչ այն պետք է չաներ: Երբ մարդիկ, ովքեր գտան նրան, նկարագրեցին վայրն անտառում, ուր նա գնացել էր ապահովության համար, ես զգացի, որ ճանաչեցի այն: Բայց ինձ համար ավելի մեծ հրաշք էր տեսնելը, թե ինչպես քահանայության խորհրդի միասնական հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ հայտնություն բերեց քահանայության բանալիներ կրող մարդուն: Մենք բոլորս այդ օրն աճեցինք քահանայության զորության մեջ:

Երկրորդ բանալին դեպի գիտության աճը՝ միմյանց հանդեպ սեր ունենալն է, որը գալիս է մեծ հավատքից: Ես համոզված չեմ, թե որն է առաջինը, բայց երկուսն էլ, թվում է, միշտ առկա են, երբ քահանայությունում կա մեծ և արագ ուսումնառություն: Ջոզեֆ Սմիթը մեզ դա օրինակով է ուսուցանել:

Այս տնտեսության Եկեղեցու վաղ օրերին նա Աստծուց հրաման ստացավ՝ կառուցել ուժ քահանայությունում: Նա պետք է ստեղծեր դպրոցներ քահանայություն կրողների համար: Տերը պահանջ դրեց, որ լինի սեր միմյանց հանդեպ նրանց մեջ, ովքեր պետք է ուսուցանեին և ուսուցանվեին: Ահա Տիրոջ խոսքերը՝ քահանայության ուսուցման համար մի տեղ պատրաստելու վերաբերյալ, և թե ինչպիսին պետք է լինեին նրանք, ովքեր պետք է սովորեին այնտեղ.

«Կազմակերպվեք, . . . հաստատեք մի տուն, . . . ուսման տուն, . . . կարգ ու կանոնի տուն . . .

Ուսուցիչ նշանակեք ձեր մեջ, և թող բոլորը միանգամից խոսնակ չլինեն. Այլ տվյալ պահին թող մեկը խոսի, և թող բոլորը լսեն նրա ասածները, որ բոլորի խոսելուց հետո, բոլորը կարողանան միմյանցով շենանալ, և որ ամեն մարդ ունենա հավասար արտոնություն»:[2]

Տերը նկարագրում է այն, ինչ մենք արդեն տեսանք՝ քահանայության խորհրդի կամ դասարանի ուժը՝ Հոգու միջոցով հայտնություն բերելու համար: Հայտնությունը միակ ուղին է, որով մենք կարող ենք գալ իմացության, որ Հիսուսը Քրիստոսն է: Այդ մեծ հավատքը սանդուղքի առաջին աստիճանն է, որի վրա բարձրանում ենք, սովորելու համար ավետարանի սկզբունքները:

Վարդապետություն և Ուխտերի 88 բաժնի 123 և 124 հատվածներում Տերը շեշտում է միմյանց հանդեպ սեր ունենալու և միմյանց մեջ սխալներ չորոնելու մասին: Յուրաքանչյուրը ձեռք բերեց մուտք Տիրոջ մարգարեի կողմից հաստատված քահանայության դպրոց՝ ուխտ կապելով բարձրացված ձեռքերով լինելու «բարեկամ ու եղբայր . . . սիրո կապով»:[3]

Մենք չենք հետևում այդ կարգին այսօր, բայց որտեղ որ տեսել ենք նշանակալի գիտելիք քահանայությունում, այնտեղ առկա են սիրո այդ կապերը: Կրկին, ես տեսել եմ դա որպես ավետարանական ճշմարտություններ սովորելու պատճառ և հետևանք: Սերը հրավիրում է Սուրբ Հոգին՝ ներկա լինելու ճշմարտությունը հաստատելու համար: Եվ աստվածային ճշմարտություններ սովորելու ուրախությունը ստեղծում է սեր մարդկանց սրտերում, ովքեր կիսում են սովորելու փորձառությունը:

Ճիշտ է նաև հակառակը: Անհամաձայնությունն ու նախանձությունն արգելակում են մեզ ուսուցանելու Սուրբ Հոգու ունակությունը և լույս և ճշմարտություն ստանալու մեր ունակությունը: Եվ հիասթափության զգացումները, որոնք անխուսափելիորեն հետևում են, զցում են ավելի մեծ անհամաձայնության և սխալ գտնելու սերմեր նրանց մեջ, ովքեր սպասում են սովորելու փորձառության, որը տեղի չի ունենում:

Քահանայություն կրողները, ովքեր լավ են սովորում միասին, ինձ թվում է, միշտ մեծ խաղաղարարի մեծ ոգի ունեն իրենց մեջ: Դուք տեսնում եք այդ խաղաղասիրությունը քահանայության դասարաններում և խորհուրդներում: Դա մարդկանց ընդհանուր հիմք գտնելու հարցում օգնելու պարգևն է, մինչ ուրիշները միայն տարաձայնություններ են տեսնում: Դա խաղաղարարի պարգև է, որն օգնում է մարդկանց ուրիշի ասածը ընդունել որպես ներդրում, ոչ թե ուղղում:

Միաբանությունը քվորումներում և դասարաններում հնարավոր է, երբ առկա է Քրիստոսի բավական մաքուր սեր և խաղարար լինելու բավական ցանկություն: Դա պահանջում է համբերություն և խոնարհություն, բայց ես տեսել եմ, ինչպես է դա տեղի ունենում, նույնիսկ երբ դժվարին հարցեր ծագում և մարդիկ խորհուրդներում և դասարաններում միանգամայն տարբեր նախադրյալներ են ունենում:

Քահանայության քվորումներում որոշումներ ընդունելիս հնարավոր է բարձրանալ և հասնել մինչև քահանայություն կրողների համար Տիրոջ կողմից սահմանված բարձր չափանիշին: Դա հնարավոր է, երբ կա մեծ

հավատք, սեր, և հակառակության բացակայություն: Ահա Նրա հաստատմանն արժանանալու համար Տիրոջ պահանջը. «Եվ յուրաքանչյուր որոշում, որը կայացվում է այս քվորումներից որևէ մեկի կողմից, պետք է լինի միաբան ձայնով. Այսինքն՝ ամեն մի քվորումի յուրաքանչյուր անդամ պետք է համաձայն լինի նրա որոշումների հետ, որպեսզի նրանց որոշումները մեկը մյուսի հետ նույն զորությունը, կամ օրինականությունն ունենան»:[4]

Քահանայությունում սովորելու համար երրորդ օժանդակ միջոցը գալիս է ընդհանուր համոզմունքից այն նպատակի մասին, որի համար Տերն օրհնում և վստահում մեզ կրել և գործադրել Իր քահանայությունը: Դա աշխատանք է մարդկանց փրկության համար: Այս ընդունված համոզմունքը միաբանություն է բերում քվորումներում: Մենք կարող ենք սկսել սովորել այս մասին սուրբգրքյան պատմությունից, թե ինչպես մենք՝ հոգևոր որդիներս, նախքան ծնվելը նախապատրաստվեցինք քահանայություն կրելու այդ հազվադեպ պատվին:

Խոսելով նրանց մասին, ում այս կյանքում տրվել է քահանայության մեծ պատասխանատվություն, Տերն ասել է. «Նույնիսկ նախքան ծնվելը, ուրիշ շատերի հետ, նրանք ստացել էին իրենց առաջին դասերը հոգիների աշխարհում և պատրաստվել էին՝ առաջ գալու Տիրոջը հարմար ժամանակ, որպեսզի աշխատեին նրա այգում՝ մարդկանց հոգիների փրկության համար»:[5]

Քահանայությունում մենք կիսում ենք մարդկանց հոգիների համար աշխատելու սրբազան պարտականությունը: Մենք պետք է անենք ավելին, քան սովորելը, որ դա մեր պարտականությունն է: Դա պետք է այնքան խորապես մտնի մեր սրտերը, որպեսզի՝ ո՛չ կյանքի ծաղկման շրջանում մեզանից պահանջվող ջանքերը, ո՛չ էլ տարիքի հետ եկող փորձությունները, շեղեն մեզ այդ նպատակից:

Ոչ երկար ժամանակ առաջ ես այցելեցի մի քահանայապետի իր տանը: Նա այլևս չի կարողանում գալ մեր քվորումի ժողովներին: Նա մենակ է ապրում: Նրա գեղեցիկ կինը մահացավ և նրա երեխաները հեռու են ապրում իրենից: Ժամանակը և հիվանդությունը սահմանափակում են նրա ծառայելու կարողությունը: Նա դեռ բարձրացնում է ծանրություններ, որպեսզի կարողանա պահպանել մի ժամանակ ունեցած իր հզոր ուժը:

Երբ ես ներս մտա նրա տուն, նա կանգնեց, թողնելով իր հենաքայլիչը՝ ինձ ողջունելու համար: Նա հրավիրեց ինձ նստել իր կողքի աթոռին: Նա խոսեց քահանայությունում մեր երջանիկ ընկերակցության մասին:

Ապա մեծ ուժով նա ասաց ինձ. «Ինչո՞ւ եմ ես դեռ ապրում: Ինչո՞ւ եմ ես դեռ այստեղ: Ես չեմ կարողանում անել որևէ բան»:

Ես ասացի նրան, որ նա անում էր որոշ բան ինձ համար: Նա բարձրացնում էր ինձ իր հավատքով և իր սիրով: Նույնիսկ մեր կարճ հանդիպման ընթացքում, նա ստիպեց ինձ ցանկանալ ավելի լավը լինել: Ինչ որ նշանակալի բան անելու նրա վճռականության օրինակը ինձ ոգեշնչեց ավելի տքնաջան փորձել ծառայել ուրիշներին և Տիրոջը:

Սակայն նրա ձայնի տխուր երանգից և նրա աչքերի արտահայտությունից ես կարողացա զգալ, որ չպատասխանեցի նրա հարցերին: Նա, այնուամենայնիվ, զարմանում էր, թե ինչու էր Աստված թույլ տվել, որ նա ապրեր՝ ծառայելու ունակության այդպիսի սահմանափակումներով:

Իր սովորական շռայլ ձևով նա շնորհակալություն հայտնեց ինձ՝ գալու և իրեն տեսնելու համար: Երբ ես վեր կացա, որ գնամ, բուժքույրը, որը գալիս է մի քանի ժամով ամեն օր, ներս մտավ մյուս սենյակից: Մեր առանձնազրույցի ժամանակ քահանայապետը ինձ մի քիչ պատմել էր նրա մասին: Նա ասել էր, թե որքան հիանալի անձնավորություն էր այդ կինը: Նա ապրել էր իր կյանքի մեծ մասը Վերջին Օրերի Սրբերի մեջ, բայց դեռ անդամ չէր:

Բուժքույրն ուղեկցեց ինձ մինչև դուռը: Դեպի նրա կողմը շարժում անելով և ժպտալով, քահանայապետն ասաց. «Տեսնո՞ւմ ես, կարծես ոչինչ չեմ կարողանում անել: Ես փորձում էի նրան համոզել մկրտվել Եկեղեցում, բայց բան դուրս չեկավ»: Բուժքույրը ժպտաց նրան և ինձ՝ ի պատասխան: Ես դուրս քայլեցի և ուղղեցի քայլերս դեպի իմ տան կողմը, որը մոտակայքում էր:

Ես հասկացա այդ ժամանակ, որ իր հարցերի պատասխանները շատ վաղուց ցանված էին նրա սրտում: Քաջարի քահանայապետը փորձում էր կատարել իր պարտականությունը, որն ուսուցանվել էր նրան քահանայությունում եղած տասնամյակների ընթացքում:

Նա գիտեր, որ միակ ճանապարհը, որով երիտասարդ կինը կարող էր ունենալ փրկության օրհնությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով՝ մկրտությամբ ուխտ կապելն էր: Նա ուսուցանվել էր համաձայն ուխտերի՝ յուրաքանչյուր քվորումի, յուրաքանչյուր նախագահի կողմից՝ սկսած սարկավագից մինչև քահանայապետ:

Նա հիշում էր և զգում քահանայությունում իր սեփական երդումը և ուխտը: Նա դեռ պահում էր դրանք:

Նա վկա էր և միսիոներ Փրկչի համար, ուր որ էլ կյանքը նրան տաներ: Այն արդեն նրա սրտում էր: Նրա սրտի ցանկությունն էր, որ այդ երիտասարդ կնոջ սիրտը փոխվեր Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով՝ սրբազան ուխտեր պահելով:

Նրա ժամանակը քահանայության դպրոցում համեմատաբար կարճ կլինի՝ հավերժության հետ համեմատած: Բայց նույնիսկ այդ կարճ ժամանակահատվածում, նա յուրացրել էր հավերժական ուսումնական ծրագիրը: Նա իր հետ կտանի, ուր որ Տերը նրան կանչի, հավերժական արժեք ունեցող քահանայության դասերը:

Ոչ միայն դուք պետք է ձգտեք սովորել քահանայության դասերն այս կյանքում, այլ դուք պետք է լավատեսական լինեք նրա վերաբերյալ, ինչը հնարավոր է: Մեզանից մի քանիսը գուցե սահմանափակեն մեր մտքում սովորելու մեր հնարավորությունները, որոնք Տերը դնում է մեր առջև Իր ծառայության մեջ:

Մի երիտասարդ տղամարդ 1840-ականների սկզբին թողեց Ուելսի իր փոքրիկ գյուղը, լսեց Աստծո Առաքյալներին, և եկավ Աստծո թագավորությունը երկրի վրա: Նա Սրբերի հետ նավարկեց դեպի Ամերիկա և վարեց կառքը դեպի արևմուտք, անցնելով տափաստանները: Բրիգամ Յանգից հետո, նա հովիտ մտնող հաջորդ ընկերության հետ եկավ: Նրա քահանայության ծառայությունը կայանում էր ագարակի համար հող մաքրելու ու վարելու մեջ:

Նա վաճառեց ագարակը իր գնից շատ ավելի էժան, որպեսզի Տիրոջ համար գնար միսիայի անապատ վայրում, որն այսօր Նեվադան է, հոգ տանելու ոչխարներին: Նա այդտեղից կանչվեց մեկ այլ միսիայի՝ օվկիանոսից այն կողմ՝ նույն այն գյուղում, որը նա թողել էր իր աղքատության մեջ՝ Տիրոջը հետևելու համար:

Անցնելով այդ ամենի միջով, նա գտավ ուղի՝ սովորելու իր քահանայության եղբայրների հետ: Լինելով համարձակ միսիոներ, նա քայլեց Ուելսում նեղ կածանով դեպի մի մարդու ամառային կալվածքը, որը չորս անգամ Անգլիայի վարչապետն էր եղել, առաջարկելու համար նրան Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Այդ մեծ մարդը նրան ներս հրավիրեց առանձնատուն: Նա Էթոն քոլեջը և Օքսֆորդի համալսարանն ավարտած մարդ էր: Միսիոները խոսում էր նրա հետ մարդու ծագման, աշխարհի պատմության մեջ և նույնիսկ ազգերի ճակատագրում Հիսուս Քրիստոսի դերի մասին:

Իրենց քննարկման վերջում, տանտերը մերժեց մկրտվելու հրավերը: Բայց, երբ նրանք բաժանվում էին, աշխարհի մեծ կայսրություններից մեկի այդ առաջնորդը հարցրեց այդ խոնարհ միսիոներին. «Որտե՞ղ եք ստացել ձեր կրթությունը»: Նրա պատասխանն էր. «Աստծո քահանայությունում»:

Դուք գուցե երբեմն մտածեք, թե որքան ավելի լավ կդասավորվեր ձեր կյանքը, եթե միայն ընդունվեիք սովորելու մի լավ համալսարանում: Ես աղոթում եմ, որ դուք տեսնեք Աստծո սիրո մեծությունը ձեր հանդեպ և այն հնարավորությունը, որը Նա ձեզ ընձեռել է՝ Իր քահանայության դպրոցը մտնելը:

Եթե դուք ջանասեր լինեք և հնազանդ քահանայությունում, հոգևոր գիտելիքի գանձեր կթափվեն ձեզ վրա: Դուք կաճեք չարին դիմադրելու ձեր զորության մեջ՝ ճշմարտությունը հայտարարելիս, ինչը տանում է դեպի փրկություն: Դուք կգտնեք ուրախություն նրանց երջանկության մեջ, ում դուք առաջնորդում եք դեպի փրկություն: Ձեր ընտանիքը կդառնա ուսման վայր:

Ես վկայում եմ, որ քահանայության բանալիները վերականգնվել են: Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնը կրում և գործադրում է այդ բանալիները: Աստված ապրում է և ձեզ կատարելապես ճանաչում է: Հիսուս Քրիստոսն ապրում է: Դուք ընտրվել եք՝ պատիվ ունենալու կրել սուրբ քահանայությունը: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.87:
2. Վարդապետություն և Ուխտեր 88.119, 122:
3. Վարդապետություն և Ուխտեր 88.133:
4. Վարդապետություն և Ուխտեր 107.27:
5. Վարդապետություն և Ուխտեր 138.56:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Քահանայության զորություն

Թող որ մենք լինենք մեր քահանայության աստվածային զորության արժանի ընդունողները: Թող որ այն օրհնի մեր կյանքը, և մենք օգտագործենք այն՝ օրհնելու համար մյուսների կյանքը:

Ես երկար աղոթել և ուսումնասիրել եմ այն մասին, ինչ կարող էի ասել այս երեկո: Ես հուսով եմ, որ չեմ վիրավորի որևէ մեկին; Ես մտածում էի. «Ի՞նչ խնդիրներ ունենք մենք: Ի՞նչ եմ ես անում ամեն օր, ինչը ստիպում է ինձ ուշ երեկոյան լաց լինել»: Մտածեցի, որ այս երեկո կարող էի փորձել խոսել այդ խնդիրներից մի քանիսի մասին: Դրանցից որոշները կվերաբերեն երիտասարդ տղամարդկանց: Մյուսները՝ միջին տարիքի մարդկանց: Նաև մի քանիսը կարող են նաև վերաբերել միջին տարիքից մի փոքր մեծերին: Մենք չենք խոսում տարեց մարդկանց մասին:

Եվ պարզապես ցանկանում եմ սկսել, հայտարարելով, որ հաճելի է լինել միասին այս երեկո: Մենք լսեցինք Աստծո քահանայության վերաբերյալ հրաշալի և ժամանակին տրված ելույթներ: Ձեզ հետ միասին ես էլ վեհացա և ոգեշնչվեցի:

Այս երեկո ես ուզում եմ խոսել այն հարցերի մասին, որոնք վերջերս հիմնականում զբաղեցրել են իմ միտքը, և զգացել եմ, որ պետք է կիսվեմ դրանցով ձեզ հետ: Այս կամ այն կերպ, այդ ամենը վերաբերում է անձնական արժանավորությանը, որն անհրաժեշտ է քահանայության սուրբ զորությունը ստանալու և գործադրելու համար, քահանայություն, որ մենք կրում ենք:

Թույլ տվեք սկսել, ձեզ համար կարդալով Վարդապետություն և Ուխտեր 121 բաժնից.

«Քահանայության իրավունքներն անբաժանելիորեն կապված են երկնքի զորությունների հետ, և . . . երկնքի զորությունները չեն կարող կառավարվել, ոչ էլ գործածվել, բացի միայն արդարության սկզբունքների հիման վրա:

Որ դրանք կարող են շնորհվել մեզ, ճշմարիտ է. բայց երբ մենք ձգտում ենք քողարկել մեր մեղքերը կամ գոհացնել մեր հպարտությունը, մեր ունայն փառասիրությունը կամ իշխանություն, տիրապետություն կամ էլ հարկադրանք ենք գործադրում մարդկանց զավակների հոգիների վրա, անիրավության որևէ աստիճանով, ահա, երկինքները ետ են քաշվում. Տիրոջ Հոգին տրտմում է. և երբ այն ետ է քաշվում, Ամե՛ն այդ մարդու քահանայությանը կամ իշխանությանը»:[1]

Եղբայրներ, դա Տիրոջ հեղինակավոր խոսքն է Իր աստվածային իշխանության վերաբերյալ: Մենք չենք կարող կասկածանքով վերաբերվել մեր՝ Աստծո քահանայությունը կրողներիս վրա դրված այս պարտականությանը:

Մենք երկիր ենք եկել անհանգիստ ժամանակներում: Զանգվածների բարոյական կողմնացույցը աստիճանաբար շեղվել է դեպի «կարելի է ամեն ինչ անել» դիրքորոշումը:

Ես բավականին երկար եմ ապրել՝ հասարակության բարոյական չափանիշների կերպարանափոխության ականատեսը լինելով: Եթե մի ժամանակ Եկեղեցու և հասարակության չափանիշները հիմնականում համընկնում էին, այժմ մեծ անդունդ կա մեր մեջ, որը գնալով ավելի է խորանում:

Շատ կինոնկարներ և հեռուստատեսային շոուներ այնպիսի վարքագիծ են ներկայացնում, որն ուղղակիորեն հակասում է Աստծո օրենքներին: Մի ենթարկվեք շատ հաճախ դրանցում առկա երկակի ակնարկներին և լիակատար լկտիությանը: Նույնը կարելի է ասել այսօրվա երգերից շատերի խոսքերի մասին: Մեր շուրջը գերիշխող անպարկեշտությունը երբեք չի հանդուրժվել՝ ոչ այսօր, ոչ վաղ անցյալում: Դժբախտաբար, ավելի ու ավելի հաճախ է Տիրոջ անունը անտեղի հիշատակվում: Միասին հիշենք Սինայ սարի վրա Տիրոջ կողմից Մովսեսին հայտնած տաս պատվիրաններից մեկը, որն ասում է. «Քո Եհովա Աստծո անունը դատարկ տեղը չհիշես, որովհետև Եհովան՝ իր անունը դատարկ տեղը հիշողին անպատիժ չի թողիլ»:[2] Ես ցավում եմ, որ մեզանից ոմանք օգտագործում են անպարկեշտ լեզու, և ես խնդրում եմ ձեզ մի օգտագործեք դա: Ես աղերսում եմ՝ մի ասեք կամ մի արեք այնպիսի բան, որով դուք չեք կարող հպարտանալ:

Ամեն կերպ հեռու մնացեք պոռնոգրաֆիայից: Երբեք թույլ մի տվեք ձեզ այն դիտել: Ապացուցվել է, որ այն հակվածություն է առաջացնում և անչափ դժվար է լինում հաղթահարել: Խուսափեք ոգելից խմիչքից

և ծխախոտից, ցանկացած տեսակի թմրանյութերից, որոնք նույնպես հակումներ են, և որոնք դուք դժվարությամբ կհաղթահարեք:

Ի՞նչը կպաշտպանի ձեզ ձեր շուրջը առկա մեղքից և չարից: Ես հաստատում եմ, որ Մեր Փրկչի և Նրա ավետարանի մասին ամուր վկայությունը կօգնի, ուղղորդելով ձեզ դեպի ապահովություն: Եթե դուք չեք կարդացել Մորմոնի Գիրքը, կարդացեք այն: Ես չեմ խնդրի ձեզ բարձրացնել ձեռքերը: Եթե կարդաք այն աղոթքով և ճշմարտությունն իմանալու անկեղծ փափագով, Սուրբ Հոգին կհայտնի ձեզ դրա ճշմարտացիությունը: Եթե այն ճշմարիտ է, իսկ դա այդպես է, ուրեմն Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, որը տեսավ Հայր Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Եկեղեցին ճշմարիտ է: Եթե դուք այս ամենի մասին վկայություն դեռ չունեք, արեք այն, ինչն անհրաժեշտ է՝ վկայություն ձեռք բերելու համար: Կարևոր է, որ դուք ձեր վկայությունը ունենաք, քանզի ուրիշների վկայությունը ձեզ շատ քիչ կօգնի: Վկայություն ձեռք բերելով, դուք պետք է այն կենդանի և վառ պահեք, հնազանդվելով Աստծո պատվիրաններին, մշտապես աղոթելով և սուրբ գրությունները ուսումնասիրելով: Հաճախեք Եկեղեցի: Երիտասարդ տղաներ, հաճախեք սեմինարիա կամ ինստիտուտ, եթե դա մատչելի է ձեզ:

Եթե ձեր կյանքում ինչ-որ բան այնպես չէ, դուք դա ուղղելու հնարավորություն ունեք: Դադարեցրեք ամեն անօրինություն: Զրուցեք ձեր եպիսկոպոսի հետ: Ինչ խնդիր էլ որ լինի, այն կարող եք շտկել, ճիշտ ապաշխարությամբ: Դուք կարող եք կրկին մաքուր դառնալ: Խոսելով նրանց մասին, ովքեր ապաշխարում են, Տերն ասել է. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինին, ձիունի պես պիտի սպիտականան»,[3] «և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք»:[4]

Մարդկության Փրկիչը՝ Իր մասին խոսելով, ասել է, որ լինելով աշխարհում, այս աշխարհից չէ:[5] Մենք ևս կարող ենք լինել աշխարհում, սակայն ոչ աշխարհից, եթե մերժենք կեղծ հասկացողություններն ու կեղծ ուսմունքները և հավատարիմ մնանք

Աստծո պատվիրաններին:

Վերջերս ես շատ եմ մտածել ձեր մասին, երիտասարդ տղաներ, որ հասել եք ամուսնանալու տարիքին, սակայն դեռ չեք զգում, որ պետք է այդ քայլն անեք: Ես տեսնում եմ հրաշալի երիտասարդ աղջիկներ, ովքեր ցանկանում են ամուսնանալ և ընտանիք կազմել, սակայն նրանց հնարավորությունները սահմանափակ են, որովհետև շատ երիտասարդ տղամարդիկ հետաձգում են ամուսնությունը:

Սա նոր երևույթ չէ: Այս հարցի մասին շատ է խոսվել Եկեղեցու նախորդ Նախագահների կողմից: Ձեզ հետ կկիսվեմ նրանց տված մեկ-երկու խորհրդով:

Նախագահ Հարոլդ Բ. Լին ասել է. «Մենք՝ որպես քահանայություն կրողներ չենք կատարում մեր պարտականությունը, երբ ամուսնական տարիքն անցնելով, մեզ ետ ենք պահում այս հրաշալի կանանց հետ պատվավոր ամուսնություն կնքելուց»:[6]

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Իմ սիրտը հասնում է . . . մեր սիրելի միայնակ քույրերին, ովքեր փափագում են ամուսնության համար և կարծես չեն կարողանում հասնել դրան: . . . Ես չեմ համակրում այն երիտասարդ տղամարդկանց, ովքեր մեր հասարակության սովորության համաձայն այս հարցում նախաձեռնությունը ստանձնելու բացառիկ իրավունք ունեն, սակայն շատ դեպքերում չեն կարողանում դա անել»:[7]

Ես հասկանում եմ, որ կան շատ պատճառներ, թե ինչու եք տատանվում ամուսնության քայլ կատարելու համար: Եթե դուք մտահոգվում եք կնոջը և ընտանիքին ֆինանսապես ապահովելու համար, ուզում եմ հավաստիացնել ձեզ, որ ամոթ չէ, երբ զույգը տնտեսում և խնայում է: Հիմնականում այդ դժվար պահերին է, որ դուք կմոտենաք իրար՝ սովորելով զոհաբերել և դժվար որոշումներ կայացնել: Միգուցե վախենում եք սխալ ընտրություն կատարել: Այս առումով, ես կասեմ, դուք պետք է հավատք գործադրեք: Գտեք մեկին, ում հետ դուք համատեղելի կլինեք: Գիտակցեք, որ դուք չեք կարող կանխազգալ ամեն դժվարություն, որը կարող է ի հայտ գալ, սակայն համոզված եղեք, որ գրեթե ամեն ինչ կարելի է լուծել, եթե խելամիտ լինեք և հանձն առնեք, որ ձեր ամուսնությունը կայանա:

Գուցե լինելով միայնակ, դուք շատ ավելի ազատ եք, անցկացնելով շքեղ արձակուրդներ, գնելով թանկարժեք ավտոմեքենաներ և խաղալիքներ, և պարզապես ընկերների հետ անհոգ կյանք վայելելով: Ես հանդիպել եմ տղաների խմբերի, ովքեր միասին ժամանակ են անցկացնում, և ասեմ, որ շատ եմ զարմացել, թե ինչու չեն

անում դա երիտասարդ աղջիկների հետ:

Եղբայրներ, գալիս է մի պահ, երբ ժամանակն է լուրջ մտածել ամուսնության մասին և զուգընկեր փնտրել, որի հետ կուզենայիք հավերժություն անցկացնել: Եթե խելամտորեն ընտրեք և եթե հանձն առնեք հաջող ամուսնություն կնքելու, այս կյանքում ոչինչ չի պարգևի ձեզ ավելի մեծ երջանկություն:

Երբ ամուսնանաք, եղբայրներ, դուք կուզենաք ամուսնանալ Տիրոջ տանը: Ձեր՝քահանայություն կրողներիդ համար, ուրիշ տարբերակ չպետք է լինի: Զգույշ եղեք, որ չկորցնեք այդպես ամուսնանալու ձեր իրավասությունը: Դուք կարող եք սիրատածման հրաշալի ժամանակ անցկացնել, միևնույն ժամանակ պահելով ձեզ ընդունելի սահմաններում:

Եղբայրներ, այժմ կխոսեմ մեկ այլ թեմայի մասին, որը զգացել եմ, որ պետք է ձեզ ուղղեմ: Երեք տարում, ինչ ես Եկեղեցու Նախագահ եմ հաստատվել, համոզված եմ իմ ամենատխուր և ամենահուսահատեցնող պարտականությունը, որ ես ունենում եմ ամեն շաբաթ, կնքումները չեղյալ համարելն է: Յուրաքանչյուրը սկսել է Տիրոջ տանը կնքած երջանիկ ամուսնությունից, որտեղ սիրահար զույգը սկսել է իր համատեղ նոր կյանքը և անհամբերությամբ սպասել է մնացած հավերժությունը միասին անցկացնելուն: Եվ ապա, ամիսներ և տարիներ անց, մեկ կամ մի քանի պատճառներով, սերը մահացել է: Դա գուցե ֆինանսական խնդիրների, հաղորդակցության պակասի, անզուսպ բարկության, ծնողների կողմից միջամտության, մեղքի մեջ խճճվելու արդյունք է եղել: Կան բազմաթիվ պատճառներ: Բայց, հիմնականում, ելքը չպետք է լինի ամուսնալուծությունը:

Կնքումները չեղարկելու հայցերի հիմնական մասը գալիս է կանանց կողմից, ովքեր ամուսնությունը փրկելու հուսահատ փորձեր են արել, սակայն, ի վերջո, չեն կարողացել խնդիրները հաղթահարել:

Կողակցին ուշադիր և աղոթքով ընտրեք, իսկ երբ արդեն ամուսնացած եք, եղեք շատ հավատարիմ միմյանց: Մի անգին խորհուրդ էր գրված շրջանակով մի փոքր ափսեի վրա, որը մի անգամ տեսա իմ հորեղբոր և հորաքրոջ տանը. «Ընտիր քո սերը, սիրիր քո ընտրությունը»: Այդ մի քանի բառերում մեծ խորհուրդ է պարփակված: Ամուսնության մեջ շատ էական է պարտավորությունը:

Ձեր կինը պետք է լինի ձեզ հավասար: Ամուսնության մեջ ամուսիններից ոչ մեկը վերադաս կամ ստորադաս չէ մյուսի համար: Դուք քայլում եք կողք-կողքի՝ որպես Աստծո որդի և դուստր: Կնոջը չպետք է ստորացնել կամ վիրավորել, այլ պետք է հարգել և սիրել: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Այս Եկեղեցու ամեն տղամարդ, ով . . . անարդարացի իշխանություն է գործադրում [իր կնոջ] հանդեպ, քահանայություն կրելու արժանի չէ: Եթե նա կարգված լինի, երկինքը ետ կքաշվի, Տիրոջ Հոգին կտրտմի, և վերջ կդրվի այդ մարդու քահանայության իշխանությանը»:[8]

Ամուսնության մասին Նախագահ Հովարդ Վ. Հանթերն այսպես է ասել. «Երջանիկ և հաջողակ ամուսնություն ունենալու համար հիմնականում այնքան կարևոր չէ ճիշտ մարդու հետ ամուսնանալը, որքան *ճիշտ անձնավորություն լինելը*: Ինձ դուր են գալիս այս խոսքերը. «Ձեր մասը լիարժեքորեն անելուն ուղղված գիտակցված ջանքը հաջողության հիմնական գրավականն է»:[9]

Տարիներ առաջ այն ծխում, որտեղ ես նախագահում էի որպես եպիսկոպոս, ապրում էր մի զույգ, որը շատ հաճախ լուրջ և թեժ վիճաբանություններ էր ունենում: Ես նկատի ունեմ իսկական վիճաբանություններ: Այդ երկուսից ամեն մեկը անդրդվելի էր իր դիրքորոշման մեջ: Ոչ մեկը չէր ուզում տեղի տալ: Երբ նրանք չէին վիճաբանում, պահպանում էին, ես կասեի, «կարճատև զինադադար»:

Մի օր գիշերվա ժամը 2:00-ին այդ

զույգը զանգահարեց ինձ: Նրանք ուզում էին խոսել ինձ հետ և ցանկանում էին հենց այդ պահին խոսել: Ես մի կերպ վեր կացա անկողնուց, հագնվեցի և գնացի նրանց տուն: Նրանք նստել էին սենյակի հակառակ կողմերում և չէին խոսում իրար հետ: Կինն ամուսնու հետ հաղորդակցվում էր, խոսելով ինձ հետ: Ամուսինն էլ պատասխանում էր նրան իմ միջոցով: Ես մտածեցի. «Լավ, ի՞նչ անենք, որպեսզի այս զույգին միասին պահենք»:

Ես աղոթեցի ոգեշնչման համար, և ինձ մոտ մի միտք ծագեց, որ նրանց հարց ուղղեմ: Ես ասացի. «Որքա՞ն ժամանակ է, որ եղել եք տաճարում և տաճարային կնքման ականատեսն եք եղել»: Նրանք ընդունեցին, որ արդեն շատ երկար ժամանակ է: Չնայած նրանք արժանի մարդիկ էին, կրում էին տաճարի երաշխավորագիր, գնում էին տաճար և տաճարային աշխատանք էին կատարում ուրիշների համար:

Ես ասացի նրանց. «Ինձ հետ տաճար կգա՞ք չորեքշաբթի առավոտյան ժամը 8:00-ին: Մենք այնտեղ կնքման ծիսակատարության վկա կլինենք»:

Նրանք միասին հարցրեցին. «Իսկ ո՞ւմ ծիսակատարության»:

Ես պատասխանեցի. «Ես չգիտեմ, ովքեր այդ առավոտյան կամուսնանան»:

Հաջորդ չորեքշաբթի նշանակված ժամին, մենք հանդիպեցինք Սոլթ Լեյքի Տաճարում: Մենք երեքով գնացինք գեղեցիկ կնքման սենյակներից մեկը, չիմանալով ոչ ոքի այդ սենյակում, բացի Երեց Էլռեյ Լ. Քրիսչենսենից, որն այդ ժամանակ Տասներկուսի Քվորումի Օգնականն էր՝ Բարձրագույն Իշխանության պաշտոն, որը գոյություն ուներ այդ ժամանակ: Այդ սենյակում այդ առավոտյան Երեց Քրիսչենսենն էր նշանակված կատարելու կնքման ծիսակատարությունը հարսնացուի և փեսացուի համար: Վստահ եմ, հարսնացուն և նրա ընտանիքը մտածեցին. «Սրանք երևի փեսացուի ընկերներն են», իսկ փեսայի ընտանիքը մտածեց. «Սրանք երևի հարսնացուի ընկերներն են»: Իմ զույգը նստել էր փոքր նստարանի վրա՝ միմյանցից մոտ կես մետր հեռու:

Երեց Քրիսչենսենը սկսեց՝ ամուսնացող զույգին խորհուրդ տալով, և դա արեց գեղեցիկ ձևով: Նա նշեց, որ ամուսինը պետք է սիրի իր կնոջը, վերաբերվի նրան հարգանքով ու քաղաքավարի, պատվելով նրան որպես տան սիրտ: Այնուհետև նա խոսեց հարսնացուի հետ այն մասին, որ նա պետք է պատվի իր ամուսնուն որպես տան գլուխ և ամեն կերպ աջակցի նրան:

Ես նկատեցի, որ երբ Երեց Քրիսչենսենը խոսում էր հարսնացուի և փեսացուի հետ, իմ զույգը մի փոքր մոտեցել էր միմյանց: Շուտով նրանք, արդեն նստել էին իրար կողքի: Ինձ համար շատ հաճելի էր, որ նրանք երկուսն էլ հավասար չափով էին մոտենում իրար: Ծիսակատարության վերջում, իմ զույգը այնքան մոտ էր նստած իրար, որ, ասես, *իրենք* էին նորապսակները: Նրանք երկուսն էլ ժպտում էին:

Մենք այդ օրը տաճարից հեռացանք, և ոչ ոք այդպես էլ չիմացավ, թե ովքեր էինք մենք և ինչու էինք եկել, սակայն իմ ընկերները մուտքի դռնից դուրս եկան իրար ձեռք բռնած: Նրանց տարբերությունները մի կողմ էին դրվել: Ես ոչ մի խոսք չասացի: Հասկանում եք, նրանք հիշել էին իրենց սեփական ամուսնության օրը և Աստծո տանը կապած ուխտերը: Նրանք պարտավորվել էին կրկին սկսել և այս անգամ ավելի ջանասիրաբար փորձել:

Եթե ձեզանից որևէ մեկը ամուսնական խնդիրներ ունի, ես աղերսում եմ ձեզ՝ ձեր կարողության սահմանում կատարեք անհրաժեշտ ամեն շտկում, որպեսզի լինեք այնքան երջանիկ, որքան ձեր ամուսնության սկզբում էիք: Մենք, ամուսնանալով Տիրոջ տանը ժամանակի և հավերժության համար, այնուհետև պետք է անհրաժեշտ ջանքեր գործադրենք այն հավերժական դարձնելու համար: Ես հասկանում եմ, որ կան իրավիճակներ, երբ ամուսնությունը չի կարող պահպանվել, սակայն խորապես զգում եմ, որ հիմնականում այդ ամուսնությունները կարող են և պետք է պահպանվեն: Թույլ մի տվեք, որ ձեր ամուսնությունը հասնի վտանգավոր կետի:

Նախագահ Հինքլին մեզ սովորեցրել է, որ Աստծո քահանայությունը կրող մեզանից յուրաքանչյուրից է կախված այնպես կարգավարժել ինքներս մեզ, որպեսզի կանգնենք աշխարհի ուղիներից վեր: Կարևոր է, որ մենք լինենք պատվավոր և օրինավոր տղամարդիկ: Մեր արարքները չպետք է կշտամբանքի ենթակա լինեն:

Մեր խոսելաոճը, մյուսների հանդեպ մեր վերաբերմունքը և մեր ապրելակերպը, ազդում են մեր արդյունավետության վրա որպես քահանայություն կրող տղամարդիկ և տղաներ:

Քահանայության պարգևը անգին է: Այն կրում է որպես Աստծո ծառաներ գործելու իշխանություն, որով սպասավորվում են հիվանդները, օրհնվում են մեր ընտանիքները և մյուսները ևս: Դրա իշխանությունը տարածվում է մահվան վարագույրից այն կողմ՝ դեպի հավերժություններ: Այս ողջ աշխարհում չկա ուրիշ ոչ մի բան, որ դրա հետ համեմատվի: Պահպանեք, փայփայեք, սիրեք այն և ապրեք դրան արժանի:[10]

Իմ սիրելի եղբայրներ, կյանքում ճամփորդելիս թող արդարակեցությունը ուղղորդի մեր ամեն քայլը: Այսօր և ընդմիշտ՝ թող որ մենք լինենք մեր քահանայության աստվածային զորության արժանի ընդունողները: Թող որ այն օրհնի մեր կյանքը, և մենք օգտագործենք այն՝ օրհնելու համար մյուսների կյանքը, ինչպես Նա արեց, ով ապրեց և մահացավ մեզ համար, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը, մեր Տերն ու Փրկիչը: Սա է իմ աղոթքը, Նրա սրբազան, Նրա սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 121.36:
2. Ելից 20.7:
3. Եսայիա 1.18:
4. Վարդապետություն և Ուխտեր 58.42:
5. Տես Հովհաննես 17.14; Վարդապետություն և Ուխտեր 49.5:
6. "President Harold B. Lee's General Priesthood Address," *Ensign,* Jan. 1974, 100.
7. Gordon B. Hinckley, "What God Hath Joined Together," *Ensign,* May 1991, 71.
8. Gordon B. Hinckley, "Personal Worthiness to Exercise the Priesthood," *Liahona,* July 2002, 60.
9. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 130.
10. Տես Gordon B. Hinckley, *Liahona,* July 2002, 58–61:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Սպասելով դեպի Դամասկոս տանող ճանապարհին

Նրանք ովքեր ջանասիրաբար ցանկանում են սովորել Քրիստոսի մասին, ի վերջո, կճանաչեն Նրան:

Աշխարհի պատմության ամենանշանավոր դեպքերից մեկը տեղի ունեցավ Դամասկոսի ճանապարհին: Դուք լավ գիտեք Սողոսի՝ մի երիտասարդ տղամարդու պատմությունը, որը «վնաս էր տալիս եկեղեցուն. Եւ տանից տուն էր մտնում, [Սրբերին մատնում] բանտի մեջ»:[1] Սողոսն այնքան թշնամաբար էր գործում, որ վաղեմի Եկեղեցու շատ անդամներ փախան Երուսաղեմից, հուսալով խույս տալ նրա բարկությունից:

Սողոսը հալածում էր նրանց: Բայց երբ «մոտեցավ Դամասկոսին, եւ հանկարծակի նորա չորս կողմովը լոյս փայլեց երկնքիցը: Եւ նա գետնի վերայ ընկած՝ մի ձայն լսեց, որ ասում էր նորան, Սաւուղ, Սաւուղ, ի՞նչու ես ինձ հալածում»:

Եւ նա գետնի վերայ ընկած՝ մի ձայն լսեց, որ ասում էր նորան, Սաւուղ, Սաւուղ, ի՞նչու ես ինձ հալածում»:[2]

Այս փոխակերպող պահը Սողոսին հավիտյան փոխեց: Իրականում, այն փոխեց աշխարհը:

Մենք գիտենք, որ այսպիսի դրսևորումներ պատահում են: Փաստորեն, մենք վկայում ենք, որ նմանատիպ աստվածային փորձառություն պատահեց 1820 թվականին Ջոզեֆ Սմիթ անունով մի տղայի հետ: Մեզ համար պարզ և հաստատուն վկայություն է այն, որ երկինքները բաց են կրկին և որ Աստված խոսում է Իր մարգարեների և առաքյալների հետ: Աստված լսում է և պատասխանում Իր զավակների աղոթքներին:

Այնուամենայնիվ, կան ոմանք, ովքեր զգում են, որ մինչև իրենք Սողոսի կամ Ջոզեֆ Սմիթի նման փորձառություն չունենան, չեն կարող հավատալ: Նրանք մոտ են կանգնած մկրտության ջրերին, բայց չեն մտնում: Նրանք սպասում են վկայության շեմին, բայց չեն կարողանում իրենց տրամադրել ընդունել ճշմարտությունը: Հավատքի փոքրիկ քայլեր կատարելու փոխարեն՝ աշակերտու ճանապարհին գտնվելիս նրանք կամենում են տպավորիչ իրադարձություն, որը կստիպի իրենց հավատալ:

Նրանք անցկացնում են իրենց օրերը՝ սպասելով դեպի Դամասկոս տանող ճանապարհին:

Հավատքը գալիս է, երբ ամեն անգամ մեկ քայլ ես անում

Եկեղեցու մի սիրելի քույր հավատարիմ անդամ էր եղել ողջ իր կյանքում: Բայց նա կրում էր մի անձնական վիշտ: Տարիներ առաջ նրա դուստրը մահացել էր կարճատև հիվանդությունից հետո և այս ողբերգությունից ստացած վերքերը դեռ հետապնդում էին նրան: Նա տանջվում էր այն խորը հարցերից, որոնք ուղեկցում են այնպիսի մի իրադարձության, ինչպիսին սա էր: Նա անկեղծորեն ընդունում էր, որ իր վկայությունը անցյալում ունեցածի նման ուժեղ չէր: Նա զգում էր, որ մինչև երկինքները չբացվեին իր համար, նա չէր կարողանա կրկին հավատալ:

Այսպիսով, նա հայտնվեց սպասելու ճանապարհին:

Կան ուրիշ շատերը, ովքեր տարբեր պատճառներով հայտնվում են դեպի Դամասկոս տանող ճանապարհին սպասելիս: Նրանք հետաձգում են լիարժեք աշակերտ դառնալու իրենց ճակատագիրը: Նրանք հույս ունեն քահանայություն ստանալ, բայց հաստատուն չեն այդ արտոնությանը արժանի ապրելու մեջ: Նրանք ցանկանում են տաճար մտնել, բայց հետաձգում են հավատքի վերջնական քայլը՝ արժանավոր լինելը: Նրանք շարունակում են սպասել, երբ Քրիստոսին իրենց կտան այնպես, ինչպես Նա պատկերված է Կարլ Բլոխի հիասքանչ նկարում, ինչը մեկընդմիշտ իրենցից կհեռացնի բոլոր իրենց կասկածներն ու երկյուղները:

Իրականում, նրանք ովքեր ջանասիրաբար ցանկանում են սովորել Քրիստոսի մասին, ի վերջո, կճանաչեն Նրան: Նրանք անձնապես կստանան Վարդապետի աստվածային դիմանկարը, թեև ամենահաճախը այն գալիս է հանելուկի ձևով՝ ամեն անգամ մի մասնիկ ստանալով: Յուրաքանչյուր

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

Ապրիլ 2011

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Քֆ. Փաքեր

Լ. Թոմ Փերի

Ռասսել Մ. Նելսոն



Դալլին Հ. Օուքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռիչարդ Գ. Սքոթ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Կլաուդիո Ռ. Մ. Կոստա

Սթիվեն Ե. Մտոու

Վոլթեր Ֆ. Գոնզալես

Լ. Վիթնի Քլեյթոն

Ջեյ Ե. Ջենսեն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սարգսյան Ա. Մարգարիտա
Դոն Ս. Քեյնի
Հարությունյան Ս. Գուրգեն
Գագիկ Զ. Բուդաղյան
Հակոբ Լ. Արմեն
Գարիկ Բ. Թոք
Կարոլ Հ. Անդրան
Յան Ս. Կոստեն
Լուսինե Ե. Թորոսյան
Ջերիթ Կ. Գոնգ
Թեհրանցի Գոլդեն Կոստ
Ստեփան Ս. Գոնդ
Գարիկ Ս. Գրիգորյան
Հարություն Ա. Գոնդ
Ռոբերտ Ս. Գրիգորյան
Ռոբերտ Ս. Գրիգորյան
Ֆրանսիս Ս. Գրիգորյան
Ֆրանսիս Ս. Գրիգորյան
Ֆրանսիս

«Համաքաղաքացիներ[ը] սրբերի հետ» (Եփեսացիս 2.19) ողջ աշխարհում հավաքվել էին Եկեղեցու 181-րդ ամենամյա գերագույն համաժողովին: Վերևում ձախից՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ լուսանկարված են Վերջին Օրերի Սրբերը Լուսակայում՝ Զամբիա, Կիևում՝ Ուկրաինա, Սենթ Քեթրինում՝ Յամայկա, Սան Պաուլոյում՝ Բրազիլիա, Օդենտոնում՝ Մերիլենդ, ԱՄՆ, Դորտմունդում՝ Գերմանիա, և Կոիմբրայում՝ Պորտուգալիա:

առանձին մասնիկ հնարավոր չէ ինքնին հեշտորեն ճանաչել. կարող է պարզ չլինել, թե ինչպես է այն կապված ամբողջի հետ: Բայց յուրաքանչյուր մասնիկ օգնում է մեզ մի փոքր ավելի հստակորեն տեսնել մեծ պատկերը: Ի վերջո, հետո երբ բավականին մասնիկներ են միասին դրվում, մենք ըմբռնում ենք այդ ամենի սքանչելի գեղեցկությունը: Ապա ետ նայելով մեր փորձառությանը, մենք տեսնում ենք, որ Փրկիչն իսկապես եկել է և մեզ հետ է եղել այդ ողջ ընթացքում՝ ոչ թե հանկարծակի ու անմիջապես, այլ՝ հանդարտորեն, մեղմորեն, գրեթե աննկատ:

Սա կարող է լինել մեր փորձառությունը, եթե մենք առաջ շարժվենք հավատքով և շատ երկար չսպասենք դեպի Դամասկոս տանող ճանապարհին:

Ականջ դրեք և ուշադրություն դարձրեք

Ես վկայում եմ, որ մեր Երկնային Հայրը սիրում է Իր զավակներին: Նա սիրում է մեզ: Նա սիրում է ձեզ: Անհրաժեշտության դեպքում, Տերը նույնիսկ կտանի ձեզ խոչընդոտների կողքով, երբ դուք փնտրեք Նրա խաղաղությունը կոտրված սրտով և ապաշխարող հոգով: Հաճախ Նա խոսում է մեզ հետ այն ձևով, որ մենք կարողանում ենք լսել միայն մեր սրտով: Նրա ձայնն ավելի լավ լսելու համար իմաստուն կլիներ անջատել աշխարհիկ ժխորի ձայնը մեր կյանքում: Եթե մենք անտեսում ենք կամ փակում մեզ Հոգու հուշումների առաջ, ինչ որ պատճառով դրանք դառնում են ավելի աննկատ, մինչև որ մենք չենք կարողանում դրանք այլևս լսել: Եկեք սովորենք լսել Հոգու հուշումները, ապա ուշադիր լինել դրանց հանդեպ:

Մեր սիրելի մարգարե Թոմաս Ս. Մոնսոնը մեզ համար այս հարցում մեծ օրինակ է հանդիսանում: Հոգու հուշումների հանդեպ նրա ուշադրության մասին պատմությունները բազմաթիվ են: Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը պատմում է այդպիսի մի փորձառության մասին:

Մի անգամ, երբ Նախագահ Մոնսոնը հանձնարարությամբ գտնվում էր Լուիզիանայում, մի ցցի նախագահ հարցրեց նրան, թե արդյո՞ք նա ժամանակ ուներ այցելելու 10 տարեկան Քրիսթալ անունով մի աղջկա, որը գտնվում էր քաղցկեղի վերջին փուլում: Քրիսթալի ընտանիքն աղոթում էր, որ Նախագահ Մոնսոնը գար: Բայց նրանց տունը շատ հեռու էր գտնվում, իսկ օրակարգն այնքան հագեցած էր, որ ժամանակ չկար: Այսպիսով փոխարենը Նախագահ Մոնսոնը խնդրեց, որ նրանք ովքեր պետք է ասեին աղոթքները ցցի համաժողովի ժամանակ, Քրիսթալի անունը ընդգրկեին իրենց աղոթքներում: Անկասկած Տերը և ընտանիքը կհասկանային:

Համաժողովի շաբաթ օրվա նիստի ընթացքում, երբ Նախագահ Մոնսոնը կանգնեց խոսելու, Հոգին շշնջաց. «Թույլ տուէք երեխաներին ինձ մոտ գան, եւ մի արգիլէք դոռանց. որ այդպիսիներին է Աստուծոյ արքայութիւնը»:[3]

Նրա արտահայտությունները դարձան աղոտ: Նա փորձեց հետևել ժողովի նախագծված թեմային, բայց [փոքրիկ աղջկա] անունն ու պատկերը չէին հեռանում մտքից:[4]

Նա լսեց Հոգուն և փոխեց իր օրակարգը: Հաջորդ օրը վաղ առավոտյան Նախագահ Մոնսոնը թողեց ինսունինինին և ճամփորդեց բազմաթիվ մղոններ, որպեսզի լիներ այդ մեկի մահճակալի կողքին:

Տեղ հասնելուն պես, նա «նայեց երեխային, որը լուրջ հիվանդ էր և այնքան թույլ, որ չէր կարող բարձրանալ տեղից և խոսել: Հիվանդությունը նրան արդեն զրկել էր տեսողությունից: Խորապես ազդված այդ տեսարանից և Տիրոջ Հոգուց, Եղբայր Մոնսոնը վերցրեց երեխայի թույլ ձեռքն իր ափի մեջ: «Քրիսթալ, - շշնջաց նա: - Ես այստեղ եմ»:

Մեծ ջանք գործադրելով նա շշնջաց ի պատասխան. «Եղբայր Մոնսոն, ես գիտեի, որ կգաք»:[5]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, եկեք ձգտենք լինել նրանց կողքին, ում Տերը կարող է վստահել՝ լսելու Իր շշունջները և պատասխանելու, ինչպես Սողոսն արեց դեպի Դամասկոս տանող *իր* ճանապարհին՝ «Տեր, ի՞նչ ես կամենում որ անեմ»:[6]

Ծառայել

Մեկ այլ պատճառ, երբ մենք երբեմն չենք ճանաչում Տիրոջ ձայնը մեր կյանքում, այն է, որ Հոգու հայտնությունները գուցե չեն գալիս ուղղակի մեզ, որպես մեր աղոթքների պատասխան:

Մեր Երկնային Հայրն ակնկալում է մեզանից, որ մենք առաջինը ուսումնասիրենք, իսկ հետո աղոթենք մեր անձնական կյանքում առաջնորդության համար, երբ փնտրում ենք մեր հարցերի և մտահոգությունների պատասխանները: Մենք ունենք մեր Երկնային Հոր հավաստիացումը, որ Նա կլսի և կպատասխանի մեր աղոթքներին: Պատասխանը կարող է գալ վստահելի ընկերների և ընտանիքի անդամների ձայնով և իմաստությամբ, սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի միջոցով:

Իմ փորձառության համաձայն մեր ստացած ամենազորավոր հուշումները ոչ թե միայն մեր իսկ օգտի, այլ նաև ուրիշների օգտի համար են: Եթե մենք մտածում ենք միայն մեր մասին, մենք կարող ենք մեր կյանքում բաց թողնել ամենահզոր հոգևոր փորձառություններից և խորը հայտնություններից մի քանիսը:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է այս տեսակետը. «Աստված, իհարկե, նկատում է մեզ և հետևում մեզ վերևից: Բայց, սովորաբար, մեկ այլ անձնավորության միջոցով է, որ նա բավարարում է մեր կարիքները: Ուստի կարևոր է, որ մենք ծառայենք միմյանց»:[7] Եղբայրներ և քույրեր, մեզանից յուրաքանչյուրն ունի ուխտով պատասխանատվություն՝ լինել նրբազգաց ուրիշների կարիքների հանդեպ և ծառայել ինչպես Փրկիչն արեց՝ օգնության հասնելով, օրհնելով և բարձրացնելով նրանց, ովքեր մեր շրջապատում են:

Հաճախ մեր աղոթքի պատասխանը գալիս է ոչ թե այն պահին, երբ մենք մեր ծնկների վրա ենք, այլ երբ մենք ոտքի վրա ենք՝ ծառայելով Տիրոջը և մեր շրջապատում լինողներին: Ծառայության անեսասեր քայլերը և նվիրաբերումը մաքրում են մեր հոգիները, հեռացնում մեր հոգևոր աչքերի թեփուկները և բացում են երկնքի պատուհանները: Դառնալով ինչ որ մեկի աղոթքի պատասխանը, մենք հաճախ պատասխան ենք գտնում մեր սեփական աղոթքներին:

Կիսվել

Կան դեպքեր, երբ Տերը մեզ բացահայտում է բաներ, որոնք նախատեսված են միայն մեզ համար: Այնուամենայնիվ, շատ ու շատ դեպքերում Նա վստահում է վկայություն ճշմարտության մասին նրանց, ովքեր կկիսվեն ուրիշների հետ: Այսպես է եղել յուրաքանչյուր մարգարեի հետ՝ Ադամի օրերից սկսած: Նույնիսկ ավելին՝ Տերը սպասում է, որ Իր Եկեղեցու անդամները «բացեն [իրենց բերանները] բոլոր ժամանակներում հայտարարելով [Նրա] ավետարանը ցնծության հնչումով»:[8]

Սա միշտ չէ, որ հեշտ է: Ոմանք ավելի շուտ ձեռնասայլ քարշ կտան տափաստանով, քան կշոշափեն հավատքի և կրոնի թեման իրենց ընկերների և աշխատակիցների հետ: Նրանք անհանգստանում են, թե ինչպես ուրիշները կվերաբերվեն դրան կամ ինչպես այն կարող է վնասել իրենց փոխհարաբերություններին: Դա չպետք է այդպես լինի, որովհետև մենք ուրախ ուղերձով ենք կիսվում՝ ցնծության ուղերձով:

Տարիներ առաջ մեր ընտանիքն ապրում էր և աշխատում մարդկանց մեջ, ովքեր գրեթե շատ դեպքերում մեր հավատքից չէին: Երբ նրանք հարցնում էին, թե ինչպես էինք անցկացրել մեր հանգստյան օրերը, մենք ձգտում էինք խուսափել ընդհանուր թեմաներից՝ սպորտային իրադարձություններ, կինոնկարներ կամ եղանակ, և փորձում էինք կիսվել հոգևոր փորձառություններով, որոնք մենք ընտանիքով ունեցել էինք այդ օրերին: Օրինակ՝ թե ինչ ասաց մի երիտասարդ խոսնակ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի չափանիշների մասին կամ ինչպես էինք հուզվել մի երիտասարդի խոսքերից, որը մեկնում էր միսիա կամ էլ ինչպես էր ավետարանն օգնել մեզ որպես ընտանիք հաղթահարել մի առանձնահատուկ մարտահրավեր: Մենք փորձում էինք չքարոզել կամ չլինել ամբարտավան: Կինս՝ Հարիեթը միշտ լավագույնն էր, երբ ոգեշնչող, վեհացնող կամ հումորով մի բան էր գտնում և դրանով կիսվում: Սա գրեթե միշտ տանում էր դեպի ավելի խորը քննարկումների: Բավականին հետաքրքիր է. երբ խոսում էինք մեր ընկերների հետ կյանքի մարտահրավերները հաղթահարելու մասին, հաճախ էինք լսում այս դատողությունը. «Ձեզ համար հեշտ է, դուք ունեք ձեր եկեղեցին»:

Մեր տրամադրության տակ ունենալով այսքան շատ սոցիալական լրատվացանցեր և բազմաթիվ քիչ կամ շատ օգտակար հարմարանքներ, ավետարանի բարի լուրով կիսվելն ավելի հեշտ է դառնում, ազդեցությունն ավելի է լայն է տարածվում, քան երբևէ նախկինում: Իրականում, ես գրեթե վախենում եմ,

որ ոմանք արդեն ուղարկել են այսպիսի տեքստային ուղերձներ. «Նա խոսում է արդեն 10 րոպե և դեռ ոչ մի համանմանություն օդագնացության հետ»: Իմ սիրելի երիտասարդ բարեկամներ, հավանաբար Տիրոջ խրախուսանքը «բացել [ձեր] բերանները»,[9] այսօր ներառի նաև «օգտագործեք ձեր ձեռքերը» արտահայտությունը՝ առցանց օրագիր գրելու և ավետարանի բարի լուրի մասին աշխարհին տեքստային ուղերձ ուղարկելու համար: Բայց. խնդրում ենք. հիշեք, ամեն ինչ ճիշտ տեղում և ճիշտ ժամանակին:

Եղբայրներ և քույրեր, ժամանակակից տեխնոլոգիայի օրհնությամբ մենք կարող ենք արտահայտել Իր զավակների համար Աստծո մեծ ծրագրի համար մեր երախտագիտությունը և ուրախությունը մի ձևով, որ հնարավոր լինի այն լսել ոչ միայն մեր աշխատավայրում, այլ ողջ աշխարհում: Երբեմն վկայության մեկ հատիկ արտահայտությունը կարող է շարժման մեջ դնել իրադարձություններ, որոնք կազդեն ինչ որ մեկի կյանքի վրա հավերժության համար:

Ավետարանը քարոզելու ամենաազդեցիկ ուղին օրինակի միջոցով է: Եթե մենք ապրենք համաձայն մեր հավատքի, մարդիկ կնկատեն դա: Եթե Հիսուս Քրիստոսի դեմքը փայլի մեր կյանքում,[10] եթե մենք հրճվանքով լի լինենք և՝ խաղաղության մեջ աշխարհի հետ, մարդիկ կուզենան իմանալ՝ ինչո՞ւ: Ամենամեծ քարոզներից մեկը, որ երբևէ հնչել է միսիոներական աշխատանքի մասին, այս պարզ միտքն է, որը վերագրվում է Սբ. Ֆրենսիսին՝ Ասիզեից. «Քարոզեք ավետարանը ամբողջ ժամանակ և, անհրաժեշտության դեպքում, օգտագործեք խոսքեր»:[11] Այդ անելու հնարավորություններն ամենուրեք մեր շուրջ են:

Սան Պաուլո, Բրազիլիա

Բաց մի թողեք դրանք՝ չափից դուրս երկար սպասելով դեպի Դամասկոս տանող ճանապարհին:

Դամասկոս տանող մեր ճանապարհը

Ես վկայում եմ, որ Տերը մեր օրերում խոսում է իր մարգարեների և առաքյալների հետ: Նա խոսում է նաև բոլորի հետ, ովքեր գալիս են դեպի Նա մաքուր սրտով, անկեղծ միտումով:[12]

Մի կասկածեք: Հիշեք .«Երանի նորանց, որ չեն տեսել եւ հաւատում են»:[13] Աստված սիրում է ձեզ: Նա լսում է ձեր աղոթքները: Նա խոսում է Իր զավակների հետ և սփոփանք, հանգստություն, խաղաղություն և ըմբռնում տալիս նրանց, ովքեր փնտրում են Նրան և հարգում Նրան՝ քայլելով Նրա ուղով: Ես բերում եմ իմ սրբազան վկայությունը, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հետևում է սահմանված ընթացքին: Մենք ունենք կենդանի մարգարե: Այս Եկեղեցին առաջնորդվում է Նրա կողմից, ում անունը մենք կրում ենք, այսինքն՝ Փրկիչ Հիսուս Քրիստոսի:

Եղբայրներ և քույրեր, սիրելի ընկերներ, եկեք երկար չսպասենք դեպի Դամասկոս տանող *մեր* ճանապարհին: Փոխարենը, եկեք խիզախորեն առաջ շարժվենք հավատքով, հույսով և գթությամբ, և մենք կօրհնվենք լույսով, որը բոլորս որոնում ենք ճշմարիտ աշակերտության ուղու վրա: Սրա համար ես աղոթում եմ և թողնում ձեզ իմ վկայությունը՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Գործք 8.3:
2. Գործք 9.3–4:
3. Մարկոս 10.14:
4. Տես Jeffrey R. Holland, “President Thomas S. Monson: Always ‘on the Lord’s Errand,’” *Tambuli,* Oct.–Nov. 1986, 20:
5. Jeffrey R. Holland, *Tambuli,* Oct.–Nov. 1986, 20.
6. Գործք 9.6:
7. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 82.
8. Վարդապետություն և Ուխտեր 28.16:
9. Վարդապետություն և Ուխտեր 60.2:
10. Տես Ալմա 5.14:
11. In William Fay and Linda Evans Shepherd, *Share Jesus without Fear* (1999), 22.
12. Տես Մորոնի 10.3–5:
13. Հովհաննէս 20.29:

Երեց Փոլ Վ. Ջոնսոն
Յոթանասունից

Առաւել եւս յաղթում ենք նորա միջոցով՝ որ մեզ սիրեց

Դժվարությունները միայն մեզ փորձելու համար չեն: Դրանք շատ կարևոր են աստվածային բնություն ստանալու համար:

Կյանքն աշխարհում ներառում է փորձություններ, դժվարություններ և խնդիրներ և որոշ դժվարություններ, որոնց մենք հանդիպում ենք կյանքում և որոնք կարող են տանջալից լինել: Լինի դա հիվանդություն, դավաճանություն, փորձություն, սիրած էակի կորուստ, բնական աղետ կամ որևէ այլ փորձանք, տառապանքը մեր մահկանացու փորձառության մի մասն է: Շատերն են մտածել այն մասին, թե ինչու մենք պետք է հանդիպենք բարդ խնդիրների: Մենք գիտենք, որ պատճառներից մեկը հավատքի փորձության համար է, տեսնելու, թե արդյոք մենք կանենք այն ամենը, ինչ Տերը պատվիրել է:[1] Բարեբախտաբար, այս աշխարհի կյանքը կատարյալ ժամանակաշրջան է այս փորձություններին հանդիպելու և դրանք հաղթահարելու համար:[2]

Սակայն այս դժվարությունները միայն մեզ փորձելու համար չեն: Դրանք շատ կարևոր են աստվածային բնություն ստանալու համար:[3] Եթե մենք պատշաճորեն հաղթահարենք այս չարչարանքները, դրանք կսրբագործվեն մեր օգտի համար:[4]

Երեց Օրսոն Ֆ. Ուիթնին ասել է. «Ոչ մի ցավ, որ մենք տանում ենք, ոչ էլ դժվարություն, որը մենք ունենում ենք, իզուր չի անցնում: . . . Ողջ տառապանքը, որ մենք տանում ենք և այն ամենը, ինչին մենք դիմանում ենք, հատկապես, երբ մենք դիմանում ենք համբերությամբ, մեծացնում է մեր վճռականությունը, մաքրում է մեր սրտերը, ընդարձակում է մեր հոգիները և մեզ դարձնում է ավելի քնքուշ ու գթառատ: . . . Վշտի ու տառապանքի, ծանր աշխատանքի ու դժվարությունների միջոցով է, որ մենք ստանում ենք այն կրթությունը, որը ստանալու համար մենք եկել ենք այստեղ»:[5]

Վերջերս մի ինն ամյա տղայի մոտ ախտորոշել էին հազվադեպ ոսկրային քաղցկեղ: Բժիշկը բացատրեց ախտորոշումների և բուժման ընթացքը, որը ներառում էր մի քանի ամիս տևողությամբ քիմիոթերապիա և խոշոր վիրահատություն: Նա ասաց, որ դա շատ դժվար ժամանակաշրջան կլինի տղայի և նրա ընտանիքի համար, բայց այնուհետև ավելացրեց. «Մարդիկ հարցնում են ինձ. «Երբ այս ամենն ավարտվի, ես նույնը կլինե՞մ»: Ես նրանց ասում եմ. «Ոչ, դու նույնը չես լինի, դու շատ ավելի ուժեղ կլինես: Դու հրաշալի կլինես»»:

Երբեմն կարող է թվալ, որ մեր դժվարությունները կենտրոնացած են մեր կյանքի այն ոլորտների և մեր հոգու այն կողմերի վրա, որոնք, թվում է, թե մեզ համար ամենադժվարն են հաղթահարելու համար: Քանի որ անձնական աճը այս խնդիրների նախատեսված հետևանքն է, չպիտի անակնկալ լինի այն, որ փորձությունները կարող են լինել շատ անձնական՝կարծես առանձնահատուկ ուղղված մեր որոշակի կարիքներին կամ թուլություններին: Եվ ոչ ոք դրանցից ազատված չէ, ոչ էլ Սրբերը, որոնք ջանում են անել այն, ինչ ճիշտ է: Որոշ հնազանդ Սրբեր կարող են հարցնել. «Ինչու՞ ես: Ես փորձում եմ լավը լինել: Ինչու՞ է Տերը թույլ տալիս, որ սա պատահի»: Չարչարանքի հնոցը օգնում է մաքրել նույնիսկ ամենալավ Սրբերին՝այրելով նրանց կյանքի խառնուրդը և թողնելով մաքուր ոսկին:[6] Նույնիսկ շատ հարուստ հանքանյութը զտման կարիք ունի, որպեսզի խառնուրդը հեռացվի: Լավը լինելը բավական չէ: Մենք ուզում ենք դառնալ Փրկչի նման, ով սովորում էր, կրելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի:[7]

Լոգանի Կիրճի Բոսորագույն Արահետը հետիոտն ուղևորության իմ սիրած վայրերից մեկն է: Արահետի հիմնական մասը ոլորապտույտ անցնում է բարձր կրաքարե ժայռակարկառների մոտով և մատուցում է կիրճի և ցածում գտնվող հովտի գեղեցիկ տեսարաններ: Այնուամենայնիվ ժայռակարկառների բարձունքին հասնելը հեշտ չէ: Արահետն այնտեղ մշտապես վեր է բարձրանում, և հենց բարձունքին հասնելուց առաջ լեռնագնացը հանդիպում է արահետի ամենաուղղաձիգ մասին: Կիրճի տեսարանները թաքցնում են

հենց ժայռակարկառները: Ուժերի վերջին լարումը ավելի քան արժանի է ջանքերի, քանի որ հենց որ հասնում եք բարձունքին, բացվում են խիստ գրավիչ տեսարաններ: Գեղատեսիլ վայրերը տեսնելու միակ ճանապարհը բարձրունքը հաղթահարելն է:

Սուրբ գրությունների ու կյանքի օրինակները ցույց են տալիս, որ շատ անգամ ամենամութ, ամենավտանգավոր փորձությունները անմիջապես նախորդում են նշանակալից իրադարձություններին և հսկայական աճին: «Շատ նեղությունից հետո գալիս են օրհնությունները»:[8] Իսրայելի որդիները արգելափակվել էին Կարմիր ծովի դիմաց, մինչև որ այն բաժանվեց երկու մասին:[9] Նեփին հանդիպեց վտանգների, զայրույթի իր եղբայրների կողմից և բազմաթիվ անհաջողությունների, մինչև որ կարողացավ ձեռք բերել արույրե թիթեղները:[10] Ջոզեֆ Սմիթին պատեց ինչ-որ չար ուժ այնքան ուժեղ, որ թվաց, թե նա մատնվել էր հանկարծահաս կործանման: Երբ նա գրեթե պատրաստ էր հուսահատության մեջ ընկղմվել, նա մեծ ճիգեր գործադրելով կանչեց առ Աստված, և հենց այդ պահին նրան այցելեցին Հայրն ու Որդին:[11] Հետաքրքրվողները հաճախ ընդդիմության և խնդիրների են հանդիպում, երբ մոտենում է նրանց մկրտությունը: Մայրերը գիտեն, որ ծննդաբերության դժվարություններին հաջորդում է ծնունդի հրաշքը: Ժամանակ առ ժամանակ մենք տեսնում ենք հրաշալի օրհնություններ մեծ փորձությունների բարձունքներում:

Երբ տատիկս մոտ 19 տարեկան էր, նա ձեռք բերեց մի լուրջ հիվանդություն Ավելի ուշ նա ասաց. «Ես չէի կարողանում քայլել: Իմ ձախ ոտքը ամբողջովին կորցրել էր իր արտաքին տեսքը այն մի քանի ամիսներից հետո, որոնք ես անց էի կացրել անկողնում: Ոսկորները փափուկ էին սպունգի պես և երբ ես փորձում էի ոտքս դնել հատակին, ես զգում էի էլէկտրական հոսանքի հարված»:[12] Մինչ նա գամված էր անկողնուն և հասել էր իր տառապանքների գագաթնակետին, նա ձեռք էր բերել և ուսումնասիրում էր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու գրքույկները: Նա դարձի էր եկել և ավելի ուշ մկրտվել: Շատ անգամներ որոշակի դժվարություն օգնում է մեզ նախապատրաստվել էապես կարևոր ինչ-որ բանի:

Խնդիրների մեջ գրեթե անհնարին է տեսնել, որ եկող օրհնությունները մեծապես գերազանցում են ցավին, վիրավորանքին կամ վշտին, որը մենք կարող է ունենում ենք այդ ժամանակ: «Ամեն խրատ հէնց նոյն ժամանակին ուրախութիւն չէ երեւում, այլ տրտմութիւն. բայց յետոյ նորանով վարժուածներին արդար խաղաղութեան պտուղ է վճարում»:[13] Պողոս Առաքյալը սովորեցրել է. «Որովհետեւ մեր այժմեան թեթեւ նեղութիւնը ամենագերազանց յաւիտենական փառքի մեծութիւն է գործում մեզ համար»:[14] Հետաքրքիր է, որ Պողոսը օգտագործում է «թեթեւ նեղութիւն» արտահայտությունը: Սա գալիս է մի մարդուց, ով ծեծվել, քարկոծվել, նավաբեկության է ենթարկվել, բանտարկվել, և ով տարել է շատ այլ փորձություններ:[15] Ես կասկածում եմ, թե մեզանից շատերը մեր փորձությունները համարեն «թեթեւ նեղութիւն»: Այնուամենայնիվ, համեմատած օրհնությունների և աճի

հետ, որ մենք ի վերջո ստանում ենք և այս կյանքում, և հավերժության մեջ, մեր նեղությունները իրոք թեթև են:

Մենք չենք փնտրում մեր փորձությունները, դժվարություններն ու խնդիրները: Մեր կյանքի անձնական ճանապարհորդությունը կապահովի ճիշտ քանակ մեր կարիքների համար: Շատ փորձություններ ուղղակի բնական մասն են մեր մահկանացու գոյության, սակայն դրանք շատ կարևոր դեր են խաղում մեր զարգացման գործում:

Երբ Փրկչի մահկանացու ծառայությունը մոտեցավ իր ավարտին, Նա ունեցավ բոլոր ժամանակների ամենադժվար փորձությունը՝ Գեթսեմանի և Գողգոթայի անասելի տառապանքը: Դա նախորդեց փառահեղ Հարությանն ու խոստմանը, որ մեր բոլոր տառապանքներին մի օր վերջ կդրվի: Նրա տառապանքը նախապայման էր այդ Զատկի առավոտի դատարկ գերեզմանի և մեր ապագա անմահության ու հավերժական կյանքի համար:

Երբեմն մենք ցանկանում ենք աճ ունենալ առանց դժվարությունների և ուժ ձեռք բերել առանց որևէ պայքարի:Բայց աճը չի կարող գալ հեշտ ճանապարհ ընտրելով: Մենք պարզ կերպով հասկանում ենք, որ մարզիկը, ով ընդդիմանում է խստապահանջ մարզմանը, երբեք չի դառնա համաշխարհային մակարդակի մարզիկ: Մենք պետք է զգույշ լինենք, որ հեռու չվանենք այն բաները, որոնք մեզ օգնում են ձեռք բերել աստվածային բնություն:

Մեզ հանդիպած փորձություններից և նեղություններից և ոչ մեկը մեր ուժերից վեր չէ, որովհետև մենք Տիրոջ օգնությունը ստանալու հնարավորություն ունենք: Մենք ամեն բան կարող ենք անել Քրիստոսով, ով զորացնում է մեզ:[16]

Առողջական լուրջ խնդիրներ ունենալուց հետո առողջանալով, Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը գերագույն համաժողովի ժամանակ կիսվեց հետևյալով. «Որոշ դեպքերում ես ասում էի Տիրոջը, որ ես անկասկած սովորել եմ դասերը, որոնք պետք է ինձ ուսուցանվեին, և որ անհրաժեշտություն չկար, որ ես տանեի ևս մի փոքր տառապանք: Նման անկեղծ խնդրանքները, թվում էր, ոչ մի նշանակություն չունեին, քանի որ ինձ համար հասկանալի էր դառնում, որ փորձելու այս մաքրագործող գործընթացին պետք է համբերեի ըստ Տիրոջ ժամանակի և Տիրոջ իսկ ճանապարհով: Ես սովորեցի, որ մենակ չէի լինի այս փորձություններին ու նեղություններին հանդիպելիս, բայց որ պահապան հրեշտակները կայցելեին ինձ: Կային ոմանք, որ կարծես հրեշտակներ էին բժիշկների, բուժքույրերի և ամենաշատը իմ սիրելի զուգընկերոջ՝ Մերիի տեսքով: Եվ երբ Տերն էր ցանկանում, ես մխիթարվում էի երկնային բազմությունների կողմից, որ բերում էին մխիթարություն և հավերժական հավաստիացում իմ կարիքի ժամին»:[17]

Մեր Երկնային Հայրը սիրում է մեզ և մենք գիտենք, «որ ովքեր որ դնեն իրենց վստահությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց փորձանքների, և իրենց տագնապների, և իրենց չարչարանքների մեջ, և պիտի բարձրացվեն վերջին օրը»:[18] Մի օր, երբ մենք անցնենք վարագույրի մյուս կողմը, մենք ուզում ենք ավելին, քան որ մեզ ասվի. «Ահա, քո ժամանակն ավարտվեց»: Դրա փոխարեն մենք ուզում ենք, որ Տերը մեզ ասի. «Լա՛ւ, բարի եւ հաւատարիմ ծառայ»:[19]

Ես սիրում եմ Պողոսի խոսքերը.

«Ո՞վ կբաժանէ մեզ Քրիստոսի սէրիցը. տառապա՞նք, թէ նեղութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վտա՞նգ, թէ սո՞ւր: . . .

Բայց այս ամեն բաներումն առաւել եւս յաղթում ենք նորա միջոցովը՝ որ մեզ սիրեց»:[20]

Ես գիտեմ, որ Աստված ապրում է և որ Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, ապրում է: Ես նաև գիտեմ, որ Նրանց օգնության միջոցով մենք «առաւել եւս յաղթում ենք» խնդիրներին, որոնց հանդիպում ենք այս կյանքում: Մենք կարող ենք դառնալ Նրանց նման: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ա Պետրոս 1.6–8; Աբրահամ 3.25:
2. Տես Ա Պետրոս 2.20:
3. Տես Բ Պետրոս 1.4:
4. Տես 2 Նեփի 2.2:
5. Orson F. Whitney, in Spencer W. Kimball, *Faith Precedes the Miracle* (1972), 98.
6. Տես Եսայիա 48.10; 1 Նեփի 20.10:
7. Տես Ալմա 7.11–12:
8. Վարդապետություն և Ուխտեր 58.4:
9. Տես Ելից 14.5–30:
10. Տես 1 Նեփի 3–4:
11. Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.15–17:
12. Amalie Hollenweger Amacher, unpublished history in possession of author.
13. Եբրայեցիս 12.11:
14. Բ Կորնթացիս 4.17:
15. Տես Բ Կորնթացիս 11.23–28:
16. Տես Փիլիպեցիս 4.13:
17. Robert D. Hales, "The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom," *Liahona,* Jan. 2001, 6.
18. Ալմա 36.3:
19. Մատթեոս 25.21:
20. Հռովմայեցիս 8.35, 37:

Բուխարեստ, Ռումինիա

Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բըրթն
Նախագահող Եպիսկոպոս

Բարօրության սրբագործող աշխատանքը

Միմյանց մասին հոգալը և «աղքատների հանդեպ բարի լինելը» սրբագործող աշխատանք է, որը պատվիրվել է Հոր կողմից:

Բարի առավոտ, եղբայրներ և քույրեր: 1897 թվին, երիտասարդ Դեյվիդ Օ. Մակքեյը կանգնած էր մի դռան մոտ՝ բրոշյուրը ձեռքին: Որպես միսիոներ Սթերլինգում, Շոտլանդիա, նա շատ անգամ էր մոտեցել դռների: Սակայն այդ օրը մի շատ հոգնատանջ կին բացեց դուռը և կանգնեց նրա առաջ: Դա նվաղած դեմքով, չսանրված մազերով, շատ աղքատիկ հանգնված մի կին էր:

Նա վերցրեց բրոշյուրը, որը Երեց Մակքեյը տվեց նրան, և ասաց հինգ բառ, որոնք նա երբեք այլևս չմոռացավ. «Սրանով կարո՞ղ եմ հաց գնել»:

Այս հանդիպումը երկար մնաց երիտասարդ միսիոների հիշողության մեջ: Նա հետագայում գրեց. «Այդ պահին ես խորապես գիտակցեցի, որ Քրիստոսի Եկեղեցին պետք է հետաքրքվի նաև մարդու ֆիզիկական փրկությամբ: Ես հեռացա այդ դռան մոտից՝ զգալով, որ այդ [կինը], որի սիրտը լցված էր դառնությամբ դեպի մարդիկ և Աստված, չէր կարող ընդունել ավետարանի ուղերձը: Նա նյութական օգնության կարիք ուներ, և Սթերլինգում չկար մի այնպիսի կազմակերպություն, որ կարողանար օգնել նրան այդ հարցում»:[1]

Տարիներ անց աշխարհը տքնում էր Մեծ Ճգնաժամի բեռի տակ: Այդ ժամանակ էր՝ 1936թ. ապրիլի 6-ին, երբ Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը և նրա խորհրդականներ՝ Ջ. Ռուբեն Քլարկը և Դեյվիդ Օ. Մակքեյը, հայտարարեցին արդեն հետագայում հայտնի Եկեղեցու բարօրության ծրագրի մասին: Հետաքրքիր էր, որ երկու շաբաթ անց, Երեց Մելվին Ջ. Բալլարդը նշանակվեց որպես այդ ծրագրի նախագահ, իսկ Հարոլդ Բ. Լին՝ գործադիր տնօրեն:

Սա սովորական ջանք չէր: Թեև Տերը կանչել էր հրաշալի անհատներ՝ կազմակերպելու այն, Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկը հստակեցրել է, որ «[բարեգործական] մեխանիզմի հաստատումը Սուրբ Հոգու կողմից Նախագահ Գրանտին տրված հայտնության արդյունք է, որն այդ ժամանակից ի վեր կատարվել է նմանատիպ հայտնությունների միջոցով, որոնք եկել են այդ պարտականությունը կրող եղբայրներին»:[2]

Մարդկային տառապանքը թեթևացնելուն ուղղված Եկեղեցու ղեկավարների հանձնառությունը հաստատ և անփոփոխ էր: Նախագահ Գրանտը ցանկացավ ստեղծել «մի համակարգ, որը կգտներ և կհոգար մարդկանց կարիքները, անկախ գումարի չափից»: Նա ասել է, որ անգամ համաձայն էր «ժամանակավորապես փակել սեմինարիաները, դադարեցնել միսիոներական աշխատանքը, կամ նույնիսկ փակել տաճարները, սակայն իրենք թույլ չէին տա, որ մարդիկ սովի մատնվեին»:[3]

Ես գտնվում էի Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողքին Մանագուայում, Նիկարագուա, երբ նա խոսեց Եկեղեցու 1300 անդամների առաջ, ովքեր փրկվել էին ավերիչ փոթորկից, որը խլել էր ավելի քան 11000 մարդու կյանք: «Որքան որ Եկեղեցու միջոցները կբավարարեն, - ասաց նա,- մենք չենք թողնի, որ դուք մնաք սոված, առանց հագուստի կամ առանց ապաստանի: Մեր ուժերի սահմանում մենք ամեն ինչ կանենք, որպեսզի օգնություն ցուցաբերենք այնպես, ինչպես Տերն է նախանշել»:[4]

Այս ավետարանակենտրոն ոգեշնչված գործի եզակի հատկանիշներից մեկը անձնական պատասխանատվության և ինքնապահովման վրա շեշտադրումն է: Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին բացատրել է. «Շատ ծրագրեր են հաստատվել բարեսիրտ մարդկանց կողմից օգնելու կարիքավորներին: Ինչևէ, այդ ծրագրերից շատերը «մարդկանց օգնելու» կարճատև նպատակ են ունեցել, որը հակադրվում է «օգնել մարդկանց իրենց օգնելու» դրույթին»:[5]

Ինքնապահովումը հեռատես ապրելակերպի և տնտեսվար ինքնակառավարման գործադրումն է: Ի սկզբանե, Եկեղեցին ուսուցանել է, որ ընտանիքը, իր կարողության չափով, պետք է պատասխանատվություն կրի իր նյութական բարօրության համար: Յուրաքանչյուր սերունդ պետք է սովորի ինքնապահովման նոր սկզբունքները՝ խուսափի պարտքից, իրագործի

խնայողության սկզբունքները, պատրաստ լինի աղետալի ժամանակներին, լսի և հետևի կենդանի մարգարեների խոսքերին, զարգացնի կարիքն ու ցանկությունները տարբերակելու սովորույթ, և ապրի ըստ դրանց:

Աղքատների և կարիքավորների համար հոգ տանելու մեր գործը զորացնող նպատակը, խոստումներն ու սկզբունքներն անցնում են մահկանացության սահմանները: Եվ այս սուրբ աշխատանքը ոչ միայն օգնում, այլև օրհնում է տառապյալներին և կարիքավորներին: Որպես Աստծո որդիներ և դուստրեր, մենք չենք կարող լիովին ժառանգել հավերժական կյանքը, եթե լիովին չներգրավվենք միմյանց մասին հոգ տանելու գործում, մինչ ապրում ենք այստեղ՝ երկրի վրա: Զոհաբերության և մեզանից ուրիշներին տալու բարեգործության շնորհիվ է, որ մենք սովորում ենք զոհաբերության և նվիրաբերման սելեստիալ սկզբունքները:[6]

Մեծ Բենյամին թագավորն ուսուցանեց, որ մեր ստացվածքից աղքատներին բաժին հանելու և ի սփոփանք նրանց ծառայելու պատճառներից մեկն այն է, որ կարողանանք օրեցօր մեր մեղքերի թողությունը պահպանել և անմեղ քայլել Աստծո առաջ:[7]

Աշխարհի հիմնադրումից ի վեր, արդարակյաց հասարակություններում միշտ ոսկե թելի պես անցել է գթասրտությունը: Մենք տենչում ենք խաղաղ աշխարհ և բարգավաճ համայնքներ ունենալ: Մենք աղոթում ենք բարի և առաքինի հասարակությունների համար, որտեղ չկա ամբարշտություն, և մեծահոգությունն ու իրավունքն են գերիշխում: Անկախ նրանից, թե քանի տաճար ենք մենք կառուցում, որքան արագ է աճում մեր անդամությունը, որքան դրական ենք երևում աշխարհի աչքում, եթե մենք չենք կատարում այս մեծ հիմնական պատվիրանը, որն ասում է՝ «սատարիր թույլերին, բարձրացրու ընկած ձեռքերը և ամրացրու տկար ծնկները»,[8] կամ եթե մեր սիրտը չենք դարձնում դեպի տառապյալն ու սգացողը, մենք անեծքի տակ կլինենք և չենք կարողանա զոհացնել Տիրոջը,[9] և մեր սրտերում երբեք չենք

ունենա ցնծացող հույսը:

Ողջ աշխարհում 28000 եպիսկոպոսներ փնտրում են աղքատների՝ սպասավորելու նրանց կարիքները: Յուրաքանչյուր եպիսկոպոսի օգնում է ծխի խորհուրդը՝ կազմված քահանայության և օժանդակ ղեկավարներից, ներառյալ նվիրված Սփոփող Միության նախագահը: Նրանք կարող են «շտապ հասնել սփոփելով օտարականին, . . . ձեթ և գինի լցնելով վշտահարի վիրավոր սրտին . . . և չորացնելով որբի արցունքներն ու ուրախացնելով այրու սիրտը»:[10]

Ողջ աշխարհում Եկեղեցու անդամների և ղեկավարների սրտերի վրա դրականորեն են ազդում և առաջնորդում վարդապետությունները և աստվածային հոգին՝ իրենց մերձավորներին սիրելու և հոգալու համար:

Հարավային Ամերիկայում մի քահանայության ղեկավարի վրա ծանրացել էր իր փոքր ցցի անդամների քաղցն ու զրկանքը: Չցանկանալով թույլ տալ, որ երեխաները տառապեն քաղցից, նա մի դատարկ հողակտոր գտավ և կազմակերպեց, որպեսզի քահանայությունը մշակի և վարի այն: Նրանք մի ծեր ձի գտան և մի հասարակ գութան կապեցին և սկսեցին աշխատել հողի վրա: Սակայն դեռ աշխատանքը չավարտած ողբերգություն տեղի ունեցավ և ծեր ձին սատկեց:

Թույլ չտալով, որ իրենց եղբայրներն ու քույրերը քաղցից տառապեն, քահանայության եղբայրները հին գութանը կապեցին իրենց մեջքին և սկսեցին հերկել քարացած հողը: Նրանք իրենց վրա վերցրեցին իրենց եղբայրների և քույրերի տառապանքի ու բեռի լուծը:[11]

Իմ ընտանիքի պատմությունից մի դրվագ մարմնավորում է կարիքավորների համար հոգալու պարտավորվածությունը: Շատերն են լսել Վիլի և Մարտին ձեռնասայլակների ընկերությունների մասին, և թե ինչպես դեպի արևմուտք իրենց գաղթի ճանապարհին այդ հավատարիմ պիոներները տառապեցին և մահացան՝ դիմակայելով ձմռան սառնամանիքին և հյուծող պայմաններին: Ռոբերտ Թեյլոր Բըրթնը, իմ նախանախա-պապերից մեկը, նրանցից մեկն էր, ում Բրիգամ Յանգը խնդրեց գնալ և փրկել այդ սիրելի, հուսահատ Սրբերին:

Այդ ժամանակի մասին պապիկը գրել է իր օրագրում. «Ձյունը խորն էր և սաստիկ ցուրտ էր: . . . Այնքան ցուրտ, որ [մենք] չէինք կարողանում շարժվել: Ջերմաստիճանը մինուս 11 աստիճան էր, . . . այնքան ցուրտ էր, որ մարդիկ չէին կարողանում ճամփորդել»:[12]

Կյանքի համար անհրաժեշտ միջոցներ էին բաժանվում Սրբերին, սակայն «չնայած այդ ամենին, շատերը մահանում էին և թաղվում ճանապարհի եզրին»:[13]

Երբ փրկված Սրբերը ճամփորդում էին Էքո Կիրճի միջով, մի քանի

Սենթ Քեթրին, Յամայկա

կառքեր կանգնեցին օգնելու աղջիկ նորածնի աշխարհ գալը: Ռոբերտը նկատեց, որ երիտասարդ մայրը բավականաչափ կտորներ չուներ իր նորածնին տաք պահելու համար: Չնայած սառնամանիքին, նա «հանեց ձեռքով գործված իր վերնաշապիկը և տվեց այդ կնոջը, որ փաթաթի իր մանկիկին»:[14] Երեխայի անունը դրեցին Էքո՝ ի հիշատակ իր ծննդյան վայրի և պայմանների:

Վերջին տարիներին Ռոբերտը կանչվեց Եկեղեցու Նախագահող Եպիսկոպոսություն, որտեղ ծառայեց ավելի քան երեք տասնամյակ: 86 տարեկան հասակում Ռոբերտ Թեյլոր Բըրթնը հիվանդացավ: Նա հավաքեց իր ընտանիքին իր շուրջը վերջին օրհնությունը տալու նրանց: Իր վերջին խոսքում նա տվեց այս հասարակ, սակայն կարևոր խորհուրդը՝ «Եղեք բարի աղքատների հանդեպ»:[15]

Եղբայրներ և քույրեր, մենք պատվում ենք այն հնարամիտ հսկաներին, որոնց Տերը կանչեց, որ կազմակերպեն և սպասավորեն այս կազմակերպված ծրագիրը՝ հասնելու համար Իր Եկեղեցու կարիքավոր անդամներին: Մենք պատվում ենք նրանց, ովքեր մեր օրերում ձեռք են մեկնում անթիվ և հաճախ անխոս միջոցներով, և լինելով «բարի աղքատների հանդեպ» կերակրում են քաղցածին, հագցնում են մերկին, ծառայում են հիվանդին և այցելում են բանտարկյալին:

Սա սուրբ աշխատանք է, որը Փրկիչն ակնկալում է Իր աշակերտներից: Սա այն աշխատանքն է, որ Նա սիրում էր կատարել, երբ քայլում էր երկրի վրա: Սա այն աշխատանքն է, որ Նա կկատարեր, եթե այսօր մեր մեջ գտնվեր:[16]

Յոթանասունհինգ տարի առաջ մարդկանց հոգևոր և ֆիզիկական փրկությանը նվիրված համակարգը վեր է խոյացել սկսելով համեստ ծրագրից: Այդ ժամանակից ի վեր այն ազնվացրել և օրհնել է տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքեր ողջ աշխարհում: Մարգարեական բարօրության ծրագիրը սոսկ աննշան դրվագ չէ Եկեղեցու պատմության մեջ: Սկզբունքները, որոնց վրա այն հիմնված է, բնորոշում են մեզ որպես ժողովուրդ: Դա մեր էությունն է՝ որպես մեր Փրկչի և Օրինակի՝ Հիսուս Քրիստոսի, առանձին աշակերտներ:

Միմյանց մասին հոգալը և «աղքատների հանդեպ բարի լինելը» սրբագործող աշխատանք է, որը պատվիրվել է Հոր կողմից, և աստվածայնորեն նախատեսված է օրհնելու, կատարելագործելու և վերացնելու Նրա զավակներին: Թող որ մենք հետևենք Բարի Սամարացու առակում օրինականին տված Փրկչի խորհրդին. «Գնա, դու էլ այդպես արա»:[17] Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Cherished Experiences from the Writings of President David O. McKay,* comp. Clare Middlemiss (1955), 189.
2. J. Reuben Clark Jr., "Testimony of Divine Origin of Welfare Plan," *Church News,* Aug. 8, 1951, 15; see also Glen L. Rudd, *Pure Religion* (1995), 47.
3. Glen L. Rudd, *Pure Religion,* 34.
4. In "President Hinckley Visits Hurricane Mitch Victims and Mid-Atlantic United States," *Ensign,* Feb. 1999, 74.
5. Marion G. Romney, "The Celestial Nature of Self-Reliance," *Liahona,* Mar. 2009, 15.
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 104.15–18; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 105.2–3:
7. Տես Մոսիա 4.26–27:
8. Վարդապետություն և Ուխտեր 81.5; տես նաև Մատթեոս 22.36–40:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 104.18:
10. Joseph Smith, in *History of the Church,* 4:567–68.
11. Interview with Harold C. Brown, former Welfare Services Department managing director.
12. Journal of Robert T. Burton, Church History Library, Salt Lake City, Nov. 2–6, 1856.
13. Robert Taylor Burton, in Janet Burton Seegmiller, *"Be Kind to the Poor": The Life Story of Robert Taylor Burton* (1988), 164.
14. Lenore Gunderson, in Jolene S. Allphin, *Tell My Story, Too,* tellmystorytoo.com/art_imagepages/image43.html.
15. Robert Taylor Burton, in Seegmiller, *"Be Kind to the Poor"*, 416.
16. Տես Dieter F. Uchtdorf, "You Are My Hands," *Liahona*, 2010, 68–70, 75:
17. Ղուկաս 10.37:

Սիլվիա Հ. Ալրեդ
Սփոփող Միության Գերագույն
Նախագահության Առաջին Խորհրդական

Աշակերտ լինելու էությունը

Երբ սերը դառնում է առաջնորդող սկզբունք ուրիշների մասին հոգ տանելիս, նրանց մատուցած մեր ծառայությունը դառնում է ավետարանական արարք:

Ժամանակների սկզբից Տերը ուսուցանել է, որ Իր ժողովուրդը դառնալու համար մենք պետք է լինենք սրտով և մտքով մեկ:[1] Փրկիչը նաև բացատրել է, որ օրենքի երկու մեծ պատվիրաններն են. «Սիրիր Տիրոջը քո Աստծուն քո ողջ սրտով, և քո ողջ հոգով և քո ողջ մտքով» և «սիրիր քո ընկերին քո անձի պես»:[2] Եվ վերջապես, Եկեղեցու վերականգնումից ոչ շատ անց Տերը Սրբերին պատվիրեց. «Այցելեք աղքատներին ու կարիքավորներին և սպասավորեք՝ ի սփոփանք նրանց»:[3]

Ո՞րն է այս բոլոր պատվիրանների ընդհանուր թեման: Այն, որ մենք պետք է սիրենք միմյանց և ծառայենք միմյանց: Սա, փաստորեն, Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու աշակերտ լինելու էությունն է:

Տոնելով Եկեղեցու բարօրության ծրագրի 75-ամյակը, մենք հիշում ենք բարօրության նպատակները, որոնք են՝ օգնել անդամներին , նրանց դարձնելով ինքնապահովող, հոգ տանել աղքատի և կարիքավորի մասին և ծառայություն մատուցել: Եկեղեցին կազմակերպել է այս ծրագիրը, որպեսզի իր միջոցներով աջակցի հասարակությանը և անդամներին, հոգալու իրենց, իրենց ընտանիքների և ուրիշների ֆիզիկական, հոգևոր և էմոցիոնալ բարեկեցություն մասին: Եպիսկոպոսի գրասենյակը հատուկ նպատակ ունի՝ հոգալու աղքատի և կարիքավորի մասին և կառավարելու դրա հետ կապված միջոցները իր ծխում: Այդ գործում նրան օգնում են քահանայության քվորումները, Սփոփող Միությունը և, հատկապես, տնային և այցելող ուսուցիչները:

Սփոփող Միությունը միշտ եղել է բարօրության առանցքում: Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը կազմակերպեց Սփոփող Միությունը 1842թ., նա կանանց ասաց. «Սա աղքատի և կարիքավորի համար լավ օրերի սկիզբն է»:[4] Նա քույրերին ասաց, որ Միության նպատակն է օգնել աղքատին, կարիքավորին, այրուն և որբին, և ծառայել մարդասիրական բոլոր նպատակներին: Նրանք յուղ և գինի կլցնեն ճնշվածի վերքի վրա, նրանք կմաքրեն որբի արցունքները և կստիպեն այրու սիրտը ուրախանալ:[5]

Նա նաև ասաց, որ միությունը «կարող է խթանել եղբայրների լավ աշխատանքը՝ աղքատների կարիքները փնտրելիս, գտնելով գթության առարկաներ և սպասավորելով նրանց ցանկությունները, օգնելով ուղղել բարոյականությունը և ամրացնելով համայնքի արժեքները»:[6]

Եկեղեցու տղամարդիկ և կանայք այսօր միասին մասնակցում են կարիքավորին օգնելու աշխատանքին: Քահանայություն կրողները էական աջակցություն են տրամադրում նրանց, ովքեր հոգևոր ուղղության և օգնության կարիք ունեն: Ոգեշնչված տնային ուսուցիչները օրհնում են բազմաթիվ կյանքեր և ավետարանի օրհնություններ են շնորհում ընտանիքի բոլոր անդամներին: Բացի այդ, նրանք իրենց ուժերն ու տաղանդներն այլ ճանապարհներով են առաջարկում, օգնելով տան վերանորոգման կարիք ունեցող կամ տեղափոխվող որևէ մի ընտանիքի, կամ օգնելով մեկին՝ով անհրաժեշտ աշխատանք գտնելու փորձ է անում:

Սփոփող Միության նախագահները այցելում են տներ, որպեսզի գնահատեն կարիքների չափը՝ եպիսկոպոսի համար: Ոգեշնչված այցելող ուսուցիչները հետևում և հոգ են տանում քույրերի և ընտանիքների համար: Նրանք հաճախ առաջինն են արձագանքում անհապաղ օգնության կարիքի դեպքում: Սփոփող Միության քույրերն իրենց ծառայությամբ շատ անդամների հանդեպ կարեկցանք են ցուցաբերում և ուտելիք են ապահովում, շարունակական աջակցություն են տրամադրում փորձությունների պահերին:

Եկեղեցու անդամները ողջ աշխարհում ուրախացել են անցյալում և պետք է ուրախանան այսօր ուրիշներին ծառայելու հնարավորության համար: Մեր միասնական ջանքերը թեթևացնում են նրանց բեռը, ովքեր աղքատ են, սոված, տանջված կամ ճնշված, այդպիսով փրկելով նրանց հոգիները:

Յուրաքանչյուր եպիսկոպոսին մատչելի է Տիրոջ պահեստը, որը հիմնվում է, երբ հավատարիմ անդամները նվիրաբերում են եպիսկոպոսին իրենց ժամանակը, տաղանդները, ունակությունները, կարեկցանքը, նյութերը և

ֆինանսական միջոցները՝ հոգ տանելով աղքատների մասին և կառուցելով երկրի վրա Աստծո արքայությունը:[7] Մենք բոլորս կարող ենք ներդրում ունենալ Տիրոջ պահեստում, վճարելով մեր ծոմի նվիրատվությունները և մեր բոլոր ռեսուրսները եպիսկոպոսին մատչելի դարձնենք՝ կարիքավորին օգնելու համար:

Չնայած արագ փոփոխվող աշխարհին, բարօրության սկզբունքները ժամանակի հետ չեն փոխվել, որովհետև դրանք աստվածայնորեն ներշնչված և հայտնված ճշմարտություններ են: Երբ Եկեղեցու անդամները և նրանց ընտանիքներն անում են հնարավոր ամեն-ինչ՝ իրենց ապահովելու համար, սակայն չեն կարողանում բավարարել հիմնական կարիքները, Եկեղեցին պատրաստ է օգնել: Կարճաժամկետ կարիքները կարող են բավարարվել անմիջապես, նաև կազմելով ծրագիր՝ ստացողին օգնելով դառնալ ինքնապահովող: Ինքնապահովումը անձի և ընտանիքի կյանքի հոգևոր և ֆիզիկական կարիքները ապահովելու ունակությունն է:

Երբ մենք մեծացնում ենք ինքնապահովման մեր մակարդակը, մենք մեծացնում ենք Փրկչի ձևով ուրիշներին օգնելու և ծառայելու մեր ունակությունը: Մենք հետևում ենք Փրկչի օրինակին, երբ սպասավորում ենք կարիքավորին, հիվանդին և տառապյալին: Երբ սերը դառնում է առաջնորդող սկզբունք ուրիշների մասին հոգ տանելիս, նրանց մատուցած մեր ծառայությունը դառնում է ավետարանական արարք: Դա ավետարանն է իր լավագույն դրսևորման պահին: Դա մաքուր կրոնն է:

Եկեղեցու իմ տարբեր ծառայություններում ես խոնարհեցվել եմ այն սիրով և հոգատարությամբ, որը եպիսկոպոսները և Սփոփող Միության ղեկավարները դրսևորել են իրենց անդամների հանդեպ: Երբ 1980-ականների սկզբին ես ծառայում էի որպես ցցի Սփոփող Միության նախագահ Չիլիում, երկիրը խորը ճգնաժամի մեջ էր և գործազրկության ցուցանիշը 30 տոկոս էր: Ես տեսնում էի, ինչպես էին Սփոփող Միության քաջարի նախագահները և հավատարիմ այցելող ուսուցիչները «բարիք գործում»[8] այդ սոսկալի պայմաններում: Նրանք մարմնավորում էին Առակաց ԼԱ.20-ը. «Նա իր ձեռքը տարածում է դեպի աղքատը, և ձեռքը մեկնում է տնանկին»:

Քույրերը, որոնք իրենց ընտանիքներում շատ զուսպ էին ապրում, մշտապես օգնում էին նրանց, ում ուսուցանում էին և ով մեծ կարիքի մեջ էր: Այդ ժամանակ ես ավելի լավ հասկացա այն, ինչ տեսավ Փրկիչը, երբ հայտարարեց Ղուկաս ԻԱ.3–4 -ում.

«Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե այս աղքատ որբևայրին ամենից ավելի գցեց:

Որովհետև նրանք ամենքն իրանց ավելացածներից գցեցին Աստծո ընծաների մեջ, իսկ սա իր կարոտությունից իր բոլոր ապրուստն՝ որ ուներ՝ գցեց»:

Մի քանի տարի անց ես նույնի ականատեսը եղա, երբ ցցի Սփոփող Միության նախագահ էի Արգենտինայում, որտեղ չափազանց բարձր արժեքազրկումը կաթվածահար էր արել երկիրը և տնտեսական փլուզումը վնասել էր մեր հավատարիմ անդամներից շատերին: Կրկին, ես տեսել եմ դա Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում՝Կինշասա, Մադագասկարում՝ Անտանանարիվո և Զիմբաբվեում՝ Բուլավայո վերջերս կատարած իմ այցերի ժամանակ: Ամենուրեք ծխի անդամները և, մասնավորապես, Սփոփող Միության քույրերը, շարունակում էին ամրացնել անհատներին `կառուցելով հավատք, աջակցելով ընտանիքներին, օգնելով կարիքի մեջ գտնվողներին:

Զարմանալի է միայն այն միտքը, որ Եկեղեցու կոչում ունեցող մի խոնարհ քույր կամ եղբայր գալով մի տուն, ուր տիրում է աղքատությունը, վիշտը, հիվանդությունը և ճնշվածությունը, կարող է իր հետ բերել խաղաղություն, հանգստություն և երջանկություն: Կարևոր չէ, որտեղ է գտնվում ծուխը կամ ճյուղը, կամ որքան մեծ կամ փոքր է խումբը, աշխարհում յուրաքանչյուր անդամ ունի այդ հնարավորությունը: Դա տեղի է ունենում ամեն օր և այս պահին նույնպես:

Երկու երեխաների երիտասարդ մայր՝ Կառլան, որի ամուսինը՝ Բրենտը շատ էր աշխատում և ամեն օր մեկ ժամ ծախսում էր աշխատանքի գնալիս, շուտով նրանց երկրորդ դստեր ծննդից հետո, պատմում էր իր փորձառության մասին. «Մեկ օր անց, երբ ես ստացա

իմ ծխի Սփոփող Միությունում որպես խորհրդական ծառայելու կոչումը, ես զգացի, որ չափից դուրս ծանրաբեռնված էի: Ինչպես ես կարող էի իմ ծխի կանանց մասին հոգալու պատասխանատվությունը վերցնել ինձ վրա, եթե ես հազիվ էի կրում կնոջ և ակտիվ երկու տարեկան և նորածին երեխաների մայր լինելու դերը: Այդ ապրումների մեջ էի, երբ երկու տարեկան երեխաս հիվանդացավ: Ես չգիտեի, ինչ անել, որ միաժամանակ նրան խնամեի և հոգ տանեի փոքրիկի մասին: Հենց այդ ժամանակ Քույր Վասդենը, մեր այցելող ուսուցիչներից մեկը, անսպասելի եկավ մեր տուն: Երկու մեծ երեխաների մայր լինելով, նա հստակ գիտեր, ինչպես օգներ ինձ: Նախ ինձ ասաց, թե ես ինչ պետք է անեի, մինչ ինքը կգնար դեղատուն որոշ պարագաներ գնելու: Ավելի ուշ նա պայմանավորվեց, որ ամուսնուս դիմավորեին երկաթուղային կայարանում, որպեսզի նա շուտ հասներ տուն՝ ինձ օգնելու համար: Ես հավատացած եմ, որ նրա արձագանքը, ինչպես նաև ինձ ծառայելու նրա պատրաստակամությունը, հուշում էր Սուրբ Հոգուց, որն ինձ այնպիսի վստահություն պարգևեց, որի կարիքը ես շատ ունեի Տիրոջից՝ իմանալու համար, որ Նա կօգներ ինձ կատարելու իմ նոր կոչումը»:

Երկնային Հայրը սիրում է մեզ և գիտի մեր առանձնահատուկ պայմանները և ունակությունները: Թեև մենք փնտրում ենք Նրա օգնությունը ամեն օր աղոթքի միջոցով, սովորաբար Նա բավարարում է մեր կարիքները մեկ այլ անձի միջոցով:[9]

Տերն ասել է. «Սորանով կգիտենան ամենքը թե իմ աշակերտներն եք, եթե իրար վերայ սեր ունեցաք»:[10]

Քրիստոսի մաքուր սերը արտահայտվում է, երբ մենք անձնատուր ծառայություն ենք մատուցում: Միմյանց օգնելը սրբացնող փորձառություն է, որը վեհացնում է ստացողին և խոնարհեցնում տվողին: Դա օգնում է մեզ դառնալ Քրիստոսի ճշմարիտ աշակերտը:

Բարօրության ծրագիրը միշտ ներկայացրել է ավետարանի հավերժական սկզբունքների կիրառումը: Դա իսկապես Տիրոջ ուղին ապահովելն է: Եկեք բոլորս նորացնենք ուրիշներին օրհնելու համար Տիրոջ պահեստի մասը լինելու մեր ցանկությունը:

Ես աղոթում եմ, որ Տերը օրհնի յուրաքանչյուրիս ողորմածության, գթասրտության և կարեկցանքի ավելի խոր զգացումով: Ես աղերսում եմ, որ աճի մեր ցանկությունը հասնելու և օգնելու նրանց, ովքեր ավելի քիչ հաջողակ են, ովքեր ճնշված են և ովքեր տանջվում են, որպեսզի նրանց կարիքները բավարարվեն, որպեսզի նրանց հավատն ամրանա և որպեսզի նրանց սրտերը լցվեն երախտագիտությամբ և սիրով:

Թող Տերն օրհնի յուրաքանչյուրիս, մինչ մենք քայլում ենք, հնազանդվելով Նրա պատվիրաններին, Նրա ավետարանին և Նրա լույսին՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մովսես 7.18:
2. Տես Մատթեոս 22..36–40:
3. Վարդապետություն և Ուխտեր 44.6:
4. Joseph Smith, in *History of the Church,* 4:607.
5. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 64:
6. *Teachings: Joseph Smith,* 452.
7. *Providing in the Lord's Way: A Leader's Guide to Welfare* (1990), 11.
8. Գործք 10.38; Հավատո Հանգանակներ 1.13:
9. Տես *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 82:
10. Հովհաննես 13.35:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հայտնության Հոգին

Հայտնության Հոգին իրական է, և կարող է և գործում է մեր անձնական կյանքում և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:

Ես շնորհակալություն եմ հայտնում այն ոգեշնչման համար, որն օգնել է ընտրել «Արե՞լ եմ ես բարի գործ» օրհներգը, որը կհաջորդի իմ ելույթին: (*Hymns,* no. 223): Ես տեսնում եմ հուշում:

Ես հրավիրում եմ ձեզ խորհել լույսի հետ կապված երկու փորձառությունների մասին, որոնք մեզանից շատերն ունեցել են:

Առաջին փորձառությունը տեղի է ունեցել, երբ մենք մտել ենք մութ սենյակ և միացրել ենք լույսը: Հիշեք, թե ինչպես մի ակնթարթում լուսավորության պայծառ հեղեղը լցրեց սենյակը և վերացրեցէ խավարը: Ինչը նախապես չէր երևում և անորոշ էր, դարձավ պարզ ու տեսանելի: Այս փորձառությունը բնորոշվել է լույսի անհապաղ և վառ առկայությամբ:

Երկրորդ փորձառությունը տեղի է ունենում, երբ մենք դիտում ենք, թե ինչպես է գիշերը իր տեղը զիջում առավոտին: Դուք հիշու՞մ եք լույսի դանդաղ և գրեթե աննկատելի բացվելը հորիզոնում: Ի տարբերություն մութ սենյակում լույսը միացնելուն, արևածագը անմիջապես ի հայտ չի գալիս: Ավելի ճիշտ, հետզհետե և աստիճանաբար լույսի ուժգնությունը ավելանում է և գիշերվա խավարը փոխարինվում է առավոտվա պայծառ լույսով: Ի վերջո, արևը շողում է երկնակամարում: Սակայն արևի մոտալուտ հայտնվելու տեսողական փաստը ակնհայտ էր հորիզոնում արևի իրականում հայտնվելուց ժամեր առաջ: Այս փորձառությունը բնորոշվում է լույսի աննկատ և աստիճանական նշմարմամբ:

Լույսի հետ կապված այս երկու սովորական փորձառություններից մենք շատ բան կարող ենք սովորել հայտնության ոգու վերաբերյալ: Ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին ոգեշնչի և ուսուցանի մեզ, մինչ մենք այժմ կկենտրոնանանք հայտնության ոգու և հիմնական ճանապարհների վրա, որոնցով ստացվում է հայտնությունը:

Հայտնության Հոգին

Հայտնությունը հաղորդակցություն է Աստծուց՝ երկրի վրա գտնվող Իր զավակներին, և մեծագույն օրհնություններից մեկը, կապված Սուրբ Հոգու պարգևի և մշտական ընկերակցության հետ: Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է. «Սուրբ Հոգին հայտնողն է», և «ոչ ոք չի կարող ստանալ Սուրբ Հոգին՝ առանց ստանալու հայտնություններ» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 132):

Հայտնության Հոգին մատչելի է յուրաքանչյուր անձնավորության, ով քահանայության պատշաճ իշխանությամբ ստանում է մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության և Սուրբ Հոգու պարգևի համար ձեռնադրման փրկող արարողությունները, և ով հավատքով գործում է՝ իրականացնելու համար «ստացիր Սուրբ Հոգին» քահանայական հրամանը: Այս օրհնությունը չի սահմանափակվում Եկեղեցու նախագահող իշխանավորներով, ավելի ճիշտ այն պատկանում է և պետք է գործի յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի կյանքում, ով հասնում է պատասխանատվության տարիքին և մտնում է սուրբ ուխտի մեջ: Անկեղծ ցանկությունն ու արժանավորությունը հրավիրում են հայտնության Հոգին մեր կյանք:



Ջոզեֆ Սմիթն ու Օլիվեր Քաուդերին հայտնության ոգու հետ կապված արժեքավոր փորձառություն ստացան, մինչ նրանք թարգմանում էին Մորմոնի Գիրքը: Այս եղբայրները սովորեցին, որ նրանք իրենց աշխատանքն ավարտելու համար կարող էին ստանալ ցանկացած անհրաժեշտ գիտելիք, եթե խնդրեին հավատքով, անկեղծ սրտով, հավատալով, որ իրենք կստանան: Եվ ժամանակի ընթացքում նրանք ավելի ու ավելի հասկացան, որ հայտնության Հոգին սովորաբար գործում է որպես մտքեր ու զգացմունքներ, որ գալիս են մեր մտքերում և սրտերում՝ Սուրբ Հոգու զորությամբ (տես ՎևՈւ 8.1–2; 100.5–8): Ինչպես Տերը սովորեցրեց նրանց. «Արդ, ահա, սա է հայտնության Հոգին. ահա, սա է այն ոգին, որով Մովսեսն Իսրայելի զավակներին դուրս բերեց Կարմիր ծովի միջով, չոր գետնի վրայով: Ուստի սա է քո պարգևը. դիմիր դրան» (ՎևՈւ 8.3–4):

Ես հատուկ ուշադրություն եմ դարձնում «դիմիր դրան» արտահայտությանը՝ կապված հայտնության ոգու հետ: Սուրբ գրություններում Սուրբ Հոգու ազդեցությունը հաճախ նկարագրվում է որպես «մեղմ, հանդարտ ձայն» (Գ Թագավորաց 19.12; 1 Նեփի 17.45; տես նաև 3 Նեփի 11.3) և «կատարյալ մեղմության ձայն» (Հելաման 5.30): Քանի որ Հոգին քնքշորեն և մեղմորեն է մեզ շշնջում, հեշտ է հասկանալը, թե ինչու մենք պետք է խուսափենք ոչ պատշաճ լրատվամիջոցներից, պոռնոգրաֆիայից և վնասակար, կախվածություն առաջացնող նյութերից և վարքից: Հակառակորդի այս գործիքները կարող են վնասել և վերջիվերջո կործանել մեր ունակությունը՝ ճանաչելու և պատասխանելու Աստծո մեղմ հուշումներին, որոնք տրվում են Նրա Հոգու զորությամբ: Մեզանից յուրաքանչյուրը պետք է լրջորեն մտածի և աղոթքով խորհի, թե ինչպես մենք կարող ենք չտրվել դևի գայթակղություններին և արդարությամբ «դիմենք դրանց», հենց հայտնության ոգուն, մեր անձնական կյանքում և ընտանիքներում:

Հայտնության ձևերը

Հայտնությունները տրվում են բազմաթիվ ձևերով, օրինակ, երազների, տեսիլքների, երկնային սուրհանդակների հետ զրույցների և ոգեշնչման տեսքով: Որոշ հայտնություններ ստացվում են անմիջապես. որոշները ճանաչվում են աստիճանաբար: Լույսի հետ կապված իմ նկարագրած երկու փորձառությունները մեզ օգնում են ավելի լավ հասկանալ հայտնության այս երկու հիմնական ձևերը:

Մութ սենյակում լույսը վառելը նման է Աստծուց անմիջապես և ամբողջական ստացվող ուղերձի: Մեզանից շատերն են ունեցել այս օրինակի փորձառությունը, մինչ մեզ պատասխան է տրվել անկեղծ աղոթքներին կամ տրվել է անհրաժեշտ ուղղորդում կամ պաշտպանություն՝ համաձայն Աստծո կամքի և ժամանակի: Նման անհապաղ և մեծ դրսևորումներ առկա են սուրբ գրություններում, արձանագրված են Եկեղեցու պատմության մեջ և տեղ են գտնում մեր իսկ կյանքում: Իսկապես, այս մեծ հրաշքները տեղի են ունենում: Սակայն հայտնության այս ձևը ավելի հազվադեպ հանդիպող երևույթ է, քան հաճախակի հանդիպող:

Ծագող արևի լույսի ճառագայթների աստիճանաբար ի հայտ գալը նման է Աստծուց «տող առ տող, ցուցում առ ցուցում» ուղերձ ստանալուն (2 Նեփի 28.30): Ավելի հաճախ հայտնությունը գալիս է ժամանակ առ ժամանակ փոքր ավելացումներով և տրվում է համաձայն մեր ցանկության, արժանավորության և պատրաստվածության: Այսպիսի հաղորդակցությունները Երկնային Հորից աստիճանաբար և մեղմորեն «[իջնում են մեր] հոգու վրա, ինչպես ցողը երկնքից» (ՎևՈւ 121.45): Հայտնության այս ձևը ավելի հաճախ է հանդիպում, քան Նեփիի վառ, բայց ավելի հազվադեպ հանդիպող փորձառությունը,, երբ նա փորձեց մի քանի տարբեր միջոցներ, մինչև հաջողության հասավ Լաբանից արույրե թիթեղները ստանալում (տես 1 Նեփի 3–4): Ի վերջո, նա Հոգու առաջնորդությամբ գնաց Երուսաղեմ, «նախապես չիմանալով բաները, որոնք [նա] պետք է աներ» (1 Նեփի 4.6): Եվ նա չսովորեց, թե ինչպես պետք է միանգամից մեծ վարպետությամբ նավ կառուցեր, այլ Տիրոջ կողմից նրան ցույց տրվեց «ժամանակ առ ժամանակ, թե ինչ ձևով [նա] պետք է մշակեր նավի հեծանները» (1 Նեփի 18.1):

Եկեղեցու պատմությունն ու մեր անձնական կյանքերը լի են Տիրոջ «տող առ տող, ցուցում առ ցուցում» հայտնության օրինակներով: Օրինակ, վերականգնված ավետարանի հիմնական ճշմարտությունները Սրբազան Պուրակում միանգամից չտրվեցին մարգարե Ջոզեֆ Սմիթին: Այս անգին գանձերը հայտնվեցին ըստ անհրաժեշտության և ճիշտ ժամանակին:

Մարգարե Ջոզեֆ Ֆ. Սմիթը բացատրել է, թե ինչպես է հայտնության այս ձևը արտահայտվել իր կյանքում. «Իմ պատանեկության օրերին . . . ես հաճախ էի խնդրում Տիրոջը ինձ մի հրաշալի բան ցույց տալ, որպեսզի ես կարողանայի վկայություն ստանալ: Սակայն Տերը հրաշքները ետ պահեց ինձանից և ինձ ցույց տվեց ճշմարտությունը, տող առ տող . . . մինչև նա ինձ տվեց իմանալու ճշմարտությունը իմ ողջ էությամբ, և մինչև կասկածն ու վախը ամբողջովին հեռացան ինձանից: Նա ստիպված չեղավ երկնքից հրեշտակ ուղարկել սա անելու համար, կամ էլ խոսեր հրեշտակապետի փողով: Կենդանի Աստծո Հոգու մեղմ հանդարտ ձայնով շշնջոցների մեջոցով Նա ինձ տվեց վկայություն: Եվ այս սկզբունքով և զորությամբ Նա կտա մարդկանց բոլոր զավակներին ճշմարտության իմացություն, որը կմնա նրանց հետ, և դա նրանց կստիպի իմանալ ճշմարտությունը, ինչպես Աստված գիտի դա, և կատարել Հոր կամքը, ինչպես Քրիստոսն է դա անում: Եվ բազում հրաշալի ապացույցներ երբեք չէին կարող սա անել» (in Conference Report, Apr. 1900, 40–41):

Մենք, որպես Եկեղեցու անդամներ, այնքան շատ ենք հակված կարևորություն տալ հրաշալի և տպավորիչ հոգևոր դրսևորումներին, որ մենք կարող է արժանվույնս չգնահատենք և նույնիսկ չնկատենք

սովորական միջոցը, որի շնորհիվ Սուրբ Հոգին իրականացնում է իր գործը: Պարզ ու աստիճանաբար աճող հոգևոր տպավորություններ ստանալու հենց «միջոցի պարզությունը» (1 Նեփի 17.41), որ ժամանակի ընթացքում և ամբողջապես իրենից ներկայացնում է ցանկալի պատասխան կամ մեզ անհրաժեշտ ուղղությունը, կարող է պատճառ դառնալ, որ մենք նայենք «նշանակետից այն կողմ» (Հակոբ 4.14):

Ես խոսել եմ բազմաթիվ անհատների հետ, ովքեր կասկածում են իրենց անձնական վկայության ամրությանը և թերագնահատում են իրենց հոգևոր կարողությունները, քանի որ նրանք չեն ստանում մշտական, զարմանալի կամ ուժեղ տպավորություններ: Հավանաբար, եթե մենք խորհենք փորձառությունների մասին, որոնք ունեցան Ջոզեֆը Սրբազան Պուրակում, Սողոսը Դամասկոսի ճանապարհին և Ալմա Կրտսերը, մենք կսկսենք հավատալ, որ ինչ- որ բան սխալ է կամ պակասում է մեր մեջ, եթե մենք չունենք նմանատիպ փորձառություններ, ինչպիսին են այս հայտնի և հոգևորապես տպավորիչ օրինակները: Եթե դուք ունեցել եք նմանօրինակ մտքեր կամ կասկածներ, խնդրում եմ իմացեք, որ դուք միանգամայն նորմալ եք: Միայն շարունակեք առաջ գնալ հնազանդորեն և հավատքով առ Փրկիչ: Եթե դուք անեք սա, «հնարավոր չէ, որ դուք սխալ գնաք» (ՎևՈւ 80.3):

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը ասել է. «Ցույց տվեք ինձ Վերջին Օրերի Սրբեր, ովքեր հենվում են հրաշքների, նշանների և տեսիլքների վրա, որպեսզի հաստատուն կանգնեն Եկեղեցում, և ես ձեզ ցույց կտամ անդամներ, . . . ովքեր լավ դիրք չունեն Աստծո առաջ, և ովքեր քայլում են սայթաքուն արահետներով: Մեզ հայտնված հրաշալի դրսևորումներով չէ, որ մենք պետք է հաստատվենք ճշմարտության մեջ, այլ համեստության և Աստծո օրենքներին և պատվիրաններին հավատարիմ հնազանդության շնորհիվ է»

Լույսի հետ կապված մեկ այլ հաճախակի հանդիպող փորձառություն մեզ օգնում է սովորել ևս մեկ ճշմարտություն հայտնության «տող առ տող, ցուցում առ ցուցում» տրվող եղանակի մասին: Երբեմն արևը ծագում է ամպամած կամ մառախլապատ առավոտյան: Ամպերով ծածկված լինելու պատճառով դժվար է լինում լույսը տեսնելը և ճշտգրիտ պահը նկատելը, երբ արևը բարձրանում է հորիզոնում, հնարավոր չի լինում: Սակայն այսպիսի առավոտյան մենք այնուամենայնիվ ունենում ենք բավականաչափ լույս՝ նոր օրը տեսնելու և մեր գործերը վարելու համար:

Նման ձևով շատ անգամներ մենք հայտնություն ենք ստանում՝ առանց հստակ իմացության, թե ինչպես կամ երբ ենք մենք ստանում հայտնությունը: Եկեղեցու պատմության մի կարևոր իրադարձություն լուսաբանում է այս սկզբունքը:

1829թ. գարնանը Օլիվեր Քաուդերին դպրոցի ուսուցիչ էր Պալմիրայում, Նյու Յորք: Երբ նա իմացավ Ջոզեֆ Սմիթի և Մորմոնի Գրքի թարգմանության գործի մասին, Օլիվերը երիտասարդ մարգարեին իր օգնությունն առաջարկելու զգացողություն ունեցավ: Ուստի նա ճանապարհվեց դեպի Հարմոնի, Պենսիլվանիա, և դարձավ Ջոզեֆի դպիրը: Նրա ժամանելու պահը և նրա օգնությունը էական նշանակություն ունեցան Մորմոնի Գրքի առաջ գալու գործում:

Փրկիչը հետագայում հայտնեց Օլիվերին, որ այնքան հաճախ, որքան նա աղոթել է առաջնորդության համար, նա հրահանգներ է ստացել Տիրոջ Հոգուց: «Եթե դա այդպես չլիներ, - հայտարարել է Տերը,- դու չէիր լինի այն տեղում, որտեղ հիմա գտնվում ես: Ահա, դու գիտես, որ հարցրել ես ինձ, և ես լուսավորել եմ քո միտքը. և այժմ ես ասում եմ քեզ այս բաները, որ կարողանաս իմանալ, որ դու լուսավորվել ես ճշմարտության Հոգով» (ՎևՈւ 6.14–15):

Այսպիսով, Օլիվերը ստացավ հայտնություն Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, ով տեղեկացրեց նրան, որ նա հայտնություն էր ստացել: Հավանաբար Օլիվերը չէր հասկացել, թե ինչպես և երբ էր հրահանգներ ստացել Աստծուց և կարիք ուներ այս հրահանգը ստանալուն, որպեսզի նրա հասկացողությունը մեծանար հայտնության ոգու վերաբերյալ: Կարելի է ասել, որ Օլիվերը քայլում էր լույսով, ինչպես արևը ծագում էր ամպամած առավոտյան:

Բազում անորոշությունների և

դժվարությունների պահերին, որոնց մենք հանդիպում ենք մեր կյանքում, Աստված մեզ խորհուրդ է տալիս անել լավագույնը, որ մենք կարող ենք, գործել ինքնուրույն և չներգործվել (տես 2 Նեփի 2.26), և վստահել Իրեն: Մենք կարող է հրեշտակներ չտեսնենք, երկնային ձայներ չլսենք կամ մեծ հոգևոր տպավորություններ չստանանք: Մենք հաճախ կարող ենք առաջ շարժվել, հուսալով և աղոթելով, սակայն առանց բացարձակ հավաստիացման, որ մենք գործում ենք Աստծո կամքի համաձայն: Սակայն մինչ մենք մեծարում ենք մեր ուխտերը և պահում ենք պատվիրանները, մինչ մենք ավելի ու ավելի ենք ջանում հետևողականորեն բարիք գործել և ավելի լավը դառնալ, մենք կարող ենք վստահաբար քայլել, իմանալով, որ Աստված կուղղորդի մեր քայլերը: Եվ մենք կարող ենք վստահ խոսել, իմանալով, որ Աստված կոգեշնչի մեր խոսքերը: Սա մասամբ ունի այն սուրբ գրության իմաստը, որը հայտարարում է. «Այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ» (ՎևՈՒ 121.45):

Եթե դուք պատշաճ ձևով փնտրեք և կիրառեք հայտնության հոգին, ես խոստանում եմ ձեզ, որ դուք «կքայլեք Տիրոջ լույսով» (Եսայիա 2.5; 2 Նեփի 12.5): Երբեմն հայտնության հոգին կգործի անմիջապես և լիարժեք ձևով, երբեմն աննշան և աստիճանաբար, և հաճախ այնքան մեղմորեն, որ դուք կարող է նույնիսկ չնկատեք դա: Բայց անկախ միջոցից, որով ստացվում է այս օրհնությունը, դրա տված լույսը կպայծառացնի և կմեծացնի ձեր հոգին, կլուսավորի ձեր հասկացողությունը (տես Ալմա 5.7; 32.28), և կառաջնորդի և կպաշտպանի ձեզ և ձեր ընտանիքին:

Ես հայտարարում եմ իմ առաքելական վկայությունը, որ Հայրը և Որդին ապրում են: Հայտնության Հոգին իրական է, և կարող է և գործում է մեր անձնական կյանքում և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Ես վկայում եմ այս ճշմարտությունների մասին Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Սուրբ Տաճար՝ փարոս աշխարհին

Եկեղեցու անդամության ամենակարևոր և պսակող օրհնությունները Աստծո տաճարներում ստացվող օրհնություններն են:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես իմ սերն ու ողջույններն եմ հղում ձեզ բոլորիդ և աղոթում եմ, որ մեր Երկնային Հայրը ուղղորդի իմ մտքերը և ոգեշնչի ինձ, այսօր իմ խոսքը ձեզ հղելիս:

Կուզենայի սկսել մեկ-երկու մեկնաբանություն անելով հրաշալի ուղերձների վերաբերյալ, որ լսեցինք այս առավոտ Քույր Ալրեդի և Եպիսկոպոս Բրրթնի, և մյուսների կողմից՝ Եկեղեցու բարօրության ծրագրի վերաբերյալ: Ինչպես նշվեց, այս տարի նշվում է այդ ոգեշնչված ծրագրի 75-ամյակը, որն օրհնել է շատերի կյանքը: Ես արտոնություն եմ ունեցել անձնապես ճանաչելու նրանց, ովքեր ձեռնարկեցին այդ մեծ աշխատանքը. նրանք կարեկցանքով լի և հեռատես տղամարդիկ էին:

Ինչպես Եպիսկոպոս Բրրթնն, Քույր Ալրեդը և մյուսները հիշատակեցին, ծխի եպիսկոպոսի պատասխանատվությունն է՝ հոգ տանել իր ծխի սահմաններում ապրող կարիքավորների համար: Ես նման արտոնություն եմ ունեցել, երբ նախագահում էի որպես շատ երիտասարդ եպիսկոպոս Սոլթ Լեյք Սիթիի մի ծխում, որն ուներ 1080 անդամ, որոնցից 84-ը այրիներ էին: Շատերը օգնության կարիք ունեին: Որքան երախտապարտ էի ես Եկեղեցու բարօրության ծրագրի և Սփոփող Միության ու քահանայության քվորումների օգնության համար:

Ես հայտարարում եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բարօրության ծրագիրը ոգեշնչված է Ամենազոր Աստծո կողմից:

Այժմ, իմ եղբայրներ և քույրեր, այս համաժողովին լրանում է երեք տարին, ինչ ես հաստատվել եմ որպես Եկեղեցու Նախագահ: Իհարկե, դրանք եղել են զբաղված տարիներ, լի բազում մարտահրավերներով, ինչպես նաև անթիվ օրհնություններով: Տաճարներ նվիրագործելու և վերանվիրագործելու հնարավորությունը եղել է դրանցից առավել հաճելի և սուրբ օրհնությունը, և այսօր ես ուզում եմ խոսել տաճարի մասին:

1902թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին Եկեղեցու Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը իր բացման խոսքում հույս հայտնեց, որ մի օր մենք «տաճարներ կունենանք՝ կառուցված երկրի տարբեր մասերում, որտեղ դրանք անհրաժեշտ են մարդկանց

հարմարավետության համար»:[1]

Եկեղեցու կազմավորումից ի վեր, առաջին 150 տարվա ընթացքում՝ 1830-1980թթ., 21 տաճար է կառուցվել, այդ թվում՝ Կիրթլենդի, Օհայո, և Նավույի, Իլինոյս, տաճարները: Ի տարբերություն դրա, 30 տարում 1980-ից ի վեր 115 տաճարներ են կառուցվել և նվիրագործվել: Երեկ հայտարարված 3 նոր տաճարներից բացի, 26 տաճարներ կառուցման կամ կառուցումը սկսելու փուլում են: Այս թիվը կշարունակի աճել:

Նպատակը, որի համար հույս էր փայփայում Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը 1902թ., դառնում է իրականություն: Մեր ցանկությունն է՝ մեր անդամների համար տաճարը դարձնել որքան հնարավոր է մատչելի:

Այժմ կառուցման փուլում գտնվող տաճարներից մեկը Մանաուսի տաճարն է Բրազիլիայում: Տարիներ առաջ ես կարդացի հարյուր անդամից ավել բաղկացած մի խմբի մասին, որ Ամազոնի սրտում գտնվող Մանաուսից մեկնել էր այն ժամանակ մոտակա Սան Պաուլոյի տաճար, որը մոտ 4000 կմ. հեռու է Մանաուսից: Այդ հավատարիմ Սրբերը չորս օր նավակով ճամփորդել էին Ամազոն գետով և դրա վտակներով: Ջրի վրայով այդ նավարկությունն ավարտելով, նրանք ևս երեք օր ճամփորդել էին ավտոբուսով, խորդուբորտ ճանապարհներով, չունենալով բավականաչափ ուտելիք և քնելու հարմարավետ տեղ: Յոթ օր ու գիշեր ճամփորդելուց հետո, նրանք հասել էին Սան Պաուլոյի տաճար, որտեղ հավերժական արարողություններ էին կատարվել: Անշուշտ, նրանց ետդարձի ճանապարհը նույնպես դժվար էր: Ինչևէ, նրանք ստացել էին տաճարային ծեսերն ու օրհնությունները, և թեպետ նրանց դրամապանակները դատարկ էին, նրանք լցված էին տաճարի ոգով և իրենց ստացած օրհնությունների համար երախտագիտությամբ:[2] Այժմ՝ տարիներ անց, Մանաուսի մեր անդամները երջանիկ են, տեսնելով Ռիո Նեգրո Գետի ափին կառուցվող իրենց տաճարը: Տաճարները ուրախություն են պարգևում մեր հավատարիմ անդամներին, որտեղ էլ որ դրանք կառուցվեն:

Աստծո տաճարներում առկա օրհնությունները ստանալու համար կատարված զոհաբերությունների մասին տեղեկությունները միշտ հուզել են իմ սիրտը և տաճարների համար երախտագիտության նոր զգացում պարգևել:

Թույլ տվեք ձեզ պատմել Թիհի և Թարարաինա Մու Թամի և նրանց 10 երեխաների մասին: Ամբողջ ընտանիքը, բացի դուստրերից մեկից, միացել էր Եկեղեցուն 1960-ականների սկզբին, երբ միսիոներները եկան իրենց կղզի, որը գտնվում է Թահիթիից մոտ 160 կմ. դեպի հարավ: Շուտով նրանք սկսեցին փափագել տաճարում կնքված հավերժական ընտանիքի օրհնությունները:

Այդ ժամանակ Մու Թամի ընտանիքի համար մոտակա տաճարը Համիլտոն Նոր Զելանդիա տաճարն էր, որը գտնվում էր ավելի քան 4000 կմ. դեպի հարավարևմուտք և հասանելի էր միայն թանկ ինքնաթիռով: Մու Թամի մեծ ընտանիքը, որն իր աղքատիկ ապրուստը հայթհայթում էր փոքր պլանտացիայում, գումար չուներ ինքնաթիռի տոմս գնելու համար, իսկ իրենց Խաղաղօվկիանոսյան կղզում աշխատանքի որևէ հնարավորություն չկար: Այսպիսով, Մու Թամը և նրա որդին՝ Զերարդը, դժվարին որոշում կայացրեցին՝ ճանապարհորդել 4800 կմ., որպեսզի աշխատեին Նյու Կալեդոնիայում, որտեղ մյուս որդին արդեն աշխատում էր: Գործատուն իր աշխատողներին վճարում էր հանքեր հասնելու, բայց ոչ տուն վերադառնալու համար:

Մու Թամ ընտանիքի երեք տղամարդիկ աշխատեցին չորս տարի: Եղբայր Մու Թամը մեկ անգամ կարճ ժամանակով միայնակ վերադարձավ տուն՝ դստեր ամուսնությանը մասնակցելու համար:

Չորս տարի անց, Եղբայր Մու Թամը և նրա որդիները խնայեցին այնքան գումար, որով հնարավոր էր ընտանիքը տանել Նոր Զելանդիայի Տաճար: Բոլորը, ովքեր անդամ էին, գնացին, մեկ դստերից բացի, որը երեխա էր սպասում: Նրանք կնքվեցին ժամանակի և հավերժության համար՝ աննկարագրելի հրաշալի մի փորձառություն:

Եղբայր Մու Թամը տաճարից

վերադարձավ ուղիղ Նյու Կալեդոնիա, որտեղ նա երկու տարի ևս աշխատեց, որպեսզի վճարեր իրենց հետ տաճար չայցելած դստեր, նրա ամուսնու և երեխայի ուղեվարձը:

Իրենց կյանքի վերջին տարիներին, Եղբայր և Քույր Մու Թամերը ցանկացան ծառայել տաճարում: Այդ ժամանակ կառուցվեց և նվիրագործվեց Պապետե Թահիթի Տաճարը և նրանք չորս միսիա ծառայեցին այնտեղ:[3]

Իմ եղբայրներ և քույրեր, տաճարները միայն քար ու շաղախ չեն: Նրանք լցված են հավատքով ու ծոմով: Դրանք կառուցվում են փորձություններով և վկայություններով: Դրանք սրբագործվում են զոհաբերությամբ և ծառայությամբ:

Այս տնտեսության մեջ կառուցված առաջին տաճարը Կիրթլանդի տաճարն էր Օհայոյում: Այդ ժամանակ Սրբերն աղքատ էին, սակայն Տերը պատվիրեց, որ տաճար կառուցվի, այնպես որ նրանք գործի անցան: Այդ փորձառության մասին Երեց Հեբեր Ս. Քիմբալը գրել է. «Տերը միայն գիտի, թե ինչպիսի աղքատության, զրկանքների և վշտի միջով ենք մենք անցել, դա կատարելու համար»:[4] Եվ ապա, երբ ամեն ինչ փութաջանորեն ավարտվել էր, Սրբերը ստիպված էին հեռանալ Օհայոյից և իրենց սիրելի տաճարից: Նրանք, թեպետ ժամանակավոր, բայց ի վերջո ապաստան գտան Միսիսիպի գետի ափին՝ Իլինոյս նահանգում: Նրանք իրենց բնակավայրն անվանեցին Նավու, և կրկին պատրաստ էին տալ այն ամենը, ինչ ունեին, և իրենց անաղարտ հավատքով նրանք մեկ այլ տաճար կառուցեցին իրենց Աստծո համար: Հալածանքները մոլեգնում էին, և Նավույի Տաճարի կառուցումը գրեթե ավարտին էր հասնում, երբ նրանք կրկին անգամ քշվեցին իրենց տներից՝ ապաստան փնտրելով ամայի վայրերում:

Մաքառումներն ու զոհաբերությունները դարձյալ սկսվեցին, երբ նրանք 40 տարի տքնեցին Սոլթ Լեյքի Տաճարը կառուցելու համար, որը հրաշագեղ կանգնած է մեր այս տարածքում՝ Համաժողովների Կենտրոնից մի փոքր դեպի հարավ:

Մեծ զոհաբերություններ են կատարվել տաճարի կառուցման և տաճար այցելելու համար: Անթիվ անդամներ են աշխատել և մաքառել, որպեսզի իրենք և իրենց ընտանիքները օրհնություններ ստանան Աստծո տաճարներում:

Ինչո՞ւ են այդքան շատերը ցանկանում տալ այդքան շատ՝ տաճարի օրհնությունները ստանալու համար: Ովքեր հասկանում են տաճարից եկող հավերժական օրհնությունները, գիտեն, որ ոչ մի զոհաբերություն այդքան մեծ չէ, ոչ մի գին այդքան ծանր չէ, ոչ մի մաքառում այդքան դժվար չէ, այդ օրհնությունները ստանալու համար: Ճամփորդելու համար մղոնները երբեք շատ չեն, հաղթահարելու համար խոչընդոտները մեծ չեն կամ համբերելու համար անհարմարությունը չափից շատ չէ: Նրանք հասկանում են, որ տաճարում ստացվող փրկող ծեսերը, որ թույլ են տալիս մի օր վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ՝ հավերժական ընտանիք և օժտվել օրհնություններով ու բարձրյալի զորությամբ, արժեն ամեն զոհաբերություն և ամեն ջանք:

Այսօր տաճար այցելելու համար մեզանից շատերը ստիպված չեն մեծ տառապանքներ կրել: Եկեղեցու անդամների ութսունհինգ տոկոսն այժմ ապրում է տաճարից 320 կմ. հեռավորության սահմաններում, իսկ մեզանից շատերի համար այդ տարածությունը շատ ավելի կարճ է:

Եթե դուք տաճարում եղել եք, և եթե ինչ-որ չափով մոտ եք ապրում տաճարին, ձեր զոհաբերությունը կարող է լինել ձեր զբաղված կյանքից ժամանակ տրամադրելը՝ կանոնավոր տաճար այցելելու համար: Մեր տաճարներում դեռ շատ աշխատանք կա անելու նրանց համար, ովքեր սպասում են վարագույրի այն կողմում: Նրանց համար աշխատանք կատարելով, մենք կիմանանք, որ իրականացրել ենք այն, ինչը նրանք չեն կարող անել իրենց համար: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն իր հզոր հայտարարության մեջ ասել է. «Նրանց համար գործադրվող մեր ջանքերի շնորհիվ նրանց գերության շղթաները կընկնեն և նրանց շրջապատող խավարը կցրվի, որ լույս շողա նրանց վրա, և նրանք հոգիների աշխարհում կլսեն այն աշխատանքի մասին, որ նրանց համար կատարել են իրենց զավակները այստեղ, և նրանք կհրճվեն ձեզ հետ այդ պարտականությունները կատարելու համար»:[5] Իմ եղբայրներ և քույրեր, մենք պետք է կատարենք այդ աշխատանքը:

Իմ ընտանիքում, մեր ամենասուրբ և թանկագին փորձառություններից մի քանիսը տեղի են ունեցել, երբ մենք միացել ենք տաճարում՝ կնքող արարողություններ կատարելու մեր մահացած նախնիների համար:

Եթե դուք դեռ չեք եղել տաճարում, կամ եթե *եղել* եք, սակայն այժմ երաշխավորագիր չունեք, չկա ավելի կարևոր նպատակ ձեզ համար, քան ձգտել արժանի դառնալ տաճար գնալուն: Ձեր զոհաբերությունը կարող է ձեր կյանքը համապատասխան դարձնել երաշխավորագիրը ստանալուն, օրինակ՝ դա կարող է լինել երկարատև սովորությունները թողնելը, որոնք ձեզ անարժան են դարձնում: Դա կարող է լինել տասանորդը վճարելու համար հավատք ունենալը և կարգապահությունը: Ինչ էլ որ լինի, արժանացեք Աստծո տաճար մտնելուն: Ձեռք բերեք տաճարի երաշխավորագիր և այն համարեք թանկագին բան, քանի որ դա այդպես էլ կա:

Եթե չեք մտել Տիրոջ տուն և չեք ստացել բոլոր օրհնությունները, որ սպասում են ձեզ այնտեղ, դուք ձեռք չեք բերել այն ամենը, ինչ Եկեղեցին է առաջարկում: Եկեղեցու անդամության ամենակարևոր և պսակող օրհնությունները Աստծո տաճարներում ստացվող օրհնություններն են:

Արդ, դեռահաս տարիքում գտնվող իմ երիտասարդ ընկերներ, միշտ ձեր տեսադաշտում պահեք տաճարը: Մի արեք այնպիսի բաներ, որոնք ձեզ կհեռացնեն տաճար մտնելու հնարավորությունից և այնտեղի սուրբ և հավերժական օրհնությունները ճաշակելուց: Ես գովում եմ ձեզանից նրանց, ովքեր արդեն կանոնավոր գնում են տաճար և կատարում մահացածների համար մկրտություններ, առավոտ շուտ արթնանալով, որպեսզի կարողանաք մասնակցել նման մկրտություններին մինչև դպրոց գնալը: Ես չեմ պատկերացնում օրը սկսելու ավելի լավ ձև:

Փոքր երեխաների ծնողներ, ցանկանում եմ կիսվել ձեզ հետ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի մի իմաստուն խորհրդով: Նա ասել է. «Հրաշալի բան կլինի, եթե . . . ծնողներն իրենց տան յուրաքանչյուր ննջասենյակում տաճարի նկար ունենան, որ [իրենց երեխաները] մանուկ հասակից ամեն օր նայեն այդ նկարին, մինչև որ այն կդառնա իրենց կյանքի մասը: Երբ նրանք հասնեն այն տարիքին, երբ պետք

է շատ կարևոր որոշում կայացնեն [տաճար գնալու վերաբերյալ], այն արդեն կայացված կլինի»:[6]

Երեխաների Խմբում մեր երեխաները երգում են.

Ես սիրում եմ տաճարը,
Մի օր այնտեղ կգնամ,
Իմ Հոր հետ ուխտ կկապեմ,
Հնազանդվել կխոստանամ:[7]

Ես աղերսում եմ ձեզ, ձեր երեխաներին ուսուցանեք տաճարի կարևորության մասին:

Աշխարհը կարող է լինել բարդ ու դժվարին տեղ, որտեղ մենք ապրում ենք: Մենք հաճախ շրջապատվում ենք բաներով, որ մեզ քաշում են ներքև: Երբ դուք և ես գնում ենք Աստծո սուրբ տուն, հիշում ենք այնտեղ կապած մեր ուխտերը, մենք ավելի տոկուն ենք դառնում՝ կրելու ամեն փորձություն և հաղթահարելու ամեն գայթակղություն: Այս սրբավայրում մենք խաղաղություն ենք գտնում, մենք նրանում և ամրապնդվում ենք:

Այժմ, իմ եղբայրներ և քույրեր, նախքան խոսքս ավարտելը կուզենայի նշել ևս մեկ տաճարի մասին: Ոչ հեռու ապագայում, երբ նոր տաճարներ կկառուցվեն ողջ աշխարհում, դրանցից մեկը վեր կխոյանա մի քաղաքում, որը գոյություն ունի արդեն 2500 տարուց ավել: Ես խոսում եմ այն տաճարի մասին, որն այժմ կառուցվում է Հռոմում, Իտալիա:

Ամեն տաճար Աստծո տուն է. դրանք կատարում են նույն ֆունկցիաներն ու արարողությունները և շնորհում են նույն օրհնությունները: Հռոմի Տաճարը Իտալիայում եզակի է նրանով, որ կառուցվում է աշխարհի ամենապատմական վայրերից մեկում՝ մի քաղաքում, որտեղ հնում Պետրոս և Պողոս Առաքյալները քարոզել են Քրիստոսի ավետարանը և որտեղ նրանք երկուսն էլ նահատակվել են:

Անցյալ հոկտեմբերին, երբ մենք հավաքվել էինք Հռոմի հյուսիսարևելյան ծայրամասի մի հիասքանչ հովերգական վայրում, ես առիթ ունեցա նվիրագործման աղոթքն ասել, երբ մենք պատրաստվում էինք կատարել հողակտորի բացումը: Ես ոգեշնչում ստացա, որ կանչեմ Իտալիայի սենատոր Լուչիո Մալանիին և Հռոմի փոխքաղաքապետ Ջուզեպպե Չիարդիին առաջինը փորել հողը: Նրանք երկուսն էլ նշանակալի դեր էին խաղացել, որպեսզի մեզ թույլատրվեր տաճար կառուցել իրենց քաղաքում:

Օրն ամպած, սակայն տաք էր: Թեպետ անձրև պիտի տեղար, միայն մեկ կամ երկու կաթիլ թափվեց: Երբ հրաշալի երգչախումբը իտալերեն կատարեց «Աստծո Հոգին» սքանչելի

մեղեդին, կարծես երկինքն ու երկիրը միացել էին առ Ամենազոր Աստված զոհաբանության և երախտագիտության փառահեղ օրհներգի մեջ: Արցունքները դժվար էր զսպել:

Մի գալիք օր, այս «հավերժական քաղաքի» հավատարիմ անդամները Աստծո սուրբ տանը կստանան իրենց բնույթով հավերժական ծեսերը:

Ես իմ անսպառ երախտագիտությունն եմ հայտնում իմ Երկնային Հորը այն տաճարի համար, որն այժմ կառուցվում է Հռոմում, և ամենուր գտնվող մեր բոլոր տաճարների համար: Յուրաքանչյուրը կանգնած է որպես փարոս աշխարհի համար, որպես մեր վկայության արտահայտում, որ Աստված՝ մեր Երկնային Հայրը ապրում է, որ Նա ցանկանում է օրհնել մեզ և, իսկապես, օրհնել բոլոր սերունդների Իր որդիներին և դուստրերին: Մեր տաճարներից յուրաքանչյուրը արտահայտում է մեր վկայությունն այն մասին, որ կյանքը գերեզմանից այն կողմ իրական է և այնքան որոշակի, որքան երկրի վրա մեր կյանքը: Ես դա վկայում եմ:

Իմ եղբայրներ և քույրեր, թող որ մենք կատարենք ամեն անհրաժեշտ զոհաբերություն, որպեսզի հաճախենք տաճար և ունենանք տաճարի ոգին մեր սրտերում և մեր տներում: Թող որ մենք գնանք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հետքերով, որը կատարեց մեծագույն զոհաբերությունը մեզ համար, որ մենք կարողանանք ունենալ հավերժական կյանք և վեհացում մեր Երկնային Հոր արքայությունում: Սա է իմ անկեղծ աղոթքը, և ես ասում այն մեր Փրկիչ՝ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Joseph F. Smith, in Conference Report, Oct. 1902, 3.
2. Տես Vilson Felipe Santiago and Linda Ritchie Archibald, "From Amazon Basin to Temple," *Church News,* Mar. 13, 1993, 6:
3. Տես C. Jay Larson, "Temple Moments: Impossible Desire," *Church News,* Mar. 16, 1996, 16:
4. Heber C. Kimball, in Orson F. Whitney, *Life of Heber C. Kimball* (1945), 67.
5. *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 247.
6. *The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball (1982), 301.
7. Janice Kapp Perry, "I Love to See the Temple," *Children's Songbook,* 95.

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ամուսնության հավերժական օրհնությունները

Տաճարային կնքումն ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում ավելի ուշ, երբ կյանքն արդեն ապրել ես:

Հրաշալի երգչախմբի այս սքանչելի ուղերձը, կարծում եմ, նկարագրում է «Հիսուսին փորձելու նմանվելու» մեր շատերի կյանքի ուղին:

1953թ. հուլիսի 16-ին, իմ սիրելի Ջենինն ու ես՝ որպես երիտասարդ զույգ, ծնկի իջանք Յութայի Մանթիի Տաճարի զոհասեղանի առաջ: Նախագահ Լուիս Ռ. Անդերսոնը գործադրեց կնքելու իշխանությունը և մեզ հայտարարեց ամուսին և կին՝ ժամանակի և հավերժության համար ամուսնացած: Իմ ուժերից վեր է նկարագրել այն խաղաղությունն ու անդորրը, որ եկան այն հավաստիացումից, որ եթե ես շարունակեմ ապրել արժանի, ապա Տիրոջ տանը համապատասխան քահանայության իշխանությամբ կատարված այդ սուրբ արարողության շնորհիվ կկարողանամ ընդմիշտ լինել իմ սիրելի Ջենինի ու մեր երեխաների հետ:

Մեր յոթ երեխաները կապված են մեզ տաճարային սուրբ արարողություններով: Իմ թանկագին կինը՝ Ջենինն ու մեր երեխաներից երկուսը վարագույրի մյուս կողմում են: Մեր ընտանիքի մնացած անդամների համար դա հզոր դրդապատճառ է այնպես ապրելու, որ մենք միասին կարողանանք ստանալ տաճարում խոստացված բոլոր հավերժական օրհնությունները:

Երկու կարևոր սյուները, որոնց վրա հենվում է Երկնային Հոր երջանկության ծրագիրը, ամուսնությունը և ընտանիքն են: Դրանց լուրջ նշանակությունը նվազեցվում է Սատանայի համառ ջանքերով՝ բաժանելու ընտանիքը և ցածրացնելու տաճարային արարողությունների նշանակությունը, որոնք կապում են ընտանիքը միասին՝ հավերժության համար: Տաճարային կնքումն ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում ավելի ուշ, երբ կյանքն արդեն ապրել ես: Դուք կարող եք չափից շատ մտերմանալ իրար հետ և գտնել շատ մեծ երջանկություն ու զոհունակություն մահկանացության մեջ:

Մի անգամ ես մի կարևոր դաս

սովորեցի իմ կնոջից: Ես հաճախ էի ճամփորդում կապված իմ աշխատանքի հետ: Մոտ երկու շաբաթ բացակայելուց հետո ես վերադարձել էի տուն շաբաթ առավոտյան: Մինչև հաջորդ ժողովի գնալը ես չորս ժամ ունեի: Ես նկատեցի, որ մեր փոքր լվացքի մեքենան փչացել էր և կինս ձեռքով լվացք էր անում: Ես սկսեցի նորոգել մեքենան:

Ջենինը եկավ և ասաց.«Ռիկ, ի՞նչ ես անում»:

Ես ասացի. «Ես վերանորոգում եմ լվացքի մեքենան, որպեսզի դու ձեռքով չլվանաս»:

Նա ասաց. «Ոչ, գնա խաղա երեխաների հետ»:

Ես ասացի. «Ես կարող եմ խաղալ երեխաների հետ ցանկացած ժամանակ, ես ուզում եմ օգնել քեզ»:

Այդ ժամանակ նա ասաց. «Ռիչարդ, խնդրում եմ, գնա խաղա երեխաների հետ»:

Երբ նա խոսեց ինձ հետ այդպես լուրջ, ես հնազանդվեցի:

Ես հրաշալի ժամանակ անցկացրեցի մեր երեխաների հետ: Մենք վազում էինք իրար հետևից և թավալվում աշնան տերևներում: Հետո ես գնացի իմ ժողովին: Ես, հավանաբար, կմոռանայի այդ փորձառությունը, եթե չլիներ այն դասը, որ նա ուզում էր, որ ես սովորեի:

Հաջորդ առավոտյան՝ մոտ ժամը 4:00-ին, ես արթնացա՝ զգալով երկու փոքրիկ ձեռքեր իմ պարանոցի շուրջ, մի համբույր այտիս և իմ ականջին շշնջացին այս բառերը, որոնք ես երբեք չեմ մոռանա. «Հայրիկ, ես սիրում եմ քեզ: Դու իմ ամենալավ ընկերն ես»:

Եթե նման փորձառություն ես ունենում ընտանիքիդ հետ, ապա ունենում ես այս կյանքի մեծագույն ուրախություններից մեկը:

Եթե դուք համապատասխան տարիքի երիտասարդ տղամարդիկ եք և դեռ ամուսնացած չեք, ժամանակ մի ծախսեք դատարկ բաների վրա: Առաջ շարժվեք կյանքում և աշխատեք ամունանալու ուղղությամբ: Կյանքի այս ժամանակահատվածը իզուր մի վատնեք: Երիտասարդ տղամարդիկ, ծառայեք արժանի միսիա: Այնուհետև ձեր առաջնահերթ նպատակը թող լինի արժանի



հավերժական զուգընկեր գտնելը: Երբ զգաք, որ հետաքրքրություն ունեք որևէ երիտասարդ կնոջ հանդեպ, ցույց տվեք նրան, որ դուք բացառիկ անձնավորություն եք, որ նրա համար հետաքրքիր կլինի ձեզ ավելի լավ ճանաչելը: Տարեք նրան արժանի վայրեր: Որոշ հնարագիտություն ցուցաբերեք: Եթե ուզում եք ունենալ հրաշալի կին, դուք պետք է ցույց տաք նրան, թե ինչպիսի հիանալի տղամարդ եք և ապագա ամուսին:

Եթե գտել եք արժանի մեկին, ապա Տիրոջ կողմից սահմանված արժանավորության սահմանների մեջ կարող եք զարմանահրաշ սիրատածում և ամուսնություն ձևավորել և շատ, շատ երջանիկ լինել հավերժորեն:

Եթե դուք ամուսնացած եք, դուք հավատարի՞մ եք ձեր կողակցին ինչպես մտքով, այնպես էլ ֆիզիկապես: Դուք հավատարի՞մ եք ձեր ամուսնական ուխտերին՝ մեկ այլ անձնավորության հետ երբեք չմասնակցելով այնպիսի զրույցների, որը չէիք ցանկանա ձեր կողակիցը պատահմամբ լսեր: Դուք բարյացակամ ու օգնո՞ղ եք ձեր ամուսնուն և երեխաներին:

Եղբայրնե՛ր, արդյոք դուք ղեկավարո՞ւմ եք այնպիսի ընտանեկան միջոցառումներ, ինչպիսիք են սուրբ գրությունների ուսումնասիրությունը, ընտանեկան աղոթքը և ընտանեկան երեկոն, թե՞ ձեր կինն է լրացնում տան հանդեպ ձեր ուշադրության պակասը: Արդյոք, դուք հաճա՞խ եք ասում ձեր կնոջը, թե որքան շատ եք սիրում նրան: Չէ՞ որ այն մեծ երջանկություն կբերի նրան: Շատ եմ ասել այդ մասին տղամարդկանց, բայց նրանցից միշտ լսել եմ. «Օ, նա դա գիտի»: Միևնույն է, դուք պետք է ասեք նրան: Կինը ծաղկում, փթթում և մեծապես օրհնվում է այդ վերահաստատումը լսելով: Երախտագիտություն հայտնեք այն ամենի համար, ինչ ձեր կինն անում է ձեր փոխարեն: Հաճախ արտահայտեք այդ սերն ու երախտագիտությունը: Դա կյանքը շատ ավելի հարուստ, ավելի հաճելի ու նպատակասլաց կդարձնի: Եվ դա ավելի լավ է ներգործում, երբ դա ասելիս նրան գրկում եք:

Ես իմ կնոջից եմ սովորել այդ ամենի կարևորությունը: Մեր ամուսնության վաղ շրջանում, երբ բացում էի սուրբ գրությունները ելույթ պատրաստելու համար, շատ հաճախ էջերի արանքից ընկնում էր Ջենինից մի խրախուսող, օգնող երկտող: Երբեմն դրանք այնքան զգացմունքային էին, որ ես չէի կարողանում խոսել: Սիրող կնոջ այս թանկարժեք երկտողերը, տարիներ շարունակ մխիթարության և ոգեշնչման անգին գանձեր են եղել ու շարունակում են մնալ:

Ես սկսեցի նույնն անել նրա համար, առանց գիտակցելու, թե ինչ նշանակություն դա կունենար նրա համար: Հիշում եմ, մի տարի ես միջոց չունեի Վալենտինի օրը նվերի համար, և որոշեցի ջրաներկով նկարել սառնարանի վրա: Ես արեցի այն լավագույնը, որ կարող էի, բայց մի սխալ գործեցի: Դա չմաքրվող յուղաներկ էր, ոչ թե ջրաներկ: Բայց, միևնույն է, նա այդպես էլ թույլ չտվեց, որ ես մաքրեի այն:

Հիշում եմ, ինչպես մի օր հավաքեցի այդ փոքրիկ կլոր թղթի կտորները, որոնք առաջանում էին, թուղթը դակելուց, և դրանց վրա գրեցի 1--ից մինչև 100 համարները: Դրանք շուռ տվեցի, յուրաքանչյուրի վրա մի ուղերձ գրեցի նրա համար, ապա հավաքեցի և լցրեցի բոլորը մի ծրարի մեջ, մտածելով, որ նա մի լավ կծիծաղի:

Երբ նա մահացավ, նրա անձնական իրերի մեջ ես տեսա, թե որքան էր նա գնահատում հասարակ ուղերձները, որոնցով մենք կիսվում էինք: Ես տեսա, ինչպես էր նա սոսնձել այդ փոքրիկ շրջաններից յուրաքանչյուրը մի թղթի վրա: Նա ոչ միայն պահել էր իմ ուղերձները, այլ պահպանել էր դրանք պլաստիկ ծածկույթով, կարծես դրանք թանկարժեք գանձեր լինեին: Դրանցից միայն մեկն էր, որ նա չէր դրել մնացածների հետ: Այն շարունակում է մնալ մեր խոհանոցի ժամացույցի ապակու ներսի կողմում: Այնտեղ գրված է. «Ջենին, ժամանակն է քեզ ասել, որ ես քեզ սիրում եմ»: Դա մնում է այնտեղ՝ ինձ հիշեցնելու Երկնային Հոր այդ բացառիկ դստեր մասին:

Մտածելով մեր միասին ապրած կյանքի մասին, ես հասկացա, թե մենք որքան օրհնված ենք եղել: Մեր տանը երբեք վեճ չի եղել, մենք երբեք իրար վատ խոսքեր չենք ասել: Այժմ ես հասկանում եմ, որ օրհնությունը եկել է դրա արդյունքում: Դա նրա սերը հոժարակամ կիսելու և անձնվիրության արդյունքն էր: Մեր իրար հետ ապրած հետագա տարիներին ես փորձել եմ հետևել նրա օրինակին: Ես խորհուրդ եմ տալիս, որ որպես ամուսին և կին դուք նույնն անեք ձեր տանը:

Մաքուր, բարի, անզուգական սերը ազդեցիկ ուժ ունի: Անզուգական սերը հաջողակ ամուսնության հիմքն է: Այն բարեկիրթ, տաղանդավոր, զարգացած երեխաներ ունենալու հիմնական նախադրյալն է: Ո՞վ կարող է արդարացիորեն գնահատել մոր սիրո առաքինի ազդեցությունը: Ի՞նչ հարատև պտուղներ կստացվեն սիրո ճշմարիտ սերմերից, որոնք դուք, որպես մայր կարող եք զգուշորեն ցանել և սիրով մշակել երեխայի վստահող մտքի ու սրտի բերքատու հողում: Որպես մայր ձեզ տրված է աստվածային ներքին զգացողություն՝ նկատել և օգնել երեխային, նրա հատուկ տաղանդն ու եզակի կարողությունները ի հայտ բերելով: Ձեր ամուսնու հետ միասին դուք կարող եք փայփայել ու ամրացնել, նպաստելով՝ այդ գծերի զարգացմանը:

Չափազանց մեծ պարգև է ամուսնացած լինելը: Ամուսնությունը հրաշալի բան է: Ժամանակի ընթացքում դուք սկսում եք միանման մտածել, ունենալ նույն մտքերն ու տպավորությունները: Ժամանակներ են լինում, երբ դուք չափազանց երջանիկ եք, լինում են փորձելու և փորձվելու ժամանակներ, սակայն Տերն առաջնորդում է ձեզ այդ բոլոր փորձառությունների միջով անցնելիս, երբ դուք միասին եք:

Մի գիշեր մեր սրտի խնդիր ունեցող տղան՝ Ռիչարդն արթնացավ: Մենք երկուսս էլ լսեցինք այդ: Սովորաբար, իմ կինն էր վեր կենում լացող երեխայի համար հոգ տանելու, բայց այս անգամ ես ասացի. «Ես կհոգամ նրա մասին»:

Կապված նրա խնդրի հետ, երբ նա սկսում էր լաց լինել, նրա փոքրիկ սիրտը սկսում էր շատ արագ աշխատել: Նա փսխում էր իր կերածը և կեղտոտում անկողինը: Այդ գիշեր ես ամուր գրկել էի նրան, փորձելով հանգստացնել նրա բաբախող սիրտը և չդադարող լացը, մինչ փոխում էի նրա շորերն ու սավանները: Ես գրկած պահեցի նրան, մինչև նա քնեց: Ես այդ ժամանակ չգիտեի, որ ընդամենը մի քանի ամիս հետո նա կմահանար: Ես միշտ կհիշեմ, թե ինչպես էի գրկել նրան այդ գիշեր:

Ես միշտ հիշում եմ, որ մեր փոքր տղան շատ հիվանդ էր: Նա հիվանդանոցում էլ մահացավ: Հիվանդանոցից վերադառնալիս, մենք՝ես ու կինս, մեքենան մի կողմ քաշեցինք: Ես նրան գրկեցի, երկուսս էլ մի քիչ լաց եղանք, բայց հասկացանք, որ նրա հետ կլինենք վարագույրի այն կողմում, քանի որ կապել ենք ուխտերը տաճարում: Դա մեզ մխիթարեց, օգնելով նրա կորուստը ավելի հեշտ տանել:

Ջենինի բարությունն ինձ այնքան շատ բան է սովորեցրել: Ես խելամիտ չէի, իսկ նա շատ կազմակերպված, շատ խելամիտ և շատ հոգևոր անձնավորություն էր: Ամուսնությունը հիանալի միջավայր է եսասեր կամ եսակենտրոն լինելու ցանկացած հակվածություն հաղթահարելու համար: Իմ կարծիքով, պատճառներից մեկը, որ կյանքում մեզ խորհուրդ է տրվում շուտ ամուսնանալ, այն է, որ մենք չհասցնենք զարգացնել անհամապատասխան

բնավորության գծեր, որոնք հետագայում դժվար կլինի փոխել:

Ես կարեկցում եմ այն տղամարդուն, ով դեռ չի կատարել իր ընտրությունը հավերժական զուգընկերոջ հարցում, և իմ սիրտը ցավում է այն քույրերի համար, ովքեր ամուսնանալու հնարավորություն չեն ունեցել: Ձեզանից ոմանք, հնարավոր է, իրենց միայնակ և չգնահատված զգան, և չտեսնեն, թե ինչպես է հնարավոր ունենալ ամուսնության և երեխաների կամ սեփական ընտանիքի օրհնությունը:Տիրոջ համար ամեն բան հնարավոր է, և Նա պահում է խոստումները, որ ոգեշնչում է իր ծառաներին հայտարարել: Հավերժությունը երկար ժամանակ է: Հավատացեք այդ խոստումներին և ապրեք դրանց արժանի, որպեսզի Իր ժամանակին Տերը կարողանա դրանք իրականացնել ձեր կյանքում: Վստահ եղեք, որ դուք կստանաք յուրաքանչյուր խոստացված օրհնություն, որին արժանի եք:

Հայցում եմ ձեր ներողամտությունը իմ թանկագին կնոջ՝ Ջենինի մասին խոսելու համար, բայց մենք հավերժական ընտանիք ենք: Նա միշտ երջանիկ էր, և դա հիմնականում գալիս էր ուրիշներին ծառայելուց: Անգամ, երբ նա արդեն շատ հիվանդ էր, իր առավոտյան աղոթքներում խնդրում էր իր Երկնային Հորը առաջնորդել իրեն դեպի այն անձնավորությունը, ում նա կարող էր օգնել: Այդ անկեղծ աղոթքները բազմիցս պատասխանվել են, քանզի՝շատերի բեռները թեթևացան, շատերի կյանքը պայծառացավ: Իսկ նա՝մշտապես օրհնվեց Տիրոջ կողմից ղեկավարվող գործիք լինելու համար:

Ես գիտեմ, թե ինչ է նշանակում սիրել Երկնային Հոր դստերը, ով բարեհաճությամբ ու նվիրվածությամբ ապրեց՝ առաքինի կնոջ լիարժեք ու շքեղ իր կյանքը: Ես վստահ եմ, որ երբ ապագայում ես կրկին տեսնեմ նրան վարագույրի մյուս կողմում, մենք կզգանք, որ մենք հիմա ավելի շատ ենք սիրահարված: Մենք հիմա իրար ավելի շատ կգնահատենք՝ այս ժամանակը վարագույրով բաժանված անցկացնելու պատճառով, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

«Ես որոնց որ սիրում եմ հանդիմանում եմ և խրատում եմ»

Խրատին դիմանալու փորձառությունը կարող է կատարելագործել մեզ և պատրաստել հոգևոր ավելի մեծ արտոնություններ ստանալուն:

Մեր Երկնային Հայրը բարձր ակնկալիքների Աստված է: Այն, ինչ Նա ակնկալում է մեզանից, նկարագրված է Նրա Որդի Հիսուս Քրիստոսի այս խոսքերով. «Ես կամենում եմ, որ դուք լինեք կատարյալ, ճիշտ ինչպես ես, կամ ձեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է» (3 Նեփի 12.48): Նա առաջարկում է մեզ սուրբ դառնալ, որպեսզի մենք կարողանանք «մնալ սելեստիալ փառքում» (ՎևՈ 88.22) և բնակվել Նրա ներկայության մեջ (Մովսես 6.57): Նա գիտի, թե ինչ է պահանջվում, և՝ մեր փոխակերպումը հնարավոր դարձնելու համար, Նա տալիս է Իր պատվիրանները և ուխտերը, Սուրբ Հոգու պարգևը և, ամենակարևորը, Իր Սիրելի Որդու Քավությունը և Հարությունը:

Այս ամենում Աստծո նպատակն այն է, որ մենք՝ Նրա զավակները, կարողանանք ունենալ առավելագույն ուրախություն, լինենք Իր հետ հավերժ և նմանվենք Իրեն: Մի քանի տարի առաջ Երեց Դալլին Հ. Օուքսը բացատրեց. «Վերջին Դատաստանը ոչ թե գնահատում է բարի և չար գործերի ընդհանուր գումարը, որոնք մենք *կատարել* ենք: Այն մեր գործերի և մտքերի վերջնական ազդեցության գնահատումն է՝ թե ինչ ենք մենք *դարձել*: Էական չէ միայն ինչ-որ բան անել: Պատվիրանները, ավետարանի ծեսերը և ուխտերը ներդրումային ցանկի կետեր չեն, որ պետք է ավելացվեն երկնային հաշվին: Հիսուս Քրիստոսի ավետարանը ծրագիր է, որը ցույց է տալիս, թե ինչպես դառնանք այն, ինչ ցանկանում է մեր Երկնային Հայրը, որ դառնանք»:[1]

Դժբախտաբար, ժամանակակից քրիստոնեությունը, մեծ մասամբ, չի ընդունում այն, որ Աստված իրական պահանջներ է դնում նրանց առաջ, ովքեր հավատում են Իրեն: Նրանք դիտում են Նրան ավելի շուտ որպես ծառայողի, որն ըստ խնդրանքի բավարարում է իրենց կարիքները, կամ բժիշկի, որի դերն է օգնել մարդկանց իրենց լավ զգալ:[2] Դա կրոնական մոտեցում է, որը չի հավակնում փոխելու կյանքեր: Ի տարբերություն,

հեղինակներից մեկը հայտարարում է, «որ եբրայեցիների և քրիստոնեաների սուրբ գրությունների մեջ պատկերված Աստվածը ակնկալում է ոչ միայն պարտավորվածություն, այլ նաև՝ մեր իսկ կյանքը։[3] Աստվածաշնչի Աստվածը գործ ունի կյանքի և մահվան հետ, ոչ թե սիրալիր լինելու, և պահանջում է զոհաբերական սեր, ոչ թե չեզոք անտարբերություն»։[4]

Ես ցանկանում եմ խոսել մի որոշակի մոտեցման և սովորույթի մասին, որը մենք պետք է որդեգրենք, եթե ցանկանում ենք համապատասխանել մեր Երկնային Հոր բարձր ակնկալիքներին։ Այն է՝ պատրաստակամորեն ընդունել և անգամ փնտրել ուղղում։ Ուղղումը կենսական կարևորություն ունի, եթե մենք ցանկանում ենք մեր կյանքը համապատասխանեցնել «շնորհքին, Քրիստոսի պարգևի չափի պես» (Եփեսացիս 4.13)։ Պողոսն ասում է աստվածային ուղղման կամ խրատի մասին. «Տերը իրեն սիրածին խրատում է» (Եբրայեցիս 12.6)։ Թեև դրան դժվար է դիմանալ, մենք իսկապես պետք է ուրախանանք, եթե Աստված մեզ այնքան արժանի է համարում, որ ժամանակ է գտնում և անհանգստանում մեզ ուղղելու համար։

Աստվածային խրատն ունի առնվազն երեք նպատակ. (1) համոզել մեզ ապաշխարել, (2) կատարելագործել և սրբագործել մեզ, և (3) երբեմն փոխել մեր կյանքի ուղին, դարձնելով այն ավելի լավ ուղի՝ ըստ Աստծո իմաստության։

Ամենից առաջ մտածեք ապաշխարության՝ ներման և մաքրման անհրաժեշտ պայմանի մասին։ Տերը հայտարարել է. «Ես որոնց որ սիրում եմ հանդիմանում եմ և խրատում եմ, ուրեմն ջանք արա և ապաշխարիր» (Հայտնություն 3.19)։ Կրկին Նա ասել է. «Եվ իմ ժողովուրդը պետք է անպայման խրատվի այն բաներով, որոնցով նա տառապում է, եթե դա անհրաժեշտ է, մինչև որ նա հնազանդություն սովորի» (ՎևՈւ 105.6; տես նաև ՎևՈւ 1.27)։ Վերջին օրերի հայտնության մեջ Տերը պատվիրել է Եկեղեցու բարձրագույն ղեկավարներին ապաշխարել (ինչպես կարող է պատվիրել մեզանից շատերին) նրա համար, որ պատշաճ չեն ուսուցանում իրենց երեխաներին «պատվիրաններին համաձայն» և որ չեն լինում «ավելի ջանասեր . . . և մտահոգվում տան համար» (տես ՎևՈւ 93.41–50)։ Մորմոնի Գրքում Հարեղի եղբայրն ապաշխարեց, երբ Տերը ամպի մեջ «երեք ժամվա ընթացքում . . . խրատեց նրան, որովհետև նա չէր հիշել կանչել Տիրոջ անունը» (Եթեր 2.14)։ Քանի որ նա այդքան պատրաստակամ արձագանքեց այդ խիստ խրատին, ավելի ուշ նա պատիվ ունեցավ տեսնելու և ուսուցանվելու նախաերկրային Քավիչի կողմից (տես Եթեր 3.6–20)։ Աստծո խրատի պտուղը դեպի արդարակեցություն տանող ապաշխարությունն է (տես Եբրայեցիս 12.11)։

Մեր ապաշխարությունը խթանելուց բացի, խրատին դիմանալու փորձառությունը կարող է կատարելագործել մեզ և պատրաստել հոգևոր ավելի մեծ արտոնություններ ստանալուն։ Տերն ասել է. «Իմ ժողովուրդը պիտի փորձվի բոլոր բաներում, որ կարողանա պատրաստվել այն փառքն ընդունելուն, որը ես ունեմ նրանց համար, այսինքն՝ Սիոնի փառքը. իսկ նա, ով չի դիմանում խրատին, արժանի չէ իմ արքայությանը» (ՎևՈւ 136.31)։ Մեկ այլ տեղ Նա ասում է. «Քանզի բոլոր նրանք, ովքեր չեն դիմանում խրատին, արժանի չէ իմ արքայությանը» (ՎևՈւ 136.31)։ Նա նաև ասում է. «Քանզի բոլոր նրանք, ովքեր չեն կամենում խրատին համբերել, այլ ուրանում են ինձ, չեն կարող սրբագործվել» (ՎևՈւ 101.5; տես նաև Եբրայեցիս 12.10)։ Ինչպես Երեց Փոլ Վ. Ջոնսոնն ասաց այս առավոտյան, մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի չվանենք այն ամենը, ինչ օգնում է մեզ աստվածային էություն ունենալ։

Ալմայի հետևորդները հիմնեցին Սիոնի համայնքը Հելամում, սակայն հետո նրանք գերի ընկան։ Նրանք, ընդհակառակը, արժանի չէին իրենց տառապանքներին, բայց գրվածքն ասում է.

«Այնուամենայնիվ, Տերը հարմար է գտնում խրատել իր ժողովրդին. այո, նա փորձում է նրանց համբերությունն ու նրանց հավատքը։

Սակայն ով որ իր վստահությունը դնում է նրա վրա, նույնը պիտի բարձրացվի վերջին օրը։ Այո, և այսպես դա եղավ այս ժողովրդի հետ» (Մոսիա 23.21–22)։

Տերն ամրացրեց նրանց և թեթևացրեց նրանց բեռները, և նրանք գրեթե չէին զգում դրանք իրենց մեջքին, ապա որոշ ժամանակ անց Նա ազատեց նրանց (տես Մոսիա 24.8–22)։ Նրանց հավատքը անչափ ամրացվեց այդ փորձառության արդյունքում և այդ ժամանակից ի վեր նրանք հատուկ կապով էին կապված Տիրոջ հետ։

Աստված խրատի կամ ուղղման մեկ այլ ձև է օգտագործում՝ առաջնորդելու համար մեզ դեպի ապագան, որը մենք այժմ չենք կարող տեսնել, սակայն Նա ավելի լավ գիտի ճանապարհը մեզ համար։ Տասներկուսի նախկին անդամ և Առաջին Նախագահության խորհրդական՝ Նախագահ Հյու Բ. Բրաունը, կիսվել է իր անձնական փորձով, պատմելով տարիներ առաջ Կանադայում հին ֆերմա գնելու մասին։ Երբ նա գնաց այնտեղ իր այգին մաքրելու և վերանորոգելու համար շինությունները նա նկատեց սև հաղարջի մի թուփ, որն աճել էր երկու մետր և պտուղ չէր տալիս։ Նա լավ կտրատեց այն, թողնելով միայն փոքր ցողունները։ Ապա այդ կարճ ցողուններից ամեն մեկի ծայրին նա տեսավ արցունքի նման մի կաթիլ, կարծես հաղարջի թուփը լալիս էր, ասելով.

«Ինչպե՞ս դու կարողացար այդպես վարվել ինձ հետ։ Ես այնքան լավ աճում էի։ Իսկ հիմա դու ինձ կտրեցիր։ Այգում բոլոր բույսերը կնայեն ներքև՝ որ ինձ տեսնեն։ . . . Ինչպե՞ս կարողացար։ Ես էլ կարծում էի, թե դու այստեղի այգեպան ես»։

[Նախագահ Բրաունը պատասխանեց]. «Լսիր, փոքրիկ հաղարջ, ես այստեղի այգեպանն եմ, և ես գիտեմ, թե ինչ եմ ուզում, որ դու դառնաս։ Ես չեմ ուզում, որ դու պտղատու կամ ստվեր զգող ծառ դառնաս։ Ես ուզում եմ, որ դու հաղարջի թուփ լինես, և մի օր, փոքրիկ հաղարջ, երբ դու պտուղներով ծանրացած լինես, դու կասես. «Շնորհակալություն, պարոն Այգեպան, որ այնքան շատ ինձ սիրեցիր, որ ինձ ճիշտ կտրատեցիր»։

Տարիներ անց Նախագահ Բրաունը որպես կանադական բանակի դաշտային սպա ծառայում էր Անգլիայում: Երբ վերադաս սպան զոհվեց մարտի դաշտում, Նախագահ Բրաունը ուներ բոլոր նախադրյալները զեներալ դառնալու համար և նրան կանչեցին Լոնդոն: Բայց, թեև Նախագահ Բրաունը լիովին որակավորված էր առաջխաղացման համար, նրան մերժեցին, որովհետև նա մորմոն էր: Ղեկավարը զեներալ-լինիետնյալն ասաց. «Դուք արժանի եք այդ նշանակմանը, սակայն ես չեմ կարող տալ այն ձեզ»: Այն, ինչի համար Նախագահ Բրաունը 10 տարի հույսով ապրել, աղոթել և պատրաստվել էր, մի ակնթարթում անհետացավ մատների արանքով՝ ակնհայտ խտրականության պատճառով: Շարունակելով իր պատմությունը, Նախագահ Բրաունը հիշում է.

«Ես գնացք նստեցի, վերադառնալով հետ՝. . . կոտրված սրտով, դառնության զգացումով հոգուս մեջ: . . . Երբ մտա վրանս, . . . գլխարկս գցեցի մահճակալին: Ես սեղմած բռունցքներս թափահարեցի դեպի երկինք, ասելով. «Ինչպե՞ս դու կարող էիր այդպես վարվել ինձ հետ, Աստված: Ես արել էի ամեն-ինչ, որ արժանի լինեի: Չկա մի բան, որ ես կարող էի, պետք է անեի, սակայն չէի արել: Ինչպե՞ս դու կարող էիր այդպես վարվել ինձ հետ»: Ես դառնացած էի, ինչպես լեղի:

Ապա ես լսեցի մի ձայն, և ճանաչեցի այդ ձայնի երանգը: Դա իմ սեփական ձայնն էր և այն ասաց. «Ես այստեղի այգեպանն եմ: Ես գիտեմ, թե ինչ եմ ուզում, որ դու անես»: Դառնությունը անհետացավ հոգուս միջից և ես ընկա ծնկներիս վրա մահճակալի կողքին և ներողություն խնդրեցի իմ երախտամոռության համար: . . .

. . . Այժմ, գրեթե 50 տարի անց ես նայում եմ դեպի Աստված և ասում. «Շնորհակալություն, պարոն Այգեպան, ինձ կտրելու համար, ինձ այնքան սիրելու համար, որ ցավ պատճառեցիր»:[5]

Աստված գիտեր, թե ինչ պետք է դառնար Հյու Բ. Բրաունը և ինչ էր դրա համար անհրաժեշտ, և Նա փոխեց նրա ուղին, պատրաստելով նրան սուրբ առաքելությանը:

Եթե մենք անկեղծ ցանկանանք և ձգտենք ապրել ըստ մեր Երկնային Հոր ակնկալիքների, Նա այնպես կանի, որ մենք ստանանք այն ողջ օգնությունը, որի կարիքն ունենք, լինի դա սփոփանք, ամրացում, թե խրատ: Եթե մենք պատրաստ ենք, անհրաժեշտ ուղղումը կտրվի տարբեր ձևերով և տարբեր աղբյուրներից: Այն կարող է տրվել մեր աղոթքների ժամանակ, երբ Աստված կասի մեր մտքին և մեր սրտին Սուրբ Հոգու միջոցով (տես ՎևՈւ 8.2): Այն կարող է տրվել որպես աղոթքների պատասխան, որը «Ոչ» է կամ ոչ այն, ինչ մենք սպասում էինք: Խրատը կարող է տրվել, երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, և երբ մեզ հիշեցվում են թերությունները, անհնազանդությունը կամ պարզապես անտեսված հարցերը:

Ուղղումը կարող է գալ ուրիշների միջոցով, հատկապես նրանց, ովքեր ոգեշնչված են Աստծո կողմից, մեր երջանկությունը լիակատար դարձնելու համար: Առաքյալները, մարգարեները, հայրապետերը, եպիսկոպոսները և մյուսները այսօր Եկեղեցում են, ինչպես հնում, «Սուրբերի կատարելիությանը համար, պաշտոնի գործի համար՝ Քրիստոսի մարմնի շինության համար» (Եփեսացիս 4.11–12): Մի գուցե այս համաժողովին որոշ ասված բաներ հնչեն ձեզ համար որպես ապաշխարության կամ փոփոխության կոչ, որը, եթե հետևեք դրան, կբարձրացնի ձեզ ավելի բարձր տեղ: Մենք կարող ենք օգնել միմյանց որպես Եկեղեցում ընկերակից անդամներ: Դա հիմնական նպատակներից

մեկն է, որոնց համար Փրկիչը հիմնեց եկեղեցին: Անգամ, եթե մենք դաժան և անտեղի քննադատության ենք հանդիպում նրանց կողմից, ովքեր մեր հանդեպ շատ քիչ հարգանք ու սեր են տածում, դա կարող է մեզ համար օգտակար լինել, եթե մենք հեզությամբ խորհենք այդ մասին և մեզ համար օգտակար դաս քաղենք դրանից:

Ուղղումը, հավանաբար մեղմ, կարող է տրվել ամուսնու կամ կնոջ կողմից: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը, որը հենց նոր խոսեց մեզ հետ, հիշեց իր ամուսնության այն ժամանակը, երբ նրա կինը՝ Ջենինը, նրան խորհուրդ տվեց ուղիղ նայել այն մարդկանց աչքերին, ում հետ խոսում էր: «Դու նայում ես հատակին, առաստաղին, պատուհանին, ամեն տեղ, բացի նրանց աչքերից», - ասել էր նա: Նա լուրջ վերաբերվեց այդ խրատին և դա նրանց շատ ավելի արդյունավետ դարձրեց մարդկանց հետ խորհրդակցելիս և աշխատելիս: Որպես լիաժամկետ միսիոներ Նախագահ Սքոթի ղեկավարությամբ ծառայածներից մեկը, ես կարող եմ հավաստել, որ նա խոսելիս նայում է ուղիղ մարդկանց աչքերի մեջ: Ես կարող եմ նաև ավելացնել, որ երբ որևէ մեկը ուղղման կարիք ունի, այդ հայացքը կարող է շատ խորաթափանց լինել:

Ծնողները կարող են և պետք է ուղղում տան, անգամ նախատեն, եթե չեն ուզում, որ իրենց երեխաները թողնվեն անգութ թշնամու և նրան աջակցողների ողորմածությանը: Նախագահ Բոյդ Կ. Փաքերը նկատել է, որ երբ անձը այնպիսի դիրքում է, որ պետք է ուղղի մեկ ուրիշին, սակայն չի անում դա, ապա նա մտահոգվում է իր անձի մասին: Հիշեք, որ պատասխանը պետք է լինի ժամանակին, ուղղակի և հստակ, «երբ ներշնչվում ես Սուրբ Հոգով. և ապա, դրանից հետո, ավելի մեծ սեր ցույց տալով նրա հանդեպ, ում հանդիմանել ես, չլինի թե նա քեզ իր թշնամին համարի» (ՎԵՈՒ 121.43):

Հիշեք, որ երբ մենք դիմադրում ենք ուղղմանը, մարդիկ ընդհանրապես կարող են դադարել դա անել, թեև սիրում են մեզ: Եթե մենք շարունակ անտեսում ենք և չենք արձագանքում սիրող Աստծո խրատին, Նա նույնպես կդադարի խրատել մեզ: Նա ասել է. «Իմ Հոգին միշտ չի ճգնում մարդու հետ» (Եթեր 2.15): Ի վերջո, խրատի մեծ մասը պետք է գա ներսից՝ մենք պետք է դառնանք ինքնաուղղվող: Մեր սիրելի գործընկեր Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը դարձել է մաքուր և խոնարհ աշակերտ մասամբ նրա շնորհիվ, որ վերլուծել է իր գործելակերպը յուրաքանչյուր հանձնարարության և աշխատանքի մեջ: Աստծուն գոհացնելու իր ցանկության մեջ նա որոշեց սովորել այն, ինչն ավելի լավ կարող էր անել, և ապա ջանասիրաբար կիրառեց յուրաքանչյուր դասը:

Մենք բոլորս կարող ենք ապրել ըստ Աստծո բարձր ակնկալիքների, որքան էլ մեծ կամ փոքր լինի մեր ունակությունը և տաղանդը: Մորոնին հաստատում է. «Եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով, ապա [Աստծո] շնորհը բավական է ձեզ, որպեսզի նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում» (Մորոնի 10.32): Դա ջանասեր, նվիրյալ ջանք է մեր կողմից, որը բերում է այս զորացնող և ունակ դարձնող շնորհը, ջանք, որն անկասկած պահանջում է ենթարկվել Աստծո նախատող ձեռքին և անցնել անկեղծ ու լիարժեք ապաշխարության միջով: Եկեք աղոթենք սիրով ոգեշնչված Նրա ուղղման համար:

Թող Աստված սատարի ձեզ, մինչ դուք ձգտում եք բավարարել Նրա բարձր ակնկալիքները, և տա ձեզ երջանկության և խաղաղության լիարժեք բաժին, որը բնականորեն հետևում է: Ես գիտեմ, որ դուք և ես կարող ենք մեկ դառնալ Աստծո և Քրիստոսի հետ: Մեր Երկնային Հոր ու Նրա Սիրելի Որդու և Նրանց շնորհիվ մեր ունեցած ուրախալի ներուժի մասին ես խոնարհ և վստահ վկայում եմ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Dallin H. Oaks, “The Challenge to Become,” *Liahona,* Jan. 2001, 40.
2. Kenda Creasy Dean, *Almost Christian: What the Faith of Our Teenagers Is Telling the American Church* (2010), 17.
3. Dean, *Almost Christian,* 30; see also Christian Smith and Melinda Lundquist Denton, *Soul Searching: The Religious and Spiritual Lives of American Teenagers* (2005), 118–71.
4. Dean, *Almost Christian,* 37.
5. Hugh B. Brown, “The Currant Bush,” *Liahona,* Mar. 2002, 22, 24.

Երեց Քարլ Բ. Փրաթ
Յոթանասունից

Տիրոջ ամենաառատ օրհնությունները

Երբ մենք հավատարմորեն վճարում ենք մեր տասանորդը, Տերը բացում է երկնքի պատուհանները և դուրս է թափում մեզ վրա Իր ամենաառատ օրհնությունները:

Ես երախտապարտ եմ արդար նախնիների համար, ովքեր տանն իրենց երեխաներին ուսուցանում էին ավետարանը՝ ընտանեկան երեկոներ պաշտոնապես անցկացնելուց դեռ շատ առաջ: Իմ մայրական կողմից տատիկս ու պապիկս էին՝ Իդա Ջեսփերսոնը և Ջոն Ա. Ուեթենը: Նրանք ապրում էին Կոլոնիա Խուարեզ Չիհիուահուայում, Մեքսիկայում, փոքրիկ մի համայնքում: Ուեթենների երեխաները ուսուցանվում էին պատվիրանով և իրենց ծնողների օրինակին հետևելով:

1920-ականների սկզբին Մեքսիկայում դժվար ժամանակներ էին: Կատաղի հեղափոխությունը նոր էր ավարտվել: Շրջանառության մեջ քիչ կանխիկ փող կար և դրա մեծ մասը արծաթե մետաղադրամ էր: Մարդիկ հաճախ իրենց գործարքները կատարում էին ապրանքափոխանակման և ծառայություններով փոխհատուցման միջոցով:

Մի օր, ամառվա վերջին, պապիկ Ջոնը տուն եկավ, ավարտելով առևտրական գործարքը և գործարքի մի մասի համար ստանալով 100 պեսո արծաթ: Նա տվեց փողը Իդային՝ հրահանգելով նրան վճարել երեխաների դպրոցական գալիք ծախսերը:

Իդան երախտապարտ էր փողի համար, բայց հիշեցրեց Ջոնին, որ նրանք տասանորդ չէին վճարել ողջ ամառվա ընթացքում: Նրանք չէին ունեցել կանխիկ եկամուտ, բայց Իդան հիշեցրեց նրան, որ կենդանիները տվել էին միս, ձու և կաթ: Նրանց այգին տվել էր առատ մրգեր և բանջարեղեն և նրանք կատարել էին առևտուր ապրանքափոխանակմամբ՝առանց կանխիկ փողի: Իդան առաջարկեց, որ իրենք փողը տան եպիսկոպոսին իրենց տասանորդը փակելու համար:

Ջոնը մի քիչ հիասթափված էր, քանի որ կանխիկ փողը շատ կօգներ հոգալ երեխաների դպրոցական ծախսերը, բայց նա պատրաստակամորեն համաձայնվեց, քանի որ նրանք պարտավոր էին վճարել իրենց տասանորդը: Նա տարավ ծանր պայուսակը տասանորդի գրասենյակ և վճարեց եպիսկոպոսին:

Ոչ շատ անց, նա մի տեղեկություն ստացավ, որ մի հարուստ գործարար Միացյալ Նահանգներից՝ ոմն Պր. Հորդ, ժամանում էր հաջորդ շաբաթ իր մարդկանց հետ՝ մի քանի օր անցկացնելու լեռներում որսորդություն և ձկնորսություն անելու:

Պապիկ Ջոնը դիմավորեց տղամարդկանց խմբին Կոլոնիա Խուարեզի մոտակա երկաթուղային կայարանում: Նա պատրաստ ուներ անհրաժեշտ բեռնակիր կենդանիներ՝ թամբած ձիեր և թոկ, տեղափոխելու համար ուղեբեռը և ճամբարի սարքավորումները դեպի լեռները: Հաջորդ շաբաթն անցավ տղամարդկանց ուղեկցելով և ճամբարի և կենդանիների մասին հոգ տանելով:

Շաբաթվա վերջում տղամարդիկ վերադարձան երկաթուղային կայարան՝ գնացք նստելու և Միացյալ Նահանգներ վերադառնալու համար: Ջոնին այդ օրը վճարեցին իր աշխատանքի դիմաց, նրան տալով արծաթե պեսոներով մի պարկ՝ մնացած ծախսերը հոգալու համար: Ջոնը և նրա մարդիկ վարձատրվեցին, իսկ հետո Ջոնը վերադարձրեց փողի մնացորդը Պր.Հորդին, որը զարմացավ, քանի որ չէր սպասում, որ փող կմնար: Նա հարցեր տվեց Ջոնին հավաստիանալու համար, որ բոլոր ծախսերը փակվել էին, և Ջոնը պատասխանեց, որ ուղևորության բոլոր ծախսերը վճարվել էին և դա փողի ավելացած մասն էր:

Գնացքը սուլեց: Պր. Հորդը շտապեց որ գնար, հանկարծ ետ շրջվելով մետաղադրամներով ծանր պայուսակը շպրտեց Ջոնին: «Ահա, տար սա տուն տղաներիդ համար»: Ջոնը բռնեց պայուսակը և վերադարձավ Կոլոնիա Խուարեզ:

Երեկոյան, երբ ընտանիքը ընթրիքից հետո հավաքվեց լսելու ուղևորության պատմությունները, Ջոնը հիշեց պայուսակի մասին և ներս բերելով, դրեց սեղանին: Ջոնն ասաց, որ չգիտեր թե որքան էր պայուսակում, և զվարճության համար պայուսակը դատարկվեց սեղանին, որը բավականին մեծ կույտ էր կազմել, բայց՝ հաշվելուց հետո, պարզվեց, որ ուղիղ 100 պեսո էր արծաթով: Իհարկե մեծ օրհնություն էր Պր. Հորդի այդ ուղևորությունը: Ջոնը և նրա տղաները վաստակեցին լավ աշխատավարձ, բայց 100 պեսո մնացորդը հիշեցնում էր ճիշտ

նույն գումարի չափով վճարած տասանորդի մասին, որը վճարվել էր մեկ շաբաթ առաջ: Ոմանց համար դա կարող էր թվալ հետաքրքիր համընկնում, բայց Ուեթենների ընտանիքի համար այն հստակորեն դաս էր Տիրոջից այն մասին, որ Նա հիշում է Իր խոստումները նրանց, ովքեր հավատարմորեն վճարում են իրենց տասանորդները:

Երբ երեխա էի, ես սիրում էի լսել այդ պատմությունը, որովհետև այն ձիերով դեպի լեռները որսորդության և ձկնորսության ճամբարային ուղևորության մասին էր: Եվ ես սիրում էի այն, որովհետև դա ուսուցանում էր, որ երբ մենք հնազանդվում ենք պատվիրաններին, մենք օրհնվում ենք: Մի քանի բան այս պատմությունից մենք բոլորս կարող ենք սովորել տասանորդի մասին:

Առաջինը, դուք կնկատեք, որ տասանորդի վճարումը այս դեպքում կապված չէր կանխիկ եկամտի հետ: Ուեթենները որոշեցին օգտագործել իրենց առաջին կանխիկ եկամուտը տասանորդի համար, որովհետև նրանք լավ էին ապրել իրենց կենդանիների և իրենց այգու տված մրգի և բանջարեղենի շնորհիվ: Նրանք ակնհայտորեն պարտավորված էին զգում Տիրոջը, իրենց օրհնությունների համար:

Դա հիշեցում է Տիրոջ խոսքերի առնչությամբ, երբ Նա հարցրեց. «Մի՞թե մարդ Աստուած կխաբէ, որ դուք ինձ խաբում էք»: Մարդիկ հարցրեցին. «Ի՞նչ բանում ենք քեզ խաբում»: Եվ Տերը որոտաց ի պատասխան. «Տասանորդումը եւ ընծայումը» (Մաղաքիա Գ.8): Այո, եղբայրներ և քույրեր, ճիշտ ինչպես Ջոն և Իդա Ուեթենները տարիներ առաջ այդ ամռանը հասկացան, որ մենք բոլորս պարտք ենք Տիրոջը: Եկեք չմեղադրվենք Աստծուն խաբելու համար: Եկեք ազնիվ լինենք և վճարենք մեր պարտքերը Տիրոջը: Նա խնդրում է ընդամենը 10 տոկոսը: Տիրոջը մեր պարտքը վճարելում ազնիվ լինելը կօգնի մեզ ազնիվ լինել մեր մերձավորներ հետ:

Հաջորդ բանը, որ ես նկատեցի այս պատմության մեջ այն էր, որ իմ տատիկն ու պապիկը վճարեցին տասանորդն անկախ իրենց ընտանիքի աղքատիկ ֆինանսական վիճակից: Նրանք գիտեին Տիրոջ պատվիրանները, նրանք վերագրում էին սուրբ գրություններն իրենց (տես 1 Նեփի 19.23–24) և նրանք հնազանդվեցին օրենքին: Սա այն է, ինչ Տերը սպասում է ողջ իր ժողովրդից: Նա սպասում է մեզանից, որ մենք տասանորդ վճարենք, ոչ թե մեր առատությունից կամ ընտանիքի բյուջեյի «ավելցուկներից», այլ, ինչպես նա պատվիրել է հին դարերում, մեր եկամտի «առաջնեկներից», լինի դա քիչ, թե շատ: Տերը պատվիրել է. «Արմտիքների . . . երեխայրիները մի ուշացնիր» (Ելից ԻԲ.29): Իմ անձնական փորձառության համաձայն,հավատարմորեն տասանորդ վճարելու ամենաճիշտ ձևը, եկամուտ ստանալուն պես, այն անմիջապես վճարելն է: Փաստորեն ես գտել եմ, որ դա միակ ձևն է:

Մենք սովորում ենք իմ տատիկ ու պապիկ Ուեթենից, որ տասանորդը իսկապես փողի հարց չէ, դա հավատքի հարց է՝ հավատքի առ Տերը: Նա խոստանում է օրհնություններ, եթե մենք հնազանդվենք Նրա պատվիրաններին: Պարզապես Ջոն ու Իդա Ուեթենները ցույց տվեցին մեծ հավատք, վճարելով իրենց տասանորդը: Եկեք ցույց տանք մեր հավատքն առ Տերը, վճարելով մեր տասանորդը: Վճարեք այն առաջինը, վճարեք այն ազնվորեն: Եկեք ուսուցանենք մեր երեխաներին վճարել տասանորդ նույնիսկ իրենց օրաբաժնից կամ այլ եկամտից, իսկ հետո եկեք տանենք նրանց մեզ հետ տասանորդի կարգավորման ժամանակ, որպեսզի նրանք իմանան մեր օրինակի և Տիրոջ հանդեպ սիրո մասին:

Հնարավոր է, որ թյուրըմբռնում լինի իմ տատիկի ու պապիկի այս պատմության հետ կապված: Մենք կարող ենք եզրակացնել, որ քանի որ մենք տասանորդ ենք վճարում փողով, Տերը միշտ կօրհնի մեզ փողով: Ես հակված էի այդպես մտածել, երբ երեխա էի: Ես այժմ հասկացել եմ, որ պարտադիր չէ, որ այդպես լինի: Տերը խոստանում է օրհնություններ նրանց, ովքեր վճարում են իրենց տասանորդը: Նա խոստանում է «բանալ . . . երկնքի պատուհանները եւ օրհնություն թափել . . . մինչև որ նորա համար տեղ չլինի» (Մաղաքիա Գ.10): Ես վկայում եմ, որ Նա կատարում է Իր խոստումները և եթե մենք հավատարմորեն վճարում ենք մեր տասանորդը մենք զուրկ չենք մնա կյանքի անհրաժեշտ միջոցներից, բայց Նա չի խոստանում հարստություն: Փողը և բանկային հաշիվները Նրա մեծագույն օրհնությունները չեն: Նա օրհնում է մեզ իմաստությամբ կառավարելու մեր սահմանափակ նյութական

միջոցները, իմաստությամբ, որը հնարավոր է դարձնում մեզ համար ավելի լավ ապրել մեր եկամտի 90 տոկոսով: Այսպիսով, հավատարիմ տասանորդ վճարողները հասկանում են խնայողությամբ ապրելու կարևորությունը և աշխատում են ավելի ինքնապահովող լինել:

Ես սկսել եմ հասկանալ, որ Տիրոջ ամենամեծ օրհնությունները հոգևոր են և դրանք հաճախ կապված են ընտանիքի, ընկերների և ավետարանի հետ: Թվում է, Նա հաճախ տալիս է Սուրբ Հոգու ազդեցության և առաջնորդության հանդեպ առանձնահատուկ զգայունություն ունենալու օրհնություն, հատկապես ամուսնության և ընտանեկան հարցերում, ինչպես օրինակ երեխաներ մեծացնելիս: Այդպիսի հոգևոր զգայունությունը կարող է օգնել մեզ տանը վայելել ներդաշնակություն և խաղաղություն: Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստն ասել է, որ տասանորդի վճարումը գերազանց ապահովագրություն է ամուսնալուծության դեմ (“Enriching Your Marriage,” *Liahona,* Apr. 2007, 5):

Տասանորդի վճարումն օգնում է մեզ զարգացնել հանդուրժողական և խոնարհ ու երախտապարտ սիրտ, որը հակված է «խոստովանել . . . նրա ձեռքը բոլոր բաներում» (ՎԿՈՒ 59.21): Տասանորդի վճարումը զարգացնում է մեր մեջ մեծահոգի, ներող ու գթառատ Քրիստոսի մաքուր սիրով լի սիրտ: Մենք եռանդուն ենք դառնում ուրիշներին ծառայելու և օրհնելու՝ հնազանդ սրտով Տիրոջ կամքին ենթարկվելու մեջ: Տասանորդ կանոնավոր վճարողները զորացնում են իրենց հավատքը առ Տեր Հիսուս Քրիստոս և զարգացնում են հաստատուն և մնայուն վկայություն Նրա ավետարանի և Նրա Եկեղեցու հանդեպ: Այս օրհնություններից ոչ մեկը դրամական կամ նյութական չէ որևէ ձևով, բայց դրանք անկասկած Տիրոջ առավել առատ օրհնություններն են:

Ես վկայում եմ, որ երբ մենք հավատարմորեն վճարում ենք մեր տասանորդը, Տերը բացում է երկնքի պատուհանները և դուրս է թափում մեզ վրա Իր ամենաառատ օրհնությունները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Լին Գ. Ռոբբինս
Յոթանասունից

Ինչպիսի՞ մարդ և կին եք դուք պարտավոր լինել

Թող որ Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելու ձեր ջանքերը պսակվեն հաջողությամբ, որպեսզի Նրա կերպարը փորագրվի ձեր դեմքին և Նրա հատկանիշները երևան ձեր վարքագծում:

«Լինել, թե չլինել»-ը փաստորեն շատ լավ հարց է:[1] Փրկիչն ուղղեց այդ հարցը շատ ավելի խորը ձևով, դարձնելով այն կարևոր վարդապետական հարց մեզանից յուրաքանչյուրի համար. «Ինչպիսի՞ մարդ [և կին] եք դուք պարտավոր *լինել*: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես *ես եմ*» (3 Նեփի 27.27, շեշտադրումն ավելացված է): *Լինել* բայի առաջին դեմքի ներկան է *Ես եմ:* Նա մեզ հրավիրում է մեզ վրա վերցնել Իր անունը և Իր էությունը:

Որպեսզի դառնանք ինչպես Նա է, մենք պետք է նույնպես *անենք* այն բաները, որ Նա *արեց*. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, այս է իմ ավետարանը. և դուք գիտեք այն բաները, ինչ դուք պիտի *անեք* իմ եկեղեցում. Քանզի այն գործերը, որոնք դուք տեսաք ինձ *անելիս*, դրանք պետք է նաև դուք *անեք*» (3 Նեփի 27.21, շեշտադրումն ավելացված է):

Լինելն ու *անելն* անբաժանելի են: Որպես փոխկապակցված վարդապետություններ դրանք ամրացնում և խթանում են մեկը մյուսին: Օրինակ, հավատքը ոգեշնչում է մարդուն աղոթել, իսկ աղոթքն, իր հերթին, զորացնում է մարդու հավատքը:

Փրկիչը հաճախ մերժում էր նրանց, ովքեր *անում* էին առանց *լինելու*, անվանելով նրանց կեղծավորներ. «Այս ժողովուրդը շրթունքներով է պատվում ինձ, իսկ նորանց սիրտը ինձանից հեռացած ջոկուած է» (Մարկոս Է.6): *Անել* առանց *լինելու* կեղծավորություն է կամ փորձ՝ կեղծելով լինել այն, այնսինքն՝ ձևանալ:

Եվ ընդհակառակը, *լինելն* առանց *անելու* անիմաստ է, քանի որ «այսպէս էլ հաւատքը, եթե գործ չունենայ, ըստ ինքեան *մեռած է*» (Հակոբոս Բ.17, շեշտադրումն ավելացված է): Առանց *անելու լինելը*, իրականում, *լինել չէ*, այլ ինքնախաբեություն, այն նշանակում է, որ անձն համոզված է, թե բարի, մինչդեռ միայն նրա մտադրություններն են բարի:

Անել առանց *լինելու* (կեղծավորությունը) սխալ պատկեր է տալիս ուրիշներին, մինչդեռ *լինելն* առանց *անելու* պատկերում է անձի կեղծ կերպարը:

Փրկիչը խրատեց դպիրներին և Փարիսեցիներին. «Վայ ձեզ, դպիրներ եւ Փարիսեցիներ՝ կեղծաւորներ. Որ անանուխի եւ սամիթի եւ չամանի տասանորդը»,- մի բան, որ *անում էին* - «տալիս էք, եւ թողնում էք օրենքի ծանր ծանր բաները՝ դատաստանը եւ ողորմութիւնը եւ հաւատքը» (Մատթեոս ԻԳ.23): Կամ այլ խոսքերով, նրանց չէր հաջողվում *լինել* այն, ինչ պետք է *լինեին:*

Չնայած, Փրկիչն ընդունում էր *անելու* կարևորությունը, Նա անվանեց *լինելը* որպես «ավելի ծանր բան»: *Լինելու* ավելի մեծ կարևորությունը պարզաբանվում է հետևյալ օրինակներով.

- Հաղորդությունը ճաշակելը մի բան է, որ մենք *անում* ենք: Հաղորդությունը ճաշակելու համար արժանի *լինելն* ավելի դժվար և շատ ավելի կարևոր հարց է:
- Հաղորդությունը ճաշակելը մի բան է, որ մենք *անում ենք*: Հաղորդությունը ճաշակելու համար արժանի լինելն ավելի դժվար և շատ ավելի կարևոր հարց է:
- Քահանայության կարգումը գործողություն է կամ *անելու* առարկա: Սակայն ավելի դժվար հարց է քահանայության զորությունը, որը հիմնված է «արդարության սկզբունքների վրա» (Վարդապետություն և Ուխտեր 121.36), կամ *լինելու* վրա:

Մեզանից շատերը կազմում են *անելու* ցուցակներ՝ ինքներս մեզ հիշեցնելու այն բաների մասին, որոնք մենք ուզում ենք կատարել: Բայց մարդիկ հազվադեպ են ունենում *լինելու* ցուցակներ: Ինչո՞ւ: *Անելու* բաները գործեր են կամ իրադարձություններ և կարող են հանվել ցուցակից, երբ *արվում են*: Սակայն լինելը երբեք չի հանվում: Դուք չեք կարող վաստակել ստուգանշան՝ *լինելու* բաների դիմաց: Ես կարող եմ դուրս տանել կնոջս՝ հաճելի մի երեկո անցկացնելու ուրբաթ օրը, որն *անելու* բան է: Բայց լավ ամուսին *լինելը* իրադարձություն չէ, այն պետք է *լինի* իմ էության մի մասը, իմ բնավորությունը կամ թե ով եմ ես:

Կամ որպես ծնող, ե՞րբ կարող եմ որպես *արված* ստուգանշան դնել ցուցակում՝ երեխայի կողքին: Մենք երբեք չենք ավարտում լավ ծնող *լինելու* մեր աշխատանքը: Իսկ լավ ծնողների ամենակարևոր բաներից մեկը, որ կարող են սովորեցնել իրենց երեխաներին՝ դա ինչպես Փրկչին ավելի նման *լինելն է*:

Քրիստոսանման *լինելը* հնարավոր չէ տեսնել, բայց դա այն դրդիչ ուժն է, որը գտնվում է այն ամենի ետևում, ինչ մենք *անում ենք* և ինչը հնարավոր է տեսնել: Օրինակ, երբ ծնողներն օգնում են երեխային քայլել սովորել, մենք տեսնում ենք ծնողներին ինչ որ բաներ *անելիս*՝ հաստատելիս և երեխային գովելիս: Այս *անելու* բաները բացահայտում են անտեսանելի սերը նրանց սրտերում և անտեսանելի հավատքն ու հույսը իրենց երեխայի ներուժի հանդեպ: Օրեցօր նրանց ջանքերը շարունակվում են՝ դառնալով անտեսանելի ջանասիրության և համբերության հատկանիշների ապացույց:

Քանի որ *լինելը* ծնում է *անել*, և *անելու* ետևում ընկած դրդիչը *լինելն* է, լինելն ուսուցանելն ավելի արդյունավետորեն կբարելավի վարքը, քան՝ *անելու* վրա կենտրոնանալով վարքի բարելավումը:

Երբ երեխաներն իրենց վատ են պահում, ասենք նրանք վիճում են միմյանց հետ, մենք հաճախ կարգապահական գործընթացը սխալմամբ ուղղում ենք նրա վրա, ինչ նրանք *անում* են, կամ վիճաբանության վրա, որին ականատես ենք լինում:Բայց *անելը*՝ նրանց վարվելակերպը, ախտանշան է միայն այն ոչ տեսանելի դրդապատճառների, որոնք նրանց սրտերում են: Մենք կարող ենք հարցնել ինքներս մեզ. « Ո՞ր հատկանիշը, եթե երեխան հասկանար, կուղղեր այս վարվելակերպն ապագայում: Միգուցե համբերատար և ներողամիտ լինե՞լը, երբ վիրավորում են: Միգուցե սիրելը և խաղաղություն հաստատող լինե՞լը: Միգուցե անձնական գործողությունների համար պատասխանատվություն վերցնելն ու չմեղադրե՞լը»:

Ինչպե՞ս են ծնողներն ուսուցանում այս հատկանիշներն իրենց երեխաներին: Մենք երբեք ավելի մեծ հնարավորություն չենք ունենա ուսուցանելու և ցույց տալու Քրիստոսանման հատկանիշներ մեր երեխաներին, եթե չկիրառենք կարգապահության ուղին: *Discipline* (կարգավարժել) բառը գալիս է նույն արմատից անգլերենում ինչ որ *disciple* (հետևորդ) բառը և նշանակում է համբերություն և ուսուցում մեր կողմից: Այն չպետք է արվի բարկությամբ: Մենք կարող ենք և պետք է կարգապահության վարժեցնենք այն ձևով, որը նկարագրվում է Վարդապետություն և Ուխտերի 121 բաժնում՝ «համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով. բարությամբ և մաքուր գիտելիքով»: (հատվածներ 41-42): Սրանք բոլորը Քրիստոսանման *լինելու* հատկանիշներ են, որոնք պետք է լինեն որպես ծնողներ և Քրիստոսի հետևորդներ մեր ով *լինելու* մասը

Կարգավարժման միջոցով երեխան սովորում է հետևանքների մասին: Նման պահերին օգտակար է բացասականը դարձնել դրական: Հարցրեք երեխային, թե ինչ նա սովորեց այդ սխալից կամ չարագործությունից, որը ձեզ և, ինչն ավելի կարևոր է, Հոգուն հնարավորություն է տալիս ներգործել և սովորեցնել նրան: Երբ մենք նրանց վարդապետությունը ուսուցանում ենք Հոգով, այն զորություն է ունենում փոխելու *լինելու* նրանց բուն էությունը ժամանակի ընթացքում:

Ալման հայտնաբերել է այս նույն սկզբունքը, որ «խոսքի քարոզելն ուներ մեծ միտում՝ առաջնորդել ժողովրդին *անելու* այն, ինչն արդար էր, այո, այն ունենում էր ավելի զորավոր ազդեցություն մարդկանց մտքերի վրա, քան սուրը» (Ալմա 31.5; շեշտադրումն ավելացված է): Ինչո՞ւ: Որովհետև սուրը կենտրոնանում էր միայն պատժող վարվելակերպի կամ *անելու* վրա, մինչդեռ խոսքը քարոզելը փոխում էր մարդկանց բուն էությունը՝ նրանց ով *լինելը* և այն, ինչ նրանք կարող էին *դառնալ*:

Քաղցրաբարո և հնազանդ երեխան հորը կամ մորը ցուցակագրում է միայն «Դաստիարակում 101» ծրագրում: Եթե դուք օրհնվել եք երեխայով, որը փորձում է ձեր համբերությունը մինչև առավելագույն աստիճանը, դուք կցուցակագրվեք «Դաստիարակում 505» ծրագրում: Զարմանալու փոխարեն, թե ինչ սխալ եք արել նախաերկրային կյանքում այդպիսի պատժի արժանանալու համար, դուք կարող եք առավել դժվար երեխային օրհնություն համարել և հնարավորություն՝ ինքներդ ավելի Աստվածանման դառնալու համար: Ինչպիսի՞ երեխայի հետ ավելի շատ հավանականություն կա ստուգելու, զարգացնելու և զտելու ձեր համբերությունը և երկայնամտությունը և այլ Քրիստոսանման արժանիքներ: Ամենայն հավանականությամբ, դուք նույնքան այդ երեխայի կարիքն ունեք, որքան այդ երեխան ունի ձեր կարիքը:

Երբ մեր երեխաները վատ են պահում իրենց, մենք բոլորս լսում ենք այս խորհուրդը՝ դատապարտել մեղքը և ոչ թե մեղավորին: Նմանապես, երբ մեր երեխան իրեն վատ է պահում, մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չասենք բաներ, որոնք կստիպեն մեր երեխաներին հավատալ, որ նրանք *այնպիսին* են, ինչ սխալ էլ որ *արել* են: «Երբեք թույլ մի տվեք, որ ձախողումը առաջ ընթանա մի գործողությունից դեպի մի անհատականություն՝ «հիմար», «անբան» կամ «անտաշ» ուղեկցող իր պիտակներով:[2] Մեր երեխաներն Աստծո զավակներն են: Դա է նրանց ճշմարիտ անհատականությունն ու ներուժը: Նրա բուն ծրագիրն է՝ օգնել Իր զավակներին հաղթահարել սխալներն ու հանցանքները և առաջ ընթանալ, դառնալով Նրա *նման*: Ուստի հիասթափեցնող վարքը պետք է համարվի ժամանակավոր մի բան՝ ոչ հարատև, գործողություն, ո՛չ թե անհատականության հատկանիշ:

Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի կարգապահություն կիրառելիս չօգտագործենք այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Դու միշտ . . .» կամ «Դու երբեք . . .»: Օգտագործեք այսպիսի արտահայտություններ՝ «Դու երբեք հաշվի չես առնում իմ զգացմունքները» կամ «Ինչո՞ւ ես միշտ ստիպում մեզ սպասել»: Նման արտահայտությունները թույլ են տալիս, որպեսզի արարքները երևան անհատակության տեսանկյունից, և կարող են ամբողջովին հակառակ ազդեցություն գործել երեխայի ինքնահարգանքի և ինքնագնահատման վրա:

Ինքնության շփոթում է տեղի ունենում նաև այն ժամանակ, երբ մենք հարցնում ենք երեխաներին, թե ինչ է նա կամենում *լինել*, երբ մեծանա, կարծես, թե այն ինչ մարդն *անում է* ապրելու համար, այն է, ինչ նա իրականում *կա*: Ո՛չ մասնագիտությունները, ո՛չ էլ ունեցվածքը չպետք է որոշեն ինքնությունը կամ ինքնարժեքը: Փրկիչը խոնարհ հյուսն էր, բայց դա չէր, որ որոշեց Նրա կյանքը:

Որպեսզի երեխաներին օգնենք հայտնաբերել, թե ովքեր են իրենք՝ նրանց ինքնարժեքն ուժեղացնելու համար, մենք կարող ենք պատշաճ ձևով գովել նրանց՝ նվաճման կամ վարքի, այսինքն՝ *անելու* համար: Սակայն ավելի իմաստուն կլիներ կենտրոնացնել մեր հիմնական գովասանքը նրանց բնավորության և համոզմունքների՝ նրանց ով *լինելու* վրա:

Սպորտային խաղերին ձեր երեխաների մասնակցությունը (*անելը*) ճիշտ կլինի գովել *լինելու* տեսանկյունից, ինչպես օրինակ՝ նկատելով նրանց էներգիան, հետևողականությունը, հավասարակշռվածությունը հակառակորդի ներկայությամբ և այլն, այսպիսով՝ հաճոյախոսելով և *լինելու*, և *անելու* համար:

Երբ մենք երեխաներին խնդրում ենք ամենօրյա գործեր *անել*, մենք կարող ենք նաև որոնել ուղիներ՝ *լինելու* համար նրանց գովելու, ինչպես օրինակ. «Այնքան եմ ուրախանում, երբ դու անում ես քո ամենօրյա գործերը հոժարակամ սրտով»:

Երբ երեխաները դպրոցում քառորդ են փակում, մենք կարող ենք գովել նրանց լավ գնահատականների համար, բայց ավելի մեծ տևական օգուտ կարող է տալ նրանց *ջանասիրությունը* գովելը. «Դու ամեն հանձնարարություն կատարել ես: Դու գիտես, ինչպես ջանք թափես և ավարտի հասցնես դժվար բաները: Ես հպարտանում եմ քեզանով»:

Ընտանեկան սուրբ գրությունների ժամին, փնտրեք և քննարկեք այնպիսի հատկանիշների օրինակներ, որոնք այդ օրը կհայտնաբերեք ձեր ընթերցանության ժամանակ: «Որովհետև Քրիստոսանման հատկանիշները Աստծո պարգևներն են և չեն կարող զարգացվել առանց Նրա օգնության»,[3] ընտանեկան և անձնական աղոթքների ժամանակ աղոթեք այդ պարգևների համար:

Ճաշի սեղանի մոտ ժամանակ առ ժամանակ խոսեք լավ հատկանիշների մասին, հատկապես նրանց մասին, որոնք դուք այդ առավոտյան սուրբ գրություններում եք հայտնաբերել: «Ինչպե՞ս լավ ընկեր եղար այսօր», «Ինչպե՞ս կարեկցանք ցուցաբերեցիր», «Ինչպե՞ս հավատքը օգնեց քեզ դիմակայել այսօրվա դժվարություններին», «Ինչպե՞ս ցույց տվեցիր, որ վստահելի ես, ազնիվ, առատաձեռն, խոնարհ»: Հատկանիշների մի մեծ շարք կա սուրբ գրություններում, որոնք պետք է ուսուցանվեն և ուսումնասիրվեն:

Մեր երեխաներին *լինել* սովորեցնելու ամենակարևոր ուղին այնպիսի ծնող *լինելն է*, ինչպիսին մեր Երկնային Հայրն է մեզ համար: Նա միակ կատարյալ ծնողն է և տվել է մեզ ծնող լինելու իր դասագիրքը՝ սուրբ գրությունները:

Իմ դիտողությունները հիմնականում ուղղված էին ծնողներին, բայց սկզբունքները վերաբերվում են ամեն մեկին: Թող որ Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելու ձեր ջանքերը պսակվեն հաջողությամբ, որպեսզի Նրա կերպարը փորագրվի ձեր դեմքին և Նրա հատկանիշները երևան ձեր վարքագծում: Այն ժամանակ, երբ ձեր երեխաները կամ ուրիշները զգան ձեր սերն ու տեսնեն ձեր վարքը, այն նրանց կհիշեցնի Փրկչի մասին և կձգի նրանց դեպի Նա: Սա է իմ աղոթքը և վկայությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ուիլյամ Շեկսպիր, *Համլետ՝ Դանիայի Արքայազն,* գործողություն 3, դրվագ 1, տող 56:
2. Carol Dweck, quoted in Joe Kita, "Bounce Back Chronicles," *Reader's Digest,* May 2009, 95.
3. Տես *Քարոզիր Իմ Ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 115:

Երեց Բենջամին Դե Հոյոս
Յոթանասունից

Կանչված լինելու Սրբեր

Որքան օրհնված ենք մենք, որ բերվել ենք Վերջին Օրերի Սրբերի շարքերը:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին օգնի ինձ մատուցել իմ ուղերձը:

Երբ ես այցելում եմ ցցերի, ծխերի և ճյուղերի համաժողովներին, միշտ հանդիպելով Եկեղեցու անդամներին՝ նրանց, ովքեր այսօր և հնում կոչվում են Սրբեր,լցվում եմ մեծ ուրախությամբ: Խաղաղության և սիրո ոգին, որը ես միշտ զգում եմ, երբ նրանց հետ եմ, օգնում է ինձ գիտակցել, որ ես Սիոնի ցցերից մեկում եմ:

Թեև շատերը այնպիսի ընտանիքներից են, որոնք արդեն երկու կամ ավել սերունդ ունեն Եկեղեցում, շատերը նորադարձեր են: Նրանց համար մենք կրկնում ենք Եփեսացիներին ուղղված Պողոս Առաքյալի ողջույնի խոսքերը.

«Ուրեմն այսուհետև այլևս օտար և պանդուխտ չեք, այլ սուրբերի հետ քաղաքացիներ և Աստուծո ընտանիքներ.

Առաքյալների և մարգարեների հիմքի վրա շինուած. որի անկյունի գլուխը Հիսուս Քրիստոսն է» (Եփեսացիս Բ.19–20):

Մի քանի տարի առաջ, երբ Մեքսիկայում ես ծառայում էին, Եկեղեցու հանրային կապերի գրասենյակում, մեզ հրավիրեցին մասնակցելու ռադիո թոք-շոուի: Հաղորդման նպատակն էր նկարագրել և քննարկել աշխարհի տարբեր կրոնները: Մեզանից երկուսին հանձնարարվեց ներկայացնել եկեղեցին, պատասխանելով հարցերին, որ տրվում են նման հաղորդման ժամանակ: Մի քանի «եթերաժամից» հետո, ինչպես ասում են ռադիոյի լեզվով, հաղորդավարը հայտարարեց. «Այս երեկո մեզ հետ են երկու երեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց»: Նա մի պահ կանգ առավ, ապա հարցրեց. «Ինչո՞ւ Եկեղեցին այդքան երկար անվանում ունի: Ինչո՞ւ չեք օգտագործում ավելի հակիրճ կամ ավելի կոմերցիոն անուն»:

Ի պատասխան այդ հրաշալի հարցի ես և իմ ուղեկիցը ժպտացինք, ապա սկսեցինք բացատրել, որ եկեղեցու անվանումը մարդկանց կողմից չի ընտրվել: Այն տրվել է Փրկչի կողմից վերջին օրերի մարգարեի միջոցով: «Քանզի այսպես պիտի կոչվի իմ եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի» (ՎևՈւ 115.4): Հաղորդավարն անմիջապես և հարգանքով պատասխանեց. «Այդ դեպքում մենք կկրկնենք այն մեծ հաճույքով»: Ես հիմա չեմ հիշում, թե քանի անգամ նա կրկնեց եկեղեցու նշանավոր անվանումը, բայց ես չեմ մոռանա այն քաղցր հոգին, որը ներկա էր, երբ մենք բացատրում էինք ոչ միայն եկեղեցու անվանման ծագումը, այլ թե ինչպես է այն եկեղեցու յուրաքանչյուր անդամի՝ անվանում Վերջին Օրերի Սրբեր:

Նոր Կտակարանում մենք կարդում ենք, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամները առաջին անգամ կոչվեցին Քրիստոնեաներ

Ուշուայա, Արգենտինա

Անտիոքում (տես Գործք ԺԱ.26), բայց *միմյանց* նրանք Սրբեր էին կոչում: Որքան հուզիչ պետք է որ լիներ նրանց համար լսելը, թե ինչպես էր Պողոս Առաքյալը կոչում իրենց «սուրբերի հետ համաքաղաքացիներ և Աստծո ընտանիքներ» (Եփեսացիս Բ.19) և « կանչուած *լինելու* սուրբեր» (Հռովմայեցիս 1.6–7, շեշտադրումն ավելացված է):

Որքան որ Եկեղեցու անդամները ապրեն ըստ ավետարանի և հետևեն մարգարեների խորհրդին, այդքան նրանք, աստիճանաբար, անգամ, իրենց համար աննկատ կսրբագործվեն: Եկեղեցու խոնարհ անդամները, որոնք ամենօրյա ընտանեկան աղոթք և սուրբ գրությունների ուսումնասիրություն են վարում, ընդգրկված են ընտանեկան պատմության մեջ և նվիրաբերում են իրենց ժամանակը՝ հաճախ տաճարում՝ լինելով և երկրպագելով, դառնում են Սրբեր: Դրանք հավերժական ընտանիքներ ստեղծելուն նվիրված մարդիկ են: Նրանք, իրենց զբաղված կյանքում՝ ժամանակ են գտնում փրկելու համար նրանց, ովքեր հեռացել են Եկեղեցուց, և նրանց խրախուսում են վերադառնալ և նստել Տիրոջ սեղանի շուրջը: Նրանք այն երեցներն ու քույրերն են, և տարեց զույգերը, ովքեր որպես միսիոներներ արձագանքում են ծառայելու կանչին: Այո, իմ եղբայրներ և քույրեր, նրանք դառնում են Սրբեր այնքանով, որքանով որ բացահայտում են այն ջերմ և սքանչելի զգացումը, որը կոչվում է գթություն՝ Քրիստոսի մաքուր սեր (տես Մորոնի 7.42–48):

Սրբերը, կամ Եկեղեցու անդամները, նույնպես սկսում են ճանաչել մեր Փրկչին դժվարությունների և փորձությունների միջոցով: Եկեք չմոռանանք, որ անգամ Նա է տառապել բոլոր բաների համար: «Եվ նա իր վրա վեր կառնի ամահ, որ կարողանա արձակել մահվան կապանքները, որոնք կապում են իր ժողովրդին. և նա իր վրա վեր կառնի նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին ըստ նրանց

թուլությունների» (Ալմա 7.12):

Վերջին մի քանի տարիների ընթացքում ես ականատեսն եմ եղել շատ մարդկանց տառապանքների, ներառյալ՝ մեր շատ Սրբերի: Մենք շարունակ աղոթում ենք նրանց համար, խնդրելով Տիրոջ ողորմածությունը, որպեսզի նրանց հավատքը չթուլանա, և նրանք կարողանան համբերությամբ առաջ գնալ: Նրանց համար մենք կրկնում ենք Մորմոնի Գրքից մարգարե Հակոբի սփոփանքի խոսքերը.

«Օհ, ուրեմն, իմ սիրելի եղբայրներ, եկեք դեպի Տերը՝ դեպի Սուրբը: Հիշեք, որ նրա շավիղներն արդար են: Ահա, ճանապարհը մարդու համար նեղ է, բայց այն ձգվում է ուղիղ հունով նրա առջև, և դռան պահապանը Սուրբն է Իսրայելի. և այնտեղ նա չի պահում ոչ մի ծառա. և չկա ուրիշ ոչ մի ճանապարհ, բացի այդ դռնից. քանզի նա չի կարող խաբվել, քանզի Տեր Աստված է նրա անունը:

Եվ ով որ թակի, նրա համար կբացի նա» (2 Նեփի 9.41–42):

Կարևոր չէ, թե ինչպիսին են մեզ շրջապատող պայմանները, փորձությունները կամ խնդիրները, Քրիստոսի վարդապետության և Նրա Քավության ընկալումը կլինի մեր ուժի և խաղաղության աղբյուրը: Այո, եղբայրներ և քույրեր, դա ներքին խաղաղություն է, որը ծնվում է Հոգուց, և որը Տերը տալիս է Իր հավատարիմ Սրբերին: Նա սնուցում է մեզ, ասելով. «Խաղաղություն եմ թողնում ձեզ . . . ձեր սիրտը չխռովի և չվախենա» (Հովհաննես 14.27):

Տարիներ շարունակ ես տեսել եմ եկեղեցու անդամների՝ Վերջին Օրերի Սրբերի հավատարմությունը, ովքեր մեր Երկնային Հոր ծրագրի և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ հավատքի շնորհիվ հաղթահարել են թե փորձություններ և թե դժվարություններ՝ քաջությամբ և մեծ եռանդով, մնալով և շարունակելով առաջ գնալ սրբագործման նեղ ու անձուկ ճանապարհով: Ես պատշաճ բառեր չեմ գտնում արտահայտելու իմ գնահատանքը և հիացմունքը բոլոր այդ հավատարիմ Սրբերի հանդեպ, ում հետ պատիվ եմ ունեցել շփվելու:

Թեև ավետարանի մեր հասկացողությունը կարող է չլինել այնքան խորը, որքան դրա ճշմարտության մասին մեր վկայությունը, եթե մենք վստահենք Տիրոջը, մենք կսատարվենք մեր բոլոր դժվարություններում, փորձություններում և տառապանքներում (տես Ալմա 36.3): Տիրոջից Իր Սրբերին տված այս խոստումը չի ենթադրում, որ մենք ազատված կլինենք տառապանքներից կամ փորձություններից, այլ որ կսատարվենք դրանց միջոցով և կիմանանք, որ Տերն է, որ սատարել է մեզ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, որքան օրհնված ենք մենք, որ բերվել ենք Վերջին Օրերի Սրբերի շարքերը: Որքան օրհնված ենք մենք, որ Փրկչի մասին մեր վկայությունները գտնվում են անցյալ և ժամանակակից մարգարեների վկայությունների կողքին:

Ես վկայում եմ, որ մեր Տերը՝ Իսրայելի Սուրբը, ապրում է, և որ Նա մեր սիրելի մարգարե Թոմաս Ս. Մոնսոնի միջոցով ղեկավարում է Իր Եկեղեցին՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Մեր Տեր՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Սքոթ Գրոու
Յոթանասունից

Քավության հրաշքը

Բացի աններելի մեղքից, չկա այնպիսի մեղք կամ մեղսագործություն, ցավ կամ վիշտ, որը Նրա Քավության բժշկող զորությունից դուրս է:

Այս համաժողովի ելույթը պատրաստելիս, հորիցս ցնցող հեռախոսազանգ ստացա: Նա ասաց, որ փոքր եղբայրս այդ առավոտ քնած ժամանակ մահացել էր: Միրտս կոտրվեց: Նա միայն 51 տարեկան էր: Երբ մտածում էի նրա մասին, զգում էի, որ պետք է ձեզ հետ կիսվեմ նրա կյանքի մասին: Ես դա անում եմ թույլտվությամբ:

Երիտասարդ հասակում եղբայրս գեղեցիկ, ընկերասեր և շփվող էր, ամբողջովին նվիրված ավետարանին: Միսիան պատվով ծառայելուց հետո, նա իր սիրած աղջկա հետ ամուսնացավ տաճարում: Նրանք օրհնվեցին որդի և դուստր ունենալով: Նրա ապագան խոստումնալից էր:

Սակայն շուտով նա թուլացավ, որոշելով ապրել ինքնահաճո կյանքով, ինչի համար վճարեց իր առողջությամբ, ամուսնությամբ և եկեղեցու անդամությամբ:

Հեռանալով տնից, նա շարունակեց այդ ապրելաոճը ավելի քան տաս տարի, սակայն Փրկիչը չէր մոռացել, ոչ էլ լքել էր նրան: Ի վերջո, հուսահատության ցավը, մուտք գործելով նրա հոգու մեջ, ստիպեց, որ նա խոնարհվեր: Բարկության զգացումը, ապստամբությունն ու հարձակողական նրա տրամադրվածությունը սկսեցին վերանալ: Ինչպես անառակ որդին, նա «ինքն իրան եկավ»:[1] Նա սկսեց ձգտել դեպի Փրկիչը և աշխատել դեպի տուն և իրենից երբեք չհրաժարված ծնողները իր ճանապարհի վրա:

Նա բռնեց ապաշխարության ուղին: Դա հեշտ չէր: 12ւ տարի Եկեղեցուց դուրս լինելուց հետո նա վերամկրտվեց և կրկին ստացավ Սուրբ Հոգու պարգևը: Նրա քահանայությունը և տաճարային օրհնությունները ի վերջո վերականգնվեցին:

Նա օրհնվեց, գտնելով մի կնոջ, որը պատրաստ էր հաշտվել նրա նախկին ապրելաձևի հետևանքով ձեռք բերած շարունակական առողջական խնդիրների հետ, և նրանք կնքվեցին տաճարում: Նրանք ունեցան երկու զավակ: Նա եպիսկոպոսությունում մի քանի տարի հավատարմությամբ ծառայեց:

Եղբայրս մահացավ երկուշաբթի առավոտյան, մարտի 7-ին: Դրան նախորդող ուրբաթ երեկոյան՝ նա կնոջ հետ այցելել էր տաճար: Կիրակի առավոտյան, մահից մեկ օր առաջ, նա քահանայության դաս էր ուսուցանել քահանայապետերի խմբին: Այդ երեկո նա մտել էր անկողին, որպեսզի այլևս չարթնանար այս կյանքում, այլ հարություն առներ արդարների հետ:

Ես շնորհակալ եմ իմ եղբոր կյանքում քավության հրաշքի համար: Փրկչի քավությունը մատչելի է մեզանից յուրաքանչյուրին, և միշտ:

Մենք օգտվում ենք Քավությունից ապաշխարության միջոցով: Երբ մենք ապաշխարում ենք, Տերը թույլ է տալիս անցյալում թողնել մեր սխալները:

«Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք:

Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից,– ահա նա կխոստովանի և կթողնի դրանք»:[2]

Անշուշտ, մենք բոլորս ճանաչում ենք ինչ որ մեկի, ով այս կյանքում լուրջ խնդիրներ է ունեցել, ով մոլորվել կամ շեղվել է ուղուց: Դա կարող է լինել մեր ընկերը կամ բարեկամը, ծնողը կամ զավակը, ամուսինը կամ կինը: Դա կարող եք լինել դուք:

Ես դիմում եմ բոլորին, անգամ ձեզ: Ես խոսում եմ քավության հրաշքի մասին:

Մեսիան եկավ փրկագնելու մարդկանց Ադամի Անկումից:[3] Հիսուս Քրիստոսի ավետարանում ամեն-ինչ մատնանշում է Մեսիայի՝ Աստծո Որդու քավող զոհաբերությունը:[4]

Փրկության ծրագիրը չէր կարող տրվել առանց քավության: «Հետևաբար, Աստված ինքն է քավում աշխարհի մեղքերը՝ իրականացնելով ողորմության ծրագիրը, բավարարելով արդարադատության պահանջները, որպեսզի Աստված լինի կատարյալ, արդար Աստված և նաև ողորմած Աստված»:[5]

Քավող զոհաբերությունը պետք է իրականացվեր Աստծո անմեղ Որդու կողմից, քանզի ընկած մարդիկ չէին կարող քավել իրենց սեփական մեղքերը:[6] Քավությունը պետք է լիներ անսահման և հավերժական, որպեսզի աշխատեր բոլոր մարդկանց համար ողջ հավերժության մեջ:[7]

Իր տառապանքի և մահվան միջոցով Փրկիչը քավեց բոլոր մարդկանց մեղքերը:[8] Նրա քավությունը սկսվեց Գեթսեմանում և շարունակվեց խաչի վրա, ավարտվելով Հարությամբ:

«Այո, . . . նա պիտի տարվի, խաչվի, և սպանվի՝ մարմինը

ենթարկելով մինչև իսկ մահվան, Որդու կամքը կուլ գնացած լինելով Հոր կամքին»:[9] Նրա քավող զոհաբերությամբ Նա «նրա հոգին մեղքի համար պատարագ մատուցեց»:[10]

Լինելով Աստծո Միածին Որդին, Նա ժառանգեց ֆիզիկական մահը հաղթելու զորությունը: Դա թույլ տվեց Նրան պահպանել Իր կյանքը, տառապելով «նույնիսկ ավելին, քան մարդ կարող է տանել և չմահանալ. քանզի ահա, արյուն կգա յուրաքանչյուր ծակոտիից, այնքան մեծ կլինի նրա տվայտանքն իր ժողովրդի ամբարշտության և պղծությունների համար»:[11]

Նա ոչ միայն վճարեց բոլոր մարդկանց մեղքերի գինը, այլ նաև վերցրեց «իր վրա իր ժողովրդի ցավերն ու թուլությունները»: Եվ Նա վերցրեց «նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, . . . որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին[a] ըստ նրանց թուլությունների»:[12]

Փրկիչը զգաց ողջ մարդկության տառապանքի ծանրությունը՝ մեղքի և զղջանքի ցավը: «Հիրավի, նա կրեց մեր ցավերը, և տարավ մեր վշտերը»:[13]

Իր Քավությամբ Նա ոչ միայն մեղսագործին, այլ նաև անմեղին է բուժում, որն այդ մեղսագործության զոհն է դարձել: Երբ անմեղը հավատք է գործարկում է Փրկչի և Նրա Քավության հանդեպ և ներում մեղսագործին, նրանք երկուսն էլ բժշկվում են:

Կան պահեր, երբ մեզանից յուրաքանչյուրը կարիք ունի ազատվելու մեղքի զգացումից, որն առաջ է գալիս սխալների և մեղքերի արդյունքում:[14] Երբ մենք ապաշխարում ենք, Փրկիչը վերցնում է մեղքը մեր հոգիներից:

Նրա քավող զոհաբերության միջոցով մեր մեղքերը թողություն են ստանում: Բացառությամբ աններելի մեղքերի, Քավությունը մատչելի է բոլորին, ցանկացած ժամանակ, անկախ մեղքի մեծությունից, «ապաշխարության պայմաններով»:[15]

Որպեսզի մենք չտառապենք մեր սեփական մեղքերի ողջբեռի տակ,

Իր անսահման սիրուց դրդվելով, Հիսուս Քրիստոսը հրավիրում է մեզ ապաշխարել.

«Ապաշխարի՛ր, չլինի թե . . . քո տառապանքները լինեն դառը, – որքան դառը, դու չգիտես, որքան սուր, դու չգիտես, այո՛, որքան ծանր՝ տանելու, դու չգիտես:

Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե ոգով»:[16]

Փրկիչը բուժում է առաջարկում նրանց, ովքեր տանջվում են. «Այժմ չե՞ք վերադառնա ինձ մոտ և ապաշխարեք ձեր մեղքերից, և դարձի չե՞ք գա, որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ»:[17]

Հիսուս Քրիստոսը մեր հոգիների Մեծ Բժիշկն է: Բացի աններելի մեղքից, չկա այնպիսի մեղք կամ մեղսագործություն, ցավ կամ վիշտ, որը Նրա Քավության բժշկող զորությունից դուրս է:

Երբ մենք մեղք ենք գործում, Սատանան մեզ ասում է, որ մենք կորած ենք: Ի հակառակը, մեր Քավիչը բոլորին՝ ներառյալ ձեզ և ինձ, փրկագնում է պարգևում, անկախ նրանից, թե ինչ սխալ ենք մենք գործել:

Մտածելով ձեր սեփական կյանքի մասին, գտնո՞ւմ եք արդյոք, որ կան բաներ, որ պետք է փոխվեն: Կա՞ն արդյոք սխալներ, որ դեռ ուղղման կարիք ունեն:

Եթե դուք տառապում եք մեղքի, զղջանքի, դառնության կամ զայրույթի, կամ հավատքի կորստի զգացումներից, ես ձեզ հրավիրում եմ օգնություն փնտրել: Ապաշխարեք և թողեք ձեր մեղքերը: Ապա աղոթքով խնդրեք Տիրոջը ներում ստանալու համար: Ներողություն խնդրեք նրանցից, ում հանդեպ սխալ եք եղել: Ներեք նրանց, ովքեր սխալ են եղել ձեր հանդեպ: Ներեք ինքներդ ձեզ:

Եթե անհրաժեշտ է, գնացեք եպիսկոպոսի մոտ: Նա է Տիրոջ ողորմության սուրհանդակը: Նա կօգնի ձեզ սրբագործվելու ձեր պայքարում՝ ապաշխարության միջոցով:

Խորասուզվեք աղոթքի և սուրբ գրությունների ուսումնասիրության մեջ: Այդպես դուք կզգաք Հոգու սրբագործող ազդեցությունը: Փրկիչն ասել է. «Սրբագործեք ձեզ. այո, մաքրագործեք ձեր սրտերը, և մաքրեք ձեր ձեռքերն ու ոտքերն իմ առաջ, որ ես կարողանամ ձեզ



մաքուր դարձնել»:[18]

Երբ մենք մաքուր ենք դառնում Նրա Քավության զորությամբ, Փրկիչը դառնում է Հոր առաջ մեր դատապաշտպանը, աղերսելով.

«Հա՛յր, տե՛ս տառապանքներն ու մահը նրա, ով չմեղանչեց, որին դու հավանել ես. տե՛ս Որդուդ արյունը, որը հեղվել է, արյունը նրա, ում դու տվեցիր, որ ինքդ փառավորվես.

Ուստի, Հա՛յր, խնայիր իմ այս եղբայրներին, որ հավատում են իմ անվանը, որ նրանք կարողանան գալ ինձ մոտ և ունենալ հավիտենական կյանք»:[19]

Մեզանից յուրաքանչյուրը ստացել է բարոյական ընտրության պարգևը: «Մարդիկ ազատ են ընտրելու ազատություն և հավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով, կամ ընտրելու գերություն և մահ, ըստ դևի . . . զորության»:[20]

Տարիներ առաջ եղբայրս կատարեց իր բարոյական ընտրությունը, որոշելով ապրել մի կյանքով, որի համար վճարեց իր առողջությամբ, ընտանիքով և Եկեղեցու անդամությամբ: Տարիներ անց, նա կատարեց նույն ազատ ընտրությունը, որոշելով ապաշխարել, համապատասխանեցնել իր կյանքը Փրկչի ուսմունքներին և բառացիորեն կրկին ծնվել Քավության զորության շնորհիվ:

Ես վկայում եմ Քավության հրաշքի մասին: Ես տեսել եմ դրա բժշկող զորությունը իմ եղբոր կյանքում և զգացել եմ այն իմ սեփական կյանքում: Քավության բժշկող և փրկող զորությունը մատչելի է

յուրաքանչյուրիս, միշտ:

Ես վկայում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է՝ մեր հոգիների Բժիշկը: Ես աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը պատասխանի Փրկչի հրավերին. «Այժմ չե՞ք վերադառնա ինձ մոտ և ապաշխարեք ձեր մեղքերից, և դարձի չե՞ք գա, որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ»:[21] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս 15.17:
2. Վարդապետություն և Ուխտեր 58.42–43:
3. Տես 2 Նեփի 2.25–26:
4. Տես Ալմա 34.14:
5. Ալմա 42.15:
6. Տես Ալմա 34.11:
7. Տես Ալմա 34.10:
8. Տես Ալմա 22.14:
9. Մոսիա 15.7:
10. Մոսիա 14.10:
11. Մոսիա 3.7:
12. Ալմա 7.11–12:
13. Մոսիա 14.4:
14. *Քարոզիր Իմ Ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 63:
15. Վարդապետություն և Ուխտեր 18.12:
16. Վարդապետություն և Ուխտեր 19.15–18:
17. 3 Նեփի 9.13:
18. Վարդապետություն և Ուխտեր 88.74:
19. Վարդապետություն և Ուխտեր 45.4–5:
20. 2 Նեփի 2.27:
21. 3 Նեփի 9.13:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Դրոշակ ազգերի համար

Եթե մենք ուսուցանում ենք Հոգով, իսկ դուք լսում եք Հոգով, մեզանից ոմանք կխոսեն ձեր իրավիճակի մասին, անձնական մարգարեական ուղերձ հղելով անմիջապես ձեզ համար:

Ես այնպես հուզված եմ հնչած երաժշտության յուրաքանչյուր նոտայով և լսած յուրաքանչյուր խոսքով, որ աղոթում եմ՝ խոսելու ի վիճակու լինելու համար:

Նախքան 1846-ի ձմռանը Նավուն թողնելը, Նախագահ Բրիգամ Յանգը մի երազ էր տեսել, որում նա մի հրեշտակ էր տեսել, կոնաձև մի բլրի վրա կանգնած, ինչ-որ տեղ՝ արևմուտքում, մատնացույց անելով ներքևում ընկած հովիտը: Երբ 18 ամիս անց նա ոտք դրեց Սոլթ Լեյքի հովիտը, նա նկատեց մի վայր, որը մեր հավաքման տեղից շատ հեռու չէ, որը նույն սարալանջի ելուստն էր, ինչ նա տեսել էր տեսիլքում:

Ինչպես հաճախ է ասվել այս ամբիոնից, եղբայր Բրիգամը վերցրեց մի բուռ ղեկավարների, բարձրացավ այդ բլրի գագաթը և հայտարարեց այն «Դրոշակի գագաթ»՝ մի անուն, որը կրոնական իմաստ ուներ այս ժամանակակից Իսրայելացիների համար: Երկու հազար հինգ հարյուր տարի առաջ, Եսայիա մարգարեն հայտարարել էր, որ վերջին օրերին «Տիրոջ տան սարը կհաստատվի սարերի գլխին . . . և նա դրոշակ կբարձրացնե ազգերի համար»:[1]

Դիտելով պատմության մեջ իրենց պահը որպես այդ մարգարեության մասնակի իրականացում, Եղբայրները ցանկացան, որ ինչ-որ մի դրոշ ծածանվի որը բառացիորեն կդառնա «դրոշակ ազգերի համար»: Երեց Հեբեր Ք. Քիմբալը դեղին մի գլխակապ պատրաստեց: Եղբայր Բրիգամն այն փաթաթեց Երեց Վիլյամ Ռիչարդսի ձեռնափայտին և տնկեց ժամանակավոր դրոշը, Սոլթ Լեյքի Մեծ հովիտը և շրջապատող սարերը հայտարարելով մարգարեացած այն վայրը, որտեղից Տիրոջ խոսքն առաջ կգնար վերջին օրերին:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, այս գերագույն համաժողովը և նրա կիսամյա և ամենամյա մյուս տարբերակներն աշխարհին ուղղված այդ վաղ հայտարարության շարունակությունն են: Ես վկայում եմ, որ վերջին երկու օրվա իրադարձությունները ևս մեկ վկայություն են, ինչպես ասվում է մեր օրհներգերից մեկում. «Տե՛ս, Սիոնի դրոշը բացված է»,[2] համոզված եմ որ *չափանիշ* բառի երկակի իմաստը նպատակային է: Պատահական չէ, որ գերագույն համաժողովի ուղերձների մեր անգլերեն հրատարակությունը տպագրվում է մի ամսագրում, որը կոչվում է *Ensign*, թարգմանաբար՝ «Դրոշ»:

Համաժողովի ավարտին ես ձեզ խնդրում եմ գալիք օրերին մտածել ոչ միայն ձեր լսած ուղերձների մասին, այլ նաև գերագույն համաժողովի այս եզակի՛ երևույթի մասին՝ թե ըստ մեր՝ Վերջին Օրերի Սրբերի հավատքի, իրականում ինչ են այս գերագույն համաժողովները և թե դրանով ինչ հրավեր ենք մենք հղում, որ աշխարհը լսի և տեսնի: Մենք վկայում ենք յուրաքանչյուր ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի, որ Աստված ոչ միայն ապրում է, այլ նաև խոսում է, որ մեր ժամանակի համար և մեր օրերում այն խորհուրդը, որ դուք լսեցիք Սուրբ Հոգու թելադրանքի միջոցով, «Տիրոջ կամքն է . . . Տիրոջ խոսքն է . . . Տիրոջ ձայնն է և Աստծո զորությունն ի փրկություն»:[3]

Հավանաբար, դուք արդեն գիտեք (եթե չգիտեք, ապա պետք է իմանաք), որ հազվադեպ բացառությամբ է, որ այստեղ ելույթ ունեցողներին թեմա է հանձնարարվում: Յուրաքանչյուրը պետք է ծոմ պահի և աղոթի, ուսումնասիրի և փնտրի, սկսի և դադար տա, և կրկին սկսի, մինչև որ ինքը վստահ կլինի, որ այս համաժողովի համար, ներկայիս համար, անկախ անձնական ցանկություններից կամ մասնավոր նախապատվություններից, նրա թեման հենց այն է, ինչ Տերը ցանկանում է, որ նա խոսի: Յուրաքանչյուր տղամարդ և կին, որին դուք լսել եք այս համաժողովի վերջին 10 ժամերի ընթացքում, փորձել է հավատարիմ լինել այդ հուշմանը: Յուրաքանչյուրը արտասուք է թափել, մտահոգվել և եռանդուն խնդրել է, որ Տերն ուղղի իրենց մտքերն ու խոսքերը: Եվ ճիշտ ինչպես Բրիգամ Յանգը հրեշտակ էր տեսել այս վայրի բարձունքում, այնպես էլ ես տեսնում եմ այդ հրեշտակներին այստեղ կանգնած: Եկեղեցու բարձրագույն իշխանությունների իմ եղբայրներն ու քույրերը կաշկանդված կզգան այդ նկարագրությունից, սակայն այդպիսին եմ ես տեսնում նրանց՝ հրեշտակային պատգամով մահկանացու սուրհանդակներ՝ տղամարդիկ ու կանայք, որոնք ինձ

և ձեզ նման ունեն բոլոր միևնույն ֆիզիկական և ֆինանսական և ընտանեկան դժվարությունները, բայց որոնք հավատքով իրենց կյանքը նվիրաբերել են այն ծառայությանը, որին կանչվել են և այն պարտականությանը, որ քարոզեն Տիրոջ, այլ ոչ թե իրենց խոսքերը:

Մտածեք, թե որքան բազմազան ելույթներ եք դուք լսել, մեկը մյուսից զարմանահրաշ, որոնք համակարգվել են միայն երկնքի թելադրմամբ: Իսկ ինչո՞ւ են նրանք տարբեր: Մեր լսարանի մեծամասնությունը՝ տեսանելի, թե անտես, կազմված է Եկեղեցու անդամներից: Ինչևէ հաղորդակցման նոր զարմանալի մեթոդների շնորհիվ, լսողների ավելի մեծ հավանականություն կա, որոնք Եկեղեցու անդամներ չեն՝ դեռևս: Այնպես որ մեր խոսքը պետք է ուղղենք և՛ նրանց, ովքեր մեզ լավ են ճանաչում, և՛ նրանց, ովքեր մեզ ընդհանրապես չեն ճանաչում: Միայն Եկեղեցու անդամներին դիմելիս մենք պետք է հաշվի առնենք երեխաներին, երիտասարդներին և երիտասարդ ամուրիներին, միջին և տարեց հասակի մարդկանց: Մենք պետք է խոսենք ընտանիքների և ծնողներով ու երեխաներով տան մասին և նույնիսկ նրանց մասին, ովքեր ամուսնացած չեն, երեխաներ չունեն և միգուցե տանից շատ հեռու են: Գերագույն համաժողովի ընթացքում մենք խոսում ենք հավատքի, հույսի, գթության[4] և խաչված[5] Քրիստոսի հավերժական ճշմարտացիության մասին, ճիշտ ինչպես ուղիղ խոսում ենք այսօրվա առանձին բարոյական խնդիրների մասին: Սուրբ գրություններից մենք հորդոր ունենք՝ «ոչինչ մի ասա այս սերնդին, բացի ապաշխարությունից»,[6] միևնույն ժամանակ մենք պարտավորված ենք քարոզել «բարի ավետիքը հեզերին և բժշկելու սրտով կոտրվածներին»: Ինչպիսին էլ որ լինեն՝ համաժողովի այս ուղերձները «ազատություն են հրատարակում գերիներին»[7] և հայտարարում են «Քրիստոսի անքննելի հարստությունը»[8]: Քարոզների լայն բազմազանության մեջ ենթադրվում է, որ յուրաքանչյուրի համար ինչ-որ մի բան կգտնվի: Ենթադրում եմ, այս առումով է Նախագահ Հարոլդ Բ. Լին ասել լավագույն ձևով, որ ավետարանի գործն է՝ «մխիթարել չարչարվողներին և չարչարել հարմարավետ ապրողներին»:[9]

Մեր մշտական ցանկությունն է, որ գերագույն համաժողովի մեր ուսուցումը լինի այնքան առատաձեռն ու գրկաբաց, որքան Քրիստոսի ուսուցումն էր, հիշելով նաև ապրել մեր սովորածով, որը հատուկ էր Նրա ուղերձներին: Երբևէ եղած ամենահայտնի քարոզը Հիսուսը սկսեց հայտարարելով հրաշալիորեն քնքուշ օրհնություններ, որը յուրաքանչյուրս կցանկանար վայելել՝ օրհնություններ, որոնք խոստացվեցին հոգով աղքատներին, սրտով մաքուրներին, խաղաղասերներին և հեզերին:[10] Որքա՜ն վեհացնող են այդ Երանությունները, և որքա՜ն հոգին հանգստացնող: Դրանք ճշմարիտ են: Սակայն այդ նույն քարոզի ժամանակ Փրկիչը շարունակեց, ցույց տալով, թե որքան շատ անձուկ պետք է լինի խաղաղարարի և սրտով մաքուրի ճանապարհը: «Լսել էք, թէ ինչ ասուեց նախնիներին. «Մի՛ սպանիր, – ասաց Նա: –Իսկ ես ձեզ ասում եմ, թէ՝ ամէն մարդ, որ . . . բարկանում է իր եղբօր վրայ, ենթակայ կը լինի դատաստանի»:[11]

Եվ նմանապես.

«Լսել էք, թէ ինչ ասուեց. «Մի՛ շնանար».

իսկ ես ձեզ ասում եմ. ամէն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդէն շնացաւ նրա հետ իր սրտում»:[12]

Ակնհայտորեն, երբ աշակերտության արահետը բարձրանում է, փորձությունն ավելի նեղանում է, մինչև որ մենք հասնում ենք քարոզի այն ծունկ ծալող բարձունքին, որի մասին Երեց Քրիստոֆերսոնը հենց նոր խոսեց. «Արդ, կատարեա՛լ եղէք դուք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն է կատարեալ»:[13] Սկզբնական հավատարմություն հարթությունների մեղմությունը աշակերտության գագաթնակետին դառնում է խորապես լարված եւ պահանջկոտ: Միանգամայն պարզ է, որ եթե մեկը կարծում է, թե Հիսուսն ուսուցանում էր անմեղսունակության աստվածաբանություն, նա չի կարդացել պայմանագրի վերջնական տարբերակը: Ո՛չ, աշակերտությանը վերաբերող հարցերում Եկեղեցին ճեպասնունդի պատուհան չէ. մենք չենք կարող միշտ «մեր ուզածը» պատվիրել: Գալու է օրը, երբ *ամեն* ծունկ կծալվի և *ամեն* լեզու կխոստովանի, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ փրկությունը կարող է գալ միայն

Նրա ճանապարհով:[14]

Գերագույն մեր համաժողովին ցանկանալով չափել ծանր բաները, ինչպեսև ընգրկել ցավամոք ուղերձներ, խնդրում ենք համոզված եղեք, որ երբ մենք խոսում ենք դժվար թեմաների մասին, մենք հասկանում ենք, որ ոչ բոլորն են տոփագրություն դիտում կամ ամուսնությունից խուսափում կամ ապօրինի սեռական կյանք վարում: Մենք գիտենք, որ ոչ բոլորն են խախտում Հանգստության օրը կամ կեղծ վկայություն բերում կամ կողակցի հանդեպ բռնություն կիրառում: Մենք գիտենք, որ մեր լսարանի մեծ մասը նման մեղքեր *չի* գործում, սակայն մենք լուրջ պարտավորություն ունենք զգուշացնող կոչ հղել նրանց, ովքեր նման բաներ են անում, որտեղ որ լինեն նրանք աշխարհում: Ուրեմն, եթե դուք փորձում եք անել ձեր լավագույնը, օրինակ՝ դուք փորձում եք ընտանեկան երեկոներ անցկացնել չնայած տունը լի է քաոս ստեղծող քաոսիկներով, ապա դուք ձեզ կարող եք բարձր գնահատական նշանակել, երբ մենք խոսում ենք այդ թեմայի շուրջ և լսել մեկ այլ թեմա, որում դուք թերանում եք: Եթե մենք ուսուցանում ենք Հոգով, իսկ դուք լսում եք Հոգով, մեզանից ոմանք կխոսեն ձեր իրավիճակի մասին, անձնական մարգարեական ուղերձ հղելով հենց ձեզ համար:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, գերագույն համաժողովին մենք կիսվում ենք մեր վկայություններով, ի լրումն այն վկայությունների, որոնք կգան ապագայում, քանի որ այսպես թե այնպես՝ Աստված այնպես *կանի*, որ իր ձայնը լսվի: «Ես ուղարկել էի ձեզ՝ վկայելու և զգուշացնելու մարդկանց», - ասել է Տերն Իր մարգարեներին:[15]

«[Եվ] ձեր վկայությունից հետո . . . գալիս է վկայությունը երկրաշարժերով . . .. որոտների ձայնով . . . կայծակների . . . և փոթորիկների . . . և իրենց սահմաններից դուրս եկող ծովի ալիքների ձայնով . . .

Եվ հրեշտակներ պիտի . . . աղաղակեն բարձր ձայնով, հնչեցնելով Աստծո փողը»:[16]

Այժմ, այս ամբիոնին մոտեցող մահկանացու հրեշտակները, յուրաքանչյուրն իր ուրույն ձևով, «հնչեցրեց Աստծո փողը»: Յուրաքանչյուր տրվող քարոզ, ըստ սահմանման, միշտ և՛ սիրո վկայություն է, և՛ զգուշացում, ինչպես որ բնությունն ինքը վերջին օրերին և՛ վկայում է, և՛ զգուշացնում:

Բուխարեստ, Ռումինիա

Այժմ, քիչ անց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կմոտենա ամբիոնին՝ փակելու այս համաժողովը: Թույլ տվեք մի անձնական բան ասել այս սիրված մարդու՝ ավագ Առաքյալի և մեր օրերի այսօրվա մարգարեի մասին: Այն պատասխանատվություններն ունենալով, որոնք հենց նոր նշեցի, և այն ամենով հանդերձ, ինչ դուք լսեցիք այս համաժողովի ընթացքում, ակնհայտ է, որ մարգարեների կյանքն այդքան էլ հեշտ չէ: Նա խոսեց կոնկրետ անցած քահանայության երեկոյի մասին: Երբ 36 տարեկանում նա Առաքյալի կոչում ստացավ, նրա երեխաները 12, 9 և 4 տարեկան էին: Քույր Մոնսոնը և այդ երեխաներն իրենց ամուսնուն և հորը նվիրել են Եկեղեցուն այժմ ավելի քան 50 տարի: Նրանք տարել են յուրաքանչյուրին հանդիպող հիվանդություններն ու կարիքները, մահկանացու կյանքի հարվածներն ու կապտուկները և մի քանիսը դեռևս առջևում են: Սակայն Նախագահ Մոնսոնն այդ բոլորի միջով անցնելով միշտ կենսուրախ է մնացել: Ոչինչ չի ընկճում նրան: Նա մեծ հավատք և արտասովոր կորով ունի:

Նախագա՛հ, այս ամբողջ լսարանի կողմից՝ տեսանելիև ոչ տեսանելի, ես հայտնում եմ, որ մենք սիրում և հարգում ենք քեզ: Քո նվիրվածությունը օրինակ է մեզ բոլորիս համար: Մենք շնորհակալ ենք քո առաջնորդության համար: Առաքելության թիկնոցը կրող մյուս տասնչորս հոգիս, այս բեմահարթակում նստած մյուս մարդիկ, նստած ժողովը և անհամար թվով այլ մարդիկ աշխարհով մեկ սիրում են քեզ, աջակցում են քեզ և կանգնած են քեզ հետ ուս-ուսի տված այս աշխատանքում: Մենք կթեթևացնենք քո բեռը որքանով որ կկարողանանք: Դու այն հրեշտակային սուրհանդակներից ես, աշխարհի հիմնադրումից առաջ կանչված, որ Հիսուս Քրիստոսի ավետարանի դրոշը թափահարես ողջ աշխարհին: Դու դա անում ես հիանալի ձևով: Այդ հռչակվող ավետարանի, նրա բերող փրկության և Նրա մասին, ով այն տալիս է մեզ, ես վկայում եմ՝ Տեր Հիսուս Քրիստոսի մեծագույն և փառավոր անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եսայիա 2.2, 11.12:
2. “The Morning Breaks,” *Hymns,* no. 1.
3. Վարդապետություն և Ուխտեր 68.4:
4. Տես Ա Կորնթացիս 13.13:
5. Տես Ա Կորնթացիս 1.23:
6. Վարդապետություն և Ուխտեր 6.9; 11.9:
7. Եսայիա 61.1:
8. Եփեսացիս 3.8:
9. Տես Harold B. Lee, in “The Message,” *New Era,* Jan. 1971, 6:
10. Տես Մատթեոս 5.3–12:
11. Մատթեոս 5.21–22, տես նաև 3 Նեփի 12.22:
12. Մատթեոս 5.27–28:
13. Մատթեոս 5.48:
14. Տես Հռովմայեցիս 14.11; Մոսիա 27.31:
15. Վարդապետություն և Ուխտեր 88.81:
16. Վարդապետություն և Ուխտեր 88.89–90, 92:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Բաժանվելով

Մեզանից ոչ ոք չի կարող լիարժեք ըմբռնել նրա կարևորությունը, ինչ Քրիստոսը մեզ համար արեց Գեթսեմանի այգում, բայց ես իմ կյանքի յուրաքանչյուր օրը շնորհակալություն եմ հայտնում Նրա քավող զոհաբերության համար:

Իմ եղբայրներ և քույրեր, սիրտս լցվում է, երբ այս համաժողովը մոտենում է իր ավարտին: Մենք մեծ առատությամբ զգացինք Տիրոջ Հոգին: Ես հայտնում եմ իմ և ամենուրեք գտնվող Եկեղեցու անդամների երախտագիտությունը բոլոր նրանց, ովքեր մասնակցեցին, ներառյալ նրանց, ովքեր աղոթեցին: Թող որ մենք երկար հիշենք այն ուղերձները, որ լսեցինք: Երբ ստանանք այս ուղերձները՝ տպված *Ensign* և *Լիահոնա* ամսագրերում, եկեք կարդանք և ուսումնասիրենք դրանք:

Կրկին, բոլոր նիստերի երաժշտությունը հիանալի էր: Ես անձամբ շնորհակալություն եմ հայտնում նրանց, ովքեր մեզ հետ պատրաստ էին կիսվել իրենց տաղանդներով, դրանով ողջ ընթացքին հուզումնալից և ոգեշնչող ոգի հաղորդելով:

Ձեռքի բարձրացումով մենք հաստատեցինք Եղբայրներին, ովքեր այս համաժողովին կանչվեցին նոր պաշտոնների: Մենք ուզում ենք, որ նրանք իմանան, որ մենք ուրախությամբ կաշխատենք իրենց հետ՝ Վարդապետի աշխատանքը կատարելիս:

Ես իմ սերն ու երախտագիտությունն եմ հայտնում իմ նվիրված խորհրդականներին՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգին և Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆին: Նրանք իմաստությամբ և հասկացողությամբ օժտված տղամարդիկ են: Նրանց ծառայությունն անգնահատելի է: Ես սիրում և սատարում եմ Տասներկու Առաքյալների Քվորումի իմ Եղբայրներին: Նրանք ծառայում են առավել արդյունավետ և լիովին նվիրված են աշխատանքին: Ես նաև իմ սերն եմ արտահայտում Յոթանասունի անդամներին և Նախագահող Եպիսկոպոսությանը:

Այսօր աշխարհում մենք բազմաթիվ մարտահրավերներ ունենք, սակայն ես հավաստիացնում եմ ձեզ, որ մեր Երկնային Հայրը մտածում է մեր մասին: Նա սիրում է յուրաքանչյուրիս և կօրհնի մեզ, եթե մենք փնտրենք Իրեն աղոթքով, և աշխատենք պահել Իր պատվիրանները:

Մենք համաշխարհային եկեղեցի ենք: Մեր անդամները աշխարհի տարբեր մասերում են: Թող որ մենք լինենք լավ քաղաքացիներ այն երկրներում, որտեղ ապրում ենք, և լավ հարևաններ մեր համայնքներում, օգնություն տրամադրելով նրանց, ովքեր մեր հավատքից չեն, ինչպես նաև՝ մեր հավատքի մարդկանց: Թող մենք լինենք ազնվության և շիտակության օրինակներ՝ ուր էլ որ գնանք, ինչ էլ որ անենք:

Շնորհակալությո՛ւն, իմ եղբայրների և քույրերի, և Եկեղեցու բոլոր Բարձրագույն Իշխանությունների համար ասված ձեր աղոթքների համար: Մենք խորապես շնորհակալ ենք այն ամենի համար, որ դուք անում եք Տիրոջ աշխատանքը առաջ տանելու համար:

Թող որ դուք ապահով վերադառնաք ձեր տները: Թող երկնքի օրհնությունները ձեզ հետ լինեն:

Այսօր՝ հեռանալուց առաջ, թույլ տվեք ձեզ հետ կիսվել Փրկչի և մեզ համար արված Նրա մեծ քավող զոհաբերության հանդեպ իմ սիրով: Երեք շաբաթ հետո ողջ քրիստոնյա աշխարհը տոնելու է Զատիկը: Ես համոզված եմ, որ մեզանից ոչ ոք չի կարող լիարժեք ըմբռնել նրա կարևորությունը, ինչ Քրիստոսը մեզ համար արեց Գեթսեմանի այգում, բայց ես իմ կյանքի յուրաքանչյուր օրը շնորհակալություն եմ հայտնում մեզ համար Նրա քավող զոհաբերության համար:

Վերջին պահին Նա կարող էր հրաժարվել: Սակայն Նա չարեց դա: Նա անցավ ամեն բանի միջով, որպեսզի փրկեր ամեն բան: Դրանով նա մեզ տվեց կյանք՝ այս մահկանացու գոյությունից վեր: Նա մեզ ետ վերցրեց Ադամի Անկման կապանքներից:

Իմ հոգու խորքից ես երախտապարտ եմ Նրան: Նա մեզ սովորեցրեց, ինչպես ապրել: Նա մեզ սովորեցրեց, ինչպես մեռնել: Նա ապահովեց մեր փրկությունը:

Ավարտելով, թույլ տվեք կիսվել ձեզ հետ Էմիլի Հարիսի այս հուզիչ խոսքերով, որոնք այնքան լավ են նկարագրում գալիք Զատկի հետ կապված իմ զգացմունքները.

Պատանը, որ փաթաթել էր Նրան,
դատարկ է:
Այստեղ է ահա,
Թարմ, ճերմակ և մաքուր:
Դուռը բացված է:
Քարը մի կողմ գլորված:
Եվ գրեթե կարող եմ լսել Նրան գովք
անող հրեշտակներին:

Պատանը չի կարող պարուրել Նրան:
Քարը չի կարող պահել Նրան:
Դատարկ քարե սենյակում
արձագանքում են խոսքերը.
«Նա այստե՛ղ չէ»:
Պատանը, որ փաթաթել էր Նրան,
դատարկ է:
Այստեղ է սահա,
Թարմ, ճերմակ և մաքուր:
Ալելուիա՜, դատարկ է այն:[1]

Օրհնություններ ձեզ, իմ եղբայրներ և քույրեր: Մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Emily Harris, "Empty Linen," *New Era,* Apr. 2011, 49.



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ | *Մարտի 26, 2011*

Էն Մ. Դիբ
Երիտասարդ Կանանց Գերագույն
Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ես հավատում եմ ազնիվ և ճշմարիտ լինելուն

Մեր համոզմունքներին հավատարիմ լինելը, նույնիսկ, երբ դա չի ընդունվում ուրիշների կողմից, հեշտ կամ զվարճալի չէ, պահում է մեզ ապահով ուղու վրա, որը տանում է մեր Երկնային Հոր հետ հավերժական կյանքի:

Իմ թանկագին երիտասարդ կանայք, այս երեկո ձեր առջև կանգնելն ինձ համար մեծ պատասխանատվություն է և արտոնություն: Դուք հիանալի և ոգեշնչող տեսք ունեք:

Հավատո տասներեքերորդ հանգանակը 2011թ. Միացյալ ժամի թեման է: Երբ ես այս տարի այցելում էի երիտասարդական հավաքներին և հաղորդության ժողովներին, լսում էի, ինչպես էին երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք պատմում, թե ինչ նշանակություն ունի հավատո տասներեքերորդ հանգանակը նրանց համար և ինչպես է այն կիրառվում իրենց կյանքում: Շատերը գիտեն այն որպես հավատո վերջին հանգանակ՝ ամենաերկարը և ամենադժվարը անգիր սովորելու համար, և միշտ հույս ունեն, որ եպիսկոպոսը չի խնդրի նրանց անգիր ասել այն: Այնուամենայնիվ, ձեզանից շատերն են հասկանում նաև, որ հավատո տասներեքերորդ հանգանակը շատ ավելին է:

Հավատո տասներեքերորդ հանգանակը ուղեցույց է քրիստոնյա արդար ապրելակերպի համար: Մի պահ պատկերացրեք, թե ինչպիսին կլիներ մեր աշխարհը, եթե բոլորն ընտրեին ապրել ըստ հավատո տասներեքերորդ հանգանակի. «Մենք հավատում ենք ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինելուն և բոլոր մարդկանց բարիք անելուն: Իրավ, կարող ենք ասել, որ մենք հետևում ենք Պողոս Առաքյալի հորդորանքին. Ամեն բանի հավատում ենք, ամեն բանի համար հույս ունենք, համբերել ենք շատ բաների և հույս ունենք, որ կկարողանանք համբերել բոլոր բաներին: Եթե մի բան առաքինի է, զեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի,- մենք ձգտում ենք այդ ամենին»:

Մոնտալբան, Ֆիլիպիններ

Նախագահ Մոնսոնը Մարգարե հաստատվելու առաջին զերագույն համաժողովի կիրակի առավոտյան իր ուղերձում մեջբերեց Փիլիպպեցիս 4.8-ից Պողոսի խորհուրդը, որով ոգեշնչված են տասներեքերորդ հավատո հանգանակի շատ սկզբունքներ: Նախագահ Մոնսոնը չմոռացավ նշել, որ մենք ապրում ենք դժվար ժամանակներում, ուստի՝ քաջալերեց մեզ, ասելով. «Մահկանացու կյանքի այս երբեմն անհույս ճամփորդության ժամանակ, թող որ մենք . . . հետևենք Պողոս Առաքյալի այդ խորհրդին, որը կօգնի պահել մեզ ապահով և ճիշտ ուղու վրա»:[1]

Այս երեկո ես կցանկանայի կենտրոնանալ տասներեքերորդ հավատո հանգանակի երկու իրար շատ մոտ գտնվող սկզբունքների վրա, որոնք հաստատապես օգնում են «պահել մեզ ապահով և ճիշտ ուղու վրա»: Ես ունեմ ամուր վկայություն և խոստում ազնիվ և ճշմարիտ լինելու կարևոր սկզբունքների վերաբերյալ:

Առաջինը, «[Ես] հավատում եմ ազնիվ լինելուն»: Ի՞նչ է նշանակում լինել ազնիվ: *Հավատքին հավատարիմ* գրքույկը սովորեցնում է. «Լինել ազնիվ նշանակում է լինել անկեղծ, ճշմարտախոս և առանց խաբեության՝ բոլոր ժամանակներում»:[2] Աստված պատվիրել է լինել ազնիվ,[3] և «լիարժեք ազնվությունը կարևոր է մեր փրկության համար»:[4]

Նախագահ Հովարդ Վ. Հանթերը սովորեցրել է, որ մենք պետք է պատրաստ լինենք լինել կատարելապես ազնիվ: Նա ասել է.

«Տարիներ առաջ մեր աղոթատների նախասրահներում և շքամուտքում կային ազդագրեր, որոնց վերնագիրն էր՝ «Ազնիվ եղեք ինքներդ ձեր հետ»: Դրանցից շատերը վերաբերվում էին կյանքի փոքր և հասարակ բաներին: Ահա այստեղ է մշակվում ազնվության սկզբունքը:

Ոմանք համարում են, որ բարոյապես անհիրավացի է անազնիվ լինել մեծ բաներում, չնայած կարծում են, որ ներելի է, եթե այդ բաները մեծ կարևորություն չունեն: Կա՞ արդյոք որևէ տարբերություն անազնվության միջև, որը վերաբերվում է հազար դոլլարին, և անազնվության, որը վերաբերվում է ընդամենը մեկ դայմի: . . .Կա՞ն արդյոք անազնվության աստիճաններ՝ կախված այն բանից, թե խնդրո առարկան մեծ է, թե փոքր»:

Նախագահ Հանթերը շարունակում է. «Որպեսզի մենք ունենանք Տիրոջ և Սուրբ Հոգու ընկերակցությունը, մենք պետք է ազնիվ լինենք ինքներս մեզ, Աստծո և մեր մերձավորների հետ: Դա բերում է իսկական երջանկություն»:[5]

Երբ մենք ազնիվ ենք բոլոր բաներում՝ մեծ և փոքր, մենք ունենում ենք մտքի խաղաղություն և մաքուր խիղճ: Մեր հարաբերությունները բարելավվում են, քանզի դրանք հիմնված են վստահության վրա: Եվ ամենամեծ օրհնությունը, որ գալիս է ազնիվ լինելուց, այն է, որ մենք կարող ենք ունենալ Սուրբ Հոգու ընկերակցությունը:

Ես կցանկանայի կիսվել մի հասարակ պատմությամբ, որն ամրացրել է բոլոր բաներում ազնիվ լինելու իմ խոստումը.

«Մի մարդ . . . մի օր երեկոյան գնաց իր հարևանի արտից ցորեն գողանալու: Նա իր հետ տարավ իր փոքր տղային, որ նստի ցանկապատի մոտ, հսկի և նախազգուշացնի, եթե որևէ մեկը երևա մոտակայքում: Մարդը ցատկեց ցանկապատի վրայով՝ մի մեծ պարկ ձեռքին, և մինչև կսկսեր ցորենը հավաքել, նա դիտեց իր չորս կողմը նախ մի ուղղությամբ, հետո մյուս, և չտեսնելով որևէ անձնավորության, նա պատրաստվեց լցնել իր պարկը: [Հենց այդ պահին տղան ձայն տվեց]. «Հայրիկ, մի կողմ դեռևս չես նայել: . . .Դու մոռացար վերև նայել»:

«Հայրիկ, մի կողմ դեռևս չես նայել: . . .Դու մոռացար վերև նայել»:[6]

Երբ մենք կանգնում ենք անազնիվ լինելու գայթակղության առաջ, իսկ այդ գայթակղությունը բոլորիս համար է, մենք կարող է մտածենք, որ ոչ ոք երբևէ չի իմանա դա: Այս պատմությունը հիշեցնում է մեզ, որ մեր Երկնային Հայրը գիտի ամեն բան և մենք, վերջիվերջո, պատասխանատու ենք Նրա առաջ: Այս մասին իմանալն օգնում է ինձ շարունակաբար ջանալ ապրել համաձայն այդ խոստումի. «[Ես] հավատում եմ

ազնիվ լինելուն»:

Տասներեքերորդ հավատո հանգանակի երկրորդ սկզբունքն է՝ «Ես հավատում եմ ճշմարիտ լինելուն»:12 Բառարանը *ճշմարիտ* բառը սահմանում է որպես հաստատուն, հավատարիմ, ճշտապահ կամ ուղիղ լինել:[7]

Իմ սիրած գրքերից մեկը Շառլոթա Բրոնտեի կողմից գրված և 1847թ. հրատարակված *Ջեյն Էյր* բրիտանական դասական վեպն է: Գլխավոր հերոսուհին՝ Ջեյն Էյրը, շատ աղքատ, դեռահաս որբ էր, ով օրինակ էր հանդիսանում նրա, ինչ նշանակում է լինել «ճշմարիտ»: Այս գեղարվեստական գործում մի մարդ՝ պարոն Ռոչեսթերը, սիրում է օրիորդ Էյրին, սակայն անկարող է ամուսնանալ նրա հետ: Փոխարենը նա խնդրում է օրիորդ Էյրին ապրել իր հետ՝ առանց ամուսնության: Օրիորդ Էյրը նույնպես սիրում է պարոն Ռոչեսթերին, և մի պահ նա գայթակղվում է, հարցնելով ինքն իրեն. «Աշխարհում ո՞վ է մտածում *քո* մասին, կամ քո արածով ու՞ մ կվիրավորես»:

Ջեյնի խիղճն անմիջապես պատասխանում է. «*Ես* մտահոգվում եմ իմ մասին: Ինչքան ավելի եմ զգում, որ մենակ եմ, առանց բարեկամի, առանց պաշտպանի, այնքան ավելի եմ համոզվում, որ ինքս պետք է ինձ հարգեմ: Աստծո տված օրենքը . . . չեմ խախտի: . . . Օրենքներն ու սկզբունքներն այն պահերի համար չեն, երբ գայթակղություն չկա: Դրանք հենց այսպիսի րոպեների համար են: . . . Եթե իմ անձնական հարմարության համար խախտում կատարեի, ապա դրանք ի՞նչ արժեք կունենային: Նրանց ունեցած արժեքին ես միշտ հավատացել եմ:. . . Այս ժամին կարող եմ միայն հենվել նախնական կարծիքիս, վաղուցվա որոշումներիս վրա, և դրանց վրա եմ ես հենվում»:[8]

Փորձության հուսահատ պահին Ջեյն Էյրը հավատարիմ մնաց իր համոզմունքներին, նա վստահեց Աստծո կողմից տրված օրենքին, և նա տոկունությամբ «հենվեց դրանց վրա»:

Մեր համոզմունքներին հավատարիմ լինելը, նույնիսկ, երբ դա չի ընդունվում ուրիշների կողմից, հեշտ

կամ զվարճալի չէ, պահում է մեզ ապահով ուղու վրա, որը տանում է մեր Երկնային Հոր հետ հավերժական կյանքի: Ես սիրում եմ մի երիտասարդ կնոջ կողմից նկարված այս նկարը, որն իրեն հիշեցնում է Երկնային Հոր հետ հավերժ ապրելու երջանկության փորձառությունն ունենալու իր ցանկության մասին:

Ճշմարիտ լինելը հնարավորություն է տալիս նաև մեզ դրական ազդեցություն ունենալ ուրիշների կյանքի վրա: Ես վերջերս լսել եմ երիտասարդ կնոջ մասին այս ոգեշնչող պատմությունը, ով իր համոզմունքներին հավատարիմ լինելու իր խոստման միջոցով մեծ ազդեցություն է ունեցել մեկ այլ երիտասարդ կնոջ կյանքում:

Տարիներ առաջ Քրիսթին ու Ջինը հաճախում էին նույն ավագ դպրոցի երգչախմբի դասերին Հարսթում՝ Տեխաս: Չնայած նրանք միմյանց լավ չգիտեին, Ջինը մի օր պատահմամբ լսել էր Քրիսթիին իր ընկերների հետ կրոնի, իրենց մի շարք համոզմունքների, Աստվածաշնչի սիրված պատմությունների մասին խոսելիս: Վերջերս, Քրիսթիի հետ տարիներ անց հաղորդակցվելուց հետո, Ջինը կիսվեց այս պատմությամբ.

«Ես տխրեցի, քանի որ ոչինչ չգիտեի այն ամենի մասին, ինչ դու և քո ընկերները խոսում էիք, և ուստի Սուրբ Ծննդյան համար ես Աստվածաշունչ խնդրեցի իմ ծնողներից: Ես Աստվածաշունչ ստացա և սկսեցի կարդալ այն: Այսպես սկսվեց իմ կրոնական ճանապարհորդությունը և ճշմարիտ Եկեղեցու իմ փնտրտուքը: Տասներկու տարի անցավ: Այդ ընթացքում ես այցելեցի տարբեր եկեղեցիներ և կանոնավոր հաճաղում էի եկեղեցի, սակայն զգում էի, որ կա ավելին: Մի գիշեր ես ծնկի իջա և աղաչեցի, որ իմանայի, թե ինչ պետք է անեի: Այդ գիշեր ես երազ տեսա քո մասին, Քրիսթի: Ես քեզ չէի տեսել այն ժամանակվանից ի վեր, ինչ մենք ավարտել էինք դպրոցը: Ես կարծում էի, որ իմ երազը տարօրինակ էր, բայց ես այն չէի վերագրում որևէ բանի: Ես նորից էի տեսնում քեզ երազիս՝ հաջորդ երեք օրերի ընթացքում: Որոշ ժամանակ ես մտածում էի իմ երազի նշանակության մասին: Ես հիշեցի, որ դու Մորմոն էիր: Ես այցելեցի Մորմոնական կայք-էջը: Առաջին բանը, որը ես գտա, Իմաստության Խոսքն էր: Իմ մայրը երկու տարի առաջ մահացել էր թոքերի քաղցկեղից: Նա ծխում էր և Իմաստության Խոսքի մասին կարդալը մեծ տպավորություն գործեց ինձ վրա: Ավելի ուշ, ես այցելեցի իմ հոր տուն: Ես նստած էի նրա հյուրասենյակում, և ես սկսեցի աղոթել: Ես խնդրեցի, որ իմանայի, թե ուր գնամ և ինչ անեմ: Այդ պահին հեռուստացույցով Եկեղեցու վերաբերյալ գովազդ էր: Ես գրի առա հեռախոսահամարը և նույն երեկոյան զանգահարեցի: Երեք օր անց զանգահարեցին միսիոներները և հարցրեցին, թե կարող էին արդյոք Մորմոնի Գիրք բերել մեր տուն: Ես ասացի՝ «Այո»: Երեք ու կես ամիս անց ես մկրտվեցի: Երկու տարի անց ես Եկեղեցում հանդիպեցի իմ ամուսնուն: Մենք ամուսնացանք Դալլասի Տաճարում: Այժմ մենք երկու գեղեցիկ փոքրիկ երեխաների ծնողներ ենք:

Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել քեզ, Քրիսթի: Դու շատ լավ օրինակ ես եղել ինձ համար դպրոցական տարիներին: Դու բարի ու առաքինի էիր: Միսիոներները սովորեցրեցին ինձ դասերը և հրավիրեցին ինձ մկրտվել, բայց *դու* եղել ես իմ երրորդ միսիոները: Դու սերմ ես գցել քո վարքի միջոցով և դու իրոք իմ կյանքը ավելի լավն ես դարձրել: Ես այժմ ունեմ հավերժական ընտանիք: Իմ երեխաները կմեծանան՝ իմանալով ավետարանի լրիվությունը: Դա մեծագույն օրհնությունն է, որ մեզանից յուրաքանչյուրին կարող է տրվել: Դու օգնեցիր դա բերել իմ կյանք»:

Երբ ես խոսեցի Քրիսթիի հետ, նա ասաց. «Երբեմն ես մտածում եմ, որ մենք լսում ենք տասներեքերորդ հավատո հանգանակում ընդգծված հատկանիշների շարքը, և այն մեզ չափազանց բարդ է թվում: Այնուամենայնիվ, ես գիտեմ, որ եթե մենք ապրենք այդ սկզբունքներով և ջանանք հետևել Քրիստոսի օրինակին, մենք կարող ենք շատ բան փոխել: . . . Ես ինձ զգում եմ ճիշտ ինչպես Ամմոնը Ալմա 26.3-ում, որտեղ նա ասում է. «Եվ այս է օրհնությունը, որը պարգևեց մեզ, որ մենք Աստծո ձեռքում գործիքներ դարձվեցինք՝ իրականացնելու այս մեծ աշխատանքը»:

Իմ աղոթքն է, որ ձեզանից յուրաքանչյուրը ոչ միայն ասի՝ «Ես հավատում եմ ազնիվ և ճշմարիտ լինելուն», այլ՝ նաև պարտավորվի ապրել այդ խոստումով ամեն օր: Ես աղոթում եմ, որ այդ անելիս, Երկնային Հոր զորությունը, սերն ու օրհնություններն աջակցեն ձեզ, մինչ դուք կատարում եք աշխատանք, որը ձեզանից յուրաքանչյուրը կանչվել է այստեղ անելու: Ես ասում եմ այս ամենը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, “Looking Back and Moving Forward,” *Liahona,* May 2008, 90.
2. *Հավատքին Հավատարիմ* (2004), 84:
3. Տես Ելից 20.15–16:
4. *Ավետարանի սկզբունքները* (2009), 179:
5. Howard W. Hunter, “Basic Concepts of Honesty,” *New Era,* Feb. 1978, 4, 5.
6. William J. Scott, “Forgot to Look Up,” *Scott’s Monthly Magazine,* Dec. 1867, 953.
7. Տես *Merriam-Webster’s Collegiate Dictionary,* 11th ed. (2003), “true”:
8. Շարլոտտա Բրոնտե, *Ջեյն Էյր* (2003), 356:

Մերի Ն. Քուք
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

«Հիշիր, բարությունը սկսում է քեզանից»

Բայրացակամությունը ուրախություն և միասնություն կբերի ձեր տուն, ձեր դասարան, ձեր ծուխ և ձեր դպրոց:

Մի քանի շաբաթ առաջ ես մի կարևոր դաս սովորեցի Դափնի մի երիտասարդ կնոջից, որը իմ ծխում ելույթ էր ունենում: Ես հուզվեցի, երբ նա վստահորեն ուսուցանեց և վկայեց Հիսուս Քրիստոսի մասին: Նա ավարտեց իր ելույթը այս խոսքերով. «Երբ ես Հիսուս Քրիստոսին դարձնում եմ իմ կյանքի կենտրոնը, իմ օրերը ավելի լավ են անցնում, ես ավելի բարի եմ դառնում իմ հարազատների հանդեպ և լցվում եմ ուրախությամբ»:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում ես հեռվից հետևում էի այդ երիտասարդ կնոջը: Նա ողջունում էր բոլորին ժպտացող աչքերի փայլով և աշխույժ ժպիտով: Ես տեսնում էի, ինչպես էր նա ուրախանում մյուս երիտասարդների հաջողություններով: Երկու Համաստեղություններից վերջերս տեղեկացա, թե ինչպես էր այդ երիտասարդ կինը հրաժարվել ֆիլմի իր տոմսերից, երբ հասկացել էր, որ դա չէր լինի «առաքինի և լավ փորձառություն» իր համար:[1] Նա սիրալիր է, բարի և հնազանդ: Նա ընտանիքում մեկ ծնող ուներ և, բնականաբար, նրա կյանքը առանց դժվարությունների չէր ընթացել, և ես զարմանում էի , թե ինչպես էր նա պահում իր բարի և ուրախ հոգին: Երբ այդ երիտասարդ կինը վկայեց, ասելով. «Ես իմ կյանքը կենտրոնացնում եմ Հիսուս Քրիստոսի վրա», ես ստացա պատասխանը:

«Մենք հավատում ենք ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինելուն և բոլոր մարդկանց բարիք անելուն»: Քրիստոսանման հատկանիշների սքանչելի ցանկը, որը մենք գտնում ենք հավատո տասներեքերրոդ հանգանակում, կօգնի մեզ պատրաստվել տաճարի օրհնություններին և հավերժական կյանքին:

Ես կցանկանայի կենտրոնանալ դրանցից միայն մեկի՝ *բարյացակամ* լինելու վրա: *Բայրացակամությունը* հիանալի խոսք է, որը մենք ամեն օր չենք լսում: Այն լատինական ծագում ունի և նշանակում է «մյուսին լավը ցանկանալ»:[2] Բարյացակամ լինել նշանակում է լինել բարի, ցանկանալ լավը և լինել գթասիրտ: Ձեզանից շատերը սովորել են բարյացակամության գաղափարի մասին երեխաների խմբում, անգիր սովորելով այս երգը.

Ուզում եմ բոլորի հանդեպ լինել
բարի,
Քանզի դա ճիշտ է, ով չգիտի:

Եվ ասում եմ ինքս ինձ «Հիշիր, Բարությունը սկսում է քեզանից»:[3]

Մեր Փրկիչը մեզ սովորեցրել է այդ մասին և ապրել է բարյացակամ կյանքով: Հիսուսը սիրում և ծառայում էր բոլորին: Կենտրոնացնելով մեր կյանքը Հիսուս Քրիստոսի շուրջ, մենք կկարողանանք ձեռք բերել բարյացակամության այս հատկանիշը: Քրիստոսանման այդ հատկանիշները զարգացնելու համար մենք պետք է սովորենք Փրկչի մասին և «հետևենք Նրա ճանապարհներին»:[4]

Բարի Սամարացու առակից մենք սովորում ենք, որ պետք է սիրենք բոլորին: Պատմությունը սկսում է Ղուկասի գլուխ 10-ում, երբ օրինականը հարցնում է Փրկչին. «Ի՞նչ գործեմ որ հավիտենական կյանքը ժառանգեմ»:

Պատասխան. «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտիցը, քո բոլոր անձիցը, քո բոլոր զորությունիցը, և քո բոլոր մտքիցը. և քո ընկերին՝ քո անձի պես»:

Ապա օրինականը հարցրեց. «Իմ ընկերն ո՞վ է»: Շատ հետաքրքիր է, որ օրինականը տալիս է այդ հարցը, քանի որ հրեաների հյուսիսային հարևանները սամարացիներն էին, որոնց նրանք այնքան չէին սիրում, որ Երուսաղեմից Գալիլեա ճանապարհորդելիս Սամարիայով գնալու փոխարեն, ավելի երկար ճանապարհով էին գնում, անցնելով Հորդանան դաշտավայրով:

Հիսուսը պատասխանեց օրինականի հարցին, պատմելով բարի սամարացու առակը: Առակն ասում է.

«Մի մարդ Երուսաղեմից իջնում էր Երիքով. և ավազակների ձեռքն ընկավ, նորանք էլ մերկացրին նորան՝ և խոցոտեցիննորան, կիսամեռ թողեցին գնացին: . . .

Մի Սամարացի էլ, որ ճանապարհորդում էր, եկավ այնտեղ և նորան տեսնելով գթաց:

Եվ մոտ եկավ՝ նորա խոցերը փաթաթեց՝ վերան ձեթ և գինի ածելով. և իր անասունի վերայ դրած տարավ նորան մի իջևան, և նորան հոգ տարավ:

Եվ հետևյալն օրն երբոր այն տեղիցը դուրս էր գնում, երկու դահեկան հանեց և իջևանի տիրոջը տվավ և ասեց նորան. Դորան հոգ տար, և ինչ որ ավելի ծախք անես, ես մյուս անգամ ետ դառնալիս կվճարեմ քեզ»:[5]

Ի տարբերություն հրեա քահանայի և ղևտացիների, ովքեր անցան վիրավոր մարդու կողքով, ով իրենց ազգակիցն էր, Սամարացին բարի գտնվեց անկախ տարբերություններից: Նա դրսևորեց բարյացակամության Քրիստոսանման հատկանիշը: Հիսուսն այս պատմության միջոցով մեզ սովորեցրեց, որ յուրաքանչյուրը մեզ համար մերձավոր է:

Եպիսկոպոսության մի խորհրդական վերջերս պատմեց մի փորձի մասին, որն ուսուցանում է, թե որքան կարևոր է մեզ համար յուրաքանչյուր մերձավոր: Նայելով հավաքվածներին, նա տեսավ մի երեխայի, որն ուներ գունավոր մատիտներով լի մի մեծ տուփ: Նայելով իր ծխի անդամներին, նա հիշեցրեց, որ ինչպես մատիտները, նրանք նման էին իրար, սակայն ամեն մարդ նաև շատ առանձնահատուկ էր:

Նա նկատեց. «Այն գույնը, որ նրանք բերում են ծուխ և աշխարհ, միայն իրենցն է: Նրանք ունեն իրենց անհատական ուժերը և թուլությունները, անձնական ցանկությունները, երազանքները: Բայց միասին նրանք միանում են հոգևոր անվի միասնության գույնի մեջ»: . . .

«Միասնությունը հոգևոր հատկանիշ է: Դա խաղաղության և նպատակի քաղցր զգացում է, որը գալիս է ընտանիքին պատկանելու արդյունքում: . . . Դա ուրիշներին լավագույնը ցանկանալն է, ինչպես որ քեզ կցանկանաս: . . . Դա իմանալն է, որ ոչ ոք չի վնասի քեզ: [Դա նշանակում է, որ ոչ ոք երբեք միայնակ չի լինի:]»[6]

Մենք կառուցում ենք այդ միասնությունը և կիսվում մեր առանձնահատուկ գույներով բարյացակամության, այսինքն բարության անհատական դրսևորման միջոցով:

Դուք երբևէ զգացե՞լ եք ձեզ միայնակ: Դուք նկատո՞ւմ եք նրանց, ովքեր միայնակ են, ապրում են միայն սև ու սպիտակ գույների աշխարհում: Երիտասարդ կանայք, ես տեսել եմ, ինչպես եք դուք բերում ձեր առանձնահատուկ գույնը ուրիշների կյանք՝ ձեր ժպիտներով, ձեր բարի խոսքերով կամ խրախուսանքի մի տողով:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, դիմելով Եկեղեցու երիտասարդ կանանց, մեզ սովորեցնում է ինչպես հաղորդակցվել մեր հասակակիցների և բոլորի հետ, ում հանդիպում ենք. «Իմ թանկագին երիտասարդ քույրեր, ես աղաչում եմ, որ դուք քաջություն ունենաք զերծ մնալու ձեր կողքիններին դատելուց և քննադատելուց, ինչպես նաև քաջություն ունենաք ուշադիր լինելու, որ բոլորը ներգրավված լինեն և իրենց սիրված ու գնահատված զգան»:[7]

Մենք կարող ենք հետևել բարի սամարացու օրինակին և բարյացակամ լինելով «փոխել աշխարհը» միայն մեկ հոգու համար:[8] Ես ցանկանում եմ հրավիրել ձեզ բոլորիդ այս գալիք շաբաթ կատարել բարի սամարացու նման առնվազն մեկ արարք: Դա կարող է պահանջել, որ դուք օգնեք, բացի ձեր սովորական ընկերներից նաև ուրիշներին կամ հաղթահարել ձեր ամաչկոտությունը: Դուք կարող եք խիզախությամբ ընտրել ծառայել մեկին, ով ձեզ լավ չի վերաբերվում: Ես խոստանում եմ, որ եթե դուք անեք ավելին, քան այն, ինչը հեշտ է ձեզ համար, դուք ներքուստ այնքան լավ կզգաք, որ բարությունը կդառնա ձեր առօրյա կյանքի մասը: Դուք կտեսնեք, որ բարյացակամությունը ուրախություն և միասնություն կբերի ձեր տուն, ձեր դասարան, ձեր ծուխ և ձեր դպրոց: «Հիշիր, բարությունը սկսվում է քեզանից»:

Մեր Փրկիչը ոչ միայն սիրում էր բոլորին, Նա ծառայում էր բոլորին: Ձեր բարությունը տարածեք շատերի վրա: Ծեր և երիտասարդ մարդիկ կարող են մեծապես օրհնվել ձեր բարի ծառայությամբ: Նախագահ Մոնսոնը դեռ պատանի տարիքից իր սրտում միշտ հատուկ տեղ է պահել ծերերի համար: Նա միշտ հասկացել է կարճ այցելության, պատրաստակամ ժպիտի կամ ծերացած ու կնճռոտված ձեռքի սեղմումի արժեքը: Գթության այս հասարակ գործերը գույնով են լցնում կյանքը, որը երբեմն լցված է երկար, միայնակ ու գորշ օրերով: Ես խնդրում եմ ձեզ բոլորիդ՝ միշտ հոգատար եղեք ձեր տատիկների, պապիկների և ծերերի հանդեպ: Վաղը Եկեղեցում նայեք ձեր շուրջը և գտեք նրանց, ովքեր կարող են օգտագործել ձեր գույնը և ավելացնել այն իր կյանքին: Շատ բան չի պահանջվում. ողջունեք նրանց անվանապես, մի փոքր զրուցեք նրանց հետ, նրանց օգնելու պատրաստակամություն հայտնեք: Կարող եք բացել դուռը կամ օգնություն առաջարկել տան կամ այգու գործերում: Ձեր երիտասարդ տարիքում հասարակ գործը ծեր մարդու համար ուժասպառ ծրագիր կարող է լինել: «Հիշիր, բարությունը սկսվում է քեզանից»:

Երբեմն բարյացակամ լինելը առավել քան դժվար է մեր իսկ ընտանիքներում: Ամուր ընտանիքները մեծ ջանքեր են պահանջում: «Եղեք ուրախ, օգտակար և հոգատար ուրիշների հանդեպ: Տանը շատ խնդիրներ ի հայտ են գալիս, որովհետև ընտանիքի անդամները խոսում են կոպիտ և վարվում են եսասիրաբար: Մտահոգվեք ընտանիքի մյուս անդամների կարիքներով: Աշխատեք լինել խաղարարար, ոչ թե ծաղրող, պայքարող և վիճող»:[9] «Հիշիր, բարությունը սկսվում է քեզանից»:

Հիսուսը սիրում էր երեխաներին, Նա վերցնում էր նրանց Իր գիրկը և օրհնում:[10] Փրկչի նման, ձեր բարությամբ դուք կարող եք օրհնել ոչ միայն ձեր տանը գտնվող, այլ բոլոր երեխաներին:

Դուք մի գուցե չիմանաք, թե ինչ ազդեցություն է թողնում ձեր կյանքը և օրինակը փոքր երեխայի վրա: Վերջերս ես մի երկտող ստացա իմ ընկերներից մեկից, որը տեղական ավագ դպրոցում մանկապարտեզի տնօրեն է: Այդ ավագ դպրոց հաճախում են մի քանի երիտասարդ տղամարդիկ և կանայք, որոնք Եկեղեցու անդամներ են: Նա կիսվեց իր փորձով. «Անցնելով սրահներով փոքր երեխաների հետ, այնքան հաճելի է տեսնել, թե որքան թվով պահարանների ներսում են փակցված Հիսուսի կամ տաճարների նկարները: Երեխաներից մեկը տեսավ Հիսուսի նկարը, երբ մի երիտասարդ կին բացել էր իր պահարանը, և ասաց. «Տեսեք, Հիսուսը մեր դպրոցում է»: Ուսանողուհին հուզվեց, ցած իջավ և գրկեց երեխային: Ես շնորհակալություն հայտնեցի երիտասարդ կնոջը իր լավ օրինակի համար: Ոգևորող է իմանալը, որ կան այդքան շատ երիտասարդներ, ովքեր աշխատում են պաշտպանել ճշմարտությունը և արդարությունը և անել իրենց մասը, հրավիրելով Հոգին ուրիշների կյանք, թեև երբեմն դա դժվար է մեզ շրջապատող աղմկալից և կոպիտ աշխարհում: Մենք հիանալի երիտասարդներ ունենք Եկեղեցում»:

Ես չեմ կարող ավելին ասել: Երիտասարդ կանայք, *դուք* փոխում եք աշխարհը, կենտրոնացնելով ձեր կյանքը Հիսուս Քրիստոսի շուրջ, և դուք «դառնում եք այն, ինչ Նա ցանկանում է, որ դառնաք»:[11]

Շնորհակալություն ձեր բարյացակամ կյանքի համար. որ

ներգրավում եք նրանց, ովքեր տարբերվում են մյուսներից, որ բարի եք ձեր հասակակիցների, ծերերի, ձեր ընտանիքի և փոքր երեխաների հանդեպ, որ մերձավորն եք նրանց, ովքեր միայնակ են, ովքեր դժվարություններ և վշտեր ունեն: Ձեր բարյացակամության միջոցով դուք «ցույց եք տալիս մյուսներին Փրկչի լույսը»:[12] Շնորհակալություն, որ հիշում եք, որ «բարությունը սկսվում է քեզանից»:

Ես գիտեմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Աստծո մարգարեն է, ում կյանքը բարյացակամության մարմնավորում է եղել, որից մենք կարող ենք սովորել: Հետևեք մեր մարգարեին: Սովորեք նրա օրինակից և լսեք նրա խոսքերը: Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսի ավետարանին և գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթի միջոցով քահանայությունը վերականգնվել է երկրի վրա:

Ես գիտեմ, որ մեր Փրկիչը ապրում է և սիրում է մեզանից յուրաքանչյուրին: Նա տվել է Իր Կյանքը մեր բոլորի համար: Ես աղոթում եմ, որ մենք կենտրոնացնենք մեր կյանքը Հիսուս Քրիստոսի շուրջ և հետևենք Նրա ուղիներին, սիրելով և ծառայելով միմյանց:[13] Այդպես ես գիտեմ, որ մենք կկարողանանք աշխարհին ավելի լավ վայր դարձնել, որովհետև «մենք հավատում ենք բարյացակամ . . . լինելուն»:[14] Ես վկայում եմ այս մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Հավատո հանգանակներ 1.13:
2. Տես *Oxford English Dictionary Online,* 2nd ed. (1989), "benevolent," oed.com:
3. "Kindness Begins with Me," *Children's Songbook,* 145.
4. "Guardians of Virtue," *Strength of Youth Media 2011: We Believe* (DVD, 2010); also available at lds.org/youth/video/youth-theme-2011-we-believe.
5. Դուկաս 10.25, 27, 29, 30, 33–35:
6. Jerry Earl Johnston, "The Unity in a Ward's Uniqueness," *Mormon Times,* Feb. 9, 2011, M1, M12.
7. Thomas S. Monson, "May You Have Courage," *Liahona,* May 2009, 125.
8. "Guardians of Virtue."
9. *Երիտասարդներին զորացնելու հատոր* (գրքույկ, 2001), 10:
10. Տես Մարկոս 10.16:
11. "Guardians of Virtue."
12. "Guardians of Virtue."
13. "Guardians of Virtue."
14. Հավատո հանգանակներ 1.13:

Էլեյն Ս. Դալտոն
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

Առաքինության պահապաններ

Այժմ պատրաստվեք, որպեսզի կարողանաք արժանանալ բոլոր օրհնություններին, որոնք սպասում են ձեզ Տիրոջ սուրբ տաճարներում:

Կան դեպքեր, երբ խոսքերը չեն կարող արտահայտել մեր զգացմունքները: Աղոթում եմ, որ Հոգին վկայի ձեր սրտերին՝ աստվածային ձեր անհատականության և ձեր հավերժական պատասխանատվության մասին: Դուք եք Իսրայելի հույսը: Դուք մեր սիրառատ Երկնային Հոր ընտրյալ և արքայական դուստրերն եք:

Անցյալ ամիս ես հնարավորություն ունեցա մասնակցել մի երիտասարդ կնոջ տաճարային ամուսնությանը, ում ճանաչում էի ծնված օրվանից: Երբ նստած էի կնքման սենյակում և նայում էի գեղեցիկ ջահին, որը փայլում էր տաճարի լույսերի ներքո, հիշեցի, երբ առաջին անգամ գրկեցի նրան. մայրը նրան սպիտակ փոքրիկ զգեստ էր հագցրել այդ օրը: Իմ կարծիքով, նա իմ երբևէ տեսած ամենագեղեցիկ երեխան էր: Եվ այդ պահին երիտասարդ այդ կինը ներս մտավ՝ կրկին ճերմակ զգեստ հագած: Նա փայլում էր և երջանիկ էր: Երբ նա ներս մտավ սենյակ, ես ողջ սրտով կամեցա, որ յուրաքանչյուր երիտասարդ կին կարողանար տեսնել այդ պահը և ձգտեր միշտ արժանի լինել կապելու և պահելու սրբազան ուխտեր և ստանալու տաճարային արարողություններ, պատրաստվելով վայելել վեհացման օրհնությունները:

Երբ այդ զույգը ծնկի իջավ սուրբ զոհասեղանի առաջ, նրանք ստացան խոստումներ, որոնք վեր են մահկանացու հասկացողությունից, որոնք կօրհնեն, կզորացնեն և կօգնեն նրանց իրենց մահկանացու ճանապարհորդության ընթացքում: Դա այն պահերից էր, երբ աշխարհը լուռ էր , իսկ ողջ երկինքը ցնծում էր: Երբ նոր ամուսնացած զույգը նայեց սենյակի մեծ հայելիներին, փեսային հարցրեցին, թե նա ինչ տեսավ: Նա ասաց. «Բոլոր նրանց, ովքեր ինձանից առաջ են գնացել»: Ապա զույգը նայեց դիմացի պատի մեծ հայելուն և հարսը՝ արցունքներն աչքերին ասաց. «Ես տեսնում եմ բոլոր նրանց, ովքեր կհետևեն մեզանից հետո»: Նա տեսավ իր ապագա ընտանիքը՝ իր սերունդը: Ես գիտեմ, որ այդ պահին նա կրկին հասկացավ, թե որքան կարևոր է հավատալ մաքրաբարո և առաքինի լինելուն: Չկա ավելի գեղեցիկ տեսարան, քան պատշաճորեն նախապատրաստված և տաճարի զոհասեղանի մոտ միասին ծնկի

իջած զույգը:

Երիտասարդ Կանանց կազմակերպությունում ձեր տարիները կնախապատրաստեն ձեզ տաճարին: Այնտեղ դուք կստանաք այն օրհնությունները, որոնց դուք լիազորված եք որպես Աստծո թանկագին դուստրեր: Ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ և կամենում է, որ դուք երջանիկ լինեք: Այդ անելու ուղին «առաքինության ուղիներում քայլելն է»[1] և «ձեր ուխտերին կառչած մնալը»:[2]

Երիտասարդ կանայք, մի աշխարհում, որտեղ անընդհատ աճում է բարոյական աղտոտվածությունը, չարի հանդեպ հանդուրժողականությունը, կանանց շահագործումը և դերերի աղավաղումը, դուք պետք է կանգնեք որպես պահապաններ ինքներդ ձեզ, ձեր ընտանիքի և բոլոր նրանց համար, ում հետ դուք հաղորդակցվում եք: Դուք պետք է լինեք առաքինության պահապաններ:

Ի՞նչ է առաքինությունը և ի՞նչ է պահապանը: «Առաքինությունը բարոյական բարձր չափանիշների վրա հիմնված մտածելակերպ և վարք է:Այն ներառում է մաքրաբարոյություն և մաքրություն»:[3] Իսկ ի՞նչ է պահապանը: Պահապանը նա է, ով պաշտպանում, պահում և հսկում է:[4] Այսպիսով որպես առաքինության պահապաններ, դուք պետք է պաշտպանեք, պահեք և հսկեք բարոյական անաղարտությունը, որովհետև մահկանացու կյանք ստեղծելու զորությունը սրբազան և վեհացնող զորություն է և պետք պահպանվի մինչև ձեր ամուսնանալը: Առաքինությունը պահանջ է՝ Սուրբ Հոգու ընկերակցությունն ու առաջնորդությունն ունենալու համար: Դուք այդ առաջնորդության կարիքը կունենաք, որպեսզի հաջող նավարկեք աշխարհում, որտեղ ապրում եք: Առաքինի լինելը պահանջ է տաճար մտնելու համար: Եվ այն պահանջ է արժանի լինելու՝ Փրկչի ներկայությամբ կանգնելու համար: Դուք այժմ նախապատրաստվում եք այդ ժամանակի համար: Անձնական Զարգացում և *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկների չափանիշները կարևոր են: Յուրաքանչյուր գրքույկում գտնվող սկզբունքների համաձայն ապրելը կզորացնի և կօգնի ձեզ «թագավորության համար ավելի համապատասխան» դառնալ:[5]

Անցյալ ամառ Ալփայնից՝ Յուտա, երիտասարդ կանանց մի խումբ որոշեց դառնալ «թագավորության համար ավելի համապատասխան»: Նրանք որոշեցին քայլելով անցնել Դրեյփեր Յուտայի տաճարից մինչև Սոլթ Լեյքի Տաճարը, ընդհանուր առմամբ՝ 35 կմ. տարածություն, ճիշտ ինչպես առաջին ռահվիրաներից մեկը՝ Ջոն Ռոյ Մոյլն էր անցել: Եղբայր Մոյլը քարտաշ էր, որը կանչվել էր մարգարե Բրիգամ Յանգի կողմից աշխատելու Սոլթ Լեյքի Տաճարի վրա: Ամեն շաբաթ նա քայլում էր 35 կմ. տարածություն իր տնից մինչև տաճար: Նրա գործերից մեկը «Սրբություն Տիրոջը» բառերի փորագրումն էր Սոլթ Լեյքի Տաճարի արևելյան կողմում: Դա հեշտ չէր և նա շատ խոչընդոտներ պետք է հաղթահարեր: Մի անգամ նրա կովերից մեկը քացահարեց նրա ոտքին: Քանի որ այն ոչ մի կերպ չէր լավանում, նա ստիպված էր կտրել տալ ոտքը: Բայց դա չխանգարեց իրեն կատարել մարգարեի հանդեպ իր պարտավորվածությունը և շարունակել աշխատել տաճարի վրա: Նա պատրաստեց փայտե ոտք և շաբաթներ հետո կրկին քայլեց դեպի տաճար, անցնելով 35 կմ.՝ աշխատանքը կատարելու համար, որը պարտավորվել էր անել:[6]

Մեղար Հիլսի վեցերորդ ծխի երիտասարդ կանայք որոշեցին ոտքով անցնել այդ նույն տարածությունը՝ նախնու պատվին և մեկի, որը նրանց ոգեշնչումն էր՝ արժանի մնալ տաճար մտնելուն: Նրանք ամեն շաբաթ համատեղ պարապմունքի ժամանակ վարժվում էին և քայլելով կիսվում էին այն բաների մասին, ինչ սովորում էին և զգում տաճարի մասին:

Նրանք դեպի տաճար իրենց երթը սկսեցին վաղ առավոտյան՝ աղոթքով: Երբ նրանք ճանապարհ ընկան, ես զարմացա նրանց վստահության վրա: Նրանք գիտեին, որ իրենք լավ պատրաստված էին: Նրանց աչքերը հառված էին դեպի իրենց նպատակը: Նրանց կատարած

յուրաքանչյուր քայլը պիտի խորհրդանշական լինի ձեզանից յուրաքանչյուրի համար, քանի որ դուք ևս այժմ պատրաստվում եք տաճար մտնել: Ձեր անձնական վարժանքն արդեն սկսվել է՝ ձեր ամենօրյա անձնական աղոթքներով, Մորմոնի Գրքի ձեր ամենօրյա ընթերցանությամբ և ձեր Անձնական Զարգացման վրա աշխատելուց:

Երթի ընթացքում երիտասարդ կանանց խոչնդոտներ էին հանդիպում, բայց նրանք կենտրոնացած մնացին իրենց նպատակի վրա: Ոմանք զգացին, որ ոտքերին բշտիկներ էին առաջանում, իսկ մյուսները զգացին, որ ծնկները չէին ենթարկվում, բայց նրանք շարունակում էին քայլել: Ձեզանից յուրաքանչյուրի համար ևս կան շատ խոչնդոտներ, ցավեր և դժվարություններ դեպի տաճար տանող ուղու վրա, բայց դուք ևս պիտի վճռական լինեք և շարունակեք գնալ: Ուղին, որը բռնեցին այս երիտասարդ կանայք, քարտեզագծված էր նրանց ղեկավարների կողմից, ովքեր քայլել էին , կամ՝ մեքենայով անցել, որոշելով գնալ ամենաապահով և ամենակարճ ճանապարհով: Ձեր ուղին ևս նշված է, և դուք կարող եք համոզված լինել, որ Փրկիչը ոչ միայն քայլել է այդ ուղով, այլ նորից կքայլի ձեզ հետ՝ ճանապարհի յուրաքանչյուր քայլը:

Դեպի տաճար այս ճամփորդության ընթացքում կային հայրեր, մայրեր, ընտանիքի անդամներ և քահանայության առաջնորդներ, ովքեր գործում էին որպես պահապաններ: Նրանց աշխատանքն էր հավաստիանալ, որ բոլորն ապահով էին և վտանգներից պաշտպանված: Նրանք հոգ էին տարել, որ յուրաքանչյուր երիտասարդ կին չջրազրկվեր և ունենար բավականաչափ սնունդ՝ ուժերը պահպանելու համար: Կային օգնության կայաններ, որոնք ստեղծվել էին նրանց քահանայության ղեկավարների կողմից՝ հանգստանալու տեղերով և խմելու ջրով: Երիտասարդ կանայք, ձեր հայրերը, ձեր մայրերը, ձեր եպիսկոպոսները և շատ-շատերը կլինեն ձեր պահապանները, երբ դուք քայլեք դեպի տաճար տանող ձեր ճանապարհով: Նրանք

նախազգուշացումներ և ուղղություն կտան, և եթե դուք վնասվեք, վիրավորվեք կամ ուղուց շեղվեք, նրանք կօգնեն ձեզ:

Ես զարմացա, որ իրենց ճամփորդության վերջին կիլոմետրերին՝ եղբայրները, այլ երիտասարդներ ու ընկերներ եկան ոգևորելու այդ վճռական երիտասարդ կանանց: Մի եղբայր ճանապարհի վերջին հատվածում բարձրացրեց իր քրոջը, որը ոտքերին մեծ բշտիկներ ուներ, և նրան շալակն առած դեպի տաճար տարավ: Երբ այս խիզախ երիտասարդ կանայք հասան իրենց նպատակակետին, երբ յուրաքանչյուրը դիպչեց տաճարին և այնտեղ միշտ արժանիորեն մտնելու լուռ պարտավորություն վերցրեց, հոսեցին արցունքներ:

Տաճարային երթը ձեր կյանքի փոխաբերությունն է: Ծնողներն ու քահանայության ղեկավարները պահապան են կանգնած ուղու երկայնքով: Նրանք ապահովում են աջակցություն և օգնություն: Երիտասարդ կանայք հսկում էին և քաջալերում միմյանց: Երիտասարդ տղամարդիկ հիանում էին կանանց ուժով, պարտավորությամբ և խրախուսում էին միմյանց: Եղբայրները տանում էին քույրերին, ովքեր վնասվել էին: Ընտանիքներն ուրախանում էին իրենց դուստրերով, և երբ նրանք ավարտում էին իրենց երթը տաճարում, նրանց ապահով տուն էին տանում:

Որպեսզի դեպի տաճար տանող արահետին մնաք, դուք պետք է պահպանեք ձեր անձնական և մյուսների առաքինությունը, ում հետ դուք հաղորդակցվում եք: Ինչո՞ւ: Մորմոնն ուսուցանում էր Մորմոնի Գրքում, որ առաքինությունը և մաքրաբարոյությունը «ամենաթանկն է ու արժեքավորը՝ բոլոր բաներից»:[7]

Ի՞նչ կարող է ձեզանից յուրաքանչյուրն անել, որպեսզի լինի առաքինության պահապան: Այն սկսվում է հավատալուց, որ դուք կարող եք փոփոխություն կատարել: Այն սկսվում է պարտավորություն վերցնելուց: Երբ ես երիտասարդ կին էի, իմացա, որ որոշ որոշումներ պետք է ընդունվեն միայն մեկ անգամ: Ես մի փոքրիկ նոթատետրում գրեցի այն ամենի ցուցակը, որոնք ես *միշտ* պետք է կատարեի, ինչպես նաև այն ամենը, ինչ ես *երբեք* չպետք է անեի: Այն ներառում էր այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ Իմաստության Խոսքին հնազանդվելը, ամեն օր աղոթելը, տասանորդը վճարելը և պարտավորվելը՝ երբեք բաց չթողնել Եկեղեցու հաճախումները: Ես ընդունեցի այս որոշումները մեկընդմիշտ, իսկ հետո որոշում ընդունելու պահին՝ ճշգրտորեն գիտեի ինչ անել, որովհետև արդեն որոշել էի: Երբ իմ բարձր դասարանցի ընկերներն ասում էին «Մի բաժակ խմելը չի վնասի», ես ծիծաղում էի և ասում. «Ես որոշել եմ չանել այդ, երբ 12 տարեկան էի»: Նախապես որոշումներ ընդունելը կօգնի ձեզ լինել առաքինության պահապաններ: Հուսով եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը կկազմի այն ամենի ցուցակը, որոնք դուք *միշտ* կանեք, և մի ցուցակ այն ամենի, ինչ դուք *երբեք* չեք անի: Այնուհետև ապրեք ձեր ցուցակով:

Առաքինության պահապան լինելը նշանակում է միշտ լինել համեստ ոչ միայն հագուստի մեջ, այլ նաև խոսքով, գործերով և սոցիալական էջերում: Լինելով առաքինության պահապաններ, որ դուք երբեք չեք հավաքի տեքստեր կամ պատկերներ՝ ուղարկելու որևէ երիտասարդ տղամարդու, որը կստիպի նրանց կորցնել Հոգին, կորցնել իրենց քահանայության զորությունը կամ կորցնել իրենց առաքինությունը: Դա նշանակում է, որ դուք հասկանում եք մաքրաբարոյության կարևորությունը, որովհետև դուք հասկանում եք, որ ձեր մարմինը տաճար է և որ ծննդաստեղծ սրբազան ուժերը

չպետք է ոտնահարվեն նախքան ամուսնությունը: Դուք հասկանում եք, որ դուք ունեք սրբազան ուժ, որը ներառում է ուրիշ հոգիներ երկիր բերելու սուրբ պատասխանատվություն, որպեսզի նրանք ստանան մարմիններ, որոնցում կբնակվեն նրանց հավերժական հոգիները: Այս զորությունը ներառում է մեկ ուրիշ սրբազան հոգի: Դուք պահապաններ եք ինչ որ մի բանի, որը «պատուական է գոհարներից»:[8] Եղեք հավատարիմ: Եղեք հնազանդ: Այժմ պատրաստվեք, որպեսզի կարողանաք արժանանալ բոլոր օրհնություններին, որոնք սպասում են ձեզ Տիրոջ սուրբ տաճարներում:

Մայրերի համար, ովքեր այս երեկո լսում են՝դուք ձեր դուստրերի համար համեստության և առաքինության ամենակարևոր օրինակն եք, շնորհակալություն: Երբեք մի տատանվեք ուսուցանել նրանց, որ նրանք Աստծո արքայադուստրերն են և որ նրանց արժեքը հիմնված չէ իրենց մարմնական հրապուրանքի վրա: Եվ թույլ տվեք նրանց տեսնել ձեր հավատքը, որը ճիշտ և հետևողական ձևով արտահայտվում է ձեր անձնական վերաբերմունքով և արտաքին տեսքով:[9] Դուք նույնպես առաքինության պահապաններ եք:

Այս շաբաթ ես կրկին բարձրացա Էնսայնի գագաթը: Դա վաղ առավոտյան էր և երբ ես ներքև նայեցի այդ լեռան վրայից Տիրոջ տան սարին՝ Սոլթ Լեյքի Տաճարին, այն կրկին բյուրեղյա մաքրություն ուներ: Ռահվիրաները տվեցին այն ամենը, ինչ ունեին, որ գային այդ լեռների գագաթը, որպեսզի դուք և ես կարողանայինք ունենալ տաճարի օրհնությունները և կնքվեինք հավերժորեն որպես ընտանիքներ: Քառասուն տարվա զոհաբերություն, տանջալի աշխատանք և երթ Ալփայնից մինչև տաճար: Ինչո՞ւ: Որովհետև ձեզ նման նրանք էլ հավատացին: Նրանք հավատացին մարգարեին: Նրանք հավատացին, որ նա տեսել էր և խոսել Աստծո և Նրա Սիրելի Որդու հետ: Նրանք հավատացին Փրկչին: Նրանք հավատացին Մորմոնի Գրքին: Այդ պատճառով նրանք կարողացան ասել. «Ամեն բանի հավատում ենք, ամեն բանի համար հույս ունենք, համբերել ենք շատ բաների և հույս ունենք, որ կկարողանանք համբերել բոլոր բաներին»:[10] Նրանք համբերել են շատ բաների և մենք էլ կարող ենք համբերել: Հավատո հանգանակի տասներեքերորդ կետն այն է, ինչին մենք հավատում ենք, որովհետև դրանք հենց այն բաներն են, որոնք որակավորում են մեզ արժանի լինելուն տաճար մտնել և մի օր կանգնել մեր Երկնային Հոր ներկայության մեջ՝ ստուգված, մաքուր և կնքված: Սա կպահանջի, որ դուք «թագավորության համար ավելի համապատասխան լինեք» և որ պատրաստվեք այժմ և ձեռք բերեք վստահություն, որ կարող եք անել դժվար բաներ:

Երիտասարդ կանայք, դուք զբաղված եք մեծ գործով: Եվ դուք մենակ չեք: Եթե դուք պահպանեք ձեր առաքինությունը և մաքրությունը, ձեզ կտրվի ուժ: Երբ դուք պահպանեք ուխտերը, որոնք դուք արել եք Սուրբ Հոգին կառաջնորդի և կպահպանի ձեզ: Դուք շրջապատված կլինեք երկնային հրեշտակների բազմությամբ: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հիշեցնում է մեզ. «Հիշեք, որ դուք միայնակ չեք վազում այս կյանքի մրցավազքում, մենք լիազորված ենք ունենալու Տիրոջ օգնությունը:»[11] Պատրաստվեք այն օրվան, երբ կգաք Տիրոջ տաճարը՝ արժանի և պատրաստված սրբազան ուխտեր կապելուն: Որպես առաքիինության պահապաններ դուք կկամենաք *փնտրել* Փրկչին Իր սուրբ տանը:

Ես վկայում եմ, որ Աստված ապրում է և որ Նրա Սիրելի Որդին՝ մեր Քավիչը, Հիսուս Քրիստոսն ապրում է, և Նրա անսահման Քավության փրկագնող և հնարավորություն տվող զորության շնորհիվ ձեզանից յուրաքանչյուրը կառաջնորդվի և կպահպանվի տաճար տանող ուղու վրա և ետ՝ դեպի Նրանց ներկայություն: Ես աղոթում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը զորացվի այդ աշխատանքի համար, որը կլինի ձեր ամենագեղեցիկ ժամը: Ապրեք այդ գեղեցիկ օրվա համար, որը նկարագրված է Հայտնության գրքում, երբ դուք «սպիտակներով ման կգաք . . . [որովհետև դուք] արժանի եք»:[12] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 25.2:
2. Վարդապետություն և Ուխտեր 25.13:
3. *Երիտասարդ Կանանց Անձնական Զարգացում* (գրքույկ, 2009), 70:
4. Տես thefreedictionary.com/guardian:
5. "More Holiness Give Me," *Hymns,* no. 131.
6. Տես Dieter F. Uchtdorf, "Lift Where You Stand," *Liahona,* Nov. 2008, 55:
7. Մորոնի 9.9:
8. Առակաց 3.15:
9. Տես M. Russell Ballard, "Mothers and Daughters," *Liahona,* May 2010, 18–21:
10. Հավատո Հանգանակներ 1.13:
11. Thomas S. Monson, "Great Expectations" (Church Educational System fireside for young adults, Jan. 11, 2009), http://lds.org/library/display/0,4945,538-1-4773-1,00.html.
12. Հայտնություն 3.4:

Սան Պաուլո, Բրազիլիա

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Կենդանի վկայություն

Վկայությունը պահանջում է, որ սնուցումը լինի հավատքի աղոթքով, Աստծո խոսքի հանդեպ քաղցով, և մեր ստացած ճշմարտությանը հնազանդվելով: Վտանգ կա աղոթքը անտեսելու մեջ:

Հմ սիրելի երիտասարդ քույրեր, դուք Տիրոջ Եկեղեցու պայծառ հույսն եք: Այսօր իմ նպատակն է օգնել ձեզ հավատալ, որ դա իրոք այդպես է: Եթե Աստծո հանդեպ ձեր այդ խորը հավատը վերածվի վկայության, դա կձևավորի ձեր ամենօրյա և ամենժամյա ընտրությունները: Եվ այդ ժամանակ թվացյալ փոքր ընտրություններից Տերը կառաջնորդի ձեզ դեպի բաղձալի երջանկություն: Ձեր ընտրությունների միջոցով նա կկարողանա օրհնել անթիվ այլ մարդկանց ևս:

Այսօր մեզ հետ լինելու ձեր ընտրությունը՝ ընտրության կարևոր օրինակ է: Ավելի քան մեկ միլիոն երիտասարդ կանայք, մայրեր և ղեկավարներ են հրավիրվել: Մյուս ընտրություններից , որ կարող էիք կատարել, դուք նախընտրել եք լինել մեզ հետ: Դուք դա արել եք ձեր խորը համոզմունքների շնորհիվ:

Դուք Հիսուս Քրիստոսի ավետարանի հավատացյալ եք: Դուք բավականին հավատք ունեք, որ եկել եք լսելու Նրա ծառաներին և հույս եք տածում, որ այն ինչ կլսեք և կզգաք, ձեզ կառաջնորդի դեպի փառահեղ կյանք: Դուք ձեր սրտում զգացել եք, որ Հիսուս Քրիստոսը դեպի մեծ երջանկություն տանող ուղին է:

Այժմ, դուք, թերևս, դա չեք համարել մեծ կարևորության գիտակցված ընտրություն: Կամ՝ միգուցե ցանկացել եք մնալ ընկերների կամ ընտանիքի հետ: Միգուցե պարզապես պատասխանել եք ինչ-որ մեկի բարյացակամությանը, ով ձեզ հրավիրել է: Սակայն եթե անգամ դա չեք նկատել, դուք առնվազն զգացել եք Փրկչի հրավերի՝«Եկ, հետևիր ինձ» խոսքերի թույլ արձագանքը:[1]

Մեկ ժամ միասին անցկացնելու արդյունքում Տերը խորացրեց ձեր հավատքը և ամրապնդեց ձեր վկայությունը Իր հանդեպ: Դուք խոսքից և երաժշտությունից ավելին լսեցիք: Դուք զգացիք Հոգու վկայությունը ձեր սրտում, որ երկրի վրա Տիրոջ ճշմարիտ Եկեղեցում կան կենդանի մարգարեներ և որ երջանկություն տանող ճանապարհը անցնում է Նրա արքայությունով: Ձեր վկայությունը աճեց, որ սա է այսօր երկրի վրա միակ ճշմարիտ և կենդանի Եկեղեցին:

Մենք ճիշտ է նույն բաները չզգացինք: Ոմանց հոգու համար դա վկայությունն էր, որ Թոմաս Ս. Մոնսոնը Աստծո մարգարեն է: Մյուսների համար դա այն էր, որ ազնվությունը, առաքինությունը և բոլորի համար բարիք գործելը Փրկչի հատկանիշներն են: Եվ դրա հետ միասին եկավ Նրան նմանվելու ավելի մեծ ցանկություն:

Դուք բոլորդ ցանկանում եք, որ Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին ձեր վկայությունը ամրապնդվի: Նախագահ Բրիգամ Յանգը կարողացավ տեսնել ձեր կարիքները տարիներ առաջ: Նա Աստծո մարգարե էր և մարգարեական կանխատեսությամբ կարողացավ տեսնել ձեր կարիքները և ձեր ցանկությունները 142 տարի առաջ: Նա ևս սիրող հայր և կենդանի մարգարե էր:

Նա կարողացավ տեսնել, թե ինչպես է սկսում աշխարհն ազդել իր սեփական դուստրերի վրա: Նա տեսավ, որ աշխարհի ազդեցությունները նրանց հեռացնում են Տիրոջ երջանկության արահետից: Նրա օրերում այդ ազդեցությունները մասամբ եկան նոր անդրմայրցամաքային երկաթգծի հետ, որը մեկուսացած և պաշտպանված Սրբերին միացնում էր աշխարհի հետ:

Նա թերևս չէր կանխատեսել այսօրվա տեխնոլոգիական հրաշքները, երբ ընդամենը ձեռքում տ եղավորվող սարքով կարող ես կապվել ողջ աշխարհում ապրող անհամար մարդկանց մտքերին: Բայց նա տեսավ ձեզ, որպես արժեքը իր դուստրերին, քանզի դուք, ընտրությունները կատարում եք հիմնվելով կենդանի և սիրող Աստծո և Նրա երջանկության ծրագրի մասին ձեր հզոր վկայության վրա:

Ահա նրա մարգարեական և ոգեշնչված խորհուրդը ուղղված միշտ ձեզ՝ իր դուստրերին:

Դա է այս երեկո իմ ուղերձի բուն իմաստը: Նա այդ խոսքերն արտասանեց իր տանը, որը գտնվում էր այստեղից կես մղոն հեռավորության վրա, որտեղից այժմ այս ուղերձը սփռվում է աշխարհի ազգերի մեջ ապրող Աստծո դուստրերին. «Իսրայելի երիտասարդ դուստրերը ճշմարտության մասին կենդանի վկայություն ստանալու կարիք ունեն»:[2]

Այնուհետև նա Տիրոջ Եկեղեցում կազմակերպեց երիտասարդ կանանց ընկերակցություն, որն այժմ մենք կոչում ենք «Երիտասարդ Կանայք»: Դուք այսօր զգացիք այն

կիրակի երեկոյան ժողովին՝ իր տան հյուրասենյակում, կատարած նրա այդ ընտրության հրաշալի ազդեցությունը։

Ավելի քան 100 տարի անց, ողջ աշխարհում Իսրայելի դուստրերը փափագում են ճշմարտության մասին կենդանի վկայություն ունենալ։ Այժմ, հետագա կյանքում դուք կարիք կունենաք, որ այդ կենդանի և աճող վկայությունն ամրացնի ձեզ և առաջնորդի հավերժական կյանք տանող ճանապարհով։ Եվ դրանով դուք կդառնաք Քրիստոսի Լույսի հաղորդիչներ ձեր եղբայրների և քույրերի համար՝ ողջ աշխարհում և սերունդներ շարունակ։

Դուք ձեր անձնական փորձից գիտեք, թե ինչ է վկայությունը։ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ուսուցանել է, որ վկայությունը հավաստի և հայտնությամբ տրված գիտելիք է այն մարդուն, որը խոնարհ փնտրում է ճշմարտությունը։ Նա ասել է վկայության և Սուրբ Հոգու մասին, որը բերում է այդ հայտնությունը. «Դրա հավաստիացնող զորությունն այնքան մեծ է, որ մտքում ոչ մի կասկած չի լինում, երբ Հոգին է խոսում։ Դա միակ միջոցն է, որ մարդը կարող է իսկապես իմանալ, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ նրա ավետարանը ճշմարիտ է»։[3]

Դուք ինքներդ զգացել եք այդ ոգեշնչումը։ Այն կարող է հաստատել ավետարանի մի մասը, ինչպես եղավ ինձ հետ այս երեկո։ Երբ ես լսեցի Հավատո տասներեքերորդ հանգանակի խոսքերը «ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո և բարյացակամ» լինելու մասին, ինձ համար կարծես Տերն ասաց դա։ Ես կրկին զգացի, որ դրանք Նրա հատկանիշներն են։ Ես զգացի, որ Ջոզեֆ Սմիթը Նրա մարգարեն է։ Այնպես որ ինձ համար դրանք պարզապես խոսքեր չէին։

Իմ մտքում ես տեսել եմ Հուդայի փոշոտ ճանապարհները և Գեթսեմանի պարտեզը։ Իմ սրտում ես զգացել եմ, թե ինչ է նշանակում ծնկի իջնել, ինչպես Ջոզեֆը ծնկի իջավ Հոր և Որդու առաջ Նյու Յորքի պուրակում։ Ես չեմ կարողացել իմ մտքում տեսնել կեսօրվա արևի պայծառությունը գերազանցող լույսը, ինչպես նա տեսավ, սակայն ես զգացել եմ վկայության ջերմությունն ու հրաշքը։

Վկայությունը ձեզ կգա մաս-մաս, երբ Հիսուս Քրիստոսի ավետարանի ողջ ճշմարտության մասերը հաստատվեն։ Օրինակ, երբ կարդում և խորհում եք Մորմոնի Գրքի շուրջ, նախկինում կարդացած հատվածները նորովի կընկալեք և նոր մտքեր ի հայտ կգան։ Ձեր վկայությունը մեծ թափով կաճի, երբ Սուրբ Հոգին հաստատի դրանց ճշմարտությունը։ Ձեր կենդանի վկայությունը կընդլայնվի՝ ուսումնասիրելով, աղոթելով և խորհելով սուրբ գրությունների շուրջ։

Ինձ համար լավագույն նկարագրությունը այն մասին, թե ինչպես կարելի է ձեռք բերել և պահել այդ կենդանի վկայությունը, արդեն տրվել է։ Այն Մորմոնի Գրքի Ալմա 32 գլխում է։ Դուք հնարավոր է շատ անգամներ եք կարդացել այն։ Ամեն անգամ կարդալիս ես նոր լույս եմ գտնում դրանում։ Եկեք այս երեկո մեկ անգամ ևս վերանայենք, թե ինչ դաս է այն ուսուցանում։

Այդ ոգեշնչված հատվածներում մենք ուսուցանվում ենք՝ վկայություն փնտրել «հավատքի մասնիկով»,[4] միաժամանակ ցանկանալով, որ այն աճի։ Այս երեկո դուք զգացիք հավատք և ցանկություն՝ լսելով

ոգեշնչող ելույթներ Փրկչի բարության, Նրա ազնվության և այն պարզության մասին, որ Նրա պատվիրանները և Քավությունը հնարավոր են դարձրել մեզ համար:

Այսպիսով, հավատքի սերմն արդեն ցանված է ձեր սրտում: Դուք թերևս զգացել եք, որ ձեր սիրտն ինչ-որ չափով ընդարձակվել է: Ես զգացել եմ:

Սակայն, աճող բույսի պես այն պետք է փայփայվի, այլապես կթոշնի: Հավատքի հաճախակի և սրտառուչ աղոթքները կարևոր և անհրաժեշտ սնուցիչներ են: Ճշմարտության հանդեպ հնազանդությունը կենդանի կպահի վկայությունը և կամրացնի այն: Պատվիրանների հանդեպ հնազանդությունը սնուցման մաս է կազմում, որը դուք պետք է ապահովեք ձեր վկայության համար:

Հիշում եք Փրկչի խոստումը. «Եթե մեկը կամենում է նրա կամքն անել, նա կիմանա այս վարդապետության համար, թե արդեոք Աստվածանի՞ց է, կամ եթե ես իմ անձիցն եմ խոսում»:[5]

Այս խոստումը սնուցել է ինձ, և այն կդառնա սնուցող նաև ձեզ համար: Ավետարանի վարդապետություններից մեկը, որն ինձ փոքր տարիքում ուսուցանել են, այն է, որ՝ Աստծո բոլոր պարգևներից ամենամեծը հավերժական կյանքի պարգևն է:[6] Ես սովորել եմ, որ հավերժական կյանքի պարգևի մասը՝ հավերժ սիրով միասին ապրող ընտանիքներն են:

Այդ ճշմարտությունները լսելու պահից ի վեր, երբ դրանք հաստատվեցին իմ սրտում, ես պարտավորվեցի այնպես կատարել իմ ընտրությունները, որ խույս տամ վիճաբանությունից և խաղաղություն հաստատեմ իմ ընտանիքում և իմ տանը:

Այժմ, միայն այս կյանքից հետո ես կարող եմ լիովին վայելել բոլոր օրհնություններից մեծագույնը՝ հավերժական կյանքը: Սակայն այս կյանքի դժվարությունների մեջ ինձ տրվել են նշույլներ, թե ինչպիսին կլինի իմ ընտանիքը երկնքում: Այդ փորձառության արդյունքում տաճարներում գործող կնքող զորության իրականության մասին իմ վկայությունն աճել և ամրապնդվել է:

Տեսնելով, թե ինչպես են իմ երկու դուստրերը տաճարում մկրտվում իրենց նախնիների համար, իմ սիրտը մոտեցել է նրանց և այն նախնիներին, որոնց մենք գտել ենք: Մեզ շնորհվել է Եղիայի խոստումը, որ ընտանիքներում յուրաքանչյուրի սիրտը կդառնա դեպի մյուսը:[7] Այսպիսով, հավատքը ինձ համար դարձել է հաստատուն գիտելիք, ինչպես մեզ խոստացվել է Ալմայի գրքում:

Ես ևս, ինչ-որ չափով զգացել եմ այն ուրախությունը, որ իմ նախնիներն են զգացել, երբ Իր մահկանացու ծառայությունից հետո Փրկիչը գնաց հոգիների աշխարհ: Ահա նկարագրությունը Վարդապետություն և Ուխտերում.

«Եվ սրբերն ուրախանում էին իրենց փրկագնմամբ և ծունկ էին ծալում ու ճանաչում Աստծո Որդուն՝ որպես իրենց Քավիչ և Ազատիչ մահից ու դժոխքի կապանքներից:

Նրանց դեմքերը փայլում էին, և Տիրոջ ներկայությունից եկող շողը նրանց վրա էր, և նրանք գովք էին երգում նրա սուրբ անվանը»:[8]

Ես զգացել եմ նրանց ուրախությունը առաջնորդվելով իմ վկայությամբ, որ հավերժական կյանքի Տիրոջ խոստումը իրական է: Այդ վկայությունը ամրապնդվել է՝ ընտրելով առաջնորդվել դրանով, ինչպես Փրկիչն է խոստացել, որ կլինի:

Նա նաև ուսուցանել է մեզ, որ բացի հնազանդ լինելուց մենք պետք է աղոթքով ճշմարտության մասին վկայություն խնդրենք: Տերը ուսուցանել է մեզ դա՝ պատվիրելով աղոթել Մորմոնի Գրքի վերաբերյալ: Նա ասել է դա Իր մարգարե Մորոնիի միջոցով.

«Ահա, ես կկամենայի հորդորել ձեզ, որ երբ դուք կարդաք այս բաները, եթե դա Աստծո իմաստությամբ լինի, որ դուք կարդաք դրանք, որ դուք հիշեք, թե որքան ողորմած է եղել Տերը մարդկանց զավակների հանդեպ, Ադամի ստեղծումից ի վեր, մինչև ընդհուպ այն ժամանակը, երբ դուք կստանաք այս բաները, և կխորհեք այն ձեր սրտերում:

Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չե՞ն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ:

Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:[9]

Հուսով եմ, դուք ինքներդ փորձել եք այդ խոստումը կամ շուտով կփորձեք: Պատասխանը կարող է չգալ հոգևոր հզոր փորձառությամբ: Ինձ մոտ սկզբում այն եկավ խաղաղությամբ: Սակայն ամեն անգամ կարդալով և աղոթելով Մորմոնի Գրքի համար, այն գալիս էր շատ ավելի հզոր ձևով:

Ես հույս չեմ դնում, անցյալում կատարվածի վրա: Մորմոնի Գրքի վերաբերյալ իմ կենդանի վկայությունը ապահով պահելու համար, ես հաճախ եմ ստանում Մորոնիի խոստումը: Ես այդ վկայության օրհնությունը չեմ համարում մշտական իրավունք:

Վկայությունը պահանջում է, որ սնուցումը լինի հավատքի աղոթքով, Աստծո խոսքի հանդեպ քաղցով, և մեր ստացած ճշմարտությանը հնազանդվելով: Վտանգ կա աղոթքը անտեսելու մեջ: Վտանգ է սպառնում մեր վկայությանը, եթե սուրբ գրությունները միայն անկանոն ենք կարդում և ուսումնասիրում: Դրանք մեր վկայության անհրաժեշտ սնուցիչներն են:

Դուք հիշում եք Ալմայի զգուշացումը.

«Բայց, եթե դուք անտեսեք ծառը, և մտքներովդ չանցկացնեք այն սնուցել, ահա, այն որևէ արմատ չի զցի. և երբ արևի տապը գա և խանձի այն, քանի որ այն արմատ չունի՝ այն կչորանա, և դուք կպոկեք այն ու դուրս կգցեք:

Այսպիսով, սա այն պատճառով չէ, որ սերմը լավը չէր, ոչ էլ այն պատճառով է, որ պտուղը դրա չէր լինի ցանկալի. այլ սա ա՜յն պատճառով է, որ ձեր հողն է անբերրի, և դուք չեք կամենում սնուցել ծառը, հետևաբար, դուք չեք կարող ունենալ դրա պտուղը»:[10]

Մշտապես սնուցվելով Աստծո խոսքով, սրտանց աղոթելով, և հնազանդվելով Տիրոջ պատվիրաններին ձեր վկայությունը կաճի և կբարգավաճի: Երբեմն հանգամանքները դուրս են գալիս մեր վերահսկողությունից, որոնք խոչընդոտում են կանոնավորապես սուրբ գրություններ ուսումնասիրելը: Կլինեն ժամանակներ, երբ մենք ինչ որ պատճառներով կընտրենք չաղոթել: Կլինեն պատվիրաններ, որ երբեմն անտեսում ենք:

Սակայն կենդանի վկայություն ունենալու մեր ցանկությունը չի իրագործվի, եթե մոռանաք Ալմայի զգուշացումն ու խոստումը.

«Եվ այսպիսով, եթե դուք չկամենաք սնուցել խոսքը՝ հավատքի աչքով սպասելով դրա պտղին, դուք երբեք չեք կարող քաղել կենաց ծառի պտղից:

Բայց, եթե դուք կամենաք սնուցել խոսքը, այո, սնուցել ծառը, երբ այն սկսում է աճել, ձեր հավատքով, մեծ ջանասիրությամբ, և համբերությամբ՝ սպասելով դրա պտղին, այն արմատ կգցի. և ահա այն կլինի դեպի հավիտենական կյանք վեր խոյացող մի ծառ:

Եվ խոսքի հանդեպ ձեր ջանասիրության, և ձեր հավատքի, և ձեր համբերության շնորհիվ, այն որ, սնուցելիս, այն կարողանա արմատ գցել ձեր մեջ, ահա, շուտով դուք պիտի քաղեք դրա պտուղը, որն ամենաթանկարժեքն է, որը քաղցր է բոլորից, ինչ քաղցր է, և որը ճերմակ է բոլորից, ինչը ճերմակ է, այո, և մաքուր է բոլորից, ինչ մաքուր է. և դուք պիտի սնվեք այս պտղով, մինչև որ դուք հագենաք, այնպես որ դուք չպիտի քաղցեք, ոչ էլ՝ պիտի ծարավեք:

Այն ժամանակ, դուք պիտի հնձեք ձեր հավատքի, և՛ ձեր ջանասիրության, և՛ համբերության, և՛ երկայնամտության վարձքը, սպասելով ծառին՝ առաջ բերելու պտուղ ձեզ համար»:[11]

Սուրբ գրությունների «սպասելով դրա պտղին» խոսքերը առաջնորդեցին իմաստուն ուսուցմանը, որ ստացաք այս երեկո: Այդ իսկ պատճառով ձեր աչքերն ուղղվեցին դեպի ապագայի այն մի եզակի օրը՝ տաճարի կնքման սենյակը: Այդ իսկ պատճառով ,այս երեկոն, կարծես թե ձեզ օգնեց պատկերացնել լույսերի անվերջ շղթան, որի անդրադարձը դուք կտեսնեք կնքման սենյակի պատերի վրա դեմ դիմաց հայելիների մեջ, երբ ամուսնանաք Աստծո տաճարում:

Եթե կարողանաք սպասել այդ օրվան վկայությունից ծնված մեծագույն փափագով, դուք կամրանաք, կդիմակայեք աշխարհի գայթակղություններին: Ամեն անգամ փորձելով ապրել Փրկչի պես, ձեր վկայությունը կամրապնդվի: Դուք ժամանակին կհասկանաք, որ Նա է Աշխարհի Լույսը:

Դուք կզգաք ձեր կյանքում աճող լույսը: Դա առանց ջանքերի չի լինի: Սակայն այն կգա, երբ ձեր վկայությունն աճի և դուք ցանկանաք փայփայել այն: Ահա վստահելի խոստում Վարդապետություն և Ուխտերից. «Այն, ինչ Աստծուց է՝ լույս է. և նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում»:[12]

Դուք լույս կլինեք աշխարհի համար՝ ուրիշների հետ կիսվելով ձեր վկայությամբ: Դուք ուրիշների համար կարտացոլեք Քրիստոսի Լույսը ձեր կյանքում: Տերը ուղիներ կգտնի, որպեսզի այդ լույսը դիպչի նրանց, ում սիրում եք: Եվ Իր դուստրերի միացյալ հավատքով և վկայությամբ Աստված Իր լույսով կդիպչի միլիոնավոր մարդկանց կյանքին՝ Իր արքայությունում և ողջ աշխարհում:

Ձեր վկայության և ձեր ընտրությունների վրա է դրված Եկեղեցու և սերունդների հույսը, ովքեր կհետևեն «Ինձ հետևիր» Տիրոջ հրավերը լսելու և ընդունելու ձեր օրինակին: Տերը գիտի և սիրում է ձեզ:

Ես ձեզ եմ թողնում իմ սերն ու իմ վկայությունը: Դուք սիրող և կենդանի Երկնային Հոր դուստրերն եք: Ես գիտեմ, որ Նրա հարություն առած Որդին, Հիսուս Քրիստոսը, Լույսն ու Փրկիչն է Աշխարհի: Եվ ես վկայում եմ, որ այս երեկո Սուրբ Հոգին ուղերձներ է ուղարկել ձեզ՝ ձեր սրտում հաստատելով ճշմարտությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Սենթ Քեթրին, Յամայկա

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս 18.22:
2. Brigham Young, in *A Century of Sisterhood: Chronological Collage, 1869–1969* (1969), 8.
3. Joseph Fielding Smith, *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 3:31.
4. Տես Ալմա 32.27:
5. Հովհաննես 7.17:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:
7. Տես Մաղաքիա 4.5–6; Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.38–39:
8. Վարդապետություն և Ուխտեր 138. 23–24:
9. Մորոնի 10.3–5:
10. ալմա 32.38–39:
11. Ալմա 32.40–43:
12. Վարդապետություն և Ուխտեր 50–24:

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցանման այլ առիթների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

ԽՈՍՆԱԿ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Ջին Ա. Սթիվենս	(10) Երեխաները օրինակ են ծառայում՝ վճարելով տասանորդ: Լիամը լսում է իր հոր ձայնը՝ բուժման պրոցեդուրայի ժամանակ:
Երեց Վոլթեր Ֆ. Գոնզալես	(13) Լրագրողին հետաքրքրում է. արդյո՞ք ամուսինների միջև լավ հարաբերությունները իրական են, թե՞ արհեստական:
Երեց Քենտ Ֆ. Ռիչարդս	(15) Փոքրիկ աղջիկը հիվանդանոցում երեխաների շուրջը հրեշտակներ է տեսնում:
Երեց Քվենթին Լ. Քուք	(18) Պայուսակի բաղադրությունը արտացոլում է ավետարանով ապրելու երիտասարդ կնոջ պարտավորությունը: Թոնգայում մի քույր առաջարկում է երիտասարդ չափահաս տղամարդկանց օգնելու ուղի:
Նախագահ Հենրի Բ. Այրինգ	(22) Համայնքը ծառայություն է մատուցում Տետոն ջրամբարի պայթունից հետո:
Նախագահ Բոյդ Կ. Փաքեր	(30) 8ցի նախագահը մի տղամարդու՝ նրա կնոջ մահից հետո խորհուրդ է տալիս ազատվել իր վշտից:
Երեց Դալլին Հ. Օուքս	(42) Հրամանատար Ռեյ Քոքսը զրկում է իրեն քնելուց՝ զինվորների ապահովության համար: Արոն Ռալստոնը հավաքում է իր ողջ քաջությունը՝ իր կյանքը փրկելու համար:
Երեց Մ. Ռասսել Բալլարդ	(46) Ոսկի որոնողը սովորում է ոսկե փոքր կտորների արժեքի մասին:
Երեց Նիլ Լ. Անդերսեն	(49) Սիդնեյ Գոինգը ընտրում է միսիան, ոչ թե՝ ռեգբին:
Լարրի Մ. Գիբսոն	(55) Սարկավագների քվորումի նախագահը սովորում է իր պարտականությունները:
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ	(58) Տղամարդը չի գիտակցում, թե ինչ արտոնություններ կան շրջագայության նավի վրա:
Նախագահ Հենրի Բ. Այրինգ	(62) Քվորումը փնտրում է անտառում մոլորված անդամին: Հենրի Բ. Այրինգը այցելում է հավատարիմ քահանայապետին:
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն	(66) Թոմաս Ս. Մոնսոնը մի զույգի հրավիրում է մասնակցել կնքման արարողությանը:
Երեց Փոլ Վ. Ջոնսոն	(78) Երիտասարդ կինը երկարատև հիվանդության ժամանակ դարձի է գալիս:
Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բըրթն	(81) Ռոբերտ Թեյլոր Բըրթնը օգնում է փրկել ձեռնասայլակների ընկերությանը:
Սիլվիա Հ. Ալրեդ	(84) Այցելող ուսուցիչը ծառայում է երիտասարդ մորը:
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն	(90) Բրազիլիայի Սրբերը երկար ճանապարհ են անցնում Մանաուս տաճար հասնելու համար: Մու Թամի ընտանիքը զոհաբերություններ է կատարում՝ տաճար գնալու համար: Թոմաս Ս. Մոնսոնը մասնակցում է Իտալիայում Հռոմի տաճարի շինարարության մեկնարկի արարողությանը:
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ	(94) Ռիչարդ Գ. Սքոթին կինը խնդրում է լվացքի մեքենան վերանորոգելու փոխարեն՝ խաղալ երեխաների հետ: Ջենին Սքոթը պահպանում է սիրո երկտողերը: Ռիչարդ Գ. Սքոթը հոգ է տանում սրտի արատ ունեցող իր փոքրիկ տղայի համար:
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(97) Հյու Բ. Բրաունը էտում է հաղարջի թուփը, ապա, փոխաբերական իմաստով, էտում է ինքն իրեն:
Երեց Քարլ Բ. Փրաթ	(101) Վեթենների ընտանիքը տասանորդ է վճարում և օրհնություններ ստանում:
Երեց Ս. Սքոթ Գրոու	(108) Ս. Սքոթ Գրոուի եղբայրը սխալ ընտրություններ է կատարում, սակայն հետագայում ապաշխարում է:
Էն Մ. Դիբ	(115) Ճշմարտության փնտրտուքի մեջ Ջենը հիշում է Քրիսթիի օրինակը:
Մերի Ն. Քուք	(118) Երեխան տեսնում է Հիսուսի նկարը դպրոցի հանդերձարանում: Երիտասարդ կինը որոշում է չգնալ կասկածելի ֆիլմ դիտելու:
Էլեյն Ս. Դալտոն	(121) Երիտասարդ կանայք քայլում են Յուտայի Դրեյփերից դեպի Սոլթ Լեյքի Տաճար:

Դարձնել համաժողովը մեր կյանքի մասը

Այս վարժությունները և հարցերը կարող եք օգտագործել որպես մեկնարկային կետ՝ ընտանեկան քննարկման կամ անձնական ուսումնասիրության համար, գերագույն համաժողովի ուսմունքները դարձնելով ձեր կյանքի մասը:

Գերագույն համաժողովի բոլոր ելույթները կարող եք գտնել առցանց՝ conference.lds.org:

Ծանուցում. Ստորև թվարկած էջերի համարները ցույց են տալիս տվյալ ելույթի առաջին էջը:

Երեխաների համար

• Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարեց, որ Եկեղեցին կկառուցի երեք նոր տաճար, այդպիսով գործող, կառուցման մեջ գտնվող և հայտարարված տաճարների ընդհանուր թիվը հասցնելով 160-ի: Քարտեզի վրա գտեք Մերիդիանը՝ Այդահո, ԱՄՆ; Վինիպեգ՝ Մանիտոբա, Կանադա; և ձեր տանը մոտ գտնվող տաճարը: Կարդացեք կամ որևէ մեկին պատմեք Նախագահ Մոնսոնի պատմությունները հավատարիմ անդամների մասին, ովքեր մեծ զոհաբերություններ են կատարել՝ տաճար այցելելու համար (էջ 90): Նպատակ դրեք այցելելու տաճար որքան հնարավոր է շուտ, կամ քննարկեք տաճար մտնելուն արժանի մնալու ուղիները:

• Երբ Ադամն ու Եվան ապրում էին երկրի վրա, Երկնային Հորը երկրպագելու եղանակներից մեկը կենդանիներ զոհաբերելն էր: Երեց Լ. Թոմ Փերին ուսուցանում է, որ Հանգստյան օրը Փրկիչը Իր աշակերտներին ներկայացրեց հաղորդությունը՝ որպես երկրպագության նոր ձև: Մենք շարունակում ենք երկրպագել, ընդունելով հաղորդությունը կիրակի օրերին: Ընտանիքով վերընթերցեք Երեց Փերիի ելույթը (էջ 6) և սովորեք կիրակնօրյա պատշաճ հագուստի և հաղորդությունը և կիրակին պատվելու այլ եղանակների մասին:

• Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը ուսուցանեց, որ Հիսուս Քրիստոսը մեզ պատվիրել է նմանվել Իրեն և մեր Երկնային Հորը (էջ 97): Մեր Երկնային Հայրը երբեմն «խրատում է» Իր զավակներին, օգնելով նրանց դառնալ Իր նման: Քննարկեք, թե ինչ է նշանակում խրատել: Կարդացեք կամ պատմեք չափից ավելի աճած հաղարջի մասին պատմությունը: Խոսեք այն մասին, թե ինչպես կարող է նահանջը կամ

Լյուբլյանա, Սլովենիա

Քոացաքոալքոս, Մեքսիկա

ձախողումը օգնել մեզ լինել ավելի ամուր և արդյունավետ:

• Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզը ուսուցանեց, որ ընտանիքները կարող են նման լինել պարաններին (էջ 37): Պարանը բազմաթիվ թելեր ունի, որոնք առանձին թույլ են, սակայն ամուր են, երբ միասին են հյուսված: Նմանապես, երբ ընտանիքի բոլոր անդամները անում են ճիշտը և օգնում են միմյանց, ընտանիքի յուրաքանչյուր անդամ ամրանում է և կարող է անել ավելի, քան եթե միայնակ լիներ: Ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամի տվեք թելի մի կտոր: Խոսեք այն մասին, թե ինչպես է ընտանիքի յուրաքանչյուր անդամ ծառայում և ամրացնում ընտանիքի մյուս անդամներին: Ապա ցուցադրեք, թե որքան ամուր են թելի կտորները, երբ միասին են:

Երիտասարդների համար

• Արդյո՞ք ձեր դասարանը կամ քվորումը հնարավորինս միասնական է: Վերընթերցեք Նախագահ Հենրի Բ. Այրինգի ելույթը միասնության մասին (էջ 62) և կազմեք մի ցանկ, թվարկելով այն, ինչը կարող է ձեր խմբին մտերմացնել:

• Երեց Ռասսել Մ. Նելսոնը խոսեց հնազանդությունը «կաֆետերիայի տեսակետից» դիտարկելու մասին (էջ 34): Քննարկեք ձեր ընտանիքի, դասարանի կամ քվորումի հետ, թե ինչ է դա նշանակում և ինչպես է գործում:

• Երեց Մ. Ռասսել Բալլարդը նկարագրեց Քրիստոսի մաքուր սերը որպես ակտիվ սեր (էջ 46), որը արտահայտվում է բարության և ծառայության հասարակ գործերով: Որոշեք, թե ինչպես կարող է ձեր դասարանը կամ քվորումը սեր ցույց տալ ձեր ծխում, ճյուղում կամ համայնքում, այնուհետև իրականացրեք ձեր ծրագիրը:

• Երեց Քվենթին Լ. Քուքը պատմեց երիտասարդների պարի երեկոյից հետո գտնված պայուսակի պատմությունը (էջ 18): Այն, ինչ ղեկավարները գտան պայուսակի ներսում, շատ բան պատմեց պայուսակի տիրուհու՝ երիտասարդ կնոջ մասին: Ի՞նչ կարող է պատմել ձեր պայուսակի, դրամապանակի կամ դպրոցական պայուսակի պարունակությունը ձեր մասին, և ի՞նչ դուք կփոխեիք այն իրերի շարքում, որոնք միշտ ձեր մոտ եք պահում:

• Երեց Լին Գ. Ռոբբինսը խոսեց Փրկչին ավելի նմանվելու մասին (էջ 103): Մտածեք, թե ինչ է նշանակում *լինել* Հիսուս Քրիստոսի նման, քան պարզապես *անել* այն, ինչ Նա խնդրում է: Ապա մտածեք, թե ինչ փոփոխություններ կանեիք ձեր կյանքում Փրկչին ավելի նմանվելու համար:

Մեծահասակների համար

• Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը (էջ 25) պատմեց մի մարդու մասին, որը չէր գնահատում իր արտոնությունները, և արդյունքում բաց թողեց շատ միջոցառումներ և լավ սնունդ, որն առաջարկվում էր շրջագայության նավի վրա, որովհետև նա չգիտեր, որ այդ ամենը ներառված էր իր տոմսի գնի մեջ: Ընտանիքի անդամների հետ, որոնք կրում են քահանայություն, քննարկեք, թե ինչպես իրենք կարող են ապրել ըստ իրենց արտոնությունների, ինչ վերաբերում է սուրբ զորությանը, պարգևներին և օրհնություններին, որոնք իրենց՝ Աստծո քահանայությունը կրողների, հնարավորությունն ու իրավունքն է:

• Նախագահ Բոյդ Կ. Փաքերը ուսուցանեց ներման զորության մասին (էջ 30): Կա՞ն արդյոք մարդիկ, որոնց դուք պետք է ներեք, կամ կա՞ն անհանգստացնող ապրումներ, որոնք դուք պետք է «մոռանաք»; Փնտրեք Տիրոջ օգնությունը ներման խաղաղությունը և զորությունը գտնելու համար:

• Երեց Ռիչարդ Գ. Սքոթը պատմեց իր և իր կնոջ՝ Ջենինի մասին, երբ նրանք միմյանց երկտողեր էին գրում (էջ 94): Մտածեք երկտող գրելու մասին, որի միջոցով կարող եք ասել, թե որքան եք սիրում և գնահատում ձեր ամուսնուն կամ կնոջը: Դրեք այն մի տեղ, որտեղ ձեր ամուսինը կամ կինը կարող է գտնել:

• Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը մեջբերում է կատարում Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի վկայություն ձեռք բերելու փորձից (էջ 87): Վերընթերցեք այդ պատմությունը և մտածեք, թե ինչ դեպքեր են ազդել ձեր վկայության վրա:

Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Սիլվիա Հ. Ալրեդ
Առաջին Խորհրդական

Ջուլի Բ. Բեք
Նախագահ


Բարբարա Թոմսոն
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ

Մերի Ն. Քուք
Առաջին Խորհրդական


Էլեյն Ս. Դալտոն
Նախագահ


Էն Մ. Դիբ
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ


Ջին Ա. Սթիվենս
Առաջին Խորհրդական

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Նախագահ

Չերիլ Ա. Էսպլին
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Լարրի Մ. Գիբսոն
Առաջին Խորհրդական

Դեյվիդ Լ. Բեք
Նախագահ

Ադրիան Օչոա
Երկրորդ Խորհրդական

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Դեյվիդ Մ. Մակ-Քոնկի
Առաջին Խորհրդական

Ռասսել Տ. Օսգութորփ
Նախագահ

Մեթյու Օ. Ռիչարդսոն
Երկրորդ Խորհրդական

Մեր ժամանակների ուսմունքները

Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության չորրորդ կիրակի օրվա դասերը կնվիրվեն «Մեր ժամանակների ուսմունքներին»: Յուրաքանչյուր դաս կարելի է պատրաստել վերջին գերագույն համաժողովի մեկ կամ մի քանի ելույթներից: Ցցերի և շրջանների նախագահները կարող են ընտրել, թե որ ելույթները պետք է օգտագործվեն, կամ նրանք կարող են հանձնարարել այդ պատասխանատվությունը եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին: Ղեկավարները Մելքիսեդեկյան Քահանայության եղբայրներին և Սփոփող Միության քույրերին պետք է շեշտեն միևնույն ելույթները նույն կիրակի օրերին ուսումնասիրելու կարևորությունը:

Նրանց, ովքեր հաճախում են չորրորդ կիրակի օրվա դասերին, խրախուսում ենք ուսումնասիրել և իրենց հետ դասարան բերել վերջին գերագույն համաժողովի ամսագիրը:

Առաջարկություններ ելույթներից դաս պատրաստելու համար

Աղոթեք, որպեսզի Սուրբ Հոգին լինի ձեզ հետ, երբ ուսումնասիրում և ուսուցանում եք ելույթ(ներ)ը: Դուք կարող եք դասը պատրաստել, օգտագործելով այլ նյութեր, սակայն համաժողովի ելույթները հաստատված են ծրագրով: Ձեր առաջադրանքն է օգնել մյուսներին սովորել և ապրել ավետարանով, ինչպես ուսուցանվում է Եկեղեցու վերջին գերագույն համաժողովում:

Վերանայեք ելույթները, գտնելու համար այն սկզբունքներն ու վարդապետությունները, որոնք համապատասխանում են դասարանի անդամների կարիքներին: Ինչպես նաև ելույթներից զատ պատմություններ, սուրբ գրությունների հղումներ և սահմանումներ, որոնք կօգնեն ձեզ ուսուցանել այդ ճշմարտությունները:

Ծրագիր կազմեք, որով կարող եք ուսուցանել սկզբունքներն ու վարդապետությունները: Ձեր ծրագիրը պետք է ընդգրկի հարցեր, որոնք կօգնեն դասարանի անդամներին.

- Ելույթ(ներ)ից գտնել սկզբունքներ և վարդապետություններ:
- Խորհել դրանց իմաստի մասին:
- Կիսվել իրենց հասկացողությամբ, մտքերով, փորձառությամբ և վկայություններով:
- Կիրառել այդ սկզբունքներն ու վարդապետություններն իրենց կյանքում:

ԱՄԻՍՆԵՐ	ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ ՕՐՎԱ ԴԱՍԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ
Մայիս 2011–Հոկտեմբեր 2011	*Լիահոնա** 2011թ. մայիսի համարում տպված ելույթներ
Նոյեմբեր 2011–Ապրիլ 2012	*Լիահոնա** 2011թ. նոյեմբերի համարում տպված ելույթներ

** Այս ելույթները (տարբեր լեզուներով) մատչելի են. conference.lds.org:*

Ղեկավարները տոնում են բարօրության տարեդարձը, հայտարարում են տաճարների մասին

Վերևում՝ Երիտասարդը հավաքում է խաղողի բերքը Մադեռայում, Կալիֆոռնիա, ԱՄՆ՝ Եկեղեցու սեփականությունը հանդիսացող խաղողի այգիներում, որտեղ Եկեղեցու բարօրության ծրագիրը չամիչ է արտադրում:

Ավելի քան 100000 մարդ մասնակցեցին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 181-րդ ամենամյա գերագույն համաժողովին՝ Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ, մինչ միլիոնավոր այլ մարդիկ դիտեցին կամ ունկնդրեցին այն հեռուստատեսությամբ, ռադիոյով, արբանյակային և համացանցային հեռարձակումներով:

Ամբողջ աշխարհում անդամները մասնակցեցին համաժողովին՝ 93 լեզուներով: Հեռարձակման առդիո, վիդեո և տեքստային տարբերակները արդեն առկա են առցանց տարբեր լեզուներով՝ conference.lds.org, և մատչելի կլինեն նաև սկավառակներով:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը բացեց համաժողովը, հայտարարելով երեք նոր տաճարների վայրերը. Ֆորտ Քոլլինս, Կոլորադո, ԱՄՆ; Մերիդիան, Այդահո, ԱՄՆ; և Վինիփեգ, Մանիթոբա, Կանադա, որոնցով հայտարարված կամ կառուցվող տաճարների թիվը հասնում է 26-ի: Ներկայումս գործում է 134 տաճար:

Նախագահ Մոնսոնը շեշտեց նաև միսիոներական աշխատանքի կարևորությունը, ասելով. «Միսիոներական աշխատանքը արքայության կենդանի արյունն է»: Ներկայումս ամբողջ աշխարհում 340 միսիաներում ծառայում են 52000 միսիոներ:

Շաբաթ օրվա ցերեկային նիստում հաստատվեցին 10 նոր Բարձրագույն Իշխանավոր և 41 Տարածքային Յոթանասունական, իսկ 34 Տարածքային Յոթանասունական ազատվեցին: Յոթանասունի Երկրորդ Քվորումից Երեց Դոն Ռ. Քլարկը կանչվեց ծառայելու Յոթանասունի Առաջին Քվորումում: 2010թ. վիճակագրական հաշվետվության տվյալներով Եկեղեցու անդամների թիվը հասել է 14 միլիոնի:

Մի շարք ելույթներ, որ հնչեցին համաժողովի երկու օրերի ընթացքում, նվիրված էին Եկեղեցու բարօրության թեմային, ինչպես նաև Եկեղեցու բարօրության առանձնահատուկ ծրագրին, որի 75-ամյակը տոնվում է 2011 թվին:

Շաբաթ օրը Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, հայտարարեց, որ բարօրության ծրագրի 75-ամյակը տոնելու նպատակով անդամները հրավիրվում են մասնակցելու մեկօրյա ծառայության նախաձեռնությանը: Ծառայության օրը պետք է անցկացվի տարվա ընթացքում՝ ծխի կամ ցցի մակարդակով: Տեղական ղեկավարները պետք է մանրակրկիտ մշակեն յուրաքանչյուր ծրագիրը, իսկ անդամները խրախուսվում են հրավիրել ուրիշներին մասնակցել, եթե հարմար է:

Նախագահ Մոնսոնը փակեց համաժողովը Քրիստոսի մասին Զատկի տրամադրություն կրող իր վկայությամբ. «Վերջին պահին [Հիսուս Քրիստոսը] կարող էր հրաժարվել: Սակայն Նա չարեց դա: Նա անցավ ամեն բանի միջով, որպեսզի փրկեր ամեն բան: Դրանով նա մեզ տվեց կյանք՝ այս մահկանացու գոյությունից վեր»: ■

Երեց Խոսե Լ. Ալոնսո

Յոթանասունից

Անգամ Եկեղեցուն միանալուց առաջ, Խոսե Լուիս Ալոնսո Տրեխոն աղոթքի զորության մասին վկայություն ուներ: «Երբ ես 11 տարեկան էի, - ասում է նա – մահվան առաջ էի կանգնել: Ես պատահմամբ լսեցի, ինչպես բժիշկները հրաժարվեցին ինձանից: Եվ ես աղոթեցի ու աղոթեցի Տիրաջը, և Նա բուժեց ինձ:

Երբ ես ավելի ուշ լսեցի Ջոզեֆ Սմիթի մասին պատմությունն այն մասին, թե ինչպես էր 14 տարեկան տղան խոսել Աստծո հետ, ես գիտեի, որ դա ճշմարիտ էր: Ես գիտեի, որ Աստված կարող է պատասխանել մեր աղոթքներին, որ Նա գիտի մեզ»:

Մխիթարության նույն զգացումը ուղեկցել է Երեց Ալոնսոյին Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու ընթացքում: «Աղոթքի և այս գրքի շնորհիվ, ես առանց կասկածի գիտեմ, որ Հիսուսը Քրիստոսն է», - ասում է նա:

Երեց Ալոնսոն ծնվել է Մեխիկո քաղաքում՝ Մեքսիկա, 1958թ. նոյեմբերին Լուիս և Լազ Ալոնսոների ընտանիքում: Դեռահաս տարիքում նա տեղափոխվել է Կուաուտլա՝ Մեքսիկա, որտեղ միացել է Եկեղեցուն: Միացյալ ժամին մասնակցությունը օգնել է նրան ծանոթանալ ամուր երիտասարդության հետ, ովքեր ընկերացել են նրա հետ և երկրորդ տունը դարձել: Միացյալի հաճախումների ժամանակ էր, որ նա հանդիպեց Ռեբեկա Սալազարին՝ մի կնոջ, որը հետագայում դարձավ նրա կինը:

Երբ Երեց Ալոնսոն դարձավ 19 տարեկան, նա ծառայեց լիաժամկետ միսիա Մեքսիկա Հերմոսիլո Միսիայում: Միսիայից հետո՝ 1981թ. փետրվարի 24-ին, Երեց Ալոնսոն և Ռեբեկան ամուսնացան Մեսա Արիզոնա Տաճարում: Նրանք երկու երեխաների ծնողներ են:

Եկեղեցու Կրթական Համակարգում որպես ինստիտուտի տնօրեն ծառայելուց բացի, Երեց Ալոնսոն բժշկական աստիճան է ստացել մանկաբուժության զարգացման բնագավառում և աշխատել է որպես բժիշկ-հոմեոպատ և վիրաբույժ: Նրա կարիերան արտահայտում է մյուսներին ծառայելու և օրհնելու նրա մշտական ցանկությունը, ինչպես Տերը օրհնել էր իրեն, երբ նա երեխա հասակում հիվանդ էր: «Ուրիշներին ծառայելը միասնություն և եղբայրություն է կառուցում, - ասում է նա, - և հրավիրում է Տիրոջ զորությունը մեր կյանք»:

Յոթանասունի Առաջին Քվորումում ծառայելու իր կանչից առաջ, Երեց Ալոնսոն ծառայել է որպես եպիսկոպոս, ցցի միսիայի նախագահ, ցցի նախագահ, միսիայի նախագահի խորհրդական, Մեքսիկա Տիխուանա Միսիայի նախագահ և Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Յան Ս. Արդերն

Յոթանասունից

Երբ էլ որ հեռախոսի զանգ հնչի կամ դուռը թակեն, Երեց Յան Սիդնի Արդերնի բերանից հնչած առաջին խոսքերը սովորաբար սրանք են՝ «Ինչպե՞ս ես կարող եմ օգնել ձեզ»:

Երեց Արդերնը ծնվել է 1954թ. փետրվարին Հարի և Գլեդիս Մակվիկար Վիլտշայերների ընտանիքում Թե Արոհայում՝ Նոր Զելանդիա: Նա հասկացել է, որ ծառայության հաճախ փոքր թվացող գործերի շնորհիվ է, որ փոխվում է տվողի և ստացողի կյանքը: «Ծառայությունը միշտ չէ, որ հարմար է կատարել, սակայն դա միշտ օրհնում է ձեր կյանքը», - ասում է Երեց Արդերնը:

Երեց և Քույր Արդերները հանդիպել են Նոր Զելանդիայում Եկեղեցու քոլեջը հաճախելու ժամանակ և ամուսնացել են Համիլտոն Նոր Զելանդիա Տաճարում 1976թ. հունվարի 17-ին: Նրանց չորս երեխաները մեծացել են միմյանց հանդեպ սիրող հոգատարությամբ լի տանը, որտեղ առաջնահերթ տեղ էր գրավում ավետարանի սկզբունքները հասկանալու և դրանցով ապրելու անհրաժեշտությունը: «Օրհնություն է տեսնել այդ նույն առաջնահերթությունները մեր ամուսնացած զավակների տներում», - ասում է Երեց Արդերնը:

Տանը մարգարեների ուսմունքներին հետևելը առաջնահերթություն է եղել Արդերների ընտանիքում: Սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունը սովորույթ է դարձել, որովհետև փոքր երեխաները հետևում էին, որ այն անցկացվեր, որպեսզի հերթով կարմիր պիտակ փակցնեին օրացույցի վրա, ինչը նշանավորում էր, որ օրվա ընթերցանությունը կատարված էր: «Փոքր և հասարակ բաներով են ձևավորվում լավ սովորույթները», - ասում է Քույր Արդերնը:

Յոթանասունի Առաջին Քվորում ծառայության կանչվելուց առաջ Երեց Արդերնը ծառայել է որպես միսիոներ Ֆրանսիայում և Բելգիայում, ցցի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոսի խորհրդական, եպիսկոպոս, ցցի նախագահի խորհրդական, Ֆիջի Սուվա Միսիայի նախագահ և Տարածքային Յոթանասունական:

Երեց Արդերնը ստացել է բակալավրի և մագիստրոսի կոչումներ Նոր Զելանդիայի Վայկատո Համալսարանում: Նրա մասնագիտական կարիերան ներառել է Եկեղեցու Կրթական Համակարգի տարբեր պաշտոններ, ներառյալ՝ ուսուցիչ, տնօրեն, սեմինարիայի համակարգող Նոր Զեկանդիայում, Նոր Զելանդիայում Եկեղեցու քոլեջի տնօրեն և Խաղաղվկիանոսյան Տարածքի տնօրեն: ■

Երեց Կարլ Բ. Քուք

Յոթանասունից

Լեզուների ուսուցման միսիայում (Միսիոներների Պատրաստման Կենտրոնին նախորդող կենտրոնը) պատանի միսիոներ լինելով և պատրաստվելով գնալու Համբուրգ, Գերմանիա, Կարլ Բերթ Քուքը դժվարանում էր գերմաներեն սովորել: Մինչ նա փորձում էր տարրական բառապաշար հավաքել, նրա շրջանի անդամները արագ առաջ էին ընթանում, յուրացնելով ավելի բարդ գաղափարներ:

Հուսահատվելով իր դանդաղ առաջընթացից, պատանի Երեց Քուքը աստվածային օգնության դիմեց՝ քահանայության օրինության և աղոթքի միջոցով: Մի հատկապես սրտանց աղոթքից հետո Երեց Քուքը որոշակի պատասխան ստացավ. Տերը կանչել է նրան ոչ թե կատարյալ սովորելու գերմաներենը, այլ ծառայելու իր ողջ սրտով, մտքով և զորությամբ:

«Ես անմիջապես մտածեցի՝ ես կարող եմ անել դա», - ասում է Երեց Քուքը, որը վերջերս կանչվեց որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամ: «Ես կարող եմ ծառայել իմ ողջ սրտով, մտքով և զորությամբ: Ես վեր կացա թեթևության զգացումով: Մի ակնթարթում իմ չափորոշիչները փոխվեցին, և ես սկսեցի այդ ամենին մոտենալ ոչ թե իմ զուգընկերների և շրջանի անդամների, այլ՝ Տիրոջ տեսանկյունից»:

Երեց Քուքն ասում է, որ թեև այդ փորձառությունից հետո նա բոլորովին էլ չսկսեց լեզուն ավելի արագ ըմբռնել, այնուամենայնիվ, նա այլևս անցյալի պես չէր մտահոգվում, քանի որ գիտեր, որ անում էր այն, ինչ Տերը սպասում էր իրենից: Այդ դասը, ասում է նա, կարևոր էր նրա բոլոր կոչումների համար, որ ունեցավ ապագայում, ներառյալ՝ երբ ծառայում էր որպես եպիսկոպոս, ցցի նախագահության խորհրդական, ցցի նախագահ, Նոր Զելանդիայի Օքլենդ Միսիայի նախագահ, Տարածքային Յոթանասունական և այժմ՝ իր ներկա պաշտոնում:

Երեց Քուքը բակալավրի իր կոչումը ստացել է Վեբեր Պետական քոլեջից, իսկ բիզնեսի կառավարման գծով մագիստրոսի կոչումը՝ Յուտայի Պետական համալսարանից: Իր կարիերայի ընթացքում նա, հիմնականում, աշխատել է անշարժ գույքի զարգացման բնագավառում:

Երեց Քուքը ծնվել է Օգդենում՝ Յուտա, ԱՄՆ, 1957թ. հոկտեմբերին, Ռամոնա Քուք Բարքերի և հանգուցյալ Բերթ Ե. Քուքի ընտանիքում: Նա ամուսնացել է Լինեթ Հանսենի հետ 1979թ. դեկտեմբերի 14-ին, Օգդեն Յուտա Տաճարում: Նրանք հինգ զավակների ծնողներ են: ■

Երեց Լեգռան Ռ. Քըրթիս Կրտսեր

Յոթանասունից

Երեց Լեգռան Ռեյն Քըրթիս Կրտսերը գիտի, որ «Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը» (ՎևՈ 64.34):

«Նա սիրում է ծառայել Եկեղեցում, և նա դա անում է աշխատասիրությամբ և պատրաստակամությամբ», - ասում է նրա կինը՝ Ջեյն Քովան Քըրթիսը, ում հետ նա ամուսնացել է Սոլթ Լեյք Տաճարում 1974թ. հունվարի 4-ին: «Ծառայությունը նրա մեծագույն իղձն ու ցանկությունն է»:

Երեց Քըրթիսը ծնվել է 1952թ. օգոստոսին Օգդենում՝ Յուտա, ԱՄՆ, Լեգռան Ռ. և Պատրիշա Գլեյդ Քըրթիսների ընտանիքում: Նրա հայրը ավելի ուշ դարձավ Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամ (1990–95):

Յոթանասունի Առաջին Քվորումում ծառայության կանչվելուց առաջ Երեց Քըրթիս Կտրսերը ծառայել է Իտալիա Հյուսիսային Միսիայում և որպես եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի նախագահ, Իտալիա Պադովա Միսիայի նախագահ և Տարածքային Յոթանասունական: Առաջին Քվորում կանչվելու ժամանակ նա ծառայում էր որպես Յոթանասունի Հինգերորդ Քվորումի անդամ՝ Յուտա Սոլթ Լեյք Սիթի Տարածքում:

Երեց Քըրթիսը ավարտել է Բրիգամ Յանգ Համալսարանը տնտեսագիտության կոչում ձեռք բերելով և իրավագիտության դոկտորի կոչում է ստացել Միչիգանի Համալսարանում: Կանչվելու ժամանակ նա աշխատում էր իրավաբանական ընկերությունում՝ որպես փաստաբան և գործընկեր: Սովորելուց և աշխատելուց բացի, Երեց Քըրթիսը և նրա կինը մեծացրել են հինգ երեխա:

Երեց Քըրթիսն ասում է, որ 2004-2011թթ. որպես Տարածքային Յոթանասունական ծառայելուց հետո նա բարձր է գնահատել Բարձրագույն Իշխանությունների հետ աշխատելու հնարավորությունը: «Ես օրհնվել եմ աշխատելու Եկեղեցու բացառիկ ղեկավարների հետ», - ասում է նա: «Նրանց հետևելը և նրանցից սովորելը մեծ պատիվ է եղել»:

Քույր Քըրթիսն ասում է, որ Երեց Քըրթիսը միշտ ունեցել է կամեցող ձեռքեր և սիրտ: «Նա միշտ ունեցել է «Ես կանեմ» մոտեցումը», - ասում է նա:

Վարդապետություն և Ուխտեր 64.34 ավարտվում է այս խոսքերով. «Պատրաստակամն ու հնազանդը կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին»: Եղբայր և Քույր Քըրթիսները ասում են, որ իրենք և իրենց երեխաներն ու թոռները մեծապես օրհնվել են՝ Տիրոջը ծառայելու համար: ■

Երեց Վ. Քրիստոֆեր Վադել

Յոթանասունից

Երեց Վեյն Քրիստոֆեր Վադելի ընտանիքի չգրված, բայց առաջնորդող սկզբունքը միշտ եղել է «Ապավինիր Տիրոջը» կարգախոսը:

«Երբ ապավինում ես Տիրոջը, կարիք չկա մտահոգվելու մեծ փոփոխությունների համար», - ասում է Երեց Վադելը կյանքի անսպասելի շրջադարձների և փոփոխությունների մասին: «Մենք գիտենք, որ Նրա սրտում են մեր լավագույն շահերը, և մենք կօրհնվենք»:

Երեց Վադելը ծնվել է 1959թ. հունիսին Մանհեթեն Բիչում՝ Կալիֆոռնիա, ԱՄՆ: Նա Վեյն և Ջոան Վադելների որդին է: Նա ստացել է իր բակալավրի կոչումը պատմության գծով Սան Դիեգո Պետական Համալսարանում, որտեղ նաև վոլեյբոլ է խաղացել: Նա բազմաթիվ պաշտոններ է զբաղեցրել միջազգային ներդրումային ընկերությունում:

Երեց Վադելը ամուսնացել է Քերոլ Ստանսելի հետ 1984թ. հունիսի 7-ին, Լոս Անջելես Կալիֆոռնիա Տաճարում: Նրանք ունեն չորս երեխաներ: Միասնությունը առաջնային է Վադելների ընտանիքում: Նրանք վերագրում են այդ միասնությունը տանը Փրկչի ավետարանին հետևելու իրենց ձգտմանը: Կարևոր են եղել նաև ընտանեկան միջոցառումները՝ միասին ժամանակ անցկացնելը իրենց տան մոտ ծովափին և ընտանիքով սպորտային միջոցառումներին հաճախելը:

Յոթանասունի Առաջին Քվորումում ծառայության կանչվելուց առաջ Երեց Վադելը ծառայել է որպես լիաժամկետ միսիոներ Իսպանիայում, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, միսիայի նախագահի խորհրդական, ցցի նախագահ, Բարսելոնա Իսպանիա Միսիայի նախագահ և Տարածքային Յոթանասունական:

Խոսելով իր նոր կոչմանը նախապատրաստվելու մասին, Երեց Վադելը նշում է տաճարի մասին.

«Ի՞նչն է մեզ պատրաստել դրան: Երբ մենք առաջին անգամ գնացինք տաճար և ուխտեր կապեցինք, մենք պարտավորվեցինք, որ պատրաստակամ կլինենք անելու այն ամենը, ինչ Տերը կխնդրի մեզ, եթե անգամ դա մեզ հարմար չլինի», - ասում է նա: «Տաճար գնալը, միսիայում ծառայելը, ուխտեր կապելը և այնուհետև Նրա ձեռքը տեսնելը և հետևելը, թե ինչպես է Նա ղեկավարում Իր աշխատանքը – այն ամենն է, ինչ մեզ պետք է: Մենք ոչ մի առանձնահատուկ բան չենք անում. մենք պահում ենք մեր կապած ուխտերը, ինչպես բոլոր մնացածը»: ■

Երեց Կազուհիկո Յամաշիտա

Յոթանասունից

Ճապոնիայի Ֆուկուոկա քաղաքում տարիներ առաջ երիտասարդ եպիսկոպոս դառնալուց ի վեր, Երեց Կազուհիկո Յամաշիտան սովորել է իր ավագ ղեկավարների լավ օրինակներից և մոտեցումներից:

Շուտով իր կնոջ՝ Տազուկո Տաշիրոյի հետ ամուսնանալուց հետո, նրանք տեղափոխվեցին Տոկիոյից Ֆուկուոկա, որտեղ Երեց Յամաշիտան՝ երեսունին մոտ, կանչվեց որպես եպիսկոպոս:

«Դժվար էր իմ և իմ ընտանիքի համար», - ասում է Երեց Յամաշիտան: «Մենք երեք փոքր երեխա ունեինք այդ ժամանակ և նոր էինք այդ տարածքում, սակայն դա նաև ուսուցանման և ուսման շատ լավ փորձառություն էր ինձ համար. Իմ վկայությունը և հավատքը ամրացան»:

Քույր Յամաշիտան ասում է, որ իր ամուսինը շատ կոչումներ է ստացել և մեծ հայր և հոգևոր ղեկավար է դարձել, անցնելով բազմաթիվ դժվարություններով, որ այդ կոչումները իրենց հետ բերում էին: Ընտանիքը սիրում է միասին ժամանակ անցկացնել, ներառյալ ամեն տարի մեքենայով երկար ճանապարհորդություններ կատարել:

Երեց Յամաշիտան ծնվել է 1953թ. սեպտեմբերին: Նա Կիյոշի և Սադե Յամաշիտաների որդին է: Նա մեծացել է Տոկիոյում՝ Ճապոնիա, որտեղ գտել է Եկեղեցին 1971թ.՝ 70-ականների համաշխարհային ցուցահանդեսին:

Երեց Յամաշիտան ստացել է բակալավրի կոչում Սահիտամա Համալսարանում և մագիստրոսի կոչում սպորտային գիտելիքների բնագավառում Ցակուբա Համալսարանում: Նա նաև ուսումնասիրել է ֆիզիկական կրթության փիլիսոփայություն Բրիգամ Յանգ Համալսարանում: Երեց Յամաշիտան ուսուցիչ և պրոֆեսոր է եղել տարբեր համալսարաններում և ծառայել է բազմաթիվ գիտական, համայնքային և սպորտային կազմակերպություններում:

Երեց Յամաշիտան և նրա կինը ամուսնացել են 1980թ. մարտի 29-ին և կնքվել են 1980թ. դեկտեմբերին՝ Տոկիո Ճապոնիա Տաճարի կառուցումից հետո: Նրանք ունեն վեց զավակ:

Յոթանասունի Առաջին Քվորում կանչվելուց առաջ նա ծառայել է որպես եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի միսիայի նախագահ, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Ռանդալ Կ. Բենեթ

Յոթանասունից

Օրթոդոնտի իր կարիերայի գագաթնակետին էր, երբ Ռանդալ Քեյ Բենեթը և նրա կինը՝ Շելլին, զգացին իրենց միսիային պատրաստվելու խիստ անհրաժեշտություն: Դա նշանակում էր, որ նրանք անմիջապես պետք է վաճառեին իրենց տունը:

Հուշման պատճառը անմիջապես պարզ չդարձավ. երեք տարի պահանջվեց, որ նրանք վաճառեին իրենց տունը, որի ընթացքում նրանցից պահանջվեց մեծ համբերություն և «ապացույց Տիրոջը, որ իրենք իսկապես պարտավորվել էին», ինչպես ասում է Երեց Բենեթը: Մենք շարունակում էինք վստահել Տիրոջը և փորձում էինք մոտ մնալ Նրան՝ տաճար հաճախ այցելելով, ամեն օր սուրբ գրություններն ուսումնասիրելով, աղոթելով, ծոմ պահելով և ուրիշներին ծառայելով»:

Քիչ ժամանակ անց տունը վաճառելուց հետո, Երեց Բենեթը կանչվեց ծառայության Պրովոյի Միսիոներների Պատրաստման Կենտրոն, այնուհետև որպես Ռուսաստան Սամարա Միսիայի նախագահ:

«Հիանալի և շատ խոնարհեցնող էր իմանալը, որ Տերը մտածում էր մեր մասին և նախապատրել էր մեզ», - ասաց Երեց Բենեթը: «Մենք հասկացանք, որ Տերը տեղյակ է մեր մտքերից և մեր սրտերում եղած զգացմունքներից: Մենք սովորեցինք հավատալ, որ Նա մեզանից ավելի լավ գիտի, մեզանից ավելի շատ գիտի և որ սիրում է մեզ»:

Որպես Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամ և միսիայի նախագահ իր կոչումներից բացի, Երեց Բենեթը ծառայել է որպես նախագահ և խորհրդական Պրովոյի Միսիոներների Պատրաստման Կենտրոնի ճյուղում, ցցի բարձրագույն խորհրդի անդամ, եպիսկոպոսության խորհրդական, ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, բազմաթիվ այլ կոչումներում, ինչպես նաև որպես միսիոներ Ֆրանսիա Փարիզ և Ֆրանսիա Տուլուզ Միսիաներում:

Երեց Բենեթը ատամնաբուժական վիրաբուժության դոկտորի կոչում է ստացել Ալբերտայի Համալսարանում (Կանադա), և օրթոդոնտի մագիստրոսի կոչում՝ Լոմա Լինդա Համալսարանում՝ հարավային Կալիֆոռնիայում, ԱՄՆ:

Երեց Բենեթը ծնվել է 1955թ. հունիսին, Ալբերտայում՝ Կանադա: Նրա ծնողներն են Դոնալդ Քեյ Բենեթը և Էն Դարլին Լոնգը: Նա ամուսնացել է Շելլի Դայան Վոչմենի հետ 1977թ. ապրիլի 23-ին՝ Քարդստոն Ալբերտա Տաճարում: Նրանք չորս զավակների ծնողներ են: ■

Երեց Ջ. Դեվն Քորնիշ

Յոթանասունից

Երեց Ջ. Դեվն Քորնիշը գիտի, որ Եկեղեցում յուրաքանչյուր անդամ և ցանկացած կոչում կարևոր են:

«Կարևոր է միշտ հիշել, որ երբ մտածում ենք Եկեղեցու կոչումների մասին, նշանակություն չունի, թե որտեղ ենք նստած օդանավում, կարևորը՝ օդանավում ենք», - ասում է նա: «Աշխատանքի մասը լինելը հավերժական նշանակություն ունի: Այն, թե ինչ դիրք ենք զբաղեցնում, շատ փոքր նշանակություն ունի»:

Գվատեմալա Էլ Սալվադոր Միսիայում ծառայելու իր կոչումից սկսած մինչև վերջերս Յոթանասունի Երկրորդ Քվորում կանչվելը, Երեց Քորնիշը ներգրավված է եղել Եկեղեցու իր բազմաթիվ կոչումները կատարելու մեջ, ներառյալ՝ ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահի, երեցների քվորումի նախագահի, ծխի գործադիր քարտուղարի, քահանայապետերի խմբի ղեկավարի, բարձրագույն խորհրդականի, եպիսկոպոսի, ցցի նախագահի, Դոմինիկյան Հանրապետության Սանտյագո Միսիայի նախագահի և Տարածքային Յոթանասունականի կոչումները:

Երեց Քորնիշը ծնվել է 1951թ. ապրիլին Սոլթ Լեյք Սիթիում՝ Յուտա, ԱՄՆ, Ջորջ և Նաոմի Քորնիշների ընտանիքում: Քոլեջի համար Յուտա վերադառնալուց առաջ նա մեծացել է Յուտայում, Ջորջիայում և Վիրջինիայում, ԱՄՆ:

Պրովոյում ապրելիս երիտասարդ ամուրիների միջոցառմանը նա հանդիպեց Էլեյն Սիմմոնսին: Նրանք ամուսնացան Մանթի Յուտա Տաճարում՝ 1973թ. օգոստոսին:

Կնոջ հետ վեց զավակ մեծացնելով, Երեց Քորնիշը ծառայել է Միացյալ Նահանգների Օդային Ուժերի Բժշկական կորպուսում, ստացել է բակալավրի կոչում և բժշկական աստիճան Ջոն Հոփքինսի Համալսարանում, և սովորել է մանկաբուժություն Հարվարդի Բժշկական Դպրոցում՝ Բոստոնի Մանկական հիվանդանոցում:

Կրթությունը և աշխատանքը Այդահոյում, Տեխասում, Կալիֆոռնիայում և Ջորջիայում, ԱՄՆ, ստիպել է նրա ընտանիքին տարիներ շարունակ տեղից տեղ տեղափոխվել, սակայն՝ Երեց և Քույր Քորնիշների խոսքերով, որտեղ էլ որ լինեին, նրանք սիրով ծառայել են Եկեղեցում:

«Աշխատանքը մեծանում է ողջ աշխարհում, և մեծ օրհնություն է կարողանալ ծառայել Տիրոջ զավակներին, որտեղ էլ որ դա լինի», - ասում է Երեց Քորնիշը:

Յոթանասունի այս կոչումը, «ինչպես Եկեղեցու ցանկացած կոչում, Տիրոջ աշխատանքի մասը լինելու մեկ այլ հնարավորություն է», - ասում է Երեց Քորնիշը: «Մենք երախտապարտ ենք այդ արտոնության համար»: ■

Երեց Օ. Վինսենթ Հալեք

Յոթանասունից

Վաղ հասակից Երեց Օտտո Վինսենթ Հալեքը վճարել է տասանորդ, ծոմ է պահել և ուսումնասիրել սուրբ գրությունները, ապա հանդիպել միսիոներներին և մկրտվել:

Երեց Հալեքի մայրը Եկեղեցու անդամ է եղել, սակայն նա երկար տարիներ չի հաճախել Եկեղեցի: Այնուամենայնիվ ընտանիքը վճարում էր տասանորդ, ամեն շաբաթ ծոմ էր պահում, ամեն օր կարդում էր Աստվածաշունչը և ինչով կարող էր օգնում էր կարիքավորներին: Երեց Հալեքը հավատքի ժառանգություն է կրում:

Երեց Հալեքը ծնվել է 1949թ. հունվարին Ամերիկյան Սամոայում: Նրա ծնողները՝ Օտտո և Դորոթի Հալեքները, նրան ուղարկեցին դպրոց Կալիֆոռնիայում, ԱՄՆ: 17 տարեկան հասակում նա նկատում է, որ ուսանողական կառավարման կազմում որոշ ուսանողներ տարբերվում են մյուսներից: «Նրանք ինձ հրավիրեցին Միացյալ ժամի, իսկ մնացածն արդեն պատմություն է», - ասում է Երեց Հալեքը:

Երեց Հալեքը ստացել է բակալավրի իր կոչումը գովազդի և մարկետինգի բնագավառում Բրիգամ Յանգ Համալսարանում: Նա ունի մի շարք բիզնեսներ Ամերիկյան Սամոայում և ներգրավված է բարեգործական աշխատանքներում: Երեց Հալեքը և նրա կինը՝ Փեգի Էնն Քեմերոնը, ամուսնացել են 1972թ. հունիսի 29-ին՝ Պրովո Յուտա Տաճարում: Նրանք երեք զավակների ծնողներ են:

Ի վերջո, Երեց Հալեքի ողջ ընտանիքը գտավ ավետարանը: Երեց Հալեքը պատիվ ունեցավ մկրտելու իր 80-ամյա հորը և տեսավ, թե ինչպես իր մայրը վերադարձավ Եկեղեցու ակտիվության 50 տարվա ամուսնությունից հետո:

Յոթանասունի Երկրորդ Քվորում կանչվելուց առաջ, Երեց Հալեքը ծառայել էր որպես լիաժամկետ միսիոներ Սամոա Ափիա Միսիայում, եպիսկոպոս, ցցի բարձրագույն խորհրդական, հայրապետ, ցցի նախագահ և, վերջերս, Սամոա Ափիա Միսիայի նախագահ:

Երեց Հալեքը հավատում է, որ իր կյանքի փորձությունները օգնել են իրեն հասնել այնտեղ, որտեղ նա այսօր է: «Ես նայում եմ անցյալիս, և կարող եմ ասել, որ տեսնում եմ Տիրոջ ձեռքը», - ասում է Երեց Հալեքը: «Ես երախտապարտ եմ, որ արժանացել եմ այն վստահությանը, որը Տերն ունի մեր հանդեպ: Ես սիրում եմ Տիրոջը և հույս ունեմ, որ լավ գործիք կլինեմ: Ես գիտեմ, որ Տերը կօգնի ինձ»: ■

Երեց Լարի Յ. Վիլսոն

Յոթանասունից

Աշխատանքի, Եկեղեցու և ընտանեկան պատասխանատվությունների պահանջները հավասարակշռելը Երեց Լարի Յանգ Վիլսոնի համար դժվար է եղել, սակայն նա միշտ հավատացել է, որպեսզի ընտանիքի անդամները իմանան, թե որքան կարևոր են իր համար:

«Առավել որոշիչ փորձառությունները կապված են եղել ամուսին և հայր լինելու հետ», - ասում է Երեց Վիլսոնը: «Ես հազվադեպ եմ բաց թողել սպորտային, երաժշտական կամ այլ իրադարձություն, որտեղ մասնակցել են երեխաներս: Ես նրանց քնելուց առաջ հեքիաթներ եմ կարդացել և նրանց հետ աղոթել: Այնքան կարևոր է նրանց կողքին լինելը»:

Երեց Վիլսոնը լավ գիտի, թե ինչ պահանջներ են դրվում նրա առջև, ով ղեկավար դեր ունի կյանքի բոլոր բնագավառներում: Նա ծնվել է 1949թ. դեկտեմբերին Սոլթ Լեյք Սիթիում՝ Յուտա, ԱՄՆ, Ջորջ և Իդա Վիլսոնների ընտանիքում, և մեծացել է Պոկատելլոյում՝ Այդահո, ԱՄՆ: Նա ստացել է բակալավրի կոչումը անգլիական և ամերիկյան գրականության բնագավառում Հարվարդի Համալսարանում, իսկ հետո մագիստրոսի կոչումը բիզնեսի կառավարման գծով՝ Ստենֆորդի Բիզնեսի Բարձրագույն Դպրոցում:

Երեց Վիլսոնը իր կարիերան անց է կացրել որպես խորհրդատու և գործադիր ղեկավար առողջապահության ոլորտում: Թեև կարիերան պահանջկոտ է եղել, Երեց Վիլսոնը թույլ չի տվել, որ այն իրենից խլեր իր կյանքը:

«Դուք պետք է սահմաններ դնեք ձեր աշխատանքային կյանքի շուրջը», - ասում է նա: «Այլապես այն կկլանի մնացած ամեն-ինչ: Իրատեսորեն, աշխատանքին, եկեղեցուն և ընտանիքին տրամադրվող ժամանակը պետք է հերթով ժամանակ առ ժամանակ կանգնեցվի: Աղոթեք առաջնորդության համար, և դուք կիմանաք, թե որը պետք է առաջնահերթ լինի տվյալ օրը»:

Նախքան Յոթանասունի Երկրորդ Քվորում կանչվելը, Երեց Վիլսոնը ջանասիրությամբ ծառայել է որպես միսիոներ Կենտրոնական Բրազիլիայի Միսիայում և որպես Տարածքային Յոթանասունական:

Հավասարակշռության կարևոր կետերը իր բոլոր ծառայություններում գտնելու հարցում Երեց Վիլսոնին օգնել է նրա կինը՝ Լինդա Մակքեյը, որի հետ Երեց Վիլսոնն ամուսնացել է 1974թ. հուլիսի 10-ին Լոգան Յուտա Տաճարում: Վիլսոնները մեծացրել են չորս զավակ: ■

Առաջին Նախագահությունից՝Նախագահներ Դեյվիդ Օ. Մակքեյը, Հեբեր Ջ. Գրանտը և Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը (ձախից աջ) 1940թ. Բարօրության Հրապարակ այցի ժամանակ:

Տոնելով Բարօրության Ծրագրի 75 տարիները

Հիթեր Ռիգլի
Եկեղեցու ամսագրեր

Եկեղեցու 181-րդ ամենամյա գերագույն համաժողովի մի շարք ելույթներ նվիրված էին Եկեղեցու բարօրության ծրագրին, որն այժմ 75 տարեկան է:

1936թ.՝ ծրագրի հռչակման օրը, Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը, որն այդ ժամանակ Առաջին Նախագահության խորհրդական էր, հաստատեց Եկեղեցու բարօրության ծրագրի աստվածայնորեն ոգեշնչված ծագման մասին. «[Բարօրության ծրագիրը] հիմնված է աստվածային հայտնության վրա, և աշխարհում չկա որևէ այլ կազմակերպություն, որը կարող է այսպես արդյունավետ հոգ տանել իր անդամների համար»: [1]

Յոթանասունհինգ տարիները եկան ու գնացին: Տնտեսական փուլերը եկան-գնացին, կրկին սկսեցին: Աշխարհը ենթարկվեց հասարակական և մշակութային ահռելի փոփոխությունների, իսկ Եկեղեցին վիթխարի աճ արձանագրեց:

Սակայն խոսքերը, որ 1936թ. այդ օրը հնչեցին աստվածայնորեն ոգեշնչված Եկեղեցու բարօրության ծրագրի մասին, ճշմարիտ են այսօր ևս, ինչպես և այդ պահին:

Բարօրության սկզբունքները

1929թ. Միացյալ Նահանգները ֆինանսական խոշոր վնասներ կրեց, երբ արժեթղթերի շուկան տապալվեց: 1932թ. Յուտայում գործազրկությունը հասավ 35,8 տոկոսի:

Թեև Եկեղեցին ուներ բարօրության իր սկզբունքները, ներառյալ պահեստների համակարգը և ծրագրերը, որոնք օգնում էին անդամներին աշխատանք գտնել, շատ անդամներ դիմեցին կառավարության օգնությանը:

«Ես համոզված եմ, որ մարդկանց մոտ աճում է միտումը՝ փորձել Միացյալ Նահանգների կառավարությունից ստանալ ինչ-որ բան՝ դրա դիմաց երբևէ վճարելու շատ քիչ հույսով», - այդ ժամանակ նկատել է Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը (1856-1945):[2]

Եկեղեցու ղեկավարները ցանկանում էին օգնել մաքառող անդամներին՝ չխրախուսելով անգործությունը և սեփականության իրավունքի զգացումը: Նպատակը կայանում էր՝ օգնել մարդկանց օգնելու իրենց անկախ դառնալ:

1933թ. Առաջին Նախագահությունը հայտարարեց. «Մեր ունակ անդամները, բացառությամբ ամենածայրահեղ դեպքերի, չպետք է հայտնվեն այնպիսի անհարմար վիճակում, երբ ընդունում են որևէ բան ոչինչ չտալով: . . . Օգնությունը սպասավորող Եկեղեցու պաշտոնյաները պետք է գտնեն ճանապարհներ և միջոցներ, որոնցով Եկեղեցու ունակ անդամները, ովքեր կարիքի մեջ են, կարողանան վարձահատույց լինել իրենց տրված օգնության համար՝ որևէ ծառայություն մատուցելով»:[3]

Ունենալով գործող սկզբունքներ և Սրբերի հավատքը, Եկեղեցու առանձին միավորները, ինչպես նաև Եկեղեցին ամբողջությամբ, անցան աշխատանքի՝ կազմակերպելով կարի և պահածոյացման դասեր, համակարգելով ծրագրերի աշխատանքը, ձեռք բերելով ֆերմաներ և շեշտելով արդարակյաց, խնայող և անկախ ապրելակերպի կարևորությունը:

Եկեղեցու Բարօրության Ծրագիրը

Եկեղեցու Անվտանգության Ծրագրի հիմնումից հետո (1938թ. վերանվանվել է Եկեղեցու Բարօրության Ծրագիր), մարդիկ հնարավորություն ստացան իրենց ունակությունների սահմաններում աշխատել իրենց ստացած օգնության դիմաց: Ծրագիրը ուսուցանում էր մարդկանց օգտվել իրենց իսկ միջոցներից «իրենց օգնելու» համար, օգնության այլ աղբյուրների դիմելու փոխարեն:

«Մեր հիմնական նպատակն էր հիմնել . . . այնպիսի մի համակարգ, որի օգնությամբ անգործությունը կվերանա, նպաստների չարիքը դուրս կգա, և անկախությունը, աշխատասիրությունը, խնայողությունը և ինքնահարգանքը կրկին կհաստատվեն մեր ժողովրդի մեջ», - ասել է Նախագահ Գրանտը 1936թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին: «Աշխատանքը պետք է կրկին վերահաստատվի որպես ղեկավարող սկզբունք մեր Եկեղեցու անդամների կյանքում»:[4]

Տարիների ընթացքում Եկեղեցու բարօրության համակարգը տարբեր ծրագրեր է ընդգրկել՝ հասարակական (այժմ՝ ՎՕՍ Ընտանեկան ծառայություններ), ՎՕՍ Բարեգործական ծառայություններ, Մարդասիրական ծառայություններ և



Լինի հաց թխելը (վերին ձախում), խաղող աճեցնելը (վերին աջում), թե որևէ այլկերպ օգնություն տրամադրելը, Եկեղեցու Բարօրության ծրագիրը նպատակ ունի զարգացնելու ինքնապահովման ունակություններ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով:

Ծայրահեղ իրավիճակների արձագանքման ծառայություններ: Այս և մյուս ծրագրերը օրինել են հարյուր հազարավոր անդամների կյանքը՝ ինչպես Եկեղեցու, այնպես էլ՝ Եկեղեցուց դուրս:

Միջազգային գործունեություն

Անգամ Մեծ Ճգնաժամից հետո, Երկրորդ Համաշխարհային Պատերազմի սկզբին, Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, իմաստությամբ խորհուրդ տվեց շարունակել բարօրության ծրագիրը: 1945թ. հոկտեմբերին, ԱՄՆ Նախագահ Հարի Ս. Թրումենը հանձնարարեց Եկեղեցու Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթին (1870-1951) որոշել, թե ինչպես և երբ կարելի է իրեր ուղարկել պատերազմից ավիրված Եվրոպայի տարածքներ: Ի զարմանս Նախագահ Թրումենի, Եկեղեցու ղեկավարները պատասխանեցին, որ սնունդը, հագուստը և օգնության այլ պարագաները արդեն հավաքվել են և պատրաստ են առաքման համար:

Ժամանակի ընթացքում Եկեղեցին ընդլայնեց իր բարօրության ծրագրերը, ընդգրկելով կարիքի մեջ գտնվող ավելի շատ տարածքներ, ներառյալ նոր աշխարհագրական տարածքներ: 1970-ականներին, Եկեղեցին տարածեց բարօրության իր ծրագրերը և արտադրությունը, բացելով դրանք Մեքսիկայում, Անգլիայում և Խաղաղօվկիանոսյան կղզիներում: Հաջորդ տասնամյակի ընթացքում Արգենտինան, Չիլին, Պարագվայը և Ուրուգվայը դարձան Միացյալ Նահանգներից դուրս առաջին երկրները, որտեղ բացվեցին Եկեղեցու զբաղվածության կենտրոնները:

1985թ. Եկեղեցու մարդասիրական ծառայությունների ձևավորման հետ մեկտեղ Եկեղեցու բարօրության միջազգային ջանքերը աննախադեպ աճ գրանցեցին, հավաքելով և ուղարկելով հագուստ և այլ պարագաներ աշխարհով մեկ՝ արձագանքելով աղքատությանը և աղետներին:

Այսօր, Եկեղեցու միջազգային անդամության աճը, հատկապես զարգացող երկրներում, նոր մարտահրավերներ են առաջ քաշում, որոնց բարօրության ծրագիրը աշխատում է հարմարվել:

Ոգեշնչված ծրագիր այսօրվա համար

Բարօրության հիմնական սկզբունքները՝ ինքնապահովումը և աշխատասիրությունը, մնում են նույնը այսօր ևս, ինչպես այն ժամանակ, երբ Տերը պատվիրեց Ադամին. «Երեսիդ քրտինքովը հաց ուտես» (Ծննդոց Գ.19):

Վերջին օրերում Տերը հայտարարել է. «Եվ շտեմարանը պետք է պահվի եկեղեցու նվիրաբերումների միջոցով. և այրիներն ու որբերը պետք է ապահովվեն, ինչպես նաև աղքատները» (ՎևՈւ 83.6): Ապա Նա մեզ հիշեցնում է. «Սակայն դա անպայման պետք է արվի իմ իսկ ձևով» (ՎևՈւ 104.16):

Բարօրության սկզբունքները գործում են ողջ աշխարհում անդամների կյանքում, լինելով ամենօրյա սկզբունքներ անհատների տներում:

«Եկեղեցու և Տիրոջ իրական պահեստի ուժը գտնվում է Նրա ժողովրդի տներում և սրտերում», - ասել է Ռոբերտ Դ. Հեյլսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից:[5]

Երբ անհատները Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով զարգացնում են իրենց ինքնապահովման ունակությունները, իրականանում է ծրագրի երկարաժամկետ նպատակը, ինչպես այն սահմանել է Նախագահ Քլարկը՝ «Եկեղեցու անդամների՝ տվողների և ստացողների բնավորության ձևավորումը, փրկելով նրանց մեջ լավագույնը և արթնացնելով հոգու ննջող հարստությունը, բերելով այն ծաղկման և բերքատվության, ինչը, ի վերջո, հանդիսանում է այս Եկեղեցու գոյության առաքելությունը, նպատակը և պատճառը»:[6] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. David O. McKay, in Henry D. Taylor, *The Church Welfare Plan*, unpublished ms., Salt Lake City (1984), 26–27.
2. Heber J. Grant, in Conference Report, Oct. 1933, 5.
3. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols., (1965–75) 5:332–34.
4. Heber J. Grant, in Conference Report, Oct. 1936, 3.
5. Robert D. Hales, "Welfare Principles to Guide Our Lives: An Eternal Plan for the Welfare of Men's Souls," *Ensign,* May 1986, 28.
6. Ջ. Ռուբեն Քլարկը ցցի նախագահների հատուկ ժողովին, հոկտ. 2, 1936թ.:

Ոգեշնչված խոսքեր ոգեշնչված աշխատանքի մասին՝ ինչ ասացին խոսնակները բարօրության մասին

Եկեղեցու 181-րդ ամենամյա գերագույն համաժողովի մի շարք ելույթներ նվիրված էին Եկեղեցու բարօրության ծրագրին, որն այժմ 75 տարեկան է:

Ստորև կարող եք կարդալ հատվածներ խոսնակների ելույթներից բարօրության ծրագրի և սկզբունքների վերաբերյալ, որոնք սահմանվել են Տիրոջ կողմից՝ օգնելու համար Իր զավակներին օգնել իրենց:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Ես հայտարարում եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բարօրության ծրագիրը ոգեշնչված է Ամենազոր Աստծո կողմից» (տես «Սուրբ Տաճար՝ փարոս աշխարհին», էջ 90):

Նախագահ Հենրի Բ. Այրինգ, Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

«Երկնային Հոր զավակների անցողիկ մեծ կարիքները նորից ի հայտ են եկել մեր ժամանակներում, ճիշտ ինչպես անցյալում, և ինչպես որ կգան ապագա բոլոր ժամանակներում: Եկեղեցու բարօրության ծրագրի սկզբունքները միայն մեկ ժամանակի կամ մեկ վայրի համար չեն: Դրանք բոլոր ժամանակների և բոլոր տեղերի համար են:

[Տերը] հրավիրել է և պատվիրել մեզ մասնակցել Իր գործին՝ բարձրացնելու նրանց, ովքեր կարիքի մեջ են: Մենք այդ ուխտը կապում ենք մկրտության ջրերում և Աստծո սուրբ տաճարներում: Մենք վերանորոգում ենք ուխտը կիրակի օրը, երբ ճաշակում ենք հաղորդությունը» (տես «Բարիք անելու հնարավորություններ»):

Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բըրթն, Նախագահող Եպիսկոպոս

«Մարգարեական բարօրության ծրագիրը սոսկ աննշան դրվագ չէ Եկեղեցու պատմության մեջ: Սկզբունքները, որոնց վրա այն հիմնված է, բնորոշում են մեզ որպես ժողովուրդ: Դա մեր էությունն է՝ որպես մեր Փրկչի և Օրինակի՝ Հիսուս Քրիստոսի, առանձին աշակերտներ:

Այս սուրբ աշխատանքը ոչ միայն օգնում, այլև օրհնում է տառապյալներին և կարիքավորներին: Որպես Աստծո որդիներ և դուստրեր, մենք չենք կարող լիովին ժառանգել հավերժական կյանքը, եթե լիովին չներգրավվենք միմյանց մասին հոգ տանելու գործում, մինչ ապրում ենք այստեղ՝ երկրի վրա: Զոհաբերության և մեզանից ուրիշներին տալու բարեգործության շնորհիվ է, որ մենք սովորում ենք զոհաբերության և նվիրաբերման սելեստիալ սկզբունքները:

Սա սուրբ աշխատանք է, որը Փրկիչն ակնկալում է Իր աշակերտներից: Սա այն աշխատանքն է, որ Նա սիրում էր կատարել, երբ քայլում էր երկրի վրա: Սա այն աշխատանքն է, որ Նա կկատարեր, եթե այսօր մեր մեջ գտնվեր» (տես «Բարօրության սրբագործող աշխատանքը», էջ 81):

Սիլվիա Ալրեդ, Սփոփող Միության Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

«Եկեղեցու տղամարդիկ և կանայք այսօր միասին մասնակցում են կարիքավորին օգնելու աշխատանքին: . . . Երբ սերը դառնում է առաջնորդող սկզբունք ուրիշների մասին հոգ տանելիս, նրանց մատուցած մեր ծառայությունը դառնում է ավետարանական արարք: Դա ավետարանն է իր լավագույն դրսևորման պահին: Դա մաքուր կրոնն է» (տես «Աշակերտ լինելու էությունը», էջ 84): ■

Մշտական Կրթական Ֆոնդը իրականացնում է մարգարեական խոստումները

Նատասիա Գարեթ
Եկեղեցու ամսագրեր

Տաս տարի առաջ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910-2008) նշեց մի խնդիր՝ զարգացող տարածքներում աղքատությունից խուսափելու հնարավորության բացակայությունը վերադարձած շատ միսիոներների և արժանի այլ երիտասարդների համար, և տվեց այս լուծումը՝ ստեղծել Մշտական Կրթական Ֆոնդ (ՄԿՖ): Եկեղեցու անդամների և ընկերների նվիրատվությունների հաշվին համալրվող ֆոնդը՝ ՄԿՖ, կրթական վարկեր պետք է տրամադրեր երիտասարդ մարդկանց, որոնց օգնությամբ նրանք կպատրաստվեին իրենց համայնքներում վարձատրվող աշխատանքի համար, ապա հետ կվճարեին վարկը, որպեսզի ուրիշները կարողանային ունենալ նույն հնարավորությունը: Նա ասաց, որ Եկեղեցին պետք է հիմնվի կամավորների և Եկեղեցու առկա միջոցների վրա, որպեսզի հաջողության հասնի:

Հրաշքները կատարվում են

Երբ Նախագահ Հինքլին 2001թ. մարտի 31-ին մոտեցավ ամբիոնին և Եկեղեցու քահանայությանը նկարագրեց Մշտական Կրթական Ֆոնդի տեսլականը, ակնհայտ էր, որ Տիրոջ մարգարեն ուղղություն էր ստացել:

Զախողման հնարավորությունը, կարծես, մարեց, երբ ՄԿՖ-ի նոր

ԼՈՒՍԱՍԱՄՈՂ՝ ԲՐՅԱՆ ՎԻԼՔՈՔՍ

10 տարի առաջ մեկնարկած Մշտական Կրթության Ֆոնդը օգնել է ավելի քան 47000 մասնակիցների:

նշանակված ղեկավարները 2001թ. աշնանը սկսեցին վարկեր տրամադրել, ինչպես ծրագրավորել էր Նախագահ Հինքլին: Բացի մարգարեի ոգեշնչված հայեցակարգը, չկար ոչ բիզնես ծրագիր, ոչ մանրամասն առաջարկ: Ծրագիրը կազմակերպվեց որպես կանոնադրություն օգտագործելով Նախագահ Հինքլիի համաժողովյան ելույթի տեքստը: Վարկերի հարյուրավոր դիմումներ հեղեղեցին Եկեղեցու գլխավոր գրասենյակը, նույնիսկ երբ կանչվում էին տնօրեններ և կազմավորվում էր ծրագրի հիմնական կառուցվածքը:

Բայց արդեն տեղի էին ունենում հրաշքներ: Առաջին տարվա ընթացքում միլիոնավոր դոլլարներ նվիրաբերվեցին ծրագրին: Մի քանի անձինք, ովքեր առանձնահատուկ փորձ ունեին, որակավորվելով ՄԿՖ-ի աշխատանքի համար, անմիջապես արձագանքեցին որպես կամավոր տնօրեններ աշխատելու համար: ՄԿՖ-ի համաշխարհային ենթակառուցվածքը արդեն գոյություն ուներ Եկեղեցու Կրթական Համակարգի տեսքով, որն ընդգրկում էր ինստիտուտի ծրագրերը և Եկեղեցու Զբաղվածության Ռեսուրսների Կենտրոնները: Ամեն ինչ արագ իր տեղն ընկավ, և Նախագահ Հինքլին 2002թ. ապրիլին հաղորդեց, որ դրվել է ծրագրի «ամուր հիմքը»:[1]

Ռեքս Ալլենը, որը ներկայումս ծառայում է որպես ՄԿՖ-ի ուսուցման և

> «Նախագահ Հինքլիի հրավերը օգնում է նրանց, ովքեր ներդրում են կատարում ՄԿՖ-ին, ինչպես նաև նրանց, ովքեր օգտվում են դրանից՝ կատարելագործվելով և ավելի մոտենալով մեր Փրկչին»:
>
> **Երեց Ջոն Կ. Քարմաք**

հաղորդակցման կամավոր տնօրեն, ասել է. «Շատ առաջ, Մովսեսը իր ժողովրդին հասցրեց Կարմիր Ծով և ջրերը բաժանվեցին: Նախագահ Հինքլին մարմնավորում է այդ նույն հավատքը, պահելով մարգարեական իր թիկնոցը աղքատության խավար ծովի վրա և նախաձեռնելով ՄԿՖ-ն»:

«Սա հրաշք է», - շարունակ հաստատում էր Նախագահ Հինքլին:

10 տարի անց, սակայն, մեծագույն հրաշքները կարող են միայն սկիզբը լինել:

Իրականացված խոստումներ

ՄԿՖ-ի մասին իր հայտարարության և իր հետագա ելույթների մեջ, Նախագահ Հինքլին խոստացավ, որ ՄԿՖ-ն օրհնություններ կբերի: Յուրաքանչյուրն իրականանում է և էլ ավելի զորանում, երբ թվով ավելի շատ մասնակիցներ են կրթություն ստանում ՄԿՖ-ի օգնությամբ և վճարում իրենց վարկը:

Հնարավորություն և աշխատանք

«[Մասնակիցները] հնարավորություն կունենան լավ կրթություն ստանալ, որը կհանի նրանց աղքատության ճահճից», ասել է Նախագահ Հինքլին:[2]

2011թ. փետրվարի դրությամբ ուսումը ավարտածների և աշխատանք

փնտրողների մոտ 90 տոկոսը աշխատանք գտան: Ներկայումս աշխատողների 78 տոկոսն ասում է, որ իրենց ներկա աշխատանքն ավելի լավն է, քան այն, որ իրենք ունեին ուսում ստանալուց առաջ: Կրթություն ստանալուց հետո ՄԿՖ-ի մասնակիցների միջին եկամուտը երեքից չորս անգամ ավել է, քան ուսուցումից առաջ, ինչը տնտեսական կարգավիճակի հսկայական բարելավում է նշանակում:

Ընտանիք և հասարակություն

Նրանք կամուսնանան և կյանքում առաջ կգնան, ունենալով ունակություններ, որոնք թույլ կտան լավ վաստակել և իրենց տեղը զբաղեցնել հասարակության մեջ, որտեղ նրանք կկարողանան էական ներդրում կատարել», - հայտարարեց Նախագահ Հինքլին:[3] ՄԿՖ-ի ներկա մասնակիցների մեկ-երրորդից ավելին այժմ ամուսնացած են:

ՄԿՖ-ի գործադիր տնօրեն՝ Երեց Ջոն Կ. Քարմաքն ասում է. «ՄԿՖ-ի առավել խրախուսող արդյունքն այն է, որ մենք տեսնում ենք, թե ինչպես են երիտասարդները ավելի մեծ հույս ունենում: Այդ հույսը նրանց ամուսնանալու և կյանքում առաջ գնալու քաջություն է պարգևում»:

Այդպես՝ նրանց աճող ընտանիքները ավելի պայծառ ապագայի հույս են ձեռք բերում:

Եկեղեցի և ղեկավարում

«Որպես Եկեղեցու հավատարիմ անդամներ, նրանք կվճարեն իրենց տասանորդը և նվիրատվությունները, իսկ եկեղեցին կլինի էլ ավելի ամուր, քանի որ նրանք կներկայացնեն այն իրենց տարածքներում», - ասել է Նախագահ Հինքլին:[4]

Որոշ տարածքներում, որտեղ ՄԿՖ-ն արդեն մի քանի տարի գործում է, Եկեղեցու ներկա ղեկավարների 10-15 տոկոսը ՄԿՖ-ի մասնակիցներից է բաղկացած:

«Մասնակիցները խրախուսում են այլ երիտասարդների օգտվել ՄԿՖ վարկերից և դուրս գալ աղքատությունից», - ասել է Ռեքս Ալլենը: «10 տարի անց մենք տեսնում ենք, ինչպես է ընդլայնվում հույսի օղակը՝ երբ նրանք, ովքեր օրհնվել են, կիսվում են իրենց օրհնություններով մյուսների հետ»:

Ազդեցություն շատերի կյանքում

«[ՄԿՖ-ն] օրհնություն կդառնա բոլոր նրանց համար, ում կյանք այն մտնում է՝ երիտասարդ տղամարդկանց և կանանց, նրանց ապագա ընտանիքների, Եկեղեցու համար, որը կօրհնվի, ունենալով ամուր տեղական ղեկավարներ», - խոստացել է Նախագահ Հինքլին:[5]

2001թ. աշնանից ի վեր ավելի քան 47000 մարդ է մասնակցել ՄԿՖ-ին: Եվ դա չհաշված ընտանիքի այն բարեկամներին, որոնց աջակցել և ոգեշնչել են ՄԿՖ-ին մասնակցող ընտանիքի անդամները, չհաշված ծխերը և ճյուղերը, որոնք օգուտ են քաղել այն անդամներից, ովքեր ավելի մեծ ունակություն ունեն ծառայելու և ներդնելու, չհաշված նաև տեղական տնտեսությունները, որոնք աճի համար հմուտ աշխատողների կարիք ունեն:

«Պատկերացրեք այն ներգործությունը, մտածելով այն բոլորի մասին, ում վրա դուք ազդեցություն եք գործում», - ասել է Եղբայր Ալլենը: «Սա նաև վերաբերում է նրանց, ովքեր նվիրատվություններ են կատարում ՄԿՖ-ին՝ դոնորներին, նրանց ընտանիքներին, նրանց ծխերին և ճյուղերին. բոլորը օրհնվում են նրանց մասնակցությամբ»:

«Գրեթե բոլոր Վերջին Օրերի Սրբերը հնարավորություն ունեն կանոնավոր ձևով ինչ-որ ներդրում ունենալ այս ֆոնդին և արժանի այլ նախաձեռնություններին», - ասել է Երեց Քարմաքը: «Նախագահ Հինքլիի հրավերը օգնում է նրանց, ովքեր ներդրում են կատարում ՄԿՖ-ին, ինչպես նաև նրանց, ովքեր օգտվում են դրանից՝ կատարելագործվելով և ավելի մոտենալով մեր Փրկչին»:

Շարունակելով աճել

Նախագահ Հինքլիի՝ Մշտական Կրթական Ֆոնդի մարգարեական տեսիլքը իրականացվում է. այս ոգեշնչված ծրագրի ազդեցությունը շարունակում է տարածվել աշխարհով մեկ, և այն կշարունակի իրականացվել, մինչ թվով ավելի շատ նվիրատվություններ արվեն և վարկերը ետ վճարվեն, հնարավորություն տալով նոր սերնդի մասնակիցներին աճել և բարելավել իրենց պայմանները:

Մշտական Կրթական Ֆոնդի մասին ավելին իմանալու համար այցելեք pef.lds.org կայքը: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Gordon B. Hinckley, “The Church Goes Forward,” *Liahona,* July 2002, 4; *Ensign,* May 2002, 6.
2. Gordon B. Hinckley, *Liahona,* July 2002, 4; *Ensign,* May 2002, 6.
3. Gordon B. Hinckley, *Liahona,* July 2002, 4; *Ensign,* May 2002, 6.
4. Gordon B. Hinckley, “The Perpetual Education Fund,” *Liahona,* July 2001, 62; *Ensign,* May 2001, 52.
5. Gordon B. Hinckley, *Liahona,* July 2001, 62; *Ensign,* May 2001, 52.

Հարցման մասնակցելու հրավեր

Եթե դուք երբևէ ցանկացել եք ձեր ազդեցությունն ունենալ *Լիահոնա* կամ *Ensign* ամսագրերի և այն միլիոնավոր մարդկանց վրա, ովքեր կարդում են ամսագրերի ուղերձները, այժմ դուք ունեք այդ հնարավորությունը: Ամսագրերը ողջ աշխարհում փնտրում են անդամների, ովքեր պատրաստ են հայտնել իրենց կարծիքը և մասնակցել մի շարք պարզ առցանց հարցումների, որոնք կանցկացվեն ամեն տարի: Եթե ցանկանում եք մասնակցել, ապա էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկեք liahona@ldschurch.org կամ ensign@ldschurch.org հասցեով, առարկայական տողում նշելով “Magazine Evaluation” (Ամսագրի գնահատում): Կամավորները պետք է ունենան Համացանց օգտագործելու հնարավորություն և կարողանան հաղորդակցվել անգլերեն, պորտուգալերեն կամ իսպաներեն լեզուներով: Ձեր կարծիքը կօգնի ամսագրերին ավելի համապատասխանեցնել համարները աշխարհով մեկ գտնվող ընթերցողների կարիքներին: ■

Աստվածաշնչի 400-ամյա հոբելյանը տոնելու լավագույն ձևը ավելի շատ այն ուսումնասիրելն է, առաջարկվում է Առաքյալների խոսքերում

© IRI

400 տարեկան Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակը այսօր ևս շարունակում է ազդեցություն գործել Եկեղեցու անդամների կյանքում:

«Ոչ պատահականություն, ոչ էլ զուգադիպություն է, որ մենք այսօր Աստվածաշունչ ունենք», - ասաց Երեց Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից:[1] Նա բացատրում է, որ Աստծվածաշունչը գոյություն ունի արդարակյաց անձանց հնազանդության շնորհիվ, ովքեր հետևում են այդ գրության սուրբ փորձառությունների և ուսմունքների հուշումներին, ինչպես նաև մյուսների՝ ներառյալ թարգմանիչների, հավատքի և խիզախության շնորհիվ, ովքեր հետագայում մեծ զոհաբերությունների են գնացել՝ Աստվածաշունչը «պաշտպանելու և պահպանելու» համար:

2011թ. մայիսի 2-ը նշանավորում է Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակի առաջին հրատարակման 400-րդ տարեդարձը: Ամբողջ աշխարհում մարդիկ արդեն նշում են Աստվածաշնչի հրատարակության հոբելյանը՝ գիտաժողովներով, տոնակատարություններով, համերգներով, աստվածաշնչի մրցույթներով և այլ միջոցառումներով: Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները մեկ այլ ձև են առաջարկում այս առիթը նշելու համար. սեր զարգացնել Աստվածաշնչի հանդեպ, ուսումնասիրելով Փրկչի կյանքը և ծառայությունը և հին մարգարեների և առաքյալների խոսքերը:

«Որքան երախտապարտ մենք պետք է լինենք Սուրբ Աստվածաշնչի համար», - ասել է Երեց Բալլարդը: «Ես սիրում եմ Աստվածաշունչը, դրա ուսմունքները, դասերը և ոգին: . . . Ես սիրում եմ այն հույսը և խաղաղությունը, որ պարգևում է Աստվածաշնչի ընթերցանությունը»:[2]

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, համաձայնվում է. «Մենք սիրում ենք և պատվում Աստվածաշունչը: Այն միշտ առաջինն է առանձնանում մեր կանոնիկ, մեր ստանդարտ աշխատությունների մեջ»:[3] Նա մեզ հիշեցրել է այն մասին, որ Վերականգնումը հնարավոր դարձավ, որովհետև Ջոզեֆ Սմիթը ուսումնասիրեց Աստվածաշունչը և հավատաց այն խոստմանը, որը պարունակվում է ՀակոբոսԱ.5-ում և ասում, որ Աստված կպատասխանի մեր աղոթքներին:

Հիշելով այն իրադարձությունները, որոնք ճանապարհ են հարթել Վերականգնման համար, Տասներկուսի Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը երախտագիտություն է հայտնել բոլոր նրանց, ովքեր հնարավոր են դարձրել Աստվածաշնչի թարգմանությունը և հրատարակումը: Նրանց աշխատանքի շնորհիվ Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակը մատչելի է յուրաքանչյուր մարդու, և որովհետև այն մատչելի էր Ջոզեֆ Սմիթին, ճշմարիտ Եկեղեցին վերականգնվեց երկրի վրա: «Զարմանալի չէ, որ Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակը այսօր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հաստատված անգլերեն Աստվածաշունչն է», - ասում է Երեց Հեյլսը:[4]

«Մենք միշտ պետք է հիշենք անթիվ նահատակներին, ովքեր գիտեին [Աստվածաշնչի] զորության մասին, և ովքեր տվեցին իրենց կյանքը, որպեսզի մենք կարողանանք այդ գրվածքների մեջ գտնել մեր Երկնային Հոր արքայության հավերժական երջանկությունն ու խաղաղությունը», - ասում է Երեց Բալլարդը:[5]

Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ՝ Բոյդ Կ. Փաքերը պատմել է, թե ինչպես է տեսել դարավոր հին մի ընտանեկան Աստվածաշունչ և գտել մի մեջբերում տիտղոսաթերթի վրա. «Աստվածաշնչի լավագույն տպավորությունը այն է, որ նա խորապես տպվում է ընթերցողի սրտի վրա»:[6] Նա շարունակում է սուրբ գրությամբ. «Մեր թուղթը դուք եք՝ մեր սրտի մեջ գրուած՝ ամեն մարդկանցից իմացուած և կարդացուած (Բ Կորնթացիս Գ.2):

Իմանալով և սիրելով Աստվածաշունչը և այն ուղեկցող սուրբ գրությունները, մենք կարող ենք մեր երախտագիտությունը ցույց տալ և վայելել ավետարանի Վերականգնման օրհնությունները:

«Մտածեք Սուրբ Աստվածաշունչը և սուրբ գրությունների լրացուցիչ 900 էջ ունենալու մեր օրհնության մեծության մասին», - ասում է Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը: «Թող որ մենք մշտապես սնվենք Քրիստոսի խոսքերով, որոնք կասեն մեզ բոլոր բաները, որ մենք պետք է անենք»:[7] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. M. Russell Ballard, “The Miracle of the Holy Bible,” *Liahona* and *Ensign,* May 2007, 80.
2. M. Russell Ballard, *Liahona* and *Ensign,* May 2007, 81.
3. Jeffrey R. Holland, “My Words . . . Never Cease,” *Liahona* and *Ensign,* May 2008, 92.
4. Robert D. Hales, “Preparations for the Restoration and the Second Coming: My Hand Shall Be over Thee,” *Liahona* and *Ensign,* Nov. 2005, 90.
5. M. Russell Ballard, *Liahona* and *Ensign,* May 2007, 80.
6. Boyd K. Packer, “The Book of Mormon: Another Testament of Jesus Christ,” *Liahona,* Jan. 2002, 73; *Ensign,* Nov. 2001, 63.
7. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Սուրբ գրությունների օրհնությունը», *Լիահոնա* և *Ensign,* Մայիս 2010, 35:

Հռոմ Իտալիա Տաճարի ճարտարագիտական պատկերը

«Յուրաքանչյուր տաճար Աստծո տուն է, որը կատարում է նույն դերը և կրում է նույն օրհնությունները և ծեսերը», - ասել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կիրակի առավոտյան նիստին: «Հռոմի տաճարը Իտալիայում եզակի է նրանով, որ կառուցվում է աշխարհի ամենապատմական վայրերից մեկում՝ քաղաքում, որտեղ հնում Պետրոս և Պողոս առաքյալները քարոզել են Քրիստոսի ավետարանը:. . . Մի գալիք օր, այս «Հավերժական քաղաքի» հավատարիմ անդամները Աստծո սուրբ տանը կատանան իրենց բնույթով հավերժական ծեսերը»:

«Ես կիսվում եմ ձեզ հետ Փրկչի և մեզ համար արված Նրա մեծ քավող զոհաբերության հանդեպ իմ սիրով: . . . Ես համոզված եմ, որ մեզանից ոչ ոք չի կարող լիարժեք ըմբռնել նրա կարևորությունը, ինչ Քրիստոսը մեզ համար արեց Գեթսեմանում, բայց ես իմ կյանքի յուրաքանչյուր օրը շնորհակալություն եմ հայտնում մեզ համար Նրա քավող զոհաբերության համար», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը 181-րդ ամենամյա գերագույն համաժողովի փակման իր խոսքում: «. . .Նա անցավ ամեն-ինչի միջով, որպեսզի փրկի ամեն-ինչ: Դրանով Նա մեզ տվեց կյանք այս մահկանացու գոյությունից վեր: Նա մեզ հետ վերցրեց Ադամի Անկման կապանքներից: Իմ հոգու խորքից ես երախտապարտ եմ Նրան: Նա մեզ սովորեցրեց, ինչպես ապրել: Նա մեզ սովորեցրեց, ինչպես մեռնել: Նա ապահովեց մեր փրկությունը»:

ARMENIAN
4 02096 85201 1